

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2 (27)

2 0 2 4

Գյումրի 2024

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316-2024.27.2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ՄԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԱԿՈՂՈՎ ԱՐԿԱՐԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՐԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ.գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԲԱՐԱԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ
ՂԵՎԵՆՂԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան
ԽԱՉՏՉՑԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ
ԽԱՉՏՐՅԱՆ ԼԱԼԻԿ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ, Երևան, ՀՀ
ԽԵՍՉՅԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԽՈՍՐՈՆԵՎԱ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Լորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ
ԿԱՆՈՐ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ
ԿԱՎԵՆԼԻՇՎԻԻ ՌՈՒՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍՁՊՀ, Ախալցխա, Վրաստան
ԿՐՑՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ
ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՀՈՒՍԿԱՆ ՅԱԹԻՄԵՏ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան
ՄՍՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա
ՄՄՐԳՎՐՅԱՆ ԱՐԱՔՍ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՄՄՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԳԻՍ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՄԱՂՈՎՍԿԻ ՄԻՒՍԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան
ՄԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՕՐԴՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ». N 2(27) / Հայագիտություն և հասարակա-
կան գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների ժողովածու: Խմբ. խորհուրդ՝ Ս.
Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2024,-230 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am
հեռախոսը՝ +374/94/ 411 228*

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

2 (27)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2024 Gyumri

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316

eISSN 2953-8076

DOI: 10.52971/18294316-2024.27.2

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА
АКОПОВ АРКАДИЙ- зам. гл. редактора, РА
БАЗЕЯН КАРИНЕ- отв. секретарь, РА

АЙРАПЕТЯН АРМЕН, РА
АРУТЮНЯН АСМИК, РА
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА
БАЛЪЯН КАРЕН, РФ
ВАРДАНЯН БЕНИК, РА
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА
ДЕВЕНДЕР КУМАР, Индия
ЖАН-ПИЕР МАЭ, Франция
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция
КАНДОР РУСЛАН, РФ
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ
МАРГАРЯН АРАКС, РА
МАРУҚЯН АРМЕН, РА
МКОЯН АРТАШЕС, РА
ОГАНИСЯН АРТАК, РА
ОРДУХАНЫАН ЭМИЛЬ, РА
ПЕТРОСЯН САРГИС, РА
РУХКЯН МАРГАРИТ, РА
СААКЯН КАРИНЕ, РА
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша
ХАЧАТРЯН ГУРГЕН, РА
ХАЧАТРЯН ЛАЛИК, РА
ХЕМЧЯН ЭСТЕР, РА
ХОСРОЕВА АНАИТ, США
ХУАКО ФАТИМЕТ, РФ
ЦАКАНЯН РУСЛАН, РА

EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA
AKOPOV ARKADI vice editor, RA
BAZEYAN KARINE secretary, RA

HAYRAPETYAN ARMEN, RA
HARUTYUNYAN HASMIK, RA
BADALYAN SERGEY, RA
BALYAN KAREN, RF
VARDANYAN BENIK RA,
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA
DEVENDER KUMAR, India
JAN-PIER MAHE, France
KAVREISHVILI ROIN, Georgia
GHAZARYAN GEVORG, Greece
KANDOR RUSLAN, RF
KRYUCHKOV IGOR, RF
MARGARYAN ARAKS, RA
MARUQYAN ARMEN, RA
MKOYAN ARTASHES, RA
HOVHANNISYAN ARTAK, RA
ORDUKHANYAN EMIL, RA
PETROSYAN SARGIS, RA
RUKHKYAN MARGARIT, RA
SAHAKYAN KARINE, RA
SADLOVSKI MIKHAL, Poland
KHACHATRYAN GURGEN, RA
KHACHATRYAN LALIK, RA
KHEMCHYAN ESTER, RA
KHOSROEVA ANAHIT, USA
HUAKO FATHIMET, RF
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА NN 2(27). Арменоведческие и общественные науки / НАН РА:
Сборник статей: Редакционный. совет: С.Айрапетян и др.: -Гюмри,” ЧП Р.Аветисян”, 2024, 230 с.

“Scientific Works” N2(27)of SCAS of NAS RA: Ed.Board:S.Hayrapetyan & others:Gyumri, "IE RA".2024,230p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а
Address: 30101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www.shirakcenter.sci.am
мел./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2024
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2024

ՀՏԴ՝ 336.74

DOI: 10.52971/18294316-2024.27.2-5

ՏԻԳՐԱՆ ԵՐՐՈՐԴԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Արթուր Տ. Մելիքյան

Իռա Հ. Չատինյան

Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան, Վանաձոր, ՀՀ

Անվտուցում

Նախաբան. Ուշարտաշեսյան Մեծ Հայքի պատմության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում Տիգրան III-ի (Ք. ա. 20-Ք. ա. 6 թթ.) կառավարման շրջանը: Աշխատանքում վերլուծվել են Տիգրան III-ի գահակալությանը հռոմեական քարոզչության և հենց Տիգրան III-ի տված գնահատականները, հռոմեական աշխարհակարգում Տիգրան III-ի զբաղեցրած առանձնահատուկ տեղը: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Օգտագործվել են հունահռոմեական պատմագիրների երկերը, հռոմեական և հայկական դրամների դրամագիտական նյութերը: Վերլուծություն. Քննության են առնվել «Armenia capta» և «Armenia recepta» խորագրերով հռոմեական և Տիգրան III-ի հայկական դրամների պատկերագրությունն ու քարոզչական նպատակները: Տիգրան III-ի իշխանության իրավական բովանդակությունը դիտարկվել է մի կողմից խնդրարկու արքաների դրամների պատկերագրական համակարգի, մյուս կողմից՝ հռոմեական «պոսետրական» իրավունքի շրջանակներում: Արդյունքներ. Տիգրան III-ի իշխանությունն էապես տարբերվել է խնդրարկու արքաների իշխանությունից և ձևակերպված է եղել «պրեկարիայի» սկզբունքով: Ըստ այդմ, Տիգրան III-ը, ճանաչելով հռոմեական կայսրին՝ որպես իր պատրոն-վեհապետ, իրավունք է ունեցել թե՛ իր երկրի ներսում, թե՛ մնացյալ արտաքին հարաբերություններում ներկայանալ իբրև ինքնիշխան արքա: Հեղինակների ներդրումը. Աշխատանքի առաջին և երկրորդ ենթահարցերը հեղինակել է Ա. Մելիքյանը, երրորդ և չորրորդ ենթահարցերը՝ Ի. Չատինյանը:

Բանալի բառեր՝ Հայաստան, Հռոմ, Տիգրան III, Օգոստոս կայսր, դիմերես, դարձերես, պատկերագրություն, «հաղթողի իրավունք», «պրեկարիա» խնդրարկու արքա:

Ինչպես հղել՝ Մելիքյան Ա., Չատինյան Ի. *Տիգրան Երրորդի գահակալության վերագնահատություն դրամագիտական տվյալների լույսի ներքո*. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2024: Հ. 2 (27): 5-19 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-5

REEVALUATION OF THE ENTHRONEMENT OF TIGRANES III ON THE LIGHT OF THE NUMISMATIC EVIDENCE

Arthur T. Melikyan

Ira H. Chatinyan

State University after Hovh. Thumanyan, Vanadzor, RA

Abstract

Introduction: This study explores the Roman propaganda and Tigranes III's own evaluations of his rule, as well as his unique position in the Roman world order. **Methods and Materials:** The research utilizes a historical-comparative approach. The principle of comparison and contrast was applied during the analysis of written sources and numismatic evidence. The study draws on works of Greco-Roman authors and the numismatic data from Roman and Armenian coins. **Analysis:** The study focuses on the iconography and propaganda purposes of Roman coins labeled “Armenia capta” and “Armenia recepta”, and Tigranes III's Armenian coins. To understand the legal aspects of Tigranes III's rule, his coinage imagery has been compared with that of client kings under Rome. **Results:** The rule of Tigranes III significantly differed from that of the client kings and was established on the principle of “precaria”. According to this, Tigranes III, by acknowledging the Roman Emperor as his patronus-overlord, had the right to present himself as a sovereign king both within his own country and in external relations. **Authors' Contribution:** The first and second research questions were addressed by A. Melikyan, while the third and fourth were addressed by I. Chatinyan.

Key words: Armenia, Rome, Tigranes III, Emperor Augustus, averce, reverse, iconography, “right of the victor”, “precariousness”, client king.

Citation: Melikyan A., Chatinyan I. *Reevaluation of the Enthronement of Tigran III on the Light of the Numismatic Evidence*. // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27).

5-19 pp. DOI:10.52971/18294316-2024.27.2-5

ПЕРЕОЦЕНКА ВОЦАРЕНИЯ ТИГРАНА III В СВЕТЕ НУМИЗМАТИЧЕСКИХ ДАННЫХ

Артур Т. Меликян

Ира А. Чатинян

Государственный университет им. Оганеса Туманяна, Ванадзор, РА

Аннотация

Введение: В истории позднеарташесидовской Великой Армении уникальное место занимает период правления Тиграна III (20-6 гг. до н. э.). Обсуждаются оценки воцарения Тиграна III данные римской пропагандой и самим Тиграном III, а также то особенное место, которое занимал Тигран III в римском мировом порядке. **Методы и материалы:** В работе использовался историко-сравнительный метод. Использовались работы греко-римских историков и нумизматические данные римских и армянских монет. **Анализ:** Исследовались иконография и пропагандические цели римских монет с легендой «Armenia capta» и «Armenia recepta», а также монеты Тиграна III. С целью выяснения юридического содержания власти Тиграна III, иконографическая система монет этого царя сравнивалась с иконографией монет царей-клиентов. С той же целью она обсуждалась и в рамках римского «посессорского» права. **Результаты:** Власть Тиграна III существенно отличалась от власти других римских царей-клиентов. Она была оформлена по принципу «прекарии», которая обязывала Тиграна III принимать римского императора как своего патрона и сюзерена, в то же время разрешала ему представляться в качестве суверенного царя как в внутри своей страны, так и в остальных внешних отношениях. **Вклад авторов:** Автором первого и второго разделов является А. Меликян, а автором третьего и четвертого разделов - И. Чатинян.

Ключевые слова: Армения, Рим, Тигран III, император Август, аверс, реверс, иконография, право победителя, прекария, царь-клиент.

Как цитировать: Меликян А., Чатинян И. Переоценка воцарения Тиграна III в свете нумизматических данных. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2(27). 5-19 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-5

ՆԱԽԱԿԱՆ. Տիգրան III-ի մասին գրավոր աղբյուրների տեղեկությունները սակավ ու միտումնավոր են, իսկ դրամագիտական տվյալները՝ խիստ հակասական: Ք. ա. 20-18 թթ. հատված կայսերական դրամների շուրջ մեկուկես տասնյակ տիպերում ազդարարվել է Ք. ա. 20 թ. Հայաստանի նկատմամբ Հռոմի տիրապետության վերականգնման փաստը: Մինչդեռ Օգոստոս կայսեր կողմից հայոց գահին բարձրացված Տիգրան III-ն իր դրամների վրա ինքնաներկայացել է որպես սուվերեն տիրակալ: Քաղաքական հռչակագրերի այդ հակադրությունը պահանջում է վերանայել հայոց այդ արքայի իշխանության բովանդակության մասին եղած պատկերացումները և Հռոմից կախյալ արքաների ծիրում նրա ունեցած քաղաքական կարգավիճակը:

1. Հռոմի Ք. ա. 20 թ. «հայկական հաղթանակը»

Ք. ա. 20 թ. Արտաշատում դավադրաբար սպանվեց Մեծ Հայքի արքա Արտաշես II-ը (Ք. ա. 34, Ք. ա. 30-20 թթ.), որն իր գահակալության 10 տարիներին վարել էր ընդգծված հակահռոմեական քաղաքականություն: Տակիտոսն արքայի սպանությունը վերագրում է նրա ազգականներին [32, II.3]՝ առանց հստակեցնելու՝ արքայի արյունակից ազ-

գականների՞ն նկատի ունի, թե՞ «արքայի ազգական» հելլենիստական տիտղոսը կրող տոհմիկ ավագանուն [17, XI,3.2: 29, pp. 38-53: 37, pp. 4-43]: Դիոն Կասսիոսը, նշելով, թե «*մյուս հայերը մեղադրում էին Արտաշեսին և (դեսպանություն ուղարկելով) խնդրում էին Հռոմում գտնվող նրա եղբորը*» [13, LIV.9.4], ակնարկում է արքայի սպանության նախօրեին հայ ավագանու քաղաքական երկատման մասին: Դրանից եզրակացրել են, որ այդ ժամանակահատվածում Մեծ Հայքում արդեն գոյություն են ունեցել «հռոմեացիներ» և «պարթևասեր» կուսակցություններ [1, էջ 286: 5, էջեր 628-631]: Բայց ավելի հավանական է, որ պառակտումը տեղի է ունեցել ոչ թե կայուն քաղաքական հայեցակարգերի հակասության, այլ Հռոմի դեմ նոր պատերազմի սպառնալիքի պատճառով: Ըստ այդմ, «*մյուս հայեր*» արտահայտության տակ ճիշտ կլինի տեսնել տոհմիկ ավագանու այն տարրերին, որոնք Մեծ Հայքի ռազմաքաղաքական մեկուսացման պայմաններում փորձել են խուսափել Հռոմի դեմ պատերազմից և նույնիսկ համաձայնել են Հռոմի համար անընդունելի արքայի սպանության Օգոստոս կայսեր (Ք. ա. 27-Ք. հ. 14 թթ.) առաջադրած պայմանին: Փաստ է այն, որ Արտաշես II-ի սպանությունից անմիջապես հետո Մեծ Հայքի սահմանին կանգնած հռոմեական զորքը կայսեր որդեգիր Տիբերիուսի հրամանատարությամբ ներխուժեց երկիր և գահին նստեցրեց իր հետ բերված Տիգրանին՝ Արտաշես II-ի եղբորը [13, LI. 9.4-5: 17, XV.105: 26, XXVII: 31, III.9: 32, II.3]:

2. 1. Հռոմի Ք. ա. 20 թ. «հաղթական հաղթանակը» դրամական պատկերազրույթան մեջ

Հայաստանում հռոմեական զորքը որևէ ռազմական գործողություն չի իրականացրել: Սակայն Արտաշես II-ի սպանությունն ու հռոմեական զորքի անարգել զորաշարժը մինչև Արտաշատ Հռոմում գնահատվել է իբրև Հայաստանի ռազմակալում: Հռոմում այդ իրադարձությունը նշանավորել են Տիբերիուսի «քաջարիության» առթիվ կազմակերպված օվազիայով, զոհաբերություններով և հռոմեական պոետների ներբողների հեղեղով [8, pp. 13-14]: Բացի դրանցից՝ «հաղթանակի» առթիվ Հռոմում և Պերգամոնում Ք. ա. 20-18 թթ. հատել են «*Armenia capta*» և «*Armenia recepta*» խորագրերով ատրեուսներ և դինարներ [13, Lot 36: 20, № 672: 36, № 516-517], որոնց քարոզչական նշանակությունը երկակի է. փառաբանել Օգոստոսին՝ որպես Հռոմի հեղինակության վերականգնողի, և ազդարարել Մեծ Հայքի նկատմամբ հռոմեական տիրապետության նոր սկզբունքի ներդրումը:

Ինչպես երևում է, «*Armenia capta*» խորագրով դրամների առաջին թողարկումը կատարվել է Ք. ա. 20 թ. Պերգամոնում: Դինարների դիմերեսին Օգոստոսի աջ դարձած պատկերն է, իսկ դարձերեսին «*Caesar Div. F. Armenia Capta, IMP. VIII*» խորագիրն է և կանգնած հայ ռազմիկ՝ մարական տաբատով և կիդարիսով, աջ ձեռքին աղեղ, իսկ ձախոլ՝ նիզակ բռնած [10, № 2361: 34, № 518-520, 306-307] (*նկ. 1*): Այս պատկերաձևն ադերսվում է հռոմեական կերպարվեստում տարածված «մարտաշունչ զայրույթով լցված բարբարոսի» տիպարին: Սակայն նրա բուն նպատակը ոչ թե հայի ուժի փառաբանումը, այլ դրանց ցուցադրության միջոցով՝ հռոմեական «հաղթանակի» կարևորումն ու կայսրին իբրև խաղաղության վերականգնող (*restitutor pacis*) ներկայացնելն է [26, XIII]: Նույն գաղափարն արտահայտված է նաև Պերգամոնում հատված ատրեուսի մի տիպի

դարձերեսին, որի «Armenia Capta» եզրագրի մեջ ներկայացված է թևերը բացած Մֆինքսը [33, № 1513]:

Ք. ա. 19 թ. Հռոմում հատված արծաթե դինարի երեսին Ազատությունը դիցուհու (Liber) աջ դարձած պատկերն է, իսկ դարձերեսին՝ ծնկած և ափերը դեպի վեր պահած, ձեռքերը կողքի տարածած կնոջ պատկերով անձնավորված Մեծ Հայքը [20, p. 18: 36, № 290-292, 306] (*նկ. 2*): Հպատակությունը խորհրդանշող այդ պատկերաձևը կտրուկ հակադրվում է «կանգնած ռազմիկի» կերպարին: Բայց, մյուս կողմից, այն նույնանում է հռոմեական կերպարվեստում հայտնի «*supplicatio*»-ի պատկերաձևին, որտեղ խնդրարկուն ներկայացվում է ծնկաչոք, ձեռքերը մեկնած նրան, ում ուղղված է խնդրանքը [18, p. 110]: Այս պատկերաձևը դիտողի գիտակցության մեջ Հայաստանի հպատակեցման գաղափարը տրամաբանորեն կապում է պարտված թշնամիների նկատմամբ Օգոստոս կայսեր մեծահոգության (Clementia) հետ [26, XXXIV.2: 31, II.51]: Իսկ Ք. ա. 19-18 թթ. Պերգամոնում հատված աուրեուսների մեկ այլ տիպի դիմերեսին Օգոստոսի աջ դարձած գլուխն է, իսկ դարձերեսին՝ դիցուհի Հաղթանակը, որը կտրում է ցլի կոկորդը [28, № 1576: 34, № 514] (*նկ. 3*): Այդ տեսարանը, աղերսվելով Ք. ա. 20 թ. Տիրերիոսի առաքելության հաջողության առթիվ Հռոմում կատարված զոհաբերությունների հետ [13, LIV.9], դիտողի գիտակցության մեջ պետք է սնուցեր կայսեր բարեպաշտության (*Pietas*) մասին պատկերացումը:

2.2 «Հայաստանը նվաճված» և «Հայաստանը վերանվաճված» խորագրերը՝ որպես Մեծ Հայքի նկատմամբ հռոմեական տիրապետության հիմնավորման քարոզչական եղանակ

Հռոմում իրատեսորեն էին վերլուծել Մեծ Հայքի նկատմամբ ազդեցության կորստի պատճառները: Բանն այն է, որ Ք. ա. 66 թ. քաղաքական մեկուսացման մեջ հայտնված Տիգրան II-ը Արտաշատում Պոմպեոսին իր անձնատվությամբ կանխել էր Մեծ Հայքի հռոմեական անեքսիան, այլ խոսքով՝ նրա նկատմամբ Հռոմի բացարձակ իրավունքի հաստատումը: Դրա արդյունքում Տիգրան II-ը, «չկորցնելով իր թագավորությունը» [11, XXXVI.52], պահպանել էր լիիրավ արքայի, իսկ Մեծ Հայքը՝ միջազգային հարաբերությունների սուբյեկտի կարգավիճակը [26, XXXIV.2: 31, II.51]: Պոմպեոսի կողմից Տիգրան II-ին «հռոմեական ժողովրդի բարեկամ» հռչակելը ընդամենը հայոց արքային պարտավորեցնում էր հարգել հռոմեական շահերը, թույլ չտալ իր տարածքի վրայով երրորդ կողմի թշնամական գործողությունը Հռոմի և նրա դաշնակիցների նկատմամբ: Իր ներքին ու արտաքին քաղաքականության մեջ մնալով ազատ՝ նա պարտավոր չէր մասնակցել Հռոմի ռազմական ձեռնարկումներին [6, էջ 127]: Հարաբերությունների այս ձևաչափում խոսքը վերաբերում էր Հռոմի ազդեցությանը, այլ ոչ թե տիրապետությանը: Բայց Ք. ա. 65/64 թ. ձմռանը Պոմպեոսը հայոց արքայի կարգավիճակը պաշտոնականացրեց իբրև «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ» [11, XXXVI.53.5-6]: Տիգրանի «բարեկամությունը» համաբերելով «դաշնակցության» հետ՝ Պոմպեոսը նրան պարտադրում էր Հռոմի խիստ վերահսկողության տակ գտնվող դաշնակից արքաների (*socius populi Romani*)՝ իրենց արտաքին քաղաքականությունը Հռոմի հետ համաձայնեցնելու, հարկեր վճարելու, պատերազմի դեպքում Հռոմին օգնական

զինուժ (*auxilia*) և նյութական միջոցներ տրամադրելու պարտավորությունները [11, XXXVIII.38.4: 7, էջ 127: 36, p. 297]: Արտավազդ II-ը (Ք. ա. 55-34 թթ.) քաղաքական խուսանավումների միջոցով փորձեց մնալ «հռոմեական ժողովրդի բարեկամը», բայց զանց առնել Հռոմի հետ «դաշնակցությունից» բխող պարտավորությունները [2, էջեր 8-38]: Ճիշտ է, Անտոնիուսը Ք. ա. 34 թ. վրեժխնդիր եղավ Արտավազդ II-ից, բայց նաև իր «անպատիվ» արարքով իրավական հիմք տվեց Արտավազդի որդուն՝ Արտաշես II-ին՝ խզելու Հռոմի հետ իր պայլի կնքած և հոր վավերացրած հարաբերությունները [14, L.1: 32, II.3]: Փաստորեն Մեծ Հայքը վերստին հռոմեական հսկողության տակ առնելուց հետո գոյացել էր նրա նկատմամբ տիրապետության հիմքերի հստակեցման անհրաժեշտություն: Նաև դրա բավարարման էր կոչված «*Armenia capta*» խորագրով դրամների թողարկումը: Դրանք ազդարարում էին Մեծ Հայքի նկատմամբ Օգոստոսի «հաղթողի իրավունքը», որն ազատում էր անձնատուի նկատմամբ մեծահոգություն դրսևորելու բարոյական պարտավորությունից և իրավական առումով ավելի ամուր էր, քան Ք. ա. 66 թ. Տիգրան II-ի հարկադրական անձնատվության (*deditio*) արդյունքում ստացածը:

Ք. ա. 19-18 թթ. թողարկված դինարների մի մասը կրում է «*Armenia recepta*» խորագիրը [33, № 517-518]: Առաջին անգամ այդ խորագրով դրամներ հատել էր Անտոնիուսը՝ Ք. ա. 34 թ. [24, Lot 518]: Բայց «*Armenia recepta*» արտահայտությամբ Օգոստոսը ոչ թե Անտոնիուսի կողմից Մեծ Հայքի ռազմակալումն է նկատի է ունեցել¹, այլ Ք. ա. 66 թ. Տիգրան II-ի հարկադրական անձնատվությունը: Դրամների խորագրերում Օգոստոսի դերի փոփոխությունը (*capior/receptor*) պայմանավորվել է դրանց քարոզչական նշանակության տարբերությամբ: Առաջին տիպի դրամները կոչված են եղել կայսեր վեհացմանը, մինչդեռ երկրորդ տիպը ծառայեցվել է Օգոստոս կայսեր կողմից հայոց նոր արքայի հետ հարաբերությունները հռոմեական պոսետրական իրավունքի սկզբունքներով վերակառուցելուն: Դրա համաձայն՝ կախյալ երկրները ճանաչվում էին հռոմեական սեփականություն, որի նկատմամբ Հռոմի իրավունքը չէր կարող խախտվել ապօրինի գործողությունների (ապստամբություն, խռովություն) կամ օտարի հավակնությունների պատճառով [36, p. 417]: Իսկ կախյալ արքաները հավասարեցվում էին հռոմեական խնդրարկուներին: Ուշագրավ է, որ Օգոստոսն «*Armenia capta*» և «*Armenia recepta*» խորագրերով դինարների մի մասի դարձերեսին Անտոնիուսի օրինակով պատկերել է արտաշեսյան խույրը՝ աղեղնաբնում դրված աղեղի ու կապարձի մեջ լցված նետերի հետ [34, № 515-517] (*նկ. 3*): Այդ կերպ նա ազդարարում է, թե կայսեր նվաճման իրավունքը տարածվում է ոչ միայն Մեծ Հայք երկրի, այլ նաև նրա իշխանության վրա: Օգոստոսն այս գաղափարը հայկական հանրությանն էր հասցեագրել շատ ավելի վաղ՝ Տիգրան III-ի թագադրության գործողության միջոցով [31, III.9]:

Տիգրան III-ին իշխանությամբ օժտելու (*investiture*) ծեսը ներքուստ (իրավապես) փոխաբերում էր վերստին «հռոմեական սեփականություն» դարձած երկրի վերաբերյալ «վարձակալական պայմանագրի» կնքումը: Բայց այն ինչպես կայսեր, նույնպես

¹ Դեռևս Ք. ա. 31 թ. Օկտավիանուսն անօրինական էր ճանաչել Անտոնիուսի կողմից Հայաստանի Ք. ա. 34 թ. ռազմակալումը՝ այն դարձնելով նրա դեմ հարուցված հիմնական մեղադրանքներից մեկը [12, L.1]:

և խնդրարկու արքաների համար ուներ նաև խորքային գաղափարական նշանակություն: Մի կողմից՝ այն կապվում էր կայսեր ուղեկից անձնական ոգու (*Genius*) կամ կայսեր գերմարդկային, աստվածային ուժի (*Numen*) երկրպագության հետ [2, էջ 79]: Բայց մյուս կողմից կառչում էր արևելյան այն հազարամյա պատկերացմանը, ըստ որի՝ արքայական իշխանությունը կարող է միայն աստվածատուր լինել: Այլ խոսքով՝ թագադրելով խնդրարկու արքային, հռոմեական պրինցեպսը հավակնում էր դառնալ նրա և նրա ղեկավարած հանրության նկատմամբ գերագույն աստվածություն [3, էջեր 212-215]: Կայսեր արքայաստեղծ և արքայակործան ատյանի մասին գաղափարն Օգոստոսն արձանագրել է իր «Կտակում» [26, XXVII.2]: Կայսեր համար թագադրության ծեսը սկզբունքային նշանակությունն ուներ բոլոր խնդրարկու արքաների հետ հարաբերություններում: Հպատակ հանրությանը «թագավոր տալը» մի կողմից ներկայացվում է որպես կայսեր իրավունքի, մյուս կողմից՝ որպես հպատակ հանրության նկատմամբ նրա հոգատարության (*cura*) և մեծահոգության (*clementia*) արտահայտություն [26, XXVII: 14, LXII.5]: Իսկ պատրոն-խնդրարկու հարաբերությունից դուրս այն դառնում էր կայսեր աստվածայնության գործնական դրսևորումը: Սովորաբար խնդրարկու արքայի ինվեստիտուրան ուղեկցվում էր տվյալ երկրում կայսեր պաշտամունքի հիմնումով [35, pp. 56-63]: Սակայն Տիգրան III-ի դրամների քննությունը ցույց է տալիս, որ այդ առումով նա բացառություն է հանդիսացել:

3. Տիգրան III-ը սեփական դրամների պատկերագրության լույսի ներքո

Արտաշեսյան Մեծ Հայքի պատմության մեջ Տիգրան III-ի գահակալության շրջանը խիստ մշուշոտ է առկա պատմական տեղեկույթի հատվածային, կցկտուր և խիստ միտումնավոր լինելու պատճառով: Դրանց հիման վրա ուսումնասիրողներից ոմանք Տիգրան III-ին գնահատել են որպես Հռոմին խոնարհ տիրակալ, որի օրոք օտար տիրապետությունը Մեծ Հայքում դարձել է քաղաքական իրողություն [5, էջեր 631-632: 1, էջ 289]: Մինչդեռ Տիգրան III-ից մեզ հասած դրամները պատկերագրորեն միանգամայն այլ տեղեկույթ են տալիս նրա իշխանության իրավաքաղաքական բովանդակության վերաբերյալ: Տիգրան III-ի դրամները Ք. ա. II դ. վերջերից մինչև Ք. հ. I դ. սկիզբները հայոց գահին բազմած Արտաշեսյան և նրանց ազգակից համանուն արքաների դրամներից բավականին հեշտ են զանազանվում՝ շնորհիվ այդ արքայի թեթև մորուքի:

Նախքան գահակալությունը Տիգրանը եղել էր եգիպտական գերության մեջ, ապա տարվելով Հռոմ՝ 10 տարի ապրել էր «Օգոստոսի խնամքի ներքո», սովորել էր լատիներեն, յուրացրել հռոմեացիների օրենքներն ու բարքերը, հռոմեական ընտրախավի շրջանում ձեռք բերել անհրաժեշտ կապեր և հարաբերություններ: Համաձայն հռոմեական արժեհամակարգի՝ դրանք խնդրարկու արքայի կարգավիճակի կարևոր գումարեւորներ էին [31, II.48: 6, էջեր 238-239]: Ուստի բնական կլինեի սպասել, որ իր թագադրությունից հետո հայաստանյան հանրությանը ինքնաներկայանալու պարագայում նա էլ պետք է բախվեր հռոմեական խնդրարկու արքաների համար ընդհանուր խնդրին, այն է՝ մեծարել կայսրին որպես բարձրագույն հեղինակություն, ճանաչել հռոմեական շահերի գերակայությունը սեփականի նկատմամբ և գտնել ինքնաներկայացման այնպիսի միջոցներ, որոնք կարտացոլեին երկու իշխանությունները՝ բացառելով նրանցից մեկի

մյուսին խանգարելը [35, pp. 63-67]: Կախյալ արքաների համար այդ խնդիրը, ըստ էության, անլուծելի էր: Բանն այն է, որ կայսրից իշխանություն ստանալն ու նրա աստվածային պատիվներ մատուցելը տեղական հանրությունների աչքին զրոյացնում էին խնդրարկու արքաների հեղինակությունը՝ նրանց վերածելով «թագավորակերպ իշխանների»: Ուստի, ցանկանալով շահել տեղական հռոմեասեր սոցիալական խմբերի համակրանքը, նրանք վերոնշյալ խնդիրը լուծում էին ոչ թե տեղական ավանդույթների ծիրում, այլ կայսերական ինքնաներկայացման ձևերը յուրացնելու միջոցով [35, pp. 63-67]: Դրամների դարձերեսներին զետեղելով իրենց իշխանության աղբյուր կայսեր պատկերը կամ էլ կայսերական դրամահատության մեջ ընդունված խորհրդանշանները՝ խնդրարկու արքաները հանրային գիտակցության մեջ ամրապնդում էին կայսեր և կայսրության հետ իրենց միասնության գաղափարը [33, № 1708-1720, 1721, 1723, 1775, 1866-1880, 4774, 4775] (*նկ. 4*): Օգոստոսի ստեղծած հռոմեական նոր աշխարհակարգում այս երևույթը համատարած էր: Մինչդեռ հայկական դրամագիտական նյութը տրամագծորեն այլ պատկեր է պարագծում:

Յու. Ներսեսյանը և այլք Տիգրան III-ին են վերագրում տարաբժեք դրամների (դրախմա, չորեքդրախմա, քաղքուս, երկքաղքուս, չորեքքաղքուս) առնվազն ութ տիպեր [21, pp. 6-7]: Դրանց բոլորի դիմերեսին արքան ներկայացված է արքայի աջ դարձած գլուխը՝ պսակված վեց կամ ութ թևավոր աստղով (Լոգոս) զարդարված արտաշեսյան խույրով և ապարոշով [21, pp. 6-7, № 4-11: 22, Pl. 95]: Ըստ ընդունված կարծիքի՝ խույրը (*θιάρα*) խորհրդանշում էր աստվածների աշխարհի հետ արքայի ունեցած միջնորդական, այսինքն՝ սրբազան, կրոնական ֆունկցիաները [2, էջ 113] և շեշտում էր «արքայի իշխանության օրինականությունը ներհանրության միջավայրում՝ ըստ սովորության իրավունքի» [6, էջ 47]: Հնամենի ծագում ունեցող ապարոշը (*δισάδημα*) հելլենիստական դարաշրջանում դարձել էր արքայական իշխանության սուվերենության և նրա ուժային բնույթի հիմնական խորհրդանշանը: Արտաշեսյան արքաներն իրենց գլխի հարդարանքի մեջ ավանդաբար համակցում էին այդ երկուսը: Սակայն խնդրարկու արքաների հետ Հռոմի հարաբերությունները հռոմեական իրավանորմերով վերաձևակերպելու արդյունքում փոխվեցին նրանց իշխանության ոչ միայն բովանդակությունը, այլև խորհրդանշանները: Կայսրերն իրենց վերապահեցին հելլենիստական աշխարհում իբրև հաղթանակի նշան ընդունված դափնեպսակը: Իսկ խնդրարկու արքաների գլխի հարդարանքից դուրս մղվեց խույրը, որն այլևս անհարիր էր նրանց նոր իրավական կարգավիճակին: Արդյունքում՝ ապարոշը դարձավ խնդրարկու արքաների գլխի հարդարանքի միակ պատվանշանը [4, էջ 250: 31, III,9.1: 32, XV.29.3-5: 36, p. 65]: Սվետոնիոսի հաղորդումը, թե Տիգրանը «...*Regnum Armeniae Tigrani restituit ac pro tribunali diadema imposuit*» (Հայոց թագավորությունը վերադարձրեց Տիգրանին և տրիբունայի առջև ապարոշ դրեց (Տիգրանի գլխին)) [30, III.9], արված է վերը նշվածի տրամաբանությամբ: Սակայն ապարոշով ինվեստիտուրան կատարվում էր իշխանության այդ նշանը թեկնածուի գլխին կապելու միջոցով, որի համար հռոմեական հեղինակներն օգտագործում են *evincire* (կապել, հանգուցել) բայը [32, VI.42: 33, XV.2]: Ուստի վերոնշյալ հատվածում հեղինակի գործածած *ponere* (դնել) բայից հասկացվում է, որ Տիգրան III-ի թա-

գաղղությունը կատարվել է խույրի միջոցով, որին հավելվել է ապարոշը²: Հենց այսպիսին է Տիգրան III-ի գլխի հարդարանքը նրա դրամների վրա: Նրանում ապարոշի առկայությունը հնարավոր է վերաիմաստավորել իբրև արքայի հռոմեահպատակության նշան [18, pp. 107-108]: Բայց անհնարին է նույն կերպ բացատրել խույրի առկայությունը, քանի որ այն իր խորհրդապաշտությամբ հակասում էր կայսեր կողմից խնդրարկու արքաների ինվեստիտուրայի գաղափարաբանությանը:

Խնդրարկու արքաների իշխանության ձևաչափից շեղումն արտահայտված է նաև Տիգրան III-ի պաշտոնական տիտղոսներում: Տիգրան III-ը ոչ միայն չի յուրացրել Օգոստոս կայսեր «Հուլիոս» տոհմանունը, այլև իր տիտղոսագրում տեղ չի հատկացրել Հռոմի հետ կախյալ արքաների դրական կապն արտահայտող «հռոմեասեր» (*Φιλορωμαίος*) մակդիրին [18, p. 105ff]: Տիգրան III-ի դրախմայի դարձերեսին խորագրված է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΟΠΑΤΟΡΟΣ ΚΑΙ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ (Մեծի արքայի Տիգրանի, հայրասեր և հելլենասեր) [21, p. 6, № 4: 22 p. 113]: Այդ կերպ հարգանքի տուրք մատուցելով եղբրամահ հոր հիշատակին՝ նա նաև իր դրական վերաբերմունքն է արտահայտում Հայաստանի հելլենիստական բնակչության կամ քաղաքակրթության հանդեպ:

Երկքաղքուսների մի տիպի վրա Տիգրան III-ի իշխանական վերադասությունը կրում է սրբազնային բովանդակություն և ենթադրում է նրա անձի աստվածացումը: Դրամի խորագիրը կրում է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΘΕΙΟΥ (Մեծի արքայի Տիգրանի, Աստծո) տիտղոսը [21, p. 7, № 10]: Ակնհայտ է, որ Θεός մակդիրի հավելմամբ Տիգրան III-ը ցանկացել է վերականգնել իր նախնիների՝ Արտավազդ II-ի և Տիգրան II-ի ավանդույթը: Սակայն կարելի է կարծել, որ Տիգրան III-ի համար այն ունեցել է նաև արտաքին քաղաքական նշանակություն և կոչված է եղել իր նկատմամբ Օգոստոս կայսեր կրոնագաղափարական ազդեցությունը չեզոքացնելուն [6, էջ 243]:

Խնդրարկու արքաների դրամահատական օրինաչափությունից շեղումն ավելի ակնհայտ է Տիգրան III-ի դրամների դարձերեսի պատկերագրության մեջ: Այն բավականին բազմազան է. երկքաղքուսների երկու տիպերի վրա ներկայացված են փիղ և ձի [21, p. 7, № 10, 11]: Մեկ այլ տիպի դարձերեսին՝ վարից վեր գրությամբ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ բառերի միջև պատկերված է նոճի [19, № 173]: Այդ պատկերներն Արտաշեսյան դրամահատության մեջ նախապես ներկայացվել էին Տիգրան II-ի և Արտավազդ II-ի դրամների վրա [21, p. 4: 8, էջ 83-85, աղ. 1.1]: Բայց դրամների մյուս տիպերը հատկանշվում են ընդգծված ռազմական թեմայով. մարտիկ՝ մեծ վահանով և նիզակով [21, p. 6, № 6-9], քայլող Նիկե դիցուհին՝ աջ ձեռքն առաջ պարզած [19, № 172] (*նկ. 5*), արքան կանգնած՝ ձեռքին նիզակ [22, p. 6, № 4] (Նկար 6), արքան մարտակառքի վրա՝ ձեռքին արմավենու ճյուղ [21, p. 6, № 5]: Այս ամենը խիստ արտասովոր է խնդրարկու արքայի դրամահատության համար, քանզի դրանց արտահայտած պատմական տեղեկույթը ոչնչով չի հուշում դրամի հեղինակի՝ կայսեր շնորհով արքա դառնալու մասին: Ընդհա-

² Հայոց արքա Չենոն-Արտաշեսի (18-34 թթ.) թագադրության նկարագրության մեջ վերոնշյալ երկու բայերը «շփոթում է» նաև Կ. Տակիտուսը [32, II.56]: Հետևաբար՝ դա կարող ենք համարել հռոմեական պատմագրության հայոց արքաների իշխանությունը նսեմացնելու ընդհանուր միտումը:

կառակը, չորեքբաղրուսի դարձերեսին Նիկեի՝ պարզած աջ ձեռքով «Տիգրան» գրությամբ հավելու փաստը դիտորդին հանգեցնում է այն մտքին, որ Տիգրան III-ի գահակալությունը կանխորոշվել է դիցուհու «շնորհով»: Տվյալ դեպքում իմաստավորված է Նիկեի ձեռքին պսակի կամ արմավենու ճյուղի բացակայությունը, քանզի դիցուհու առաջ մեկնած աջ ձեռքի շարժումից և նրա թիկունքում գետեղված «արքա» բառի առկայությունից ինքնին ենթադրվում է, որ դիցուհին արդեն հանձնել է հաղթանակի այդ խորհրդանշանները [7, էջ 83]: Իսկ արքայի՝ մարտակառքի վրա կանգնած և արմավենու ճյուղ բռնած պատկերաձևն ամբողջացնում է այն միտքը, որ դիցուհու շնորհած հաղթանակն է եղել Տիգրան III-ի գահակալությունը հիմքը:

Տիգրան III-ի դրամների վրա միապետի հերոսականության և աստվածաշնորհ հաղթանակի պատկերագրական տարրերի գերակշռությունը հարց է հարուցում, թե ո՞ր հաղթանակի մասին է խոսքը: Անհերթել կլինի կարծել, թե դրամների վրա կարող էր դրոշմվել անիրական հաղթանակի տեսարան, կամ էլ նկատի է առնվել Ք. ա. 20 թ. հռոմեական «հաղթանակը». նման քայլը փառավորելու փոխարեն հանրային ծաղրի կարծանացներ Տիգրան III-ին: Մյուս կողմից, անվիճելի իրողություն է, որ Ք. ա. 20 թ. պարթևա-հռոմեական հաշտությունից հետո Տիգրան III-ը չէր կարող «հաղթանակի» պահանջը բավարարել պարթևների կամ պարթևահպատակ որևէ երկրի դեմ պատերազմելով: Սրանից հետևում է, որ Տիգրան III-ն իր իշխանության հիմքը համարել է Ք. ա. 20 թ. Արտաշատում հայ ավագանու երկու թևերի ռազմական բախման ժամանակ իր կողմնակիցների հաղթանակը: Միանշանակ է, որ Տիգրան III-ի ինքնաներկայացման այդ արտասովոր և բացառիկ ձևը չէր կարող նրա քմահաճույքի արտահայտություն լինել, քանի որ Հայաստանում հռոմեական ներկայացուցչությունը դա կարող էր գնահատել իբրև Հռոմի դեմ ըմբոստություն կամ էլ անհարգալից վերաբերմունք³: Տիգրան III-ի մասին աղբյուրների սակավ տեղեկությունների պարագծում հնարավոր չէ բացատրել վերոնշյալ պարականոն իրողությունը: Փոխարենը, հայոց արքայի քաղաքական կեցվածքը մեկնաբանելի է խնդրարկու արքաների հետ Հռոմի հարաբերություններում ներդրված հռոմեական իրային իրավունքի տիրույթում: Տիգրան III-ի դրամների վրա հռոմեական գերիշխանությունը ցուցող պատկերագրական տարրերի բացակայությունը խոսում է այն մասին, որ պատրոն-խնդրարկու հարաբերությունների իրավական հարթության մեջ հայոց արքային վերապահվել է հռոմեական պրեկարիստի կարգավիճակ: Ըստ այդմ, Տիգրան III-ը, որպես խնդրարկու հարաբերելով կայսեր հետ, իրավունք է ունեցել որպես սուվերեն տիրակալ (ΑΝΑΣΣΩ ΩΣ ΔΕΣΠΟΤΗΣ) հանդես գալու և՛ ներքին, և՛ արտաքին բոլոր հարաբերություններում: Քաղաքական առումով դա «հռոմեական ժողովրդի բարեկամի» կարգավիճակն էր՝ այդ հասկացության ամենալայն ու ավանդական իմաստով: Ըստ էության, դա այն կարգավիճակն էր, որին Արտաշատում համաձայնել էր Տիգրան II-ը, և որի պահպանությանն էր ձգտում Արտավազդ II-ն իր գահակալության ողջ ընթացքում:

³ Սկսած Ք. ա. 66 թ.՝ Հռոմը Հայաստանում, նվազագույնը ցենսուրիոնի մակարդակով, ուներ իր շահերի ներկայացուցիչը [25, XXXIV: 33, XII.45]:

4. Տիգրան III-ի քաղաքական շրջադարձի ֆաբուլան

1926 թ. նշանավոր դրամագետ Էդ. Նյուիլը Տիգրան III-ի դրախմայի արքայական տիտղոսաշարում ավանդական «արքայից արքա» բաղադրիչի բացակայությունից եզրակացրել է, թե «*Խանդոտ և ավելի զորեղ հարևանները հարկադրել են նրան իր դրամների վրայից հանել մեծադորոդ արքայից արքա տիտղոսը, որը օգտագործում էին նրա հայր Արտավազդն ու պապ Տիգրան I-ը: Դրա փոխարեն նա ընդունել է պարթևական Բասիլեոս Մեգոս տիտղոսը: Բացի այդ, նա հավելել է նաև պարթևական ծանոթ փիլոսոփա և փիլեղոս մակդիրները*» [23, pp. 13-15]: Ավելորդ է նշել, թե արդի պատմագիտության և դրամագիտության տեսանկյուններից որքան անհիմն ու սխալական են **Բասիլեոս Մեգոս** տիտղոսի և **փիլոսոփա** ու **փիլեղոս** մակդիրների պարթևական ծագման մասին Էդ. Նյուիլի եզրահանգումները [23, pp. 13-15]: Փաստը մնում է այն, որ դրանց վրա հենվելով՝ 1938 թ. Ն. Չ. Դիրվոյսը հնարավոր է համարել, որ Տիգրան III-ն իր կառավարման վերջերին ընկել է պարթևական ազդեցության տակ [16, p. 191]: Ճիշտ է, հեղինակը, հղելով աղբյուրներին, անմիջապես էլ ընդունում է, որ «այդ ժամանակ Հայաստանի նկատմամբ եթե ոչ ամբողջությամբ, ապա արտաքուստ, վերականգնված է եղել Հռոմի վերահսկողությունը» [16, p. 191]: Սակայն նրա վերոնշյալ ենթադրությունն իսկ բավարարել է պատմագիտության մեջ այն սխալ կարծիքի արմատավորումը, թե Տիգրան III-ն «*իր թագավորության վերջին (այսինքն՝ մ. թ. ա. մոտ 10) լքում է հռոմեական կողմնորոշումը և իր հատած դրամների վրա սկսում է պահլավերեն մակագրություններ անել*» [5, էջ 632]: Հղումը կատարվում է Ն. Չ. Դիրվոյսին [5, էջ 632, ծ. 105], որն ընդամենը հավանական էր համարել, որ Տիգրան III-ը կարող էր ընկած լինել պարթևների ազդեցության տակ: Պահլավերեն մակագրությունների մասին ո՛չ նա, ո՛չ էլ Էդ. Նյուիլը ընդհանրապես չեն խոսում և չէին կարող խոսել, որովհետև Էդ. Նյուիլի դիտարկած դրախմայի և երկքաղուսի տիտղոսագրերը ոչ թե պահլավերեն են, այլ հունարեն: Դրանից հետևում է, որ Տիգրան III-ի դեպի պարթևները քաղաքական շրջադարձի մասին տեսակետը պետք է մերժվի: Բացի այդ՝ խոսելով Օգոստոսի ու Տիգրան IV-ի հակասության մասին՝ Դիոն Կասսիոսը հստակ փաստում է, որ պատճառը եղել է Տիգրան III-ի մահից հետո նրա որդու ինքնաթագադրվելը, որով ոտնահարվել էր Հայաստանի նկատմամբ կայսեր գերիշխան հավակնությունը [13, LV.10: 2, էջեր 104-105]:

ԵԶՐԱՆՄԱՆՈՒՄ. Ք. ա. 20 թ. հայոց արքա Արտաշես II-ի սպանությունը և Օգոստոս կայսեր անունից նրա եղբորը՝ Տիգրանին թագադրելը Հռոմում գնահատվել է որպես հաղթանակ և Մեծ Հայքի նկատմամբ «հռոմեական իրավունքի վերահաստատում»: Այդ առթիվ թողարկված հռոմեական դրամների վրա խորհրդանշական ձևերով հայտարարվում է Մեծ Հայքի նկատմամբ հռոմեական իրավունքի նոր սկզբունքի ներդրման մասին, իսկ Տիգրան III-ը ներկայացվում է որպես հռոմեական խնդրարկու արքա: Մինչդեռ Տիգրան III-ի դրամների պատկերագրության քննությունը ցույց է տալիս, որ Տիգրան III-ն իր իշխանության իրավական հիմքը համարել է ոչ թե կայսեր շնորհը, այլ Ք. ա. 20 թ. Արտաշատում տեղի ունեցած պալատական հեղաշրջման ժամանակ իր կողմնակիցների հաղթանակը: Խնդրարկու արքաների համար անբնական այդ հոչակագիրը հայ-հռոմեական նոր հակասության տեղիք չի տվել: Դրանից հետևում

Է, որ Տիգրան III-ի գահակալությունը ձևակերպված է եղել ոչ թե հռոմեական «պոսե-սիայի», այլ «պրեկարիայի» սկզբունքով: Ըստ այդմ, ճանաչելով կայսրին որպես իր պատրոն-վեհապետ, Տիգրան III-ը իրավունք է ունեցել բոլորի հետ և բոլոր հարաբերու-թյուններում հանդես գալու որպես կատարյալ ինքնիշխան տիրակալ: Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ Հռոմի արտաքին քաղաքական համակարգում էլ Տիգրան III-ն ունե-ցել է «Հռոմեական ժողովրդի բարեկամի» կարգավիճակ՝ այդ եզրի ամենալայն իմաս-տով: Տիգրան III-ի դրամների քննությունը բացահայտում է նաև իր գահակալության վերջերին դեպի պարթևները կողմնորոշվելու վերաբերյալ տարածված կարծիքի ան-հիմն լինելը:



նկ. 1



նկ. 2



նկ. 3



նկ. 4



նկ. 5



նկ. 6



1. Արծաթե դինար՝ հատված Պերգամոնում:
2. Արծաթե դինար՝ հատված Հռոմում:
3. Օգոստոսի արծաթե դինարը՝ դարձերեսին՝ հայկական խույրի պատկերով:
4. Թրակիայի խնդրարկու արքա Ռյոմետալկես I-ի դրամը՝ դիմերեսին Ռյոմետալկես I-ի, իսկ դարձերեսին Օգոստոսի դիմապատկերներով:
5. Տիգրան III-ի բրոնզե երկքաղքուսը՝ դարձերեսին Նիկեի պատկերով:
6. Տիգրան III-ի արծաթե դրախման:

Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն

1. **Մանանդյան Հ.** *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, Երկեր, հ. Ա: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1977: 636 էջ:
2. **Մանասերյան Ռ.** *Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ*, Երևան: «Արեգ» հրատ.: 1997: 215 էջ:
3. **Մելիքյան Ա.** *Արքայական ինվեստիտորայի պատկերագրությունը հռոմեական դրամների վրա // ՎՊՀ «Գիտական տեղեկագիր»*, հունանիտար և հասարակական գիտություններ: պ. 2: Երևան: 2022: 212-240 էջեր:
4. **Մելիքյան Ա.** *Հայոց արքա Չենոն-Արտաշեսի ինվեստիտորայի տեսարանով հուշարդամների պատկերագրական համակարգը // Լրաբեր հասարակական գիտությունների*, թ. 3: Երևան: 2023: 241-260 էջեր:
5. **Սարգսյան Գ.** *Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների օրոք*, / Հայ ժողովրդի պատմություն, հատ, I: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1971: 603-634 էջեր:
6. **Ստեփանյան Ա.** *Պատմության կերպատիկությունները Մեծ Հայքում*, գ. Ա, Երևան, Սարգիս Խաչենց-Փրինտինգո հրատ.: 2012: 384 էջ:
7. **Վարդանյան Ռ.** *Արտավազդ II-ի դրամները*, Երևան: «Մուղնի» հրատ.: 2004: 140 էջ:
8. **Babnis T.** *Augustan Poets on the Roman-Parthian Treaty of 20 BC // Classica Cracoviensia*. 2017. Vol. XX. 5-43 pp..
9. **Braund D.** *Rome and the Friendly king. The Character of the Client Kingship*. London & Canberra: Croom Helm, and New York: St. Marin's Press. 1984. 226 p.
10. **Burnett A., Amandry M., Ripolès P.** *Roman Provincial Coinage*. Vol. I. London, British Museum Press, Paris, Bibliothèque Nationale. 1992. 727 p. + 7 Maps.
11. **Cassius D.** *Dio's Roman History*. Vol. III. London, New York. W. Heinemann, The Macmillan Co. 1914, 519 p..
12. **Cassius D.** *Dio's Roman History. Volumes*. Vol. V. London, Cambridge Mass.. W. Heinemann LTD, Harvard University Press, 1955, 526 p..
13. **Cassius D.** *Dio's Roman History*. Vol. VI. London, Cambridge Mass.. W. Heinemann LTD, Harvard University Press, 1955, 492 p..
14. **Cassius D.** *Dio's Roman History*. Vol.VIII. London, New York. W. Heinemann LTD, G.P. Putnam's Sons, 1925, 482 p..
15. Classical Numismatic Group, Inc. XXVII (29 September 1993)// https://issuu.com/cngcoins/docs/cng_xxvii (դիտվել է 13.08.2024).
16. **Debevoise N.** *Political History of Parthia*. Chicago, The University of Chicago Press. 1938. 303 p..
17. **Flavius J.** *Jewish Antiquities*. London. Wordsworth Classics of World Literature. 2006. 902 p..
18. **Kéfélian A.** *Armenia and Armenians in Roman Numismatics // Electrum*. Vol. 28. 2021. 105-134 pp..
19. **Kovachs F.** *Armenian Coinage in the Classical Period // Classical Numismatic Studies*. № 10. Lancaster/London. Classical Numismatic Group. Inc. xxv+83 p. + 34 Plates.
20. **Mattingly H.** *Coins of the Roman Empire in The British Museum*. Vol. 1 (Augustus to Vitellius). London. Printed by Order of the Trustees Sold at the British Museum, and by Longmans & Co. 1923. ccxxxi +464 p. + 64 Plates.
21. **Nercessian Y.** *Two Unpublished Coins of Tigranes III of Armenia // Armenian Numismatic Journal*. Vol. XXVI. Armenian Numismatic Society. 2000. 3-9 pp..
22. **Nercessian Y.** *Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia // Armenian Numismatic Society. Special Publication*. № 11. Los Angeles. 2006. 212 p.+ 96 Plates.
23. **Newell Ed.** *Some Unpublished Coins of Eastern Dynasts // Numismatic Notes and Monographs*. № 30. 1926. 13-15 pp..
24. Numismatica Ars Classica NAC AG Auction 72, Zürich-London, 2013, Lot 518, <https://www.arsclassicoins.com/wp-content-nasecure/uploads/2020/06/2013-NAC-72.pdf> (դիտվել է 13.08.2024)
25. **Plutarchos.** *Plutarch's Lives*. Vol. V. Cambridge Mass., London. Harvard University Press, W. Heinemann LTD. 1955, ix + 544 p..

26. **Res Gestae Divi Augusti.** *The Achievements of the Divine Augustus with an Introduction by P. Brunt and J. Moore.* Oxford. Oxford University Press. 1983, 90 p..
27. **Sear D.** *Greek Coins and their Values.* Vol. I. Europe. London. Seaby. 1987. XL + 317 p..
28. **Sear D.** *Roman Coins and their Values.* Vol. I. The Republic and the Twelve Caesars. 280 BC-AD 96. London. Spink and Son LTD. 2000. 532 p..
29. **Strootman R.** *Dynastic Courts of the Hellenistic Empires* // In: H. Beck (ed.) *A Companion to Ancient Greek Government.* Malden-Oxford. Wiley. 2013. 38–53 pp..
30. **Strootman R.** *The Great Kings of Asia. Universalistic Titulature in the Seleucid and Post-Seleucid Middle East* // In: R.Oetjen and F. Ryan (eds.). *New Perspectives in Seleucid History, Archaeology and Numismatics. Studies in Honor of Getzel M. Cohen.* Berlin. De Gruyter. 2019. 123-157 pp..
31. **Suetonius G.** *The Lives of the Caesars.* Vol. I. London, New York. W. Heinemann, The Macmillan Co. 1914. 497 p..
32. **Tacitus P.** *The Annals.* London, Published by "Poetry in Translation". 2017. 696 p..
33. *The Roman Imperial Coinage.* Vol. I. Augustus to Vitellius. Mattingly H. and E. A. Sydenham (Ed.). London. Spink and Son. 1923. 279 p. + 16 Plates.
34. *The Roman Imperial Coinage.* Vol. I. Revised Edition. From 31 BC to AD 69. Edited by Sudherland C., Garson R.. London. Spink and Son L.T.D.. 1984. 304 p. + 32 Plates.
35. **Wilker J.** *Modelling the Emperor: Representations of Power, Empire, and Dynasty among Eastern Client Kings* // In: *The Social Dynamics of Roman Imperial Imagery,* Edited by A. Russell, M. Hellström. Cambridge University Press. 2020. 52-75 pp..
36. **Бартошек М.** *Римское право. Понятия, термины, определения.* Москва. «Юрид. литература». 1989. 448 с..
37. **Бикерман Э.** *Государство Селевкидов.* Москва. «Наука». 1985. 264 с..

R e f e r e n c e s

1. **Manandyan H.** Critical Review of the History of the Armenian People.[*Q'makan tesut'yun hay zh'ogh'ovrdi patmut'yan*]. Yerevan. Arm SSR 1977: 636 էջ: (in Armenian)
2. **Manaseryan R.** Armenia from Artavazdes to Tiridat the Graeat. [*Hayastany Artavazdits' minch'ev Trdat Mets'*] // Yerevan. "Areg" LTD. 1997. 215 p.. (in Armenian)
3. **Melikyan A.** The Iconography of Royal Investiture in the Roman Coinage [*Arq'ayakan investiturayi patkeragrut'yuny hromeakan dramneri vra*] // "Scientific Proceedings" of Vanadzor State University. Humanities and Social sciences. № 2. 2022. 212-240 pp.. (in Armenian)
4. **Melikyan A.** The Iconographical System of Memorial Coins with Armenian King Zenon-Artaxias' Investiture Scene [*Hayots' arq'a Zenon-Artashesi investiturayi tesaranov hushadramnerov patkeragrakan hamakargy*] // Herald of Social Sciences. № 3. 2023. 241-260 pp.. (in Armenian)
5. **Sargsyan G.** Armenia under Artavazd B and his successors [*Hayastany Artavazd B-i ev nra hajordneri oroq'*] // History of Armenian Nation. Vol. I. Yerevan. AS ArmSSR 1971. 603-634 pp.. (in Armenian)
6. **Stepanyan A.** Metamorphoses of History in Great Armenia, Book I. [*Patmut'yan kerpap'okh'ut'yunnery Mets' Hayq'um*] // Yerevan, Sargis Khachenc – Printinfo. 2012. 384 p. (in Armenian)
7. **Vardanyan R.** Coinage of Artavazdes II [*Artavazd II-i dramneri*] // Yerevan, Publishing house Moughni. 2004. 140 p.. (in Armenian)
8. 8 – 35 (See: Bibliography)
36. **Bartoshek M.** Roman Law: Concepts, Terms, Definitions. Russ. Ed. [*Rimskoe pravo. Ponyatiya, terminy, opredeleniya*]. Moskva. “Yuridicheskaya literatura”. 1989. 448 p.. (in Russian)
37. **Bikerman E.** Institutions des Séleucides. Russ. Ed. [*Gosudarstvo Selevkidov*]. Moskva “Nauka”. 1985. 264 p.. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **18. 09. 2024**
 Փրակսուվել է / Рецензирована / Reviewed on: **12. 10. 2024**
 Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակների մասին

Արթուր Տիգրանի ՄԵԼԻԻՔՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, Վանաձոր, ՀՀ,
Էլ. հասցե՝ arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Artur Tigran MELIKYAN: PhD in History,
Associate professor at the Chair of History of VSU, Vanadzor, RA,
e-mail: arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Артур Тигранович МЕЛИКЯН: канд. исторических наук,
доцент кафедры истории госуниверситета, Ванadzор, РА,
эл. адрес: arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Իռա Հարությունի ՉԱՏԻՆՅԱՆ՝ պետհամալսարան, Վանաձոր, ՀՀ,
Էլ. հասցե՝ irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

Ira Harutyun CHATINYAN: Vanadzor State University, Vanadzor, RA,
e-mail: irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

Ира Арутюновна ЧАТИНЯН: госуниверситет, Ванadzор, РА,
эл. адрес: irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

UDK: 324

DOI: 10.52971/18294316-2024.27.2-20

**EGYPT'S POLICY TOWARD THE PALESTINIAN CONFLICT:
A HISTORICAL AND CONTEMPORARY ANALYSIS**

Artak H. Hovhannisyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: This article provides a comprehensive examination of Egypt's policy toward the Palestinian conflict, from its historical role as a mediator and advocate for Palestinian rights to its contemporary approach in the ever-evolving geopolitical landscape of the Middle East. Through a nuanced analysis, this paper delves into the key factors shaping Egypt's policy and its impact on the broader dynamics of the Israeli-Palestinian conflict. *Methods and materials.* We have employed qualitative methodology by drawing on primary and secondary sources to analyze Egypt's policy approach to the Palestinian-Israeli conflict. Primary sources include official statements, policy documents, and speeches. Secondary sources encompass scholarly articles, books, reports, and media analyses that offer insights into Egypt foreign policy towards the Middle East and the Palestinian-Israeli conflict. *Analysis:* Egypt's position on the Israeli-Palestinian conflict has been a defining feature of its foreign policy in the Middle East for decades. As one of the Arab world's most influential and historically significant nations, Egypt's stance on the Palestinian issue has evolved significantly over time. This article aims to explore the historical context and contemporary dimensions of Egypt's policy, taking into consideration the changing regional dynamics, international relations, and domestic considerations that have shaped it. *Results.* The three factors elaborated on above will impact how the Egyptian regime will navigate the coming weeks and months and its role in the future governance of Gaza. The drive by Israel and its Western allies to “wipe out Hamas” in Gaza is bound to lead to a long and bloody ground incursion, although – judging from precedents – this will likely not succeed in crushing the resistance.

Key words: *Suez Canal, Hamas, Egypt's Contemporary Policy, Palestinian resistance, Sisi.*

Citation: Hovhannisyan A. *Egypt's Policy Toward The Palestinian Conflict: A Historical and Contemporary Analysis* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 20-27pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-20

ПОЛИТИКА ЕГИПТА В ОТНОШЕНИИ ПАЛЕСТИНСКОГО КОНФЛИКТА: ИСТОРИЧЕСКИЙ И СОВРЕМЕННЫЙ АНАЛИЗ

Артак Г. Оганнисян

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: Эта научная статья представляет собой всестороннее исследование политики Египта в отношении палестинского конфликта, от его исторической роли посредника и защитника прав палестинцев до его современного подхода в постоянно меняющемся геополитическом ландшафте Ближнего Востока. С помощью тонкого анализа эта статья углубляется в ключевые факторы, формирующие политику Египта, и ее влияние на более широкую динамику израильско-палестинского конфликта. **Методы и материалы:** В этой статье используется качественная методология, опирающаяся на первичные и вторичные источники для анализа политического подхода Египта к палестино-израильскому конфликту. Первичные источники включают официальные заявления, политические документы и речи. Вторичные источники включают научные статьи, книги, отчеты и анализ СМИ, которые предлагают понимание внешней политики Египта в отношении Ближнего Востока и палестино-израильского конфликта. **Анализ:** Позиция Египта в отношении израильско-палестинского конфликта была определяющей чертой его внешней политики на Ближнем Востоке на протяжении десятилетий. Как одна из самых влиятельных и исторически значимых стран арабского мира, позиция Египта по палестинскому вопросу со временем значительно изменилась. В этой статье предпринята попытка изучить исторический контекст и современные аспекты политики Египта с учетом меняющейся региональной динамики, международных отношений и внутренних соображений, которые ее сформировали. **Результаты:** Три фактора, подробно описанные выше, повлияют на то, как египетский режим будет ориентироваться в ближайшие недели и месяцы, и на его роль в будущем управлении Газой. Стремление Израиля и его западных союзников «уничтожить ХАМАС» в Газе обязательно приведет к длительному и кровавому наземному вторжению, хотя — судя по прецедентам — это, скорее всего, не приведет к сокрушению сопротивления.

Ключевые слова: Суэцкий канал, ХАМАС, современная политика Египта, палестинское сопротивление, Сиси.

Как цитировать: Оганнисян А. Политика Египта в отношении палестинского конфликта: исторический и современный анализ. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2(27). 20-27сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-20

Այստեղ, «**ռազմական անհրաժեշտություն**» տերմինն ունի լրացուցիչ պարզաբանման կարիք, քանզի այն սկզբունքն է, որը թուլացնում է պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության ընդհանուր իրավական համակարգը: Ռազմական անհրաժեշտության սկզբունքը միջազգային հումանիտար իրավունքի տիրույթում է հայտնվել՝ հիմքում ունենալով Հաագայի 1954 թ. և Ժնևի 1949 թ. կոնվենցիոնալ դրույթները: Դրանցից ամենակարևորներից մեկն ամրագրված է Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածում. «Պետությունները պարտավոր են հարգել թե՛ իրենց սեփական և թե՛ այլ կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ զերծ մնալով թշնամանքի գործողություններից, **բացառությամբ այն դեպքերի, երբ ռազմական անհրաժեշտությունը հրամայականորեն պահանջում է նման որոշում**» [20, article 4]: Այսինքն՝ ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **մշակութային արժեքների պաշտպանության պարտավորությունից բացառություն է այն դեպքը, երբ դրա ոչնչացումը կարող է ռազմական անհրաժեշտություն լինել**: Փաստական համատեքստի վերլուծությունն ակներև է դարձնում մի ճշմարտություն, որ **մշակութային ժառանգությունը, քանի դեռ ռազմական նպատակի չի առնչվում կամ չի օգտագործվում ռազմական նպատակով, լիարժեք պաշտպանված է, իսկ երբ ծառայում է ռազմական որևէ նպատակի, ապա պաշտպանությունը խիստ խնդրահարույց է**:

Այս գիտակցմամբ փորձենք տալ տերմինի հիմնավոր բացատրությունը: Մշակութային ժառանգության պաշտպանության համատեքստում ռազմական անհրաժեշտության սկզբունքը ոչ թե նոր է, որը պետք է բացարձակորեն պաշտպանի մշակութային ժառանգությունը, այլ 20-րդ դարի համատարած ոչնչացումների ֆոնին պարզապես մեղմի և սահմանափակի ռազմատենչ պատերազմներ վարելու սովորույթը: Այն սահ-

մանավակում է պետությունների ազատությունը զինված բախումների ընթացքում և դնում ռազմական նպատակին հասնելու օրինականության հարցը: Այլոքեն, ռազմական անհրաժեշտությունը միջազգային մարդասիրական իրավունքի հայեցակարգ է, որը ձգտում է հավասարակշռել արդյունավետ ռազմական գործողությունների պահանջները մշակութային արժեքների պաշտպանության հրամայականի հետ՝ թույլ տալով ուժի կիրառումը և որոշակի միջոցների ձեռնարկումը, որոնք էական են օրինական ռազմական նպատակին հասնելու համար կամ արգելված չեն միջազգային իրավունքով [19, pp. 62-67]:

Այս սկզբունքը մշտապես առկա է եղել պատերազմի ժամանակ ժառանգության պաշտպանության բոլոր օրենքներում՝ ներառյալ Մանկտ Պետերբուրգի 1868 թ. հռչակագրում և Լիբերի օրենսգրքում, համաձայն որի՝ մշակութային ժառանգության դեմ օրինական է միայն այնպիսի ռազմական ուժը, որն անհրաժեշտ է, որ պատերազմող կողմերը հասնեն իրենց ռազմական նպատակին [2, p. 213; 15, p. 197]: Հարկ է նշել, որ «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների հարգման մասին» Հաագայի 1907թ. կանոնակարգի համաձայն՝ թշնամու ժառանգության ոչնչացումը կամ զավթումն օրինական է, եթե հրամայականորեն բխում է պատերազմի ռազմական գործողությունների անհրաժեշտությունից [8, Regulations: Art. 27]: Հաագայի 1907 թ. Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 7-րդ կետը ռազմական անհրաժեշտությունը սահմանում է որպես այն ամենը, ինչն անհրաժեշտ է պատերազմի կամ պաշտպանության համար մարտի ընթացքում կամ դրան նախապատրաստվելիս [8, 23 (g)]: Վերոհիշյալ կանոնակարգի 27-րդ հոդվածն արդեն ամրագրում է, որ «...արգելվում է թիրախավորել մշակութային արժեքները, եթե դրանք չեն օգտագործվել ռազմական նպատակներով» [8, Regulations: Art. 27]: Ասվածի տրամաբանական հաստատումն է այն, որ հենց **մշակութային արժեքների «օգտագործումն» է ոչ մշակութային նպատակներով, որ ստիպում է դրանց կորցնել լրացուցիչ պաշտպանությունը և վերածվել ռազմական նպատակ հետապնդող թիրախի: Հույժ կարևոր է արձանագրել, որ ռազմական անհրաժեշտությունը, առաջ գալով որպես մշակութային արժեքների վնասման դեմ պայքարի սահմանափակող ուժ, այնուհետև դարձավ թույլատրելի բացառություն** [13, pp. 1268-1271]:

1977 թ. ընդունված՝ Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիային կից առաջին արձանագրությունը մշակութային արժեքների պաշտպանությունը մոտեցրեց քաղաքացիական օբյեկտների պաշտպանությանը և նշեց, որ դրանք չպետք է հարձակման ենթարկվեն՝ կրկին բացառությամբ ռազմական անհրաժեշտության դեպքերի [3]: Այդ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ռազմական նպատակը պարունակում է երկու էական չափանիշ, որոնք պետք է լիարժեքորեն կատարվեն նախքան ժառանգության օբյեկտների ոչնչացումը, վնասումը կամ գրավումը [4, p. 33]: Առաջինն այն է, որ հարձակումները պետք է սահմանափակվեն միայն ռազմական օբյեկտներով, և հարձակման դեպքում օբյեկտի բնույթը, գտնվելու վայրը, նշանակությունը կամ օգտագործումը պետք է լինեն այնպիսին, որ այն **«արդյունավետ ներդրում ունենան ռազմական գործողություններում»** [4, p. 34]: Իսկ երկրորդն այն է, որ **ռազմական առավելությունը պետք է լինի բացահայտ և որոշակի** [3]: Այստեղ ակնհայտ է, որ ժառան-

գոյությունն իր բնույթով, գտնվելու վայրով և նշանակությամբ չի կարող արդյունավետ ներդրում ունենալ ռազմական գործողություններում, բայց սհա դրա օգտագործումը կարող է վտանգել այն: Բայց այստեղ կա ռազմական առավելության հասնելու բացահայտ և որոշակի լինելու փաստը: Ուստի «**չի թույլատրվում ոչնչացնել այնպիսի մշակութային օբյեկտներ, որի օգտագործումը որևէ կոնկրետ և բացահայտ ներդրում չի բերում ռազմական գործողություններում, ոչ էլ այն մշակութային օբյեկտը, որը ժամանակավորապես ծառայել է որպես մարտիկների ապաստարան, բայց այլևս որպես այդպիսին չի օգտագործվում**» [1, p.334, § 2.6]: Միայն տվյալ պահին մշակութային կառույցի ռազմական նպատակով օգտագործումն է⁴, որ կարող է մշակութային կառույցը «դարձնել» ռազմական թիրախ: Այլ կերպ ասած՝ ռազմական գործողություններին օժանդակելու համար ժառանգության օգտագործումը հիմնական փաստարկն է, որ զինված հակամարտության կողմերից մեկը կարող է վկայակոչել մշակութային արժեքների վրա հարձակումն արդարացնելու համար [14, pp. 1-91]: Այստեղից կրկին կարող ենք հետևություն անել, որ մշակութային արժեքների օգտագործումն իբրև ապաստարան, զենք-զինամթերքի պահեստ, թուլացնում է ժառանգության պաշտպանության ընդհանուր համակարգը և դարձնում թիրախավորման համար խոցելի:

1999 թվականին ընդունված Հասցայի 1954 թ. կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը նշում է՝ «**Ռազմական նպատակ հետապնդող թիրախը՝ այն օբյեկտն է, որն իր բնույթով, գտնվելու վայրով, նշանակությամբ կամ օգտագործմամբ արդյունավետ ներդրում է ունենում ռազմական գործողություններում, և որի լրիվ կամ մասնակի ոչնչացումը, գրավումը կամ չեզոքացումը տվյալ պահին տիրող հանգամանքներում տալիս են հստակ/բացահայտ ռազմական առավելություն**» [22, art. 1 f.]: Արձանագրությունը նշում է, որ մշակութային արժեքների դեմ թշնամանքի գործողությունն օրինական է, եթե բավարարվում է երկու պահանջի. 1. «մշակութային արժեքն իր գործառնությունով վերածվել է ռազմական նպատակներ հետապնդող թիրախի», 2. «համանման ռազմական առավելություն ստանալու համար իրագործելի այլընտրանք չկա» [22, art. 6]:

Երկրորդ արձանագրությունը փորձում է խստացնել պայմանները և ավելացնում, որ հարձակումը պետք է պատվիրվի հրամանատարության ամենաբարձր օպերատիվ մակարդակում, սպայի կողմից, որը ղեկավարում է գումարտակին համարժեք կամ ավելի մեծ ուժ, և որ այն կարող է հարձակման ենթարկվել «անհապաղ ինքնապաշտպանության պահանջների պատճառով» [22, art. 13(2)(c)]: Բացի այդ, Երկրորդ արձանագրությունը հարձակման հետագա պայման է ավելացնում. հարձակման դեպքում պետք է տրվի **նախազգուշացում, երբ հանգամանքները թույլ են տալիս**: 1954 թ.-ի կոնվենցիայով այդ պարտականությունը գոյություն չի ունեցել: Բացի այդ, երբ հակառա-

⁴ Գոյություն ունեն տարբեր եղանակներ, որ հակառակորդը կարող է օգտագործել մշակութային արժեքները ռազմական գործողությունների ընթացքում: Ամենաակնհայտը անշարժ մշակութային ժառանգության մեջ դիրք գրավելն է, օրինակ՝ բլրի զագաթի պատմական ամրոցը որպես պաշտպանական ամրոց օգտագործելը կամ միջնադարյան զանգակատանը կամ մինարեթում դիպուկահարի տեղակայումը՝ մարտադաշտը հետախուզելու նպատակով: Մեկ այլ դեպքում կարող են ռազմական սարքավորումներ կամ զինամթերք պահվել թանգարանում, պատկերասրահում կամ պատմական նշանակություն ունեցող տանը:

կորոշր պարզում է, որ մշակութային կառույցը օգտագործվում է ռազմական նպատակով, պետք է որջամիտ ժամանակ տա զինվորներին կամ հրամանատարներին իրավիճակը փոխելու համար: Այսինքն՝ վերոշարադրյալ որոշ դիտարկումներ ակներև են դարձնում այն փաստը, որ «ռազմական անհրաժեշտությունը» չի կարող տալ մշակութային ժառանգությունը վնասելու կամ ոչնչացնելու համար անսահմանափակ ուժ կիրառելու իրավունք [18, p. 1].

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Զինված բախումների դեպքում կամ կոնֆլիկտային իրավիճակներում հուշարձանների կամ դրանց անմիջական մշակութային լանդշաֆտի օգտագործումը ռազմական նպատակով՝ այդ թվում որպես սպաստարան, զենք-զինամթերքի պահեստ, մարտական հենակետ, դիտակետ, հրամանատարության կետ կամ զինված ուժերի տեղակայման կենտրոն, էական վտանգ է հանդիսանում ժառանգության պահպանությանը: Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի և դրա երկու արձանագրությունների, Ժնևի կոնվենցիաների և լրացուցիչ արձանագրությունների և դրանց հիմքով ձևավորված Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերն արգելում են ժառանգության օգտագործումը ռազմական նպատակներով: Բայց, սկսած 2020 թվականից, Ադրբեջանի կողմից Արցախի հայկական եկեղեցիների, համայնքային մշակութային ու կրթական կենտրոնների օգտագործումը ռազմական նպատակների համար հանգեցրել են այդ արժեքների անձեռնմխելիության կորուստին և վտանգել հետագա պահպանումը: Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ շատ հաճախ պատերազմների ժամանակ ժառանգության պաշտպանությունը կախված է զինված ուժերի ճիշտ ու արդյունավետ գործողություններից և ժառանգությունը ռազմական թիրախ չդարձնելուց կամ ռազմական նպատակներին չծառայեցնելուց, իսկ ինչպես մենք տեսանք, Ադրբեջանի կողմից հայկական հուշարձանները ոչ միայն վտանգվում են դիտավորյալ հարձակումների պատճառով, այլև օգտագործվում ռազմական զանազան նպատակներով: Միջազգային նորմերի հարգումը հրամայական է Արցախի մշակութային արժեքների հետագա պահպանումը իրականացնելու համար:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Bothe M., Partsch K. Waldemar A.** New Rules for Victims of Armed Conflicts, Commentary on the Two 1977 Protocols Additional to the Geneva Conventions of 1949, The Hague/Boston/London, Martinus Nijhoff Publishers, 1982.
2. **Carnahan B. M, Lincoln.** Lieber and the Laws of War: The Origins and Limits of the Principle of Military Necessity, “American Journal of International Law”, Vol. 92, 1998.
3. Geneva, Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and Relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-additional-geneva-conventions-12-august-1949-and>.
4. **Henckaerts J.-M., Doswald-Beck L.,** Customary International Humanitarian Law, Volume I: Rules, Cambridge: Cambridge University Press, 2005, <https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf>.
5. ICJ/ Congo, Reports of Judgments, Advisory Opinions and Orders: Case Concerning Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo V. Uganda), Judgment of 19 December 2005, <https://www.icj-cij.org/public/files/case-related/116/116-20051219-JUD-01-00-EN.pdf>.

6. ICJ/Israel, Separation Wall/Security Fence in the Occupied Palestinian Territory, <https://casebook.icrc.org/case-study/icjisrael-separation-wallsecurity-fence-occupied-palestinian-territory>.
7. ICRC, Practical Advice for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – Guidelines, Advisory Service On International Humanitarian Law, 2002, <https://www.icrc.org/en/document/practical-advice-protection-cultural-property-event-armed-conflict-guidelines>.
8. IHL, Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land. The Hague, 18 October 1907, <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/hague-conv-iv-1907>.
9. IHL, Practice Relating to Rule 38. Attacks against Cultural Property, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_cou_be_rule38.
10. IHL, Practice Relating to Rule 39. Use of Cultural Property for Military Purposes, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_rul_rule39.
11. IHL, Practice Relating to Rule 40. Respect for Cultural Property, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule40 (մուսք՝ 03.02.2022).
12. IHL, Practice Relating to Rule 41, Export and Return of Cultural Property in Occupied Territory, <https://ihl-databases.icrc.org/en/customary-ihl/v1/rule41>.
13. **Johannot-Gradis Ch.**, Protecting the Past for the Future: How does Law Protect Tangible and Intangible Cultural Heritage in Armed conflict? “International Review of the Red Cross”, 2015, № 97 (900) .
14. **O’Keefe R., Péron C., Musayev T., Ferrari G.** Protection of Cultural Property Military Manual, UNESCO, France, and the International Institute of Humanitarian Law, Sanremo, Italy, 2016.
15. **Robertson H. B., Jr.**, The Principle of a Military Objective in the Law of Armed Conflict, “International Law Studies”, Vol. 72, Newport, Rhode Island, 1998.
16. **Roethlisberger E.** The Importance of Respect for International Humanitarian Law and the Activities of the ICRC, “Protection of Cultural Property in the Event of Armed Conflict: Report on the Meeting of Experts (Geneva, 5-6 October 2000)”, ICRC, Geneva, February 2002, <https://www.icrc.org/en/document/protection-cultural-property-event-armed-conflict-report>:
17. **Stone P.** The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict, “Museum International”, Vol. 67, 2015.
18. **Techera E.** Protection of Cultural Heritage in Times of Armed Conflict: The International Legal Framework Revisited, 2007, University of Western Australia, https://www.researchgate.net/publication/228260427_Protection_of_Cultural_Heritage_in_Times_of_Armed_Conflict_The_International_Legal_Framework_Revisited.
19. **Tigranyan A.**, The Armenian Cultural Heritage of Artsakh, Mechanisms for Protection in The International System for Preservation of Heritage, “Vem Series” No 6, Yerevan, 2023, <https://orient-new.sci.am/archive/915/article-zc2EvGaysTPwBOUn9ktuMJir4Q1oxLZASgl6KpFX.pdf>.
20. UNESCO, Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. The Hague, 14 May 1954.
21. UNESCO, Protect Cultural Property in the Event of Armed Conflict, The 1954 Hague Convention and Its Two Protocols, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000138645?fbclid=IwAR3tiBiy25x1Xcnpjv6F8qPBpQxqO5nrRbtejD8Y1xl-eKw88NM6aK_2zvY.
22. UNESCO, Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. The Hague, 26 March 1999.
23. United Nations Human Rights Office of the High Commissioner, International Legal Protection of Human Rights in Armed Conflict, New York and Geneva, 2011.
24. АЗЕРТАДЖ Новости, Военные атташе осмотрели конфискованную у армян военную технику и боеприпасы, <https://www.youtube.com/watch?v=pedhLD0aAoU>.
25. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում Ադրբեջանն Արցախի մշակույթի տները, համայնքային կենտրոններն ու դպրոցներն օգտագործում է ռազմական նպատակով, 2024, <https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանն-արցախի-մշակույթի-տները-համ/> (դիտվել է՝ 15.03.2024):
26. **Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին»** Ժնևի 1949 թ. կոնվենցիա, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=50336>:

27. Կավաքավանքի եկեղեցին կորցնում է իր նախնական տեսքը, «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում», <https://monumentwatch.org/hy/alerts/wahaaqanq.-կավաքավանքի-եկեղեցին-կորցն/> (դիտվել է՝ 15.03.2024):
28. Կատարո վանքի եկեղեցու օգտագործումը ռազմական նպատակներով, «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում», 13 ապրիլի 2021, <https://monumentwatch.org/hy/alerts/կատարո-վանքի-եկեղեցու-օգտագործումը-ը/> (դիտվել է՝ 21.06.2021):
29. **Քոչարյան Վ.** Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2002:

References

24. AZERTAC News, Military attaches inspect military equipment and ammunition confiscated from Armenians [AZERTADZH Novosti, Voyennyye attashe osmotreli konfiskovannuyu u armyan voyennuyu tekhniku i boyepripasy] (in Russian)
25. Monitoring of Artsakh's cultural heritage Azerbaijan uses Artsakh's culture houses, community centers and schools for military purposes, 2024 [*Arts'akhi mshakutayin zharrangutyayn mshtaditarkum Aderbejann Arts'akhi mshakutyi tneri, hamaynkayin kentronnern u dprots'nern ogtagortsum e rrazmakan npatakov*]. (in Armenian)
26. On improving the condition of the wounded and sick in active armies" Geneva, 1949. convention [*Gortsogh banaknerum viravorneri yev hivandneri vichaki barelavman masin*] *Zhnevi 1949 t'. konvents'ia*] (in Armenian)
27. Kavakavank church loses its original appearance, "Monitoring of the cultural heritage of Artsakh" [*Kavak'avank'I yekeghets'in kort's'num e ir nakhnakan tesk'y, «Arts'akhi mshakut'ayin zharrangut'yan mshtaditarkum*] (in Armenian)
28. The use of the Kataro monastery church for military purposes, "Monitoring of the cultural heritage of Artsakh", April 13, 2021 [*Kataro vank'i yekeghets'u ogtagortsumy rrazmakan npataknerov, «Arts'akhi mshakut'ayin zharrangut'yan mshtaditarkum», 13 aprili 2021*] (in Armenian)
29. **Kocharyan V.** International Law. Educational manual, Yerevan, Yerevan University Press, 2002, *Kocharyan V., Mijazgayin iravunk': Usumnakan dzerrnark, Yerevan, Yerevani hamalsarani hrat.*, (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **14. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **26. 10. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմինե Հարությունի ՏԻԳՐԱՆՅԱՆ՝ ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի դասախոս, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, մշակութային ժառանգության միջազգային փորձագետ, Երևան, ՀՀ, էլ. huugե՝ armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)

Armine Haruthyun TIGRANYAN:

Lecturer at the Chair of Culturology of YSU

Researcher at "Amberd" Research Center,

International Expert of Cultural Heritage, Yerevan RA

e-mail: armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)

Армине Арутюновна ТИГРАНЯН: лектор кафедры культурологии ЕГУ, исследователь центра "Амберт", международный эксперт культурного наследия эл. адрес: armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)

ՀՏԴ՝ 321

DOI: 10.52971/18294316-2024.27.2-43

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վարդուհի Կ. Հովհաննիսյան

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անվտոմում.

Նախաբան. Հարավկովկասյան տարածաշրջանը յուրահատուկ և բարդ տարածաշրջան է ժողովրդավարական զարգացումների տեսանկյունից: Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանի երկու երկրները անցել են ժողովրդավարացման տարբեր ուղիներով, որոնք բնութագրվում են ինչպես նշանակալի առաջընթացով, այնպես էլ ծանրակշիռ մարտահրավերներով: Այս տարբերությունների ըմբռնումը շատ կարևոր է ավելի լայն տարածաշրջանային դինամիկան և ժողովրդավարական զարգացման հետևանքները հասկանալու համար: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում իրականացվել է համեմատական վերլուծություն՝ հիմնվելով տվյալների որակական և քանակական մի շարք աղբյուրների վրա, որոնք անհրաժեշտ են երկու երկրներում ժողովրդավարացման վերաբերյալ համապարփակ պատկերացում ձևավորելու համար: Վերլուծություն. Հոդվածում վերլուծվում են Հայաստանում և Վրաստանում ժողովրդավարացման ուղիները, մասնավորապես՝ թե ինչպես են յուրաքանչյուր երկրին յուրահատուկ քաղաքական մշակույթը, տնտեսական պայմանները և արտաքին գործոններն ազդում ժողովրդավարացման վրա: Վերլուծության մեջ նաև դիտարկվում են երկու երկրներում ազատ և արդար ընտրությունների անցկացումը, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների ազատության և օրենքի գերակայության դերը ժողովրդավարացման գործում: Հետազոտությունն ընդգրկում է ողջ հետխորհրդային շրջանը՝ ընդգծելով հիմնական սոցիալ-քաղաքական գործընթացները: Արդյունքներ. Հետազոտության արդյունքները վեր են հանում այն դժվարությունները, որոնց բախվում են ժողովրդավարության ձգտող պետությունները Հարավային Կովկասում: Թեև որոշ ոլորտներում արձանագրվել է որոշակի առաջընթաց, այդուհանդերձ, բազմաթիվ մարտահրավերներ

դեռևս պահպանվում են: Համեմատական վերլուծությունը արժեքավոր հետևություններ է հանգեցնում տարածաշրջանում երկու պետությունների ժողովրդավարացման տարբեր ուղիների վերաբերյալ և ընդգծում է շարունակական ջանքերի անհրաժեշտությունը՝ ուղղված այդ երկրների առջև ծառայած խոչընդոտների հաղթահարմանը:

Բանալի բառեր՝ ժողովրդավարացում, ընտրություններ, քաղաքացիական հասարակություն, Հայաստան, Վրաստան, Եվրոպական Միություն, «Վարդերի հեղափոխություն», «Թավշյա հեղափոխություն»:

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Վ. *Ժողովրդավարացման հիմնախնդիրները և միտումները Հայաստանում և Վրաստանում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Ն. 2 (27): 43-56 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-43

DEMOCRATIZATION ISSUES AND TRENDS IN ARMENIA AND GEORGIA

Varduhi K. Hovhannisyan

Institute of Philosophy, Sociology and Law of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The South Caucasus region is unique and complex from the perspective of democratic development. After the collapse of the Soviet Union, the two countries of the region have gone through different democratization paths, characterized by both significant progress and serious challenges. Understanding these differences is crucial for comprehending the broader regional dynamics and prospects for democratic development. **Methods and materials:** The paper provides a comparative analysis based on a range of qualitative and quantitative data sources, which are necessary to develop a comprehensive understanding of democratization in both countries. **Analysis:** The article analyzes the ways of democratization in Armenia and Georgia, particularly how each country's unique political culture, economic conditions, and external factors affect democratization. The analysis also considers the conduct of free and fair elections in both countries, the role of civil society, media freedom and the rule of law in democratization. The research covers the entire post-Soviet period, highlighting key socio-political processes. **Results:** The results of the research highlight the difficulties faced by states aspiring to democracy in the South Caucasus. Although some progress has been made in some areas, many challenges remain. The comparative analysis provides valuable conclusions about the different democratization paths of the two states in the region and highlights the need for continued efforts to overcome the obstacles faced by these countries.

Key words: *democratization, elections, civil society, Armenia, Georgia, European Union, “Rose Revolution”, “Velvet Revolution”.*

Citation: Hovhannisyan V. *Democratization Issues and Trends in Armenia and Georgia* // «Scientifik works» of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 42-56 pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-43

ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ ДЕМОКРАТИЗАЦИИ В АРМЕНИИ И ГРУЗИИ

Вардуи К. Оганнисян

Институт философии, социологии и права НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Регион Южного Кавказа является уникальным и сложным регионом с точки зрения демократического развития. После распада Советского Союза две страны региона прошли разные пути демократизации, которые характеризуются как значительным прогрессом, так и серьезными проблемами. Понимание этих различий имеет решающее значение для понимания более широкой региональной динамики и перспектив демократического развития. **Методы и материалы:** В статье представлен сравнительный анализ, основанный на различных источниках качественных и количественных данных, необходимых для разработки комплексного понимания демократизации в двух странах. **Анализ:** В статье анализируются пути демократизации в Армении и Грузии, в частности, как уникальная политическая культура, экономические условия и внешние факторы каждой страны влияют на демократизацию. Анализ также рассматривает проведение свободных и справедливых выборов в обеих странах, роль гражданского общества, свободу СМИ и верховенство закона в демократизации. Исследование охватывает весь постсоветский период, выделяя основные общественно-политические процессы. **Результаты:** Результаты исследования подчеркивают трудности, с которыми сталкиваются государства, стремящиеся к демократии на Южном Кавказе. Хотя в некоторых областях был достигнут определенный прогресс, остаются еще много проблем. Сравнительный анализ позволяет сделать ценные выводы о различных путях демократизации двух государств региона и подчеркивает необходимость продолжения усилий по преодолению препятствий, с которыми сталкиваются эти страны.

Ключевые слова: демократизация, выборы, гражданское общество, Армения, Грузия, Европейский Союз, “Революция роз”, “Бархатная революция”.

Как цитировать: Оганнисян В. *Проблемы и тенденции демократизации в Армении и Грузии* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри. 2024. Т. 2 (27). 42-56 [cc..](#)

DOI: 10.52971/18294316-2024.27.2-43

ՆԱԽԱԲԱՆ. Գոյություն ունեն տարբեր քաղաքական վարչակարգեր, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր կառուցվածքներ, սկզբունքներ և կառավարման մոտեցումներ, սակայն ժողովրդավարությունը՝ որպես կառավարման ամենաարդար և արդյունավետ ձև, եղել է աշխարհի շատ հասարակությունների ձգտումը:

Ժողովրդավարությունը բարդ երևույթ է, որը նոր քաղաքական գործընթացների զարգացման հետ՝ մշտապես վերաիմաստավորվում և փոփոխվում է: Այս հասկացությունը ծագել է անտիկ դարաշրջանում, և ժողովրդավարության սկզբնական ձևակերպումները և կիրառությունները զգալիորեն տարբերվում են նրա ժամանակակից ընկալումից [3, p 45]: Ընդհանուր առմամբ, ժողովրդավարությունը կառավարման համակարգ է, որտեղ իշխանությունը վերապահված է ժողովրդին, որն իրականացնում է այդ իշխանությունը կա՛մ ուղղակիորեն, կա՛մ ընտրված ներկայացուցիչների միջոցով: Այն ընդգծում է քաղաքական հավասարության, քաղաքացիների մասնակցության, օրենքի

գերակայության և հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքները: Շումպետերը ժողովրդավարությունը սահմանում է որպես քաղաքական մեթոդ, կառավարման համակարգ, որտեղ անհատները որոշումներ կայացնելու իշխանություն են ձեռք բերում ժողովրդի քվեի համար մրցակցային պայքարի միջոցով [30]: Ռոբերտ Դալն ընդլայնում է Շումպետերի մինիմալիստական սահմանումը՝ ներմուծելով «պոլիարխիա» հասկացությունը, որը նա սահմանում է որպես կառավարման ձև, որտեղ առկա է բարձր աստիճանի քաղաքական մասնակցություն: Ի թիվս այլ չափանիշների՝ Դալը ժողովրդավարական գործընթացի համար կարևորում է ընտրական իրավունքը, ազատ և արդար ընտրությունները և խոսքի ազատությունը [7]: Լարի Դայմոնը ժողովրդավարության ավելի լայն սահմանում է տալիս՝ ընդգրկելով ոչ միայն ազատ և արդար ընտրությունները, այլև օրենքի գերակայությունը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական հասարակությունը: Նա ընդգծում է ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական ազատությունների կարևորությունը [10]: Ժողովրդավարական կառուցվածքի պատկերը ներկայացնելու համար Դ. Հելդը իր աշխատությունում առանձնացրել է ժողովրդավարության մոդելները: Նա բաժանում է ժողովրդավարության մոդելները երկու լայն տիպերի՝ ուղիղ կամ մասնակցային ժողովրդավարություն (որոշումների կայացման համակարգ, որում քաղաքացիները անմիջականորեն ներգրավված են) և ազատական կամ ներկայացուցչական ժողովրդավարություն (կառավարման համակարգ, որն ընգրկում է օրենքի գերակայության շրջանակներում քաղաքացիների շահերը ներկայացնող պետական պաշտոնյաների) [18, p. 4]: Ժողովրդավարության տարբեր սահմանումների առկայությունը բխում է հայեցակարգի բարդությունից և բազմակողմանիությունից: Ժողովրդավարությունը միասնական համակարգ չէ. այն դրսևորվում է տարբեր ձևերով և իր վրա է կրում պատմական, մշակութային, սոցիալական և տնտեսական համատեքստերի ազդեցությունը:

Ժողովրդավարությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ Ս. Հանթինգթոնի առաջարկած «ժողովրդավարացման երեք ալիքների» տեսությանը, որը նշանակալից է ժողովրդավարական անցումների օրինաչափությունները և փուլերը հասկանալու համար: Հեղինակը ընդգծում է ժողովրդավարացման ցիկլային բնույթը՝ նշելով, որ թեև եղել են ժողովրդավարական զգալի էքսպանսիայի ժամանակաշրջաններ, կան նաև ժողովրդավարական հետընթացի և ավտորիտար վերածնման դեպքեր [19, p. 17]: 1970-ականների կեսերին Հարավային Եվրոպայում սկսվում է ժողովրդավարության տարածումը, որը Հանթինգթոնը անվանում է «ժողովրդավարության երրորդ ալիք»: Հանթինգթոնը սահմանում է «ժողովրդավարացման ալիքը»՝ պարզապես իբրև «ոչ ժողովրդավարական վարչակարգերից անցում դեպի ժողովրդավարական վարչակարգի», որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում [20, p. 15]: Այնուհետև, 1980-ականների սկզբին և կեսերին ժողովրդավարությունը տարածվում է Լատինական Ամերիկայի և Ասիայի երկրներում, ինչպիսիք են Հարավային Կորեան, Թայլանդը, Ֆիլիպինները, ապա 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին՝ Արևելյան Եվրոպայում, Խորհրդային Միությունում և Արևադարձային Աֆրիկայի որոշ մասերում: Ոչ

վաղ անցյալում, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ պետությունների ճնշող մեծամասնությունն ուներ ավտորիտար վարչակարգ, իսկ 1993 թ. վերջին 186 պետություններից 107-ն արդեն ունեին մրցակցային ընտրություններ և քաղաքական ու անձնային իրավունքների տարբեր երաշխիքներ [24, p. 1]:

Քաղաքագիտական գրականության մեջ գոյություն ունեն ժողովրդավարության բազմազան մոդելներ, որոնք առաջնային են համարում ազատ և արդար ընտրությունները, ազատական անձնային իրավունքները, քաղաքական լեգիտիմության բարձր աստիճանը, ինչպես նաև անկախ դատական համակարգն ու սահմանադրությունը՝ որպես ժողովրդավարության նախապայման: Ժողովրդավարության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ չկա միակ, համընդհանուր ընդունված սահմանում «Ժողովրդավարություն» հասկացության համար կամ ստանդարտ մոդել ժողովրդավարացման գործընթացների համար: Փոխարենը, ժողովրդավարական զարգացման մակարդակներն ու ձևերը բավականին տարբեր են: Այս համատեքստում, ժողովրդավարացումը հատկապես վերաբերում է ժողովրդավարական համակարգի ձևավորմանը և ավտորիտար ռեժիմից ժողովրդավարությանն անցմանը: Սակայն այս անցումը եղել է բավական բարդ շատ երկրներում, այդ թվում Հարավային Կովկասի երկու պետություններում՝ Հայաստանում և Վրաստանում (բացառությամբ՝ Ադրբեջանի), որոնք անցնում էին խորքային փոխակերպումների միջով: Խորհրդային Միության փլուզմամբ յուրաքանչյուր երկիր ձեռնարկեց պետության կառուցման և քաղաքական բարեփոխումների ուղին՝ ձգտելով հաստատել ժողովրդավարական կառավարման համակարգ: Սակայն խորհրդային ավտորիտարիզմի ժառանգությունը, ինչպես նաև էթնիկ կոնֆլիկտները և տնտեսական դժվարությունները ժողովրդավարացման համար ստեղծեցին էական խոչընդոտներ:

Հայաստանի ժողովրդավարացման ուղին

Անկախության հաստատումից հետո Հայաստանի Հանրապետությունում նկատելի էին դեպի արևմտյան ազատական ժողովրդավարության և շուկայական տնտեսության անցման ձգտումները, որոնք դրսևորվում էին կոնկրետ քայլերով, ինչպիսին էին, օրինակ՝ Եվրոպայի Խորհրդին և Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ-ի անդամակցումը, ինչի արդյունքները, սակայն, եղել են սահմանափակ նախորդող շրջանում ժողովրդավարացման փորձի բացակայության պատճառով: Ժողովրդավարությունն ամբողջովին նոր հայեցակարգ էր մի հասարակության համար, որը մինչև 1991 թ. անկախությունը՝ ավելի քան 70 տարի, գտնվել է խորհրդային ամբողջատիրական իշխանության ազդեցության տակ [15, p. 2]: ՀՀ-ում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումը և հաստատումը կարևորում են ընտրությունների դերը՝ որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորման միջոցի և սկզբունքի: Անկախացումից ի վեր՝ Հայաստանում անցկացված նախագահական և խորհրդարանական ընտրությունները մեծ մասամբ ուղեկցվել են բողոքի ցույցերով և ժողովրդի դժգոհություններով: Որոշակի բացառություն կարելի է համարել 2018 թ. Խորհրդարանական ընտրությունները: Անկախության առաջին տարիներին Հայաստանը հետխորհրդային առաջին պետությունն էր, որը սկսեց պետական գույքի մասնավորեցման գործ-

ընթացք, ինչն առաջին և ամենակարևոր քայլերից մեկն էր դեպի զարգացում: Մասնավորեցումը կարևոր քայլ էր դեպի շուկայական և ոչ մենաշնորհային տնտեսություն: Մակայն, այս ժամանակահատվածը ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական և սոցիալական դժվարությունների շրջան էր: Հայաստանը գտնվում էր տնտեսական անկայունության և էներգետիկ ճգնաժամի փուլում՝ իր 4 հարևան պետություններից 2-ի՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակման ենթարկվելու պատճառով, ինչին հաջորդեց նաև Արցախյան առաջին պատերազմը [17, p. 7]: Այս գործոններն իրենց հերթին ազդեցին ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման գործում ոչ նպաստավոր միջավայրի ձևավորման վրա:

Գրեթե երեք տասնամյակ մարդու իրավունքները, մասնակցությունը և հաշվետու կառավարումը, ցավոք, չեն ծառայել որպես առաջնորդող սկզբունքներ Հայաստանի հաջորդական վարչակարգերի քաղաքական ղեկավարության համար: 2000-ական թվականներին պետությունը փորձեց տեսանելիություն գրանցել միջազգային, մասնավորապես եվրոպական հարթակում՝ անդամակցելով տարբեր միջազգային կազմակերպությունների, ստորագրելով համաձայնագրեր և ստանձնելով ժողովրդավարական կառավարման ճանաչված չափանիշներին համապատասխան մի շարք պարտականություններ [16, pp. 60-61]:

2013 թ. սեպտեմբերին, Եվրոպական Միության (ԵՄ) հետ Ասոցացման համաձայնագիրը (ԱՀ) և դրա մաս կազմող Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը (ԽՀԱԱԳՀ) ստորագրելու փոխարեն Մաքսային միությանը միանալով հանդերձ [4, pp. 29-54], Հայաստանը՝ որպես Արևելյան գործընկերության (ԱԳ) անդամ երկիր, շարունակում է վարել ակտիվ երկխոսություն ԵՄ-ի հետ: Ներկայումս ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերություններում իրավական հիմքը 2017 թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում կայացած Արևելյան գործընկերության 5-րդ գագաթնաժողովի շրջանակներում ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն է (ՀՀԳՀ) [6]: Համաձայնագրի շրջանակներում ԵՄ-ն և Հայաստանը հանձնառել են միասին աշխատել քաղաքացիների բարօրության համար և նպաստել հատկապես ժողովրդավարության ամրապնդմանը, քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ կայունությանը: Կողմերը նաև հանձնառել են նպաստել, պահպանել և ամրապնդել խաղաղությունը և կայունությունը թե՛ տարածաշրջանային և թե՛ միջազգային մակարդակներում, ընդլայնել համագործակցությունը ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտներում՝ նպատակ ունենալով ամրապնդել օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը [9]: Այս համաձայնագիրը վերստին հաստատեց, որ ԵՄ-ն և Հայաստանը հավատարիմ են ժողովրդավարական սկզբունքներին և օրենքի գերակայությանը, ինչպես նաև բարեփոխումների ավելի լայն օրակարգին: Վերջին տարիներին Հայաստանն առաջընթաց է գրանցել արդարադատության բարեփոխումներով և սահմանադրական համապարփակ բարեփոխումներով: Այնուամենայնիվ, Հայաստանի բարեփոխումների հավակնոտ ծրագրի իրականացումը պահանջում է զգալի վարչական և ինստիտուցիոնալ կարողություններ [27]:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանն առանձնանում է որպես Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ժողովրդավարության ամենաբարձր ցուցանիշն ունեցող պետություն, ինչը, հատկապես, ուշագրավ է հաշվի առնելով, որ այն ունի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ամենացածր ցուցանիշներից մեկը: Հզոր ժողովրդավարական վարկանիշ ձեռք բերելը դժվար է, երբ երկիրը բախվում է զգալի տնտեսական դժվարությունների: Սա խոսում է այն մասին, որ հայ հասարակությունը արմատացած է իր մշակութային հիմքերի վրա և բնական հակում ունի դեպի ժողովրդավարություն: Այս երկու ցուցանիշների՝ ժողովրդավարության ինդեքսի և ՀՆԱ-ի հակադրությունը ընդգծում է հայ հասարակության մեջ առկա ժողովրդավարական հզոր ներուժը [26, pp. 818-821]:

Թեև աստիճանական է եղել Հայաստանի ժողովրդավարացման գործընթացը, սակայն վերջին տարիներին նկատվում է զգալի առաջընթաց: 2018թ. գարնանը մեծ փոփոխություն կատարվեց Հայաստանի քաղաքական դաշտում՝ քաղաքացիների՝ իրենց իրավունքներն իրագործելու և ուղղակի ժողովրդավարություն գործադրելու դեռևս սահմանափակ հնարավորությունների ֆոնին: Հասարակության շրջանում տևական դժգոհությունն ու ցածր վստահությունն իշխանությունների նկատմամբ հանգեցրին լայնամասշտաբ բողոքի ցույցերի: Խաղաղ բողոքի ցույցերը, ի վերջո, վերածվեցին «Թավշյա հեղափոխության» [21, p. 4]: Այս անցումը նշանավորեց ավելի մեծ քաղաքական թափանցիկության և հաշվետվողականության զգալի փոփոխություն: Ժողովրդավարության վիճակը Հայաստանում վատթարացավ պատերազմի ընթացքում և դրա անմիջական հետևանքներից՝ լուրջ դժվարություններ ստեղծելով ժողովրդավարության ամրապնդման համար [8]:

Չնայած ընթացիկ մարտահրավերներին, ներառյալ Արցախյան հակամարտությունը, ՀՀ սահմաններին ադրբեջանական բանակի ոտնձգությունները, ՀՀ ինքնիշխան տարածք ներթափանցումները, ինչպես նաև առկա տնտեսական դժվարությունները՝ Հայաստանը նկատելի քայլեր է կատարել ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության ամրապնդման ուղղությամբ:

Վրաստանի ժողովրդավարացման ուղին

Վրաստանն այն պետությունն է, որն ունի հաջող քաղաքական և տնտեսական բարեփոխումների արդյունքում եվրատլանտյան ինստիտուցիոնալ կառույցներին ինտեգրվելու հեռանկար, որը վաղուց արդեն ազատական բարեփոխումների խթանման ամենաուժեղ գործիքներից մեկն է: 1990-ականների վերջին այն օգնեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին ամրապնդելու ժողովրդավարությունը և իրականացնելու շուկայական տնտեսության բարեփոխումներ, ինչը հանգեցրեց նրանց անդամակցությանը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին:

Անկախություն ձեռք բերելուց անմիջապես հետո Վրաստանը հայտարարեց արևմտյան սկզբունքները՝ որպես երկրի զարգացման հիմք [23, pp. 91-93]: Եվրոպական ինքնության գաղափարը շարունակաբար պտտվում էր վրացական քաղաքական խոսույթում, իսկ 2000 թ. սկսած՝ այն ուղղակիորեն արտացոլվում էր երկրի արտաքին քաղաքականության մեջ [29, pp. 196-197]:

2003 թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցավ «Վարդերի հեղափոխությունը», որը կանխորոշեց երկրի հետագա զարգացումը: Մի շարք պատճառներ հանգեցրին այդ հեղափոխությանը. առաջինը տնտեսական խնդիրների ամբողջությունն էր (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 2003 թ. կազմել է 928 դոլար [31]), իսկ երկրորդը՝ երկրում տիրող կոռուպցիան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության կոռուպցիայի ընկալման ինդեքսով 2003 թ. Վրաստանը զբաղեցրել է 124-րդ տեղը 133-ից [32]): Իրավիճակն էլ ավելի էին բարդացնում իշխանության և պետական ինստիտուտների անարդյունավետությամբ պայմանավորված քաղաքական խնդիրները: Ապակայունացնող այլ գործոններ էին նաև Աբխազիայի և Հարավային Օսիայի սառեցված հակամարտությունները: Շրջադարձային իրադարձություն էր Վրաստանում 2003 թ. տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությունը»: Այդ և մյուս գունավոր հեղափոխությունները հետխորհրդային տարածքում շատերը դիտարկում էին որպես այդ երկրներում ժողովրդավարության անցման և կայացման հնարավորություն [2, pp. 1085-1107]:

Հեղափոխության ընթացքում քաղաքացիական հասարակությունը կարևոր դեր խաղաց՝ կազմելով բողոքի շարժման օրակարգ, մոբիլիզացնելով քաղաքացիների մասնակցությունը, պահպանելով շարժումը խաղաղ քաղաքացիական դիմադրության սահմաններում և ցույց տալով բարձր մակարդակի կազմակերպվածություն ու դիմացկունություն կառավարության և հասարակության միջև երկար տարաձայնությունների ընթացքում: Այնուամենայնիվ, մի շարք կառուցվածքային թույլ կողմեր խնդիրներ էին ստեղծում Վրաստանի քաղաքացիական հասարակության վերջնական կայացման համար: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հիմնականում կախված են արտաքին դերակատարներից և ավելի քիչ են հաղորդակցվում քաղաքացիների (ընտրազանգվածի) հետ [25, pp. 22-25]: Վրաստանում ՔՀԿ-ների ամենամեծ մտահոգություններից մեկը նրանց ֆինանսական կայունությունն է, քանի որ երկիրը դեռ մեծապես կախված է արտաքին օգնությունից: ՔՀԿ-ների ֆինանսավորման 95%-ը ստացվում է միջազգային դոնորներից կամ զարգացման գործակալություններից [5]:

Ժողովրդավարացման մեկ այլ կարևոր գործոն է ազատ և արդար ընտրությունների անցկացումը: Որոշ փորձագետներ 2012 թ. խորհրդարանական ընտրություններն անվանում էին «ընտրական հեղափոխություն», քանզի Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ ընդդիմությունը իշխանության եկավ առանց հեղափոխության, և կոմունիստների կրած պարտությունից հետո առաջին անգամ էր, որ կառավարությունը փոխվում էր սահմանադրականության շրջանակներում՝ որպես ընտրությունների արդյունք [1, էջեր 115-128]: 2012-2014 թթ. թափանցիկ խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ընդգծեցին ժողովրդավարության հաստատման գործընթացները և սկիզբ դրեցին իշխանության խաղաղ ճանապարհով փոխանցման նոր ժամանակաշրջանի՝ լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության զարգացման բարելավված միավորներով [33]:

Ըստ ԵԱՀԿ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության տվյալների՝ 2020 թ. հոկտեմբերի 31-ին Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրությունները եղել են մրցակցային, իսկ հիմնարար ազատություններն ընդհանուր առ-

մամբ՝ հարգված: Ընտրություններն անցկացվել են էապես վերանայված օրենսդրական դաշտի ներքո, որը հիմնավոր հիմքեր է ապահովել ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար, սակայն անհրաժեշտ են հետագա ջանքեր թերությունների վերացման առումով: Մասնավորապես՝ լրատվամիջոցների դիտարկման արդյունքները ցույց են տվել, որ բոլոր դիտարկվող մասնավոր հեռարձակողներն ակնհայտորեն կուսակցականացված էին [22]:

Ժողովրդավարության կայացման ճանապարհին կարևոր իրադարձություն էր 2023 թվականի դեկտեմբերին Եվրոպական Խորհրդի կողմից Վրաստանին ԵՄ թեկնածուի կարգավիճակի շնորհումը [12], որին ձգտում էր Վրաստանը անկախացումից ի վեր: Ըստ «Ֆրիդըմ Հաուսի» 2024 թվականի տարեկան զեկույցի՝ ԵՄ-ն հույս ունի օգտագործել անդամակցության գործընթացը՝ խթանելու ժողովրդավարական բարեփոխումները Վրաստանը եվրոպական ուղեծիր դուրս բերելու համար: Դիտորդների կարծիքով՝ Վրաստանը կանգնեցրեց առաջընթացը Եվրահանձնաժողովի (ԵՀ) բարեփոխումների 12 առաջնահերթությունների իրականացման գործում: ԵՀ-ի առաջընթացի զեկույցում Վրաստանին առաջարկվել են նոր քայլեր, ինչպիսիք են՝ ապատեղեկատվության դեմ պայքարը, բևեռացման լիցքաթափումը և վստահելի ընտրությունների կազմակերպումը: Դատական բարեփոխումներն առանցքային խնդիր են, որին Վրաստանը պետք է անդրադառնա ԵՄ անդամ դառնալու համար: Չնայած աննշան առաջընթացին՝ Վրաստանը պետք է համապարփակ բարեփոխի դատական համակարգը: Ազգային-դեմոկրատական կառավարումը Վրաստանում ձևավորվում է խորը քաղաքական բևեռացման պայմաններում, որտեղ իշխանությունը կենտրոնացած է կառավարչական լծակների պահպանման վրա: Թույլ ընդդիմադիր կուսակցությունների ֆոնին քաղաքացիական հասարակությունը մնացել է որպես առանցքային քաղաքական ուժ: Թեև Վրաստանը շարունակում է մանր կոռուպցիայի դեմ պայքարում մնալ տարածաշրջանում որպես առաջատար, այդուհանդերձ բարձր մակարդակի կոռուպցիայի նկատմամբ անպատժելիության ընկալումը շարունակում է երկրում հանդիսանալ որպես լուրջ մարտահրավեր [14]:

Այսպիսով, վերջին տարիների ընթացքում թեև Վրաստանի արտաքին քաղաքականությունը պաշտոնապես մնացել է անփոփոխ՝ նպատակաուղղված եվրաինտեգրմանը և ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի հետ ավելի սերտ հարաբերությունների զարգացմանը, այնուամենայնիվ Ռուսաստանի նկատմամբ Վրաստանի կառավարության չհակադրվելու քաղաքականությունը և նրա վերջին և «հակաարևմտյան գործունեությունը» ուղղված իր միջազգային գործընկերներին, փաստացի հանգեցրել են Վրաստանի արտաքին քաղաքական որոշումների կայացման գործընթացում ռուսական գործոնի ազդեցության մեծացմանը: Հունիսին Վրաստանում «Օտարերկրյա գործակալների մասին» վիճահարույց օրենքի ընդունումից [28] մեկ ամիս անց Վրաստանում ԵՄ դեսպան Պավել Հերչինսկին հայտարարեց, որ Վրաստանի անդամակցության գործընթացը ԵՄ-ին կասեցվել է [11]: Այս իրադարձությունը մեծապես կազդի Վրաստանի ժողովրդավարացման առաջընթացի վրա:

Ժողովրդավարացման միտումների համեմատական վերլուծություն

Հարավային Կովկասի երեք պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, Խորհրդային Միության փլուզումից հետո 1991 թ. ձեռք բերեցին անկախություն: Նրանցից երկուսը՝ Հայաստանը և Վրաստանը, ընտրեցին զարգացման ժողովրդավարական ճանապարհը: Ներկայումս և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը ձգտում են շարունակել ամրապնդել ժողովրդավարական անցումները: Տվյալ պետություններում հետխորհրդային ժառանգությունը, օրենքի գերակայության բացակայությունը, մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումը և ոչ ժողովրդավարական հասարակության բոլոր տարրերը հանգեցրին ժողովրդական բողոքի շարժումների, որոնք 2003 թ. Վրաստանում և 2018 թ. Հայաստանում իշխանության բերեցին բարեփոխումներ կատարելու խոստումներ տվող առաջնորդների: Թեև Վրաստանի ժողովրդավարական ինստիտուտները, ի տարբերություն հարավկովկասյան մյուս պետությունների, ունեցել են ավելի բարենպաստ մեկնարկային պայմաններ, վերջին տարիներին որոշ ոլորտներում առկա մարտահրավերները հանգեցրել են ժողովրդավարության հետընթացի: Ի տարբերություն Վրաստանի, Հայաստանի ժողովրդավարական անցումը չի ունեցել բարենպաստ մեկնարկային պայմաններ և դեռևս բախվում է մարտահրավերների, չնայած հեղափոխությունից հետո հաստատված նոր կառավարության՝ ժողովրդավարական ինստիտուտներն ամրապնդելու ջանքերին:

Թեև երկու երկրներն էլ ունեցել են անվտանգային խնդիրներ, Հայաստանին այն դրդել է երկրի զարգացման վեկտորն ուղղել դեպի ոչ ժողովրդավարության կայացմանը միտված կառույցների հետ համագործակցությանն ու դրանց անդամակցությանը: Եվրոպական կառույցների դերակատարումը թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում ժողովրդավարացման գործում ունեցել է կարևոր նշանակություն: Երկու երկրներում էլ ԵՄ-ի հետ համագործակցության արդյունքում ժողովրդավարության կայացմանն ուղղված քայլերը կատարվել են օրենսդրական փոփոխությունների, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի բարելավման և քաղաքացիական հասարակության դերի բարձրացման միջոցով, որոնց իրականացման համար ստեղծվել են մի շարք ծրագրեր:

Հայաստանում և Վրաստանում ժողովրդավարացման բարդություններն ու առանձնահատկությունները հասկանալու, ինչպես նաև ժողովրդավարացման հնարավոր միտումները վեր հանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել երկու երկրներում ժողովրդավարացման ցուցանիշները:


Ուսումնասիրելով Հայաստանում և Վրաստանում 2015-2024 ժողովրդավարության ցուցանիշներն ըստ «Ֆրիդրմ Հաուսի» (տե՛ս Աղյուսակ 1 և Գծապատկեր 1) [13; 14], պետք է նշել, որ Վրաստանը, ունենալով ավելի բարենպաստ մեկնարկային պայմաններ, գրանցել է ժողովրդավարության ավելի բարձր ցուցանիշներ, քան Հայաստանը: Այնուհանդերձ, այդ ցուցանիշները տարիների ընթացքում ունեցել են որոշակի անկում, ինչը վկայում է ժողովրդավարական կայուն հետընթացի մասին: 2019 թվականից սկսած՝ տվյալ ցուցանիշի տատանումը հուշում է, որ առկա են խոչընդոտներ նախկին ժողովրդավարական զարգացման տեմպը պահպանելու առումով:

Աղյուսակ 1

Ժողովրդավարության մակարդակը Հայաստանում և Վրաստանում (2015-2024 թթ.)

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Հայաստան	2.64	2.64	2.61	2.57	2.93	3.00	2.96	3.04	3.11	3.07
Վրաստան	3.36	3.39	3.39	3.32	3.29	3.25	3.18	3.07	3.04	3.04

Գծապատկեր 1



Ի տարբերություն Վրաստանի՝ Հայաստանը, ունենալով ժողովրդավարության ավելի ցածր ցուցանիշներ, ապահովել է նկատելի բարելավում 2018 թվականից սկսած, ինչը համընկնում է Հայաստանում տեղի ունեցած «Թավշյա հեղափոխությանը» և դրան հաջորդած քաղաքական բարեփոխումներին: Հաշվի առնելով 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները, ներքաղաքական խնդիրներն ու աշխարհքաղաքական սպառնալիքները, փոքր-ինչ տատանվելուց հետո, ժողովրդավարության ցուցանիշը Հայաստանում համեմատաբար կայուն է մնացել հաջորդ տարիներին՝ դրսևորելով որոշակի ճկունություն, չնայած առկա տարածաշրջանային և քաղաքական մարտահրավերներին:

Այսպիսով, Հայաստանի և Վրաստանի 2015-2024թթ. ժողովրդավարության ցուցանիշներ փաստում են, որ երկու երկրները արձանագրել են ժողովրդավարության համանման ցուցանիշներ վերջին երեք տարիներին՝ 2015 թվականին ունենալով ժողովրդավարության խիստ տարբեր ցուցանիշներ: Այս պատկերը վկայում է, որ Հայաստանն ընթանում է ժողովրդավարացման հարաբերականորեն կայուն բարելավման ուղիով՝

ցուցաբերելով դրական միտում, մինչդեռ Վրաստանի նախորդող տարիներին արձանագրած առաջընթացը վերջին շրջանում դանդաղել է, ինչը հավաստում է կայուն հետընթացի մասին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հարավային Կովկասում ժողովրդավարացման գործընթացների ուղեգիծը և առանձնահատկությունները երկու երկրների դեպքում եղել են միանգամայն տարբեր: Մասնաապես՝ ՀՀ-ի դեպքում տնտեսական անկայունությունն ու էներգետիկ ճգնաժամը, հակամարտային իրավիճակը, անվտանգության ապահովման խնդրի առկայությունը դրդել են ՀՀ-ին հետամուտ լինել այնպիսի կազմակերպություններին և՛ տնտեսական, և՛ քաղաքական ինտեգրմանը, որոնց համար ժողովրդավարական արժանիքներն առաջնահերթ չեն, և որոնք չեն խթանում ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը: Վրաստանի դեպքում պատկերն այլ էր, քանի որ Վրաստանը միակ հարավկովկասյան պետությունն էր, որն ուներ համեմատաբար ավելի բարենպաստ մեկնարկային պայմաններ, ունի հաղորդակցային առանցքի կարգավիճակ՝ որպես տարանցիկ երկիր, վերջին տասնամյակում չի ունեցել սուր և շարունակական անվտանգային խնդիրներ, որոնք երկրի զարգացման վեկտորը կարողանային ուղղել դեպի ոչ ժողովրդավարական կառույցների հետ համագործակցությանն ու դրանց անդամակցությանը:

Ընդունելով ժողովրդավարական սկզբունքների և վարչակարգի հաստատումը՝ որպես երկրի զարգացման հիմք, այնուամենայնիվ, այսօր էլ երկու պետություններում առկա են մի շարք մարտահրավերներ: 2015-2024 թվականներին Հայաստանի և Վրաստանի ժողովրդավարության ուղեգծերը ցույց են տալիս Հարավային Կովկասում ժողովրդավարացման բարդությունն ու բազմազանությունը: Վրաստանը, ի սկզբանե շահելով առկա ավելի բարենպաստ պայմաններից, ցույց է տվել ժողովրդավարական զարգացման ավելի բարձր մակարդակ: Այնուամենայնիվ, վերջին տարիներին այնտեղ անկում է նկատվում՝ ազդարարելով ժողովրդավարական կայուն հետընթաց: Ի հակադրություն դրան՝ Հայաստանը, ի սկզբանե ունենալով ժողովրդավարության մեկնարկային ավելի ցածր ցուցանիշներ, 2018 թվականի «Թավշյա հեղափոխությունից» հետո արձանագրել է նկատելի բարելավում՝ կարևորվելով ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանն ուղղված բարեփոխումները: Թեև Հայաստանը բախվում է զգալի մարտահրավերների, ինչպիսիք են Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները, ներքաղաքական անկայունությունը և աշխարհաքաղաքական իրադրությունը, երկրի ժողովրդավարության մակարդակը որոշակիորեն բարելավվում է:

Այս միտումներն ընդգծում են տարածաշրջանում ավելի լայն ժողովրդավարացման դինամիկայի և միջազգային համագործակցության վճռորոշ դերը ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու գործում:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Տետրաձե Լ., Մելիքիձե Գ.** *Վրաստանի բազմակուսակապի համակարգը. Առանձնահատկություններ, մարտահրավերներ և հեռանկարներ.* // Հայկական Բաղադրագիտական հանդես, 1(5), 2016, 115-128 էջեր:
2. **Bader M.** *Party Politics in Georgia and Ukraine and the Failure of Western Assistance.* Democratization. 17 (6). 2010. 1085-1107 pp..
3. **Birch A.** *The Concepts and Theories of Modern Democracy.* London: Routledge. 2000. 272 p..
4. **Chitaladze A., Grigoryan T.** *Understanding Europeanization in Georgia and Armenia - Discourses, Perceptions and the Impact on Bilateral Relations,* Analytical Bulletin, No. 8, 2015, 29-54 pp..
5. Civil Society Brief: *Georgia*, <https://www.adb.org/sites/default/files/publication/678381/civil-society-brief-georgia.pdf>. (access: 20.08.2024).
6. Council decision on the conclusion, on behalf of the European Union, of the Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, Brussels, 25.9.2017, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52017JC0037>. (access: 07.08.2024).
7. **Dahl R.** *Polyarchy: Participation and Opposition.* New Haven and London: Yale University Press. 1971. 272 p..
8. **Delcour L.** *The Future of Democracy and State Building in Postconflict Armenia.* January 19, 2021, <https://carnegieeurope.eu/2021/01/19/future-of-democracy-and-state-building-in-postconflict-armenia-pub-83650>.(access: 12.08.2024).
9. Delegation of the European Union to Armenia. The European Union and Armenia https://www.eeas.europa.eu/armenia/evropakan-miowtyowne-ev-hayastane_hy?s=216 (access: 07.08.2024).
10. **Diamond L.** *Developing Democracy: Toward Consolidation.* Baltimore and London: Johns Hopkins University Press. 1999. 384 p..
11. EU: Georgia's EU accession process is stopped for now. <https://euneighbourseast.eu/news/latest-news/eu-georgias-eu-accession-process-is-stopped-for-now/>. (access: 22.08.2024).
12. European Council. Annual progress review. <https://www.consilium.europa.eu/en/policies/enlargement/georgia/>. (access: 20.08.2024).
13. Freedom House. Nations in Transit. Armenia. <https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024>. (access: 22.08.2024).
14. Freedom House. Nations in Transit. Georgia. <https://freedomhouse.org/country/georgia/nations-transit/2024>. (access: 22.08.2024).
15. **Freire M., Simão L.** *The Armenian Road to Democracy: Dimensions of a Tortuous Process.* Central European Policy Studies. Working document. No. 267. 2007. 25 p..
16. **Gevorgyan V.** *The Imperative to Shift Armenia's Peripherality: Contradictions of Institutionalisation and Functioning in Conditions of Democratic Transition.* // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 2 (2(5)), 2023, 56-75 pp..
17. **Grigoryan H.** *Democracy in Armenia.* EU's Eastern Partnership as a Supportive Tool Towards Democracy. Yerevan. 2013. 19 p..
18. **Held D.** *Models of Democracy.* California: Stanford University Press. 1987. 321 p..
19. **Huntington S.** *Democracy's Third Wave.* // Journal of Democracy. Vol. 2. No. 2. 1991. 12-34 pp..
20. **Huntington S.** *The Third Wave: Democratization in the Late Twentieth Century.* Norman and London: University of Oklahoma Press. 1991. 366 p..
21. Initial Action Document for EU4Citizens: Deepening Democracy in Armenia. 45 p. https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2018-12/c_201817_f1annexen_v2_p1_1000254.pdf. (access: 10.8.2024).
22. International Election Observation Mission. Georgia–Parliamentary Elections. 31 October 2020. <https://www.osce.org/files/f/documents/a/d/469005.pdf>. (access: 20.08.2024).

23. **Jones S.** *The Role of Cultural Paradigms in Georgian Foreign Policy.* Journal of Communist Studies and Transition Politics. 19(3). 2003. 91-93 pp..
24. **Lipset S.** *The Social Requisites of Democracy Revisited: 1993 Presidential Address.*// American Sociological Review. Vol. 59. 1994. 1-22 pp..
25. **Nodia G.** *Democracy and its Deficits: The Path towards Becoming European-style Democracies in Georgia, Moldova and Ukraine.* CEPS Working document. № 12. 2017. 30 p..
26. **Ordukhanyan E.** *The Peculiarities of Democratization in Post-Soviet Countries Current Situation and Trends.* //International Journal of Scientific & Technology Research. 8(11). 2019. 818-821 pp..
27. Partnership Implementation Report on Armenia. Joint Staff Working Document. Council of the European Union. Brussels. 17 May 2022, <https://data.consilium.europa.eu/doc/document/ST-9214-2022-INIT/en/pdf>. (access: 10.08.2024).
28. Reuters. Georgian parliamentary speaker signs 'foreign agents' bill into law. <https://www.reuters.com/world/europe/georgian-parliamentary-speaker-signs-foreign-agents-bill-into-law-2024-06-03/>. (access: 20.08.2024).
29. **Rondeli A.** *The Choice of Independent Georgia. The Security of the Caspian Sea Region* (ed. G. Chufrin)// Stockholm International Peace Research Institute. 2001. 195-211 pp..
30. **Schumpeter J.** *Capitalism, Socialism, and Democracy.* New York: Harper & Brothers. 1942. 381 p..
31. The World Bank: *Georgia*. <https://data.worldbank.org/country/georgia?view=chart>. (access: 17.08.2024).
32. Transparency International: *Georgia*. <https://www.transparency.org/en/cpi/2003>. (access: 17.08.2024).
33. UN. *Country programme document for Georgia (2016-2020)*. <https://digitallibrary.un.org/record/797833?v=pdf#files>. (access: 20.08.2024).

References

1. **Tetradze L., Melikidze G.** Multi-Party System in Georgia: Peculiarities, Challenges and Perspectives [*Vrastani bazmakusakts'akan hamakargy. arrandznahatkut'yunner, martahraverner yev herrankarner*]. Armenian Journal of Political Science. 1(5). 2016. 115-128 pp.. (in Armenian)
2. 2-33 (See: Bibliography)

Ընդունվել է / Принята / Received on: **12. 09. 2024**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **26. 09. 2024**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդուհի Կարենի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, քաղաքագիտության ապսիբանտ, Երևան, ՀՀ
Էլ. հասցե: varduhi.hhovhannisyanyan@gmail.com // orcid.org/0000-0003-2850-4879

Varduhi Karen HOVHANNISYAN: Junior Researcher at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS PhD Student in Political Science, Yerevan, RA
e-mail: varduhi.hhovhannisyanyan@gmail.com //orcid.org/0000-0003-2850-4879

Вардуи Кареновна ОГАННИСЯН: младший научный сотрудник Института философии, социологии и права НАН, аспирант политологии, Ереван, РА,
эл.адрес: varduhi.hhovhannisyanyan@gmail.com // orcid.org/0000-0003-2850-4879

ՀՏԴ՝ 89.09

DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՎԻՊԱԿԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Արա Ս. Զարգարյան

ԳԱԱ Ս. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Մի տոհմի առասպել է «Որդան կարմիր» վիպակը, որում ներկայացվում է Լևոն պապի տոհմի առասպելը: Հենց այս տոհմի առասպելում է Ռուբեն Հովսեփյանն ընդգծում իր պատումի բազմապլուծետային առանձնահատկությունները, իր գաղափարները: «Որդան կարմիր» վիպակը սյուժետային և գաղափարական առումով ուղղակիորեն կարծես շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են զուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրականացվել է նաև հեղինակի տարբեր ստեղծագործությունների միջև համեմատություն: *Վերլուծություն.* Հոդվածում ուսումնասիրվել են հատկապես վիպակի խոհրդանիշները: Դրանցով ցույց են տրվել ստեղծագործությունում առկա ուղերձը, ինչպես նաև հեղինակի գաղափարների գեղարվեստականացումը: *Արդյունքներ.* «Որդան կարմիր» վիպակում Ռուբեն Հովսեփյանը որդանի խորհրդանիշով ընդգրծում է բարդ պատմական ժամանակաշրջանում արդեն իսկ կործանման եզրին կանգնած արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Տոհմական պատմության հիմքում ազգ-տոհմ գուցահեռն է: Տոհմի ողբերգական պատմությունը սոսկ տոհմական պատմություն չէ, այլ ազգային ողբերգության արձանագրում: Սերունդների պատմության համատեքստում ընդգծվում է ազգային պատմությունը: Խորհրդանիշները վիպակի հիմքն են: Ազգային-տոհմական առասպելի ներքին ծալքերում հայ մարդու հարատևման գաղտնիքներն ու բանալիներն են, որը տրվում է Լևոն պապի կերպարով:

Բանալի բառեր: *Ռուբեն Հովսեփյան, որդան կարմիր, տոհմ, առասպել, հայրենիք, ընտանիք, խորհրդանիշ:*

Բնչպես հղել՝ Ջարգարյան Ա. Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակի գեղարվեստական, գաղափարական ուղերձները, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Ն. 2 (27): 57-67 էջեր: DOI:10.52971/18294316-2024.27.2-57

THE ARTISTIC AND IDEOLOGICAL MESSAGES OF RUBEN HOVSEPYAN'S NOVEL "ARMENIAN COCHINEAL"

Ara S. Zargaryan

Institute of Literature named after M. Abeghyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The novel "Armenian Cochineal" is a myth of a dynasty, in which the myth of grandfather Levon's dynasty is presented. It is in this dynasty myth that Ruben Hovsepyan emphasizes the multi-plot features of his story, and his ideas. In terms of plot and ideology, the novel "Armenian Cochineal" seems to be a direct continuation of the novel "Armenian District".

Methods and materials: Comparative, psychological, psychoanalytic and biographical methods were used in the work. A comparison between different works of the author was also carried out.

Analysis: In the article the keywords of the novel were studied in particular. They showed the message in the work, as well as the fictionalization of the author's ideas. **Results:** Ruben Hovsepyan uses the symbol of the worm in the novel "Armenian Cochineal" to emphasize the need to preserve values that are already on the verge of destruction in a difficult historical period. At the heart of tribal history is the nation-tribe parallel. The tragic history of the clan is not just a clan history, but a record of a national tragedy. National history is emphasized in the context of generational history. Symbols are the foundation of the novel. In the inner folds of the national-dynastic myth are the secrets and keys to the survival of the Armenian man, which is given in the image of grandfather Levon.

Key words: *Ruben Hovsepyan, Armenian cochineal, lineage, race, homeland, family, symbol.*

Citation: Zargaryan A., The Artistic and Ideological Messages of Ruben Hovsepyan's Novel "Armenian Cochineal"//“Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 57-67pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

ХУДОЖЕСТВЕННО-ИДЕОЛОГИЧЕСКИЕ ПОСЛАНИЯ РОМАНА РУБЕНА ОВСЕПЯНА «АРАРТСКАЯ КОШЕНИЛЬ»

Ара С. Заргарян

Институт литературы имени М. Абебяна НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Роман «Армянская кошениль» представляет собой миф о династии, в котором представлен миф о династии деда Левона. Именно в этом мифе о династии Рубен Овсепян подчеркивает многосюжетные особенности своей истории, акцентирует свои идеи. С точки зрения сюжета и идеологии роман «Армянская кошениль» представляется прямым продолжением романа «Армянский район». **Методы и материалы:** В работе использовались сравнительные, психологические, психоаналитические и биографические методы. Также прово-

дилось сравнение между разными произведениями автора. *Анализ:* В статье, в частности, изучались ключевые слова романа. Они показали посыл в произведении, а также беллетристику идей автора. *Результаты:* Рубен Овсепян использует символ червя в романе «Армянская кошениль», чтобы подчеркнуть необходимость сохранения ценностей, которые уже находятся на грани уничтожения в сложный исторический период. В основе племенной истории лежит параллель нация-племя. Трагическая история клана — это не просто история клана, а летопись национальной трагедии. Национальная история подчеркивается в контексте истории поколений. Символы — основа романа. Во внутренних складках национально-династического мифа — секреты и ключи к выживанию армянского человека, которое дано в образе деда Левона.

Ключевые слова: *Рубен Овсепян, армянская кошениль, родословная, раса, родина, семья, символ.*

Как цитировать: Заргарян А. *Художественно-идеологические послания романа Рубена Овсепяна «Армянская кошениль».* // “Научные труды” ИЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 57-67 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

ՆԱԽԱԲԱՆ. 1980 թ. լույս է տեսնում Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակը [3]: Վիպակը հրատարակվում է հեղինակի «Հայոց թաղ» վիպակի տպագրությունից ուղիղ 10 տարի անց: Եթե ժամանակագրությամբ ենք դիտում, ապա «Հայոց թաղ» վիպակի տպագրությունից անցել էր մոտ մեկ տասնամյակ, ինչը ստեղծագործական տեսանկյունից բավական մեծ ժամանակ է արձակագրի համար, սակայն գեղարվեստական, գաղափարական համատեքստում Հովսեփյանի սույն վիպակը կարծես մասամբ շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: Այս համատեքստում «Որդան կարմիր» վիպակի քննությունն ու վերլուծությունը բնականաբար զուգահեռվելու են «Հայոց թաղ» վիպակի հետ: Հարկ է նշել, որ Հովսեփյանի «Ճիշտ» [4], «Հայոց թաղ» և «Որդան կարմիր» վիպակները գրողի գեղարվեստական ու գաղափարական համակարգի եռամիասնական օրինակն է: Ստեղծագործություններին բնորոշ են սյուժետային, գաղափարական, խորհրդանշային նմանությունները, թափառող կերպարների մոդելը: Վերոնշյալ երեք ստեղծագործություններից հատկապես ամենամեծ զուգահեռներն ու միասնական համակարգի կրողներն են «Հայոց թաղ» և «Որդան կարմիր» վիպակները: Տասնամյակը կամ մեկ սերնդի ժամանակային անցումը արտացոլվում է նաև վիպակներում: Եթե «Հայոց թաղ» վիպակի դեպքում նկատելի էին Ռուբեն Հովսեփյանի ստեղծագործական փնտրտուքի արդյունքը, գրական-գեղարվեստական հավատամքի կառուցումը, ապա «Որդան կարմիր» վիպակում տասնամյակն արդեն իսկ ընդգծում է կյանքում ու հստակ բանաձևը: Այն հիմք է դառնում արձակագրի գեղարվեստական ստեղծագործությունների համար, ինչպես նաև արձարծում է ժամանակաշրջանի հայ արձակի գրական-գեղարվեստական թեմաները:

Թափառող կերպարներն ու խորհրդանշանները «Հայոց թաղ»

և «Որդան կարմիր» վիպակներում

1979 թվականին Հայաստանում տպագրվում է Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» վեպը [6]: Վեպի հայերեն առաջին թարգմանությունը կատարում է արձակագիր Ռուբեն Հովսեփյանը: Մոզական ռեալիզմի գրական ժանրով գր-

ված ստեղծագործությունը մեծ ազդեցություն է ունենում թարգմանչի՝ գեղարվեստական մտահորիզոնի վրա: Վեպի վերջում տպագրվում է նաև թարգմանչի վերջաբանը, որում Ռուբեն Հովսեփյանի մի շարք մտքերը ճանապարհ են հարթում հասկանալու համար արձակագրի այդ ժամանակաշրջանի գեղարվեստական, գաղափարական ընկալումները: Վերջաբանում Հովսեփյանը ընդգծում է իր և Մարկեսի գաղափարական ընկալումների նմանությունը, կամ Մարկեսի վեպի, գաղափարական աշխարհի ուղղակի ազդեցությունն իր «Որդան կարմիր» վիպակին: Հովսեփյանը մասնավորապես գրում է գրողի կողմից իրական աշխարհում ապրելու և իրականության կանոնների խախտման մասին: Այլ կերպ ընդգծվում է մոզական ռեալիզմի ժանրի իր ընկալումները. *«Իսկական գրականության շարժիչ ուժը Գարոտն է, Մերը և այդ զգացողություններն ուրիշին հաղորդելու անզուսպ պահանջը: Իսկական գրողը իրականության ընտրությունն է կատարում: Իրականությունը նրա ներսում է այնքանով, որքանով նա ընդունակ է ընկալելու իրականությունը: Գրողի կյանքի ամեն օրը, ամեն պահը չէ, որ տպավորություններ է կուտակում: Գրողի ամեն տարիք չէ, որ տպավորություններ ընկալելու նույն սրությամբ է օժտված: Մանկության մի քանի տարին մեկի համար գուցե այնքան խիտ է բնակեցված տպավորություններով, որ կրավականացնի ողջ կյանքում»:* [6, էջ 439] Հոդված-վերջաբանում Հովսեփյանն ընդգծում է նաև մոզական ռեալիզմի մշակութաբանական հիմքերի և ստեղծման անհրաժեշտության մասին: Նա խոսում է ռեալիզմի և մոզական ռեալիզմի սահմանագծի, ինչպես նաև վերջինիս ստեղծման անհրաժեշտության մասին. *«Երևակայության ազատ ճախրանքի կոչ է սա, որին շտապել է առաջինը հետևել ինքը՝ Գաբրիել Գարսիա Մարկեսը»:* [6, էջ 445-446] Մարկեսի վեպի վերջաբան-հոդվածով Ռուբեն Հովսեփյանն ընդգծում է իր երևակայության ազատ ճախրանքի մասին: Եթե «Հայոց թաղ» վիպակում այդ ճախրանքը երեքացող էր, չկար հստակություն, ապա մոզական ռեալիզմը և իրականության մասնակի ընտրությունը հստակ տեսնում ենք «Որդան կարմիր» վիպակում: Այդ գործում մոզական տարրը իրականության միջավայրի բնական մաս է կազմում: Վիպակի գլխավոր կերպարը՝ Լևոն պապը, ապրում է սերնդեսերունդ: Հյուսվում է մի տոհմի պատմություն, որում առկա է իրականությունն ու առասպելը: Խոսելով Մարկեսի վեպի ազդեցության մասին՝ հարկ է նշել այուժետային նմանությունները կամ այս դեպքում նույնիսկ ուղղակիորեն ազդեցությունը: Այս վիպակով Ռուբեն Հովսեփյանը կարծես Մարկեսի Կոլումբիան սինթեզում է իր Հայաստանին: Մարկեսի վեպի անվերնագիր, պայմանական առաջին երեք գլուխներում ներկայացվում է մի խումբ մարդկանց վերաբնակեցման ու սոցիալական զարգացման մասին: Խոսվում է սերունդների կողմից մենության հատկանիշների ժառանգականության մասին: Մարկեսի վեպի այուժեի հիմքում հերոսների տառապանքն է միայնության մեջ և երբեմն նաև միայնությունից դուրս: Ներկայացվում է նույն տոհմի տարբեր սերունդների պատմությունը: Իսկ վեպի բնակավայրը՝ Մակոնդոն, անջատված է աշխարհից, ժամանակից և իրադարձություններից: Այն պտտվում է ինքն իր ներսում: Եթե մի պահ այս մի քանի նախադասությունից հանենք Մարկեսի անունը, ապա տպավորություն կստեղծվի, որ ներկայացվում է Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակի այուժեն: Հայ արձակագիրը, իր հերթին ազդվելով Մարկեսից, գրում է իր պատմությունը:

Տոհմական իր պատմության մասին Ռուբեն Հովսեփյանը գրում է. *«Չեմ թաքցնում՝ ես շատ եմ ուզում, թեկուզ անկատար, թերի, թողնել իմ տոհմի առասպելը, որը երկար, հրաշալի մի օր է՝ հազար թելերով կապված անցած օրերի հետ, երեսը դեպի եկող օրերը»:* [3, էջ 6] Հազար թելերով կապված մի տոհմի առասպել է «Ռոդան կարմիր» վիպակը, որում ներկայացվում է Լևոն պապի տոհմի առասպելը: Հենց այս տոհմի առասպելում է Ռուբեն Հովսեփյանն ընդգծում իր պատումի բազմաայուժետային առանձնահատկությունները: «Ռոդան կարմիր» վիպակը այուժետային և գաղափարական առումով ուղղակիորեն կարծես շարունակությունը լինի «Հայոց թաղ» վիպակի: «Հայոց թաղ» վիպակում Ռուբեն Հովսեփյանը նշում է, որ թաղը հիմնադրվել է 1948 թվականին. *«Երկհարկանի մի տուն կար և կարկատաններով մի վրան: Յոթ շունչ կար Հայոց թաղում 1946-ի ձմռանը»:* [5, էջ 79] «Ռոդան կարմիր» վիպակում հեղինակն ընդգծում է, որ ներկայացնում է թաղն ու թաղի մարդկանց հիմնադրումից մոտ 30 տարի անց: Մի շարք հատվածներում տրվում է թաղի մեծացման, նոր բնակիչների կողմից տուն կառուցելու և թաղը մեծացնելու տեսարաններ: Ընդգծվում են նաև թաղի կազմավորման շարունակությունն ու այնտեղ Արևելյան Հայաստանի տարբեր մասերից եկած գաղթականներով բնակեցումը. *«Սյնիչ թաղը երեսուն տարեկան էր: Այս թաղամասը բնակեցնելիս կարծես մի փոքր Հայաստան կազմելու խաղ էին հորինել. խաղին սկզբում մասնակցում էին միայն գաղթականները, Ամերկումի մեծացրած որբերը, հետո խաղի մեջ մտան նաև արևելահայերը՝ Չանգեզուրից, Լոռուց, Շիրակից, շրջանի մերձակա գյուղերից»:* [5, էջ 146] Հարկ է նշել, որ գաղթականներով ու Հայաստանի տարբեր վայրերից եկած բնակիչներով Արևելյան Հայաստանի վերաբնակեցման մոտիվն առկա էր այդ ժամանակաշրջանի հայ արձակուրդ: Դա մասնավորապես հստակ տեսնում ենք Ջորայր Խալափյանի «Մեռնող-հառնողը» վեպում: Վեպում Խալափյանը հատկապես խոսում է Մեծամոր քաղաքի կառուցման մասին: [1, էջ 130, 280] Ռուբեն Հովսեփյանը վերոնշյալ մեջբերմամբ ընդգծում է նաև «Հայոց թաղ» վիպակում տան նկուղում ապրող ուսուցիչ՝ Հայկազ Բաբայանի և աշակերտների քարտեզ-հայրենիքի մակետ պատրաստելու պատմությունը: Ի դեպ, «Ռոդան կարմիր» վիպակում աշխարհագրության ուսուցիչ Հայկազ Բաբայանը ևս հիշատակվում է: [5, էջ 268] «Ռոդան կարմիր» վիպակում Հայոց թաղի 30-ամյա գոյությունը փաստում է նաև վիպակի ավարտի թվականը՝ 1978: Երկու վիպակները սկսվում են գորգի նկարագրությամբ՝ վրան պատկերված խորհրդանիշներով: Լևոն պապի տոհմական ասքի հիմքը գորգն է: Հենց գորգի վրա պատկերված խորհրդանշային պատմությունն է վիպակում բացում ու ներկայացնում հեղինակը: Գորգի խորհրդանշային պատմությանը հաջորդում է «Հայոց թաղ» վիպակի այուժետային շարունակությունը: Հեղինակը պատմում է լարախաղաց Վարդան պապի պատմությունը, թե նրան ինչպես թաղեցին, ինչ հագուստով: Վիպակի հետագա մասերում ևս պարբերաբար Վարդան պապի կերպարը հառնում է անցյալի հիշողությամբ: [5, էջ 145, 189, 190, 294] «Ռոդան կարմիր» վիպակում արդեն իսկ լարախաղաց Վարդանի Արագած-Արարատ կամրջային կետը փոխվում է: Զգացվում է նոր հայրենիքի՝ Արևելյան Հայաստանի իրականության մեջ ուրվագծվող սահմանային կետը: Այստեղ արդեն լարախաղացի սահմանային ջրբաժանն ընդգծվում է Արաքս գետով՝ նոր սահմաններով. *«Վար-*

դանը պայման էր կապել. «Լարերն,-ասել էր,-կկապենք Արաքսի վրա՝ ավից ավի, ու կպարենք օր ու գիշեր, քանի դեռ ուժ կա պարելու»: [5, էջ 189] «Որդան կարմիր» վիպակի վերջում դարձյալ հիշատակվում է Վարդան պապը, սակայն այս կետում նշվում է, որ Վարդան պապի վերջին ցանկության տարածությունը կամաց-կամաց փոքրանում է: Եթե սկզբում ցանկությունն ընդգրկում էր Արագածից Արաքատ, ապա հետո այն սահմանափակվեց Արաքս գետի երկու ափերով, իսկ վերջնարդյունքում նրա ցանկությունը չկատարվեց: Ցանկությունն ավելի փոքրացավ, և նա պարան կապեց ավելի փոքր տարածքում. «Նա երկար լար չգտավ, որպեսզի մի ծայրը կապեր Արագածից, մյուսը Մասիսից, նրա ճարած լարը հագիվ հասցրեց իրար միացնելու հարևան բակերի թթենիները»: [5, էջ 294] Պատմական հիշողություն կրող կերպարի՝ Վարդան պապի ցանկությունը գնալով նվազում էր: Նվազման պատճառը հայրենիքի փոքրացած սահմաններն էին: Եվ սահմանային փոքրացումն ու վերջին ցանկության նվազումը հեղինակը տալիս է «Որդան կարմիր» վիպակի վերջին հատվածում: «Հայոց թաղ» վիպակի Լևոն պապի կերպարային կրողն է Լևոն պապը: Նրանք մերթ նույնանում են, մերթ տարբերվում: Մակայն տոհմական նույն իմաստության կրողներն են: Այլ կերպ ասած՝ «Որդան կարմիր» վիպակում Ռուբեն Հովսեփյանը բացում է Լևոնի կերպարը, որը թեև «Հայոց թաղ»-ում կար, շարժման մեջ էր, սակայն մասնակի լռություն ու անորոշություն կար նրա շուրջը: Այստեղ արձակագիրը արդեն բոլոր սլաքներն ուղղում է դեպի Լևոն պապի պատմությանը: Երկու վիպակներում պապերը կողք կողքի են: «Որդան կարմիր» վիպակում ևս հստակ կա ժամանակի ընկալման բարդություն: Թեև հեղինակը հստակ տալիս է վիպակում թաղի ժամանակային հստակությունը, այնուամենայնիվ մոզական ռեալիզմի ժանրի բանաձևին հետևելով արձակագիրը հաճախակի կտրում է ժամանակի թելը, ու ընթերցողը երբեմն խճճվում է: Վիպակում պյուժետային գիծը պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի՝ Լևոն պապի ընտանիքի պատմությունը Թիֆլիսում, ապա Հայաստան տեղափոխումն ու հաստատումը և տոհմի ապագա սերունդների պատմությունը: «Որդան կարմիր» վիպակում առկա է նաև «Հայոց թաղ» վիպակի պյուժետային այն գիծը, որում հեղինակը հաճախակի պատմական ակնարկ է անում, խոսում է վիպակի ժամանակաշրջանի և անցյալի պատմության մասին: Մերթ ցարական շրջանի պատմությունն է ներկայացվում, մերթ Հայաստանի խորհրդայնացումը, փետրվարյան ապստամբությունը և մերթ հայրենական պատերազմը: «Հայոց թաղ» վիպակից եկած պյուժետային այս գիծը հեղինակը պահպանում է նաև այստեղ: Մի շարք հատվածներում ուղղակիորեն տրվում է ապագայի սերունդների քննադատությունը. «Էլի մի երկու սերունդ կանցնի,-ասել էր նա, -ու երևի կմեռնի սրանց թոչեղու բնազդը: Երգելն էլ կմռռանան՝ էլ ի՞նչ կմնա նախկին դեղձանիկից: Կդառնան հավ կամ նման մի բան, որոնք իրենց այլասերված տեսակը պահպանելու համար կշարունակեն կուտ ուտել, ձու ածել, թուխս նստել ու այսքանը»: [5, էջ 166] Դեղձանիկների պատմությամբ ընդգծվում է ապագայի սերունդների նահանջող գիծը: Պատմական արժեքների ու ազգային հոգեկերտվածքի նվազումն ընդգծվում է հենց այս կետում: Հայ մարդու դիմագծի ներկայացմանը զուգընթաց արձակագիրը քննադատության հետ մեկտեղ փորձ է կատարում նաև վերացնելու մի շարք բնավորության գծեր, որոնք կործանող եղան մեր պատմության

մեջ: Լևոն պապը, որ տոհմական հասկանիշով նաև ազգային կրողն է, ինքն է ստանձնում պարտականությունն այդ ամենի մասին բարձրաձայնելու. *«Օտարի օգնությանը սպասելու մենք այնպիսի հարուստ փորձ ունենք, որ վաղուց ժամանակն է թաղել այդ գեշ սովորությունը: Թող ուշ լինի, դժվար, բայց լինի մեր ձեռքով, մեր փողով, մեր ուժով: Դա պետք է, որպեսզի մենք, որպես ազգ, վերագտնենք հավատը մեր ուժերի նկատմամբ»:* [5, էջ 246] Վիպակում առկա են հայոց պատմության տարբեր ժամանակների ներկայացումն ու վիպակի կերպարների շուրթերով հեղինակի վերլուծությունը: [5, էջ 178-182] Այստեղ շարունակվում է նաև «Հայոց թաղ» վիպակում առկա հայ մարդու պատմական շրջանի, կենսագրության քննադատությունը, որը բնորոշ է Ռուբեն Հովսեփյանի արձակին: Վիպակում շարունակվում է նաև Թումանյանի տարբեր ստեղծագործությունների մեջբերումն ու բանահյուսական գիծը: Դրանով պահպանվում է տոհմիկ հիշողության պատմությունը, որն առկա է մեկ տասնամյակ անց ևս: Ռուբեն Հովսեփյանը «Որդան կարմիր» վիպակում պահպանում և շարունակում է «Հայոց թաղը» ստեղծագործության սյուժեն ու գաղափարը: Սակայն հարկ է նշել, որ այս երկու վիպակները որքան էլ միմյանց շարունակությունն ու լրացումն են, միևնույն դեպքում նաև իրարից անկախ վիպակներ են: Սյուժետային գծերի շարունակությունը մասնակիորեն տալիս է նաև մի շարք կերպարների կենսագրության շարունակությունը: Այստեղ են Լևոն պապն ու Վարդան պապը: Այստեղ է հիշատակվում Հայկազ Բաբայանն իր գործառույթի պահպանմամբ: Այստեղ Հայոց թաղի շինարարության ավարտն է ընդգծվում, նաև պատմվում թաղի կառուցման մասին: Պատերազմի մասին պատմությունները մերթընդմերթ տեսիլք-իրականություն գեղարվեստական հնարքով հիշեցնում են իրենց մասին: Արյան խորհրդանիշն ու գույնը կենդանի են պահում վիպակի երանգը մի շարք հատվածներում: Պարբերաբար կերպարների հետ կատարվող իրադարձություններում ընդգծվում են կարմիրն ու արյունը: Խորհրդանշային համակարգում առկա է ջուրը ևս: Այստեղ արդեն պատմվում է ջրհեղեղի կործանիչ խորհուրդը: Լևոն պապի կյանքի թիֆլիսյան շրջանում առկա է ջրհեղեղի պատմությունը: Ջրհեղեղից փրկված Լևոնն իրեն նաև Նոյի հետ էր ասոցացնում: Վիպակներում խորհրդանիշների կրկնությունն ու գաղափարական շարունակությունը ևս առկա են: Այն սյուժետային գծի ու գաղափարական հենքի անբաժան մասն է: «Որդան կարմիր» վիպակում Լևոն պապի տոհմի պատմության սյուժեն բազմաշերտ է: Այն նախ սկսվում է Թիֆլիսում ապրելու տարիների հիշատակությամբ ու նկարագրությամբ: Լևոնն իր կնոջ՝ Նենեի և ընտանիքի հետ ապրում էր Թիֆլիսում: Լևոնի երեխաներն էին Աստղիկը, Դերենիկը, Արշակն ու Սուրենը: Լևոնի կինը Նենեն մահանում է: Լևոն պապն իր հերթին տուն է բերում նաև մշեցի տղայի՝ Հրայրին, ընդունում որպես իր որդի: Լևոնի ընտանիքի պատմության անբաժան մասնիկն է նաև իր եղբայրը՝ Վահանը: Լևոնը Թիֆլիսում ուներ գրախանութ, որը հետագայում վերաբացում է նաև Հայաստանում: Թիֆլիսյան շրջանի նկարագրությամբ տրվում է տոհմական պատմության սկզբնավորումը: Տոհմական պատմության մասին խոսելով ընդգծվում է նաև տոհմին բնորոշ մահվան առկայությունը: Մահ, ինքնասպանություն, բանտ, խելագարություն, դժբախտություն սրանք վիպակի ամբողջ ընթացքում ուղեկցում են կերպարներին: Լևոնի մայրը կախվել էր, հայրը մարդասպան էր: Մահա-

նում է կինը՝ Նենեն: Տոհմի կյանքի, անցյալի, ներկայի ու դժվարությունների ներկայացումից հետո նկարագրվում է արդեն նրանց տեղափոխությունը դեպի Հայաստան: [5, էջ 150] Այս ամենի հետ մեկտեղ հարկ է նաև նշել, որ վիպակում պարբերաբար խախտվում է ժամանակը: Մասնավորապես փոփոխվում են կերպարների միջև զրույցների ժամանակները: Դա բնորոշ գիծ է մոզական ռեալիզմին, սակայն այդ ամենի հետ մեկտեղ Լևոնի կերպարը ապրում է բոլոր ժամանակների մեջ: Փոխարենը փոփոխվում են մյուս կերպարների գոյության ժամանակները: Դա բնորոշ է և՛ Ռուբեն Հովսեփյանի արձակին, և՛ մոզական ռեալիզմի ժանրային առանձնահատկությանը: Հայաստանում հաստատվելուց [5, էջ 189] հետո սկսվում է Լևոնի տոհմի պատմության պայմանական երկրորդ մասը, որտեղ արդեն ժամանակի միջով հոսում է Լևոնի կերպարը, և պատումի դիտանկյունում կանգնում են արդեն նրա երեխաների, կամ այս դեպքում՝ հաջորդ սերնդի պատմությունը: Ինչպես «Որդան կարմիր» վիպակի ամբողջ ընթացքում Լևոնի կերպարային շունչն է նկատվում, անգամ այն էջերում, որտեղ ի սպառ բացակայում է նա, այնպես էլ աստվածաշնչյան պատմություններն ու մեջբերումներն են ուղեկցում ընթերցողին վիպակի ամբողջ ընթացքում: Լևոնն իրենով պատմականության ու կրոնական արժեքների կրողն էր: Նրա և Աստծո մտերմությունը լույս աշխարհ է գալիս պատումի տարբեր հատվածներում: Վիպակի հենց սկզբում ջրհեղեղից փրկված Լևոնը գուգահեռվում է Նոյի հետ, սակայն Թիֆլիսի կյանքին հաջորդող դժբախտությունները Լևոնին Նոյից տանում են դեպի աստվածաշնչյան Հոբի մոտ: Այդ մասին հստակ արձանագրվում է. «Նա շատ էր կորցրել... Ջրհեղեղների պատճառով իրեն Նոյ կոչող Լևոն Միմոնյանը հետագայում, երբ արձակվել էր դժբախտությունների կծիկը, արդեն Հոբ էր: Հարվածը հարվածի ետևից էր գարկվում նրա գլխին»: [5, էջ 203] Լևոնի կյանքը ջրհեղեղից հետո այլ ուղով գնաց: Ինքն իր վրա Նոյի սինթեզ կրող Լևոնը սկսեց Հոբի կենսագրությամբ ապրել: Դժբախտությունները սկսեցին հաջորդել մեկը մյուսին: Տոհմի ողբերգության առասպել կրողն էր Լևոնը, սակայն չհանձնվողն ու պայքարը շարունակողը: Տղամարդիկ մնում են առանց կանանց: Կին տեսակն այդ տոհմում երկար չէր ապրում, իսկ տղամարդկանց ուղեկցում էր մահը կամ անձնական ողբերգությունը. «Կնոջ քաղց կա մեր արյան մեջ», - մտածեց Արշակը՝ նայելով երկաթուղային գծերի վրայից թռչող, գրադարանի ուղղությամբ փախչող Արայի ետևից և Միմոնյան տոհմի դաժան ճակատագիրը, որպես պատճառաբանություն, փռեց իր առաջ»: [5, էջ 241] Պատկերն ամբողջական է դառնում, երբ այս ամենին գումարում ենք նաև Լևոնի հոր բանտարկությունը մարդասպանության համար, որդու՝ Սամվելի մահը փետրվարյան ապստամբության ժամանակ, եղբոր՝ ինքնասպանությունը և մյուս ողբերգական իրադարձությունները: Այդ ժամանակ տոհմական գորգի պատկերը դառնում է ամբողջական: Գորգի վրա ամեն անգամ հայտնաբերված նոր նախշը նման էր Հոբին հասցված նոր հարվածին: Լևոնը շարունակում էր կյանքի ընթացքում մնալ և հավատալ, որ տոհմական առաջին գերեզմանի հիմքը հենց ինքն է դնելու. «Մեր գերեզմանատունը ինձնով է սկսվելու»: [5, էջ 251] Տոհմական ողբերգության շղթան փակվում է Լևոն պապի մահով: Սակայն նա Հոբի առաքելությունը կրեց մինչև վերջ և հաղթահարեց այն: Վիպակի վերջում Լևոնը դարձյալ Նոյի սինթեզն է կրում իր մեջ: Հաղթահարելով Հոբին՝ նա վերադարձավ դեպի Նո-

յը՝ իր իսկ բնության սկզբնակետը: Նրա մահվան մեջ կար կյանքը: Երբ բժիշկը Արշակին պատմում է, որ նրա սիրտը նման էր մանուշակի փնջի: Ռուբեն Հովսեփյանի «Ռոդան կարմիր» վիպակի կենտրոնական իրադարձությունը ջրհոր փորելիս Լևոն պապի կողմից կճուճի հայտնաբերումն է: Կճուճը դառնում է վիպակի գլխավոր խորհուրդը, իսկ կճուճի ներսում գտնվող որդան կարմիրն ու դրա շուրջ ծավալվող հետագա զարգացումները դառնում են վիպակի սյուժետային գլխավոր կետը: Կճուճը գտնելով՝ Լևոն պապի առաջնային արձագանքն ու խոսքն ուղղվում են դարձյալ Աստծուն: Վիպակում Լևոն պապ-Աստված անուղղակի երկխոսությունները բավական շատ են. «Տեր Աստված,-դողացին Լևոն պապի շրթները, և նրա բորբոքված երևակայությունը խցկվեց կճուճի ներսը,-մի՞թե այս կճուճով նշան ես տալիս, որ այսուհետ բարեհաճ ես լինելու...»: [5, էջ 192] Առաջին էտապում Լևոնի համար կճուճը դառնում է Աստծո կողմից նշան, որ «Հոբի դարաշրջանը» գուցե ավարտվում է, և սկսում է դեպի Նոյ վերադարձի շրջանը: Կճուճը դառնում է Լևոն պապի կյանքի և գոյության նոր իմաստը: Այն դառնում է խորհրդանիշը, ինչը հոսում էր վիպակի ամբողջ ընթացքում: Կճուճի բացումն ու ներսի պարունակությունը զարմացնում են բոլորին, անգամ Լևոն պապին. «Վերջապես Լևոն պապը բացեց կճուճի բերանը,անհամբերությունից դողալով ձեռնակ սփռոցի վրա շուտ տվեց պարունակությունը: Մուգ կարմրավուն բրնձի հատիկի մեծության չորացած միջատները ցրիվ եկան ձեռնակ սփռոցի վրա: Աչքերին չհավատալով՝ Լևոն պապը ձեռքը կճուճը խոթեց, դուրս բերեց էլի լաթերով փաթաթված ձեռագիր մի գիրք: Եվ ուրիշ ոչինչ»: [5, էջ 194] Կճուճի գտնելուց հետո հետագա էջերում հեղինակը ներկայացնում է [5, էջ 198-203] կճուճի մեջ պահպանված ձեռագրի բովանդակությունը՝ 1800-ականների պատմություն, պատմական կերպարներ, մարդիկ, իրադարձություններ ու պատմության հիմքում ընդգծված որդան կարմիրի խորհրդանիշը: Պահպանված ձեռագրի պատմական ակնարկին զուգահեռ՝ ուրվագծվում է նաև Հայոց երկրի ու հայ մարդու ընտրյալ լինելը: Ազգային արժեքներ կրող Լևոն պապը, որն արդեն իր ձեռքում ունեցավ կճուճը, որդան կարմիրն ու ձեռագիրը, իր թոռանը՝ Արային, ներկայացնում է հայրենիքի բացառիկությունը և այնտեղ գտնվող արժեքները չգիտակցելը. «-Այս երկիրը, Արա,-հայտնեց նա մի անգամ իր գտած միտքը,-օրհնված երկիր է: Անիմաստ, անպետք բան չկա: Եթե այս քարը անպետք է, վեր է ընկած այստեղ, նրանից է, որ մենք չգիտենք նրա գաղտնիքը: Կամ իմացել ենք ու մոռացել»: [5, էջ 203] Ընդգծվում է օրհնված երկրում ազգային արժեքներից գիտակցաբար կամ անգիտակցաբար հրաժարման իրողությունը: Արժևորվում է հայրենիքում ամեն բան, որոնցում թաքնված է մեծ գաղտնիքը: Անգիտակցաբար համամարդկային մեծ արժեքը օտարին նվիրաբերելու մեր առանձնահատկությանն անդրադառնում են նաև օտար հեղինակներ: Հարկ է հատկապես նշել անգլիացի գրող Հերբերտ Ուելսին և նրա «Խնձորը» պատմվածքը, որում հեղինակը խոսում է հայի կողմից օտարին տրվող արժեքի մասին. «-Ես գնել եմ այն մի հայից, երեք ամիս առաջ, մի բաժակ ջրով ու մի կտոր հացով: Հայաստան: Այդ հրաշք երկիրը միակն է, որտեղ մինչև օրս պահպանվում է Նոյյան տապանը՝ Արարատ լեռան սառցադաշտերի մեջ թաղված»: [8, էջ 48] Հերբերտ Ուելսի «Խնձորը» պատմվածքում հստակ ընդգծվում է վերևում արդեն իսկ մատնանշված թեման: Լևոն պապի խրատները թոռանը առասպելի հավիտե-

նականությունն են փաստում: Վիպակում որդանի խորհրդանիշն իր մեջ կրում է նաև միջատի պատմամշակութային արժեքը: Մասնավորապես պետք է նշել, որ որդան կարմրի համբավն այնքան մեծ է եղել, որ Հայոց աշխարհը երբեմն անվանել են նաև Որդան կարմրի երկիր: Արաբներն իրենց հերթին Արտաշատը կոչել են Որդան կարմրի քաղաք: Հին հայերի մեջ որդան կարմիրը եղել է նաև միասնության խորհրդանիշ: Պատմական այս ընդհանրական գաղափարական կետերը Ռուբեն Հովսեփյանը օգտագործել և սինթեզել է վիպակում որդանի խորհրդանշային համակարգին: Լևոն պապն այդ համակարգի գտնողը, փնտրողն ու արժեքի գիտակցողն է: Վիպակի հետագա հատվածներում տեսնում ենք նաև որդերի տարածքի պահպանման, մշակման ու անգամ երկրի նախագահին գրված դիմում-նամակը, որով տարվում է արժեքի պահպանության հարցը: Պատմական ակնարկը շարունակելու և զուգահեռաբար ավարտելու համար ցանկալի է նշել նաև, որ որդան կարմրի պահպանության ու զարգացման համար խոսվել է նաև Շահամիր Շահամիրյանի կողմից 1788 թվականին հրատարակված սահմանադրության նախագծում՝ «Որոգայթ փառաց»-ում: Ժողովածուի 502-րդ հոդվածում նշվում է. *«Ով շնորհ ունենա մեր Հայաստան երկրում վերականգնել կարմիր որդանը՝ ներկ պատրաստելու համար և աճեցնել լեղակ...մեկ անգամ միայն Հայոց տան կողմից պետք է շնորհի արժանանա, այսինքն՝ 10. 000 արծաթ դահեկան»:* [7, էջ 208-209] Պատմական իրողության արձանագրումը վիպակում լրացնում է Լևոն պապի գաղափարական համոզմունքը: Խորհրդանիշին կառչած լինելն ու հավատով ձեռքերի մեջ ամուր տանելը հոսում են վիպակի ամբողջ ընթացքում: «Որդան կարմիր» վիպակի վերջաբանում Լևոն պապի խոհափիլիսոփայական մտքերին հաջորդում են սյուժետային արագ զարգացումներն ու ողբերգական մահը: Նախքան Լևոն պապի խոհերը ազդարարվում է նրա՝ դեպի Նոյ վերադարձը. *«Ձուրն էլ է, ահա, այսպես իջել,-հիացավ Լևոն պապը՝ լեռան գագաթին նկարելով Նոյին»:* [5, էջ 300] Խոհափիլիսոփայական էջերն [5, էջ 300-303] ազդարարում են Լևոնի հավատամքը: Ընդգծվում է վիպակի ամբողջ ընթացքում եղած և կուտակված իմաստությունը: Ազդարարվում է նրա կողմից Նոյի սինթեզը կրելու փաստն ու ուրվագծվում կերպարի գաղափարական ամբողջությունը: Ապա հաջորդում է նրա տազնապը, պատմական հիշողության դիմաց կանգնած վտանգն ու հիշողության, արժեքի պահպանման ժամանակ ողբերգական մահը. *«Նա տեսավ, թե ինչպես պուլիկը զարկվեց մի քարի, փշուր-փշուր եղավ, և թե ինչպես աջ ու ձախ փախան մուգ կարմրավուն միջատները ու հողը սուզվեցին...Նրանք բերանքսիվայր փռված Լևոն Միմոնյանին չնկատելով, եկան, շրջապատեցին իր ծանր ու ծեր մարմինը...»:* [5, էջ 304]

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. «Որդան կարմիր» վիպակում Ռուբեն Հովսեփյանը որդանի խորհրդանիշով ընդգծում է բարդ պատմական ժամանակաշրջանում արդեն իսկ կործանման եզրին կանգնած արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Լևոն պապն այդ արժեքների կրողն է, պահպանողն ու գոյության համար կռվողը: Տոհմական պատմության հիմքում ազգ-տոհմ զուգահեռն է: Տոհմի ողբերգական պատմությունը սոսկ տոհմական պատմությունն չէ, այլ ազգային ողբերգության արձանագրում: Մերունդների պատմության համատեքստում ընդգծվում է ազգային պատմությունը: Խորհրդանիշները վիպակի հիմքն են: Բազմասյուժետային պատումը, սակայն, ունի ընդգծված գլխա-

վոր պոետն և գաղափար: Ազգային-տոհմական առասպելի ներքին ծալքերում հայ մարդու հարատևման գաղտնիքներն ու բանալիներն են, որոնք տրվում են Լևոն պապի կերպարով, շուրթերով ու խոհերով, իսկ գաղտնիքը կճուճում գտնվող որդան կարմիրներն են:

Գրականություն

1. **Խալափյան Չ.** «Մեռնող-հառնողը», Երևան: «Անտարես»: 2023: 386 էջ:
2. Հայաստանցի 8 երիտասարդ արձակագիրներ, Բեյրութ: Տպարան «Սևան»: 1969: 311 էջ:
3. **Հովսեփյան Ռ.** «Երկար, հրաշալի օր». («Որդան կարմիր» վիպակը և պատմվածքներ), Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1980: 256 էջ:
4. **Հովսեփյան Ռ.** «Երկու վիպակ. Ճիշ, Հայոց թաղ», Երևան: «Հայաստան» հրատ.: 1970: 172 էջ:
5. **Հովսեփյան Ռ.** «Որդան կարմիր», Երևան: «Անտարես»: 2015: 520 էջ:
6. **Մարկես Գ.** «Հարյուր տարվա մենություն», Երևան: «Հայաստան» հրատ.: 1979: 447 էջ:
7. «Որոգայթ փառաց», Երևան: «Հայաստան հրատ.»: 2002: 298 էջ:
8. *XX դ., արտասահմանյան արձակ*, Երևան: ԵՀ հրատ.: 1984: 573 էջ:

References

1. **Khalapyan Z.** The Dying and the Resurrected, [*Mernox harmoxy*], Yerevan, "Antares". 2023. 386 p. (in Armenian)
2. 8 young Novelists from Armenia, [*Hayastanci 8 eritasard ardzakagirner*], Beyrut, "Sevan" Publishing House. 1969. 311 p. (in Armenian)
3. **Hovsepyan R.** A Long Wonderful Day (Armenian Cochineal Novel and Stories), [*Erkar hrashali or (Vordan karmir vipaky ev patmvacqner)*], Yerevan. USSR Publishing House, 1980. 256 p. (in Armenian)
4. **Hovsepyan R.** Two Novels. Loud Noise and Armenian Quarter, [*Erku vipak. Jich, Hayoc tagh*], Yerevan. "Armenia" Publishing House., 1970. 172 p. (in Armenian)
5. **Hovsepyan R.** Armenian cochineal, [*Vordan karmir*], Yerevan. "Antares" Publishing House. 2015. 520 p. (in Armenian)
6. **Markes G.** One Hundred Years of Solitude, [*Haryur tarva menutyun*], Yerevan. "Armenia" Publishing House. 1979. 447 p. (in Armenian)
7. A trap of glory, [*Vorogayt Parac*], Yerevan. "Armenia" Publish. House. 2002. 298 p. (in Armenian)
8. Foreign Prose Literature of the 20th century, [*XX d. artasahmanyany ardzak*], Yerevan. YU Publish ing. House. 1984. 573 p. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **10. 10. 2024**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **20. 11. 2024**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արա Սմբատի ՉԱՐԳԱՐՅԱՆ՝ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ, էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

Ara Smbat ZARGARYAN: Junior researcher at the Manuk Abeghyan Institute of Literature of NAS, Yerevan, RA, e-mail: zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

Ара Смбатович ЗАРГАРЯН: младший научный сотрудник Института литературы имени Манука Абегамяна НАН, Ереван, РА, эл-адрес: zargaryanara1994@gmail.com // orcid id: 0000-0002-0087-5232

ՀՏԴ՝ 821.111

DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ԷԹՆԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ
20-ԲԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նեյի Բակուրի Գալստյան

Մ. Խորենացու անվան համալսարան, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածը նվիրված է հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումներին, որոնցում կարևորագույն տեղ են զբաղեցնում ամերիկահայության առջև ծառայած բազում հոգեբանական խնդիրները, սերնդեսերունդ փոխանցված ավանդույթների, սովորույթների, կենսափորձի, վարքուբարքի, հավատալիքների պահպանումը, ազգը շարունակաբար վերածնող, վերախմաստավորող, վերականգնող էթնիկ հիշողությունն ու մշակույթը: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, օգտագործվել ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները: *Վերլուծություն.* Յուրաքանչյուր ազգի գրականության մեջ առանձնակի կարևոր տեղ է գրավում իր ազգային ինքնության թեման: Ազգային ինքնությունն էթնիկական և փիլիսոփայական հասկացություն է, որտեղ բոլոր մարդիկ բաժանվում են ազգեր կոչվող խմբերի: Ազգի անդամներն ունեն ընդհանուր ինքնություն և սովորաբար ընդհանուր ծագում՝ նախնիների, ծնողների կամ ծագման իմաստով: Էթնիկ փոքրամասնությունները դիտարկվում են որպես նորեկներ, որոնք գտնվում են ինտեգրման գործընթացում [7, p. 13]: Յուրաքանչյուր ազգ ունի իր սեփական հոգեբանությունն ու նկարագիրը, բարքերն ու սովորույթները, ապրումները: Ազգը հզոր է ու անվանի իր որակական խտացյալ արժեքներով ու հստակություններով: *Արդյունքներ.* Ազգն է սկզբնաղբյուրը ժողովրդի ու ազգի մտավոր և հոգևոր ստեղծագործությունների: Առանց ցեղային ինքնատիպության՝ չկա ինքնահատուկ և ինքնաղորոշ արվեստ կամ այլ ստեղծագործություն: Ժողովրդի և ազգի մեջ որքան զորավոր են ցեղն ու ցեղայինը, այնքան առանձնահատուկ է, գունազեղ ու գրավիչ է ամեն ստեղծագործություն: Ցեղի հանդեպ պարտավորվածությունն ու զենային արժեքներն

են ձևավորում ազգային մտածողությունն ու արժեհամակարգը, որոնք էլ, իրենց հերթին, ձևավորում են գրականությունը:

Բանալի բառեր՝ *ազգային ինքնություն, ազգային արմատներ, ժամանակի պարտադրանք, ամերիկահայ անզլագիր գրողներ, մաքառումներ, ներաշխարհ, գոյափոխություն, ցեղասպանության ճանաչում:*

Ինչպես հղել՝ Գալստյան Ն. Հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումները 20-րդ դարի ամերիկյան գրականության համատեքստում. // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Ն. 2 (27): 68-79 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

QUESTIONS OF ARMENIAN-AMERICAN ETHNIC LITERATURE IN THE CONTEXT OF 20TH CENTURY AMERICAN LITERATURE

Nelli B. Galstyan

University after M. Khorenatsi, Yerevan, RA

Abstract

Introduction: The article touches upon the issues of Armenian-American ethnic literature, in which the most important place is the many psychological problems faced by American Armenians, the preservation of traditions, customs, life experience, manners, and beliefs passed down from generation to generation, the ethnic memory and culture that continuously revives, reinterprets, and restores the nation. **Methods and materials:** Historical-comparative, structural-typological methods were used in the article as well as modern studies and new achievements in the field. **Analyses:** In the literature of each nation, the topic of its national identity occupies a significant place. Members of a nation share a common identity and usually a common ancestry, in the sense of ancestors, parents, or descent. Ethnic minorities are seen as newcomers in the process of integration. Each nation has its own psychology and origin, manners and customs, feelings. The nation is powerful and famous for its qualitative concentrated values and clarity. **Results:** The nation is the source of all intellectual and spiritual creations of the people and the nation. Without tribal originality, there is no unique and distinctive art or other creation. Commitment to the tribe and genetic values shape the national thinking and value system, which, in turn, shape the literature.

Key words: *national identity, national roots, compulsion of time, American-Armenian English writers, extortions, inner world, existential philosophy, recognition of genocide.*

Citation: Galstyan N., *Questions of Armenian-American Ethnic Literature in the Context of 20th century American Literature.* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2(27). 68-79 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ВОПРОСЫ АРМЯНО-АМЕРИКАНСКОЙ ЭТНИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ В КОНТЕКСТЕ АМЕРИКАНСКОЙ ЛИТЕРАТУРЫ XX ВЕКА

Нелли Б. Галстян

Университет им. М. Хоренаци, Ереван, РА

Аннотация

Введение: Статья посвящена вопросам армяно-американской этнической литературы, в которой важнейшее место занимают многочисленные психологические проблемы, с которыми сталкиваются американские армяне, сохранение традиций, обычаев, жизненного опыта, нравов и верований, передаваемых из поколения в поколение. Этническая память и культура, которую постоянно возрождают, переосмысливают и восстанавливают нацию. **Методы и материалы.** В статье использованы историко-сравнительный, структурно-типологический методы, использованы современные исследования и достижения. **Анализ:** В литературе каждого народа тема его национального самосознания занимает особенно важное место. Национальная идентичность — это этническая и философская концепция, в которой все люди делятся на группы, называемые нациями. Члены нации имеют общую идентичность и обычно общее происхождение в смысле предков, родителей или происхождения. Этнические меньшинства рассматриваются как новички в процессе интеграции. [7, с. 13]. Как у каждого человека, так и у нации есть своя психология и профиль, манеры и обычаи, чувства. Нация велика и знаменита своими концентрированными качественными ценностями и ясностями. **Результаты.** Нация является источником всех интеллектуальных и духовных творений народа и нации. Без племенной самобытности не может быть уникального и самобытного искусства или другого творения. Чем могущественнее племя и род в народе и нации, тем особенное, красочнее и привлекательнее каждое творение, именно приверженность племенни к генетическим ценностям формирует национальное мышление и систему ценностей, которые, в свою очередь, формируют литературу.

Ключевые слова: национальная идентичность, национальные корни, принуждение времени, американо-армянские англоязычные писатели, внутренний мир, экзистенциальная философия, признание геноцида.

Как цитировать: Галстян Н. *Вопросы армяно-американской этнической литературы в контексте американской литературы XX века.* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 68-79 сс.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ՆԱԽԱԲԱՆ. Հայ Սփյուռքը, այդ թվում՝ նաև ԱՄՆ-ի հայ համայնքը, Հայոց ցեղասպանության հետևանքն է: ԱՄՆ-ի հայ համայնքը ձևավորվել է 19-րդ դարի 70-ական թթ. վերջին: 1886թ.-ին Նյու Յորքում հիմնադրվել է «Հայկական միությունը», որի նպատակն էր «ամերիկաբնակ հայոց մեջ միութեան կապ հաստատել, ազգային զգացումներ մշակել եւ ազգագուտ ձեռնարկներ ընել» [[2, էջ 174]: Միությունը կարևոր դեր է կատարել ԱՄՆ-ում հայությանը ձուլման վտանգից զերծ պահելու, նրա ազգային ինքնագիտակցությունը պահպանելու գործում: 1890-ական թթ.-ին Օսմանյան կայսրության կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով հայերը զանգվածաբար գաղթել են ԱՄՆ:

Սփյուռքահայ գրականությունն աշխարհի տարբեր գաղթօջախներում 20-րդ

դարի 10-ականների վերջերից մինչև 30-ականների կեսերն սկիզբ առած գրական շարժում է, որն ունեցել է զարգացման մի քանի փուլ: Առաջին փուլին բնորոշ է հայրենի հողի կարոտի գրականությունը, որն ուներ ընդգծված գյուղագիտական միտում: Ինքնակազմակերպման և ինքնագիտակցության ձևավորման մակարդակում սկսում են տիրել ձուլման վտանգը և այն հաղթահարելու մտահոգությունը (երկրորդ փուլ): Երկրորդ աշխարհամարտի և հետպատերազմյան տարիներին դրվում են պայքարի, հայրենասիրության և ստեղծագործական վերելքի սփյուռքահայ նոր գրականության հիմքերը: Այն, կարոտի, հայրենաբաղձության, ձուլման դեմ պայքարող գրականություն լինելուց բացի, դառնում է նաև համամարդկային արժեքներ կերտող, սփյուռքահայ մարդուն համամարդկային ինքնատիպ դիմագծերով արտացոլող գրականություն: Սփյուռքահայ գրականությանը բնորոշ են ոչ միայն գեղագիտական, գեղարվեստական և քաղաքական-գաղափարական խնդիրների արծարծումը, այլև յուրահատուկ լեզվաշինարարությունը: Նշանակալի է նաև սփյուռքահայ գրականության դերն օտար գրականությունը հայերին և հայկականն այլ ժողովուրդներին ներկայացնելու գործում, որոշակի է նաև սփյուռքահայ օտարալեզու գրականության դերը:

20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայից հայկական ջարդերի հետևանքով հազարավոր հայ գաղթյալներ համալրել են հայկական համայնքը, որը մինչ օրս էլ, սոցիալ-քաղաքական հանգամանքներով պայմանավորված, համալրվում է: Առաջին իսկ օրից ԱՄՆ-ի հայկական համայնքի առջև ծառայել են բազմաթիվ մարտահրավերներ: Առավել բնորոշ խնդիրներից են ազգային ինքնության, ինքնագիտակցության պահպանումը, հայկական համայնքի միավորումը՝ որպես քաղաքական գործոն, որոնց լուծումներից են կախված ԱՄՆ-ում բնակվող հայության պահպանումը, ձուլման վտանգի չեզոքացումը: Ձուլման հիմնական չափանիշն այն աստիճանն է, որով ներգաղթյալները նույնանում են իրենց բնակության երկրի հետ, կիսում են նրա «հավատքը», ընդունում են նրա մշակույթը և, համապատասխանաբար, մերժում իրենց նախկին հավատարմությունն ու կապվածությունը հայրենի երկրին, ավանդույթներին և մշակույթին, որին պատկանում էին: ԱՄՆ-ում հայերի ազգապահպանման հիմնական գրավականը «Հայկական միությունից» հետո եղել է 1917 թ-ին Միհրան Սվազյանի ջանքերով Բոստոնում հիմնադրված «Ամերիկայի հայ ազգային միությունը», որն իր 87 մասնաճյուղերով համախմբել է բոլոր քաղաքական, եկեղեցական, բարեսիրական խմբավորումներին, հրատարակել և տարածել հայանպաստ գրականություն՝ մեծ դեր կատարելով ազգապահպանության գործում: Մեկը մյուսի հետևից լույս են տեսել հայալեզու և անգլալեզու թերթեր («Արեգակ» 1888, «Քաղաքացի» 1889, «Նոր Կեանք» 1914-1919, «The Armenian Herald» 1917-1919, «Հայրենիք» 1889թ.-ից մինչ օրս, «Ասպարեզ» 1908թ.-ից մինչ օրս, «Արօր» 1919, «Նոր Կեանք» 1919, «Նոր օր» 1922, «Հայաստանի կոչնակ» 1900-1968, «Մասիս» 1980 և այլն), ամսագրեր («Հայրենիք» ամսագիր, «Նոր Գիր» գրական հանդեսը 1936թ.-ին և այլն), որոնցից շատերը դեռևս հրատարակվում են՝ կապող օղակ լինելով ոչ միայն ամերիկաբնակ հայերի, այլև ողջ հայության համար: Հայապահպանման գործում իր անուրանալի դերն է ունեցել հայ եկեղեցին, որը եղել է հայեցի դաստիարակության հիմնական օջախը: Հայոց եկեղեցուն էր վերապահված հայկական դպրոցների ստեղծ-

ման ու պահպանման առաքելությունը: Ազգապահպան մյուս կարևոր գործունը ազգային դիմագիծն ու բնավորությունը պահպանող մշակույթն է: Հավատարիմ մնալով ազգային մշակույթին և կրոնին՝ հայերը միշտ ցուցաբերել են ճկունություն և տարբեր հանգամանքներին հարմարվելու զարմանալի կարողություն, կարողացել են պահպանել իրենց ազգային ավանդույթները, հավատքն ու լեզուն:

«Ներթափանցելով հեռավոր երկրների կյանք,–գրում է ազգագրագետ Վ. Միքայելյանը, – իրականացնելով ծավալուն տնտեսական և մշակութային գործունեություն՝ աշխարհի ժողովուրդներից քչերին է հաջողվել պահպանել ու նոր պայմաններում զարգացնել իրենց ազգային ինքնությունն ու ինքնատիպ մշակույթը» [10, էջ 123]:

Սփյուռքահայ գրականությունը, չնայած արևմտահայ գրականության հետ ունեցած ներքին միասնականությանը, ձեռք բերեց նաև նոր հատկանիշներ, որոնք թելադրվում էին կյանքի նոր պայմաններով: Նախկին արևմտահայը այժմ սփյուռքահայ էր՝ ամերիկահայ, ֆրանսահայ, լիբանանահայ... և պարտադրված էր ապրել նոր աշխարհի օրենքներով: Այլևս բնիկ չէր, չունեի իր հայրենի հողը, գաղթական էր: Մոցիլա-քաղաքական նոր գոյավիճակը նրան թելադրում էր կենսապայքարի նոր ձևեր: Բազմաթիվ էին նրան մտատանջող հարցերը. ի՞նչ է անելու այդուհետ, ինչպե՞ս է հայթայթելու օրվա ապրուստը, արդյո՞ք կարող է օտար հողում պահել իր ազգային ինքնությունը, մայրենի լեզուն, իր զավակներին կարո՞ղ է տալ հայեցի կրթության, արդյո՞ք մի օր պիտի հաղթի արդարությունը, որ ինքն իր հայրենի տունը վերադառնա: Այս հարցականներին պիտի պատասխան տար հայ մտավորականը, հայ գրողը պիտի գրականության մեջ կերպավորեր սփյուռքահայության այս նոր հոգեվիճակը: Գրականության հերոս պիտի դառնար իր գոյատևության համար տքնող, անկամորեն ուժացող կամ ուժացման վտանգի դեմ պայքարող, կորցրած հայրենի տան կարոտից տառապող ու վերադարձի հույսը փայփայող սփյուռքահայը՝ իր ճակատագրի մասին մտատանջող խոհերով:

Հայ ազգային-մշակութային կյանքը, մասնավորապես՝ գրականությունը, ԱՄՆ-ում ձևավորվել է 20-րդ դարի 20-ական թվականներին: Ամերիկյան այն երեք գաղթօջախներից էր, որտեղ կյանքի հրամայականով, շնորհիվ արևմտահայ վերապրած և սփյուռքահայ առաջին սերնդի գրողների, ստեղծվեց սփյուռքահայ գրականությունը: 20-30-ական թթ. Ամերիկյան ներգաղթած երիտասարդ գրողներ Համաստեղը, Վահե Հայկը, Բենիամին Նուրիկյանը, Հակոբ Ասատուրյանը, Արամ Հայկազը, Անդրանիկ Անդրեասյանը հիմք դրեցին կարոտի գրականության, նրանց հարեցին Հակոբ Մնձուրին (Պոլիս), Վազգեն Շուշանյանը, Շավարշ Նարդունին (Ֆրանսիա) և այլք: Օտար եզերքներում օտարներին չձուլվելու, ազգային ինքնությունը պահելու նպատակով կարոտի գրողներն իրենց ստեղծագործություններով փորձեցին արթմնի պահել երկրի հիշատակը, հետդարձի հույսը՝ պատկերելով կորած հայրենիքը, հարազատներին, «անցյալ» կյանքը՝ անդարձ կորած հայրենիքը փոխարինելով հոգևոր հայրենիքով:

30-ական թթ. սփյուռքահայ հայագիր գրականությանը զուգընթաց սկսեց զարգանալ հասարակական նոր կենսապայմաններով ու կեցությամբ պայմանավորված անգլագիր գրականությունը: Առաջին օտարագիր հայ գրողը Խաչատուր Ոսկանյանն էր, որը՝ որպես Թուրքիայի հյուպատոս, 1834 թ.-ին Պոլսից եկել էր Նյու Յորք, ծավալել

հայանպաստ գործունեություն, եղել մաքսատան պաշտոնյա, մամուլի նախագահ, «Նյու Յորք Հերալդ» պարբերականում անգլերենով տպագրել ինչպես ամերիկյան իրականությունը, այնպես էլ հայ անհատի դեգերումները, նրա միայնությունը պատկերող պատմվածքներ և «Մուլթանն ու իր ժողովուրդը» պատմաճանաչողական գիրքը՝ հիմք դնելով օտարագրության, որը մեծ թափով սկսեց տարածվել ու զարգանալ՝ 20-րդ դարի 30-ական թթ.-ից սկսած:

Հաղթահարելով լեզվական բարդությունները՝ հայ գրողներից շատերը մաս կազմեցին անգլագիր գրականության՝ իրենց ստեղծագործություններով հարստացնելով ամերիկյան մշակույթը: Նրանցից ոմանք անգլալեզու գրականությամբ հաճախ միտումնավոր արծարծում էին հայկական թեմաներ՝ իրենց առջև դնելով երկու հիմնախնդիր՝ օտար ընթերցողին ճանաչել տալ դարավոր պատմություն ունեցող եղեռնատես հայ ազգին, ազգայինից հեռացածներին ներգրավել ազգային կյանք: Նրանցից ոմանք էլ ինչ-ինչ պատճառներով հեռացան ազգային ավազանից՝ անդամագրվելով օտար գրականության: Ազգությամբ հայ գրողները՝ հայագիր թե օտարագիր, իրենց վրա էին կրում ժամանակի գրական ազդեցությունը, հետևում այն գրական ուղղություններին և դարձնում էին, որոնք արտացոլում էին ժամանակի կյանքը, ընկերային, հասարակական հարաբերությունները, ընդգծում անհատի դրաման, նրա հայացքները, նրա ունեցած դերն այդ հասարակության և առկա իրավիճակների մեջ: Միանգամայն հասկանալի էր. ելնելով կյանքի մարտահրավերներից, օտարացվածությունից՝ ամերիկահայ հայագիր և անգլագիր գրողները առաջնությունը տալիս էին գոյափիլիսոփայությանը և «նոր գրականության» հայացքներին: «Գոյափիլիսոփայության գիսավոր թեման, – ինչպես նշում է Բ. Գալստյանը, – մարդու անհատական կեցությունն է՝ նրա կյանքի իմաստն ու ճակատագիրը: Գոյության փիլիսոփայությունն արտացոլում է իր սեփական կեցությունն իմաստավորելու մարդու պահանջը, որը մի առանձին սրությամբ իր արտահայտությունն է գտնում նրա գոյությանը սպառնացող իրավիճակներում, երբ մարդու համար իր ճակատագիրը վերացականությունից թանձրանում է մինչև լինել-չլինելու անխուսափելի խնդիրը» [1, էջ 4]:

Ամերիկյան բազմազգ խառնարանում, որը Սփյուռքի մյուս գաղթօջախներից զանազանվում էր տարբեր մշակութային ավանդույթներով, սովորույթներով, պարտադրող մշակույթով, առաջ եկավ նոր ամերիկյան և ազգային-ծագումնաբանական երկվության խնդիրը:

Ամերիկյան գրականության մեջ, սկսած 20-րդ դարասկզբից, իր մնայուն տեղը հաստատեց ազգային ինքնության, ազգապահպանության թեման, որն առավել կարևոր է հատկապես փոքր ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը, խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական-մշակութային, քան ժամանակակից սոցիալական մեխանիզմների վրա [3, էջ 31]:

Ս.Հանթինգտոնի «Ովքե՞ր ենք մենք» հարցադրումը, որի շրջանակներում հեղինակը, ուսումնասիրելով ամերիկյան ազգային ինքնությանն ուղղված մարտահրավերները, ինքնությունը դիտարկում է որպես հասարակության համախմբման ճանապարհին յուրօրինակ բանալի. «Ազգային ինքնության գիտակցումն արտաքին սպառնալիք-

ների ազդեցությամբ կարող է աճել և անկում ապրել, իսկ այդ ինքնության էությունն ավելի քիչ է ենթակա տատանումների. այն ավելի դանդաղ է ձևավորվում...» [8, էջ 326]:

Իսկ ահա Ջոն Հեթֆիլդը, ի պատասխան «Ուլքեր ենք մենք» հարցադրմանը, իր «Ինքնությունը որպես էթնիկական ուսումնասիրությունների տեսություն և մեթոդ» աշխատության մեջ ինքնությունը դիտարկում է որպես մարդու գոյության և կեցության գրավական, մարդուն՝ կենսաբանական, սոցիալ-մշակութային և հոգեբանական էակ, որը դեռևս ապրում է էթնոկենտրոն աշխարհում, որտեղ կենսաբանական և մշակութային ինքնությունները նույնականացվում են, դիտվում որպես մեկ միասնական ամբողջություն: «Յուրաքանչյուր ոք, -նշում է Հեթֆիլդը,-ով ցանկանում է գտնել իր իսկական ինքնությունը, պետք է կանգնի ավանդույթի, մշակույթի և նույնիսկ նույնականացման պարադոքսի միջև» [6, էջ 31]:

Ինքնությունը բազմազգ, բազմամշակույթ Միացյալ Նահանգներում դրսևորվում է ընդհանուր քաղաքական հայացքներում: Ներգաղթը հիմք հանդիսացավ ազգային ինքնության ձևավորման համար, որը միավորեց ամերիկյան արժեքները, աշխարհայացքը և համոզմունքները: Մշակութային բազմազանությունը դարձավ ազգային ինքնության հենքը. ձուլման գործընթացում ռասսայական և էթնիկ կազմավորումները պահպանեցին իրենց ինքնությունն ու ավանդույթները:

ԱՄՆ-ում հաճախ ազգային ինքնությունը նույնացվում է քաղաքական հայացքների, մտածողության հետ՝ ի տարբերություն էթնիկ պատկանելության, որն ավելի սերտորեն կապված է իր ժողովրդի ավանդույթին և մշակույթին: «Հաճախ էթնիկ ինքնությունը հակասության մեջ է մտնում ազգային հետ: Ազգային ինքնությունը լիովին ճնշում է էթնիկ ինքնությանը, - գրում են Ս.Պետերսկայան և Ա.Չեպլիգինը, - ինչը հանգեցնում է անհատի ներքին կոնֆլիկտին, որը գտնվում է որոշակի էթնիկ խմբի սկզբնական պատկանելության և ամերիկյան հասարակության անդամի դիրքի միջև սահմանային վիճակում» [11, էջ 92]:

Ամերիկյան մշակույթը կազմված է Միացյալ Նահանգներում բնակվող ազգերի մշակույթների տարրերից: «Այն, - ինչպես նշում է Վ.Շեստակովը, - տարբեր մշակութային գործընթացների բարդ սինթեզ է, որը նպաստում է տարբեր էթնիկ խմբերի վերափոխմանը ամերիկյան ազգի» [13, էջ 115]:

ԱՄՆ-ը բազմամշակութային համադրությունների և հակադրությունների մի հսկա դաշտ է, որտեղ ապրող յուրաքանչյուր ազգություն միանգամայն ազատ կարողանում է ներկայացնել իր արմատների կանչով համեմված արվեստը, ավանդույթներով հարուստ մշակույթն ու հնամյա պատմությունը: Այս ամենի գեղեցիկ ներդաշնակության արդյունքում ծնվում է տվյալ ազգի բազմամշակութային գրականությունը, որն արտացոլում է ինչպես սեփական երկրի, այնպես էլ ԱՄՆ-ի հասարակության նորմերն ու նորոքյա խնդիրները՝ իրենց բազմաբնույթ լուծումներով:

Հայ-ամերիկյան գրականության տարածմամբ և զարգացմամբ նոր հեռանկարներ ու ակադեմիական մի շարք հնարավորություններ բացվեցին: Այս խառնածին գրականության միջոցով հայ հեղինակները լավագույնս ներկայացրին իրենց ժողովրդի անցած պատմական, մշակութային, կրթական և սոցիալ-հասարակական դժվարին ճա-

նապարհն ու լույսի այն հանգրվանը, որտեղ, չնայած ինքնության պահպանման մի շարք խոչընդոտներին, նրանք կարողացան արարել ու ստեղծագործել բոլորովին նոր հայեցակարգերով, որոնց մատակարարը մեծն ԱՄՆ-ն էր:

Ամերիկյան ժողովրդավարական հայացքներն ու գաղափարները հիմք հանդիսացան այլազգի մարդկանց համար՝ ազատ արտահայտվելու և լսելի դարձնելու իրենց ձայնն ամենուր: Տարբեր ազգերի գրականության ջատագովները իրենց ստեղծագործությունների միջոցով բարձրաձայնում էին ընդհանուր խնդիրները՝ գենեզիս, իրենց ազգային գրականության զարգացում, գրականության ավանդույթներ և այլ հարցեր: Ամերիկյան քննադատությունն էլ, իր հերթին, վերոնշյալ գրականությունները հիմնականում դիտարկում է կառուցվածքային և հետկառուցվածքային մոտեցմամբ, որի գլխավոր խնդիրն է ուսումնասիրել տեքստի կառուցվածքը, ինչպես նաև՝ նրա ապակառուցվածքը:

«Էթնիկ խմբի ինքնությունը որոշող հիմնական գործոնը մշակույթն է, – գրում է Ա.Մադոխինը,– մշակույթի ոլորտում է, որ սովորաբար կենտրոնանում են էթնիկ խմբերի բոլոր հիմնական տարբերակիչ գծերը» [7 էջ 344]: Մշակույթն է, որ արտացոլում է սովյալ ժողովրդին բնորոշ բոլոր կենսակերպերը և գործունեությունը աշխարհում, ինչպես նաև մարդկանց միջև հարաբերությունները (սովորույթներ, ծեսեր, հաղորդակցության առանձնահատկություններ և այլն) և աշխարհը տեսնելու, հասկանալու և փոխակերպելու ուղիները:

Ի տարբերություն ամերիկյան մշակույթի՝ հայ մշակույթը դարեր շարունակ պետության երկարատև բացակայության պայմաններում անգամ կատարել է պետական հանձնառություն. պահպանել է լեզուն, կարգավորել միջանձնային հարաբերությունները, կազմակերպել հանրային կյանքը, սերունդներին փոխանցել ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգային մտածելակերպը, ստեղծել ժողովրդի ֆիզիկական և հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ [4, էջ 31]:

Մ.Դեմիրճյանն իրավացիորեն նշում է, որ թերևս դրանով է բացատրվում հայերի գիտակցության մեջ մշակույթի՝ որպես ազգապահպան երևույթի մասին արմատավորված պատկերացումը, և պատահական չէ, որ մշակույթի պահպանումը և վերարտադրությունը համարվել են հայ ազգի պահպանման և գոյատևման երաշխիք: Մշակույթն իր հետքն է թողել հայերի ազգային հոգեբանության վրա, ազգային ինքնագիտակցության մեջ եղել է համախմբող գործոն: Աշխարհի տարբեր ծայրերում, ինչպես նկատում է փիլիսոփա Դեմիրճյանը «Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում» հոդվածում, մշակութային օջախների ստեղծումը, ամենայն հավանականությամբ, հանդես է եկել որպես մյուս ժողովուրդներից հայերի օտարումը կանխող գործոն, ինչը միանգամայն հնարավոր էր պատմական և, առհասարակ, մարդկային հրեշավոր ոճրագործության՝ ցեղասպանության և դրան հետևած ոչ պակաս սարսափելի «համաշխարհային լուրջության» հետևանքով:

«Ամենայն հավանականությամբ, ժամանակակից հայերի գիտակցության մեջ, – գրում է Ս.Լուրեն,–սփյուռքը հանդես է գալիս որպես ազգային մշակութային ինքնության այլընտրանքային օջախ, որպես ինքնանույնականացման գործոն «մայրական էթ-

նոսի» պայմաններում» [9, էջ 506]:

Ավելին՝ «Մշակույթը, – գրում է Է.Հարությունյանը, – մի հավաքական «մենք» է, որի մեջ լինելը մարդու սոցիալական գոյության միակ երաշխիքն է: Այդ մշակութային «մենքը» մեր հոգու խորխորատներում թաքնված ազգային ոգու անորսալի մի ներկայություն է, որը մշտապես «խառնվում» է կյանքի մասին մեր պատկերացումներին՝ անիմանալի ինչ-ինչ հնարքով դրանց տալով «հայկականության» հատուկ գույն ու երանգ: Այդ իմաստով «հայկականությունը» այլընտրանքային իրավիճակներում ընտրություն կատարելու էթնոմշակութային էկզիստենցիալ մի գոյավիճակ է, գոյաբանական մի տարածություն, որտեղ կերտվում է մեր ազգային ճակատագիրը: Մշակութային այդ գոյավիճակից փախուստը գրեթե անհնարին է, քանի որ մենք մշտապես նրա մեջ ենք և նրա միջոցով կանք որպես «հայկականության» մի մասնիկ» [5, էջ 6]: Մեծ է մշակույթի, հատկապես գրականության դերը հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում:

Ի տարբերություն 20-րդ դարասկզբին Ամերիկայում ձևավորված ամերիկյան ազգային ինքնության՝ լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, կենցաղը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները, հոգեբանությունն ու արժանապատվությունը կազմում են հայ ազգային ինքնության ընդհանրական որակը, որը ձևավորվում է ներազգային շփումների, փոխներգործությունների և համակեցության արդյունքում, ինչը նշանակում է, որ ազգային ինքնության մեջ ամփոփված են անցյալում ձևավորված զգացմունքները, գաղափարներն ու պատմական հիշողությունը: Այս տեսակետից՝ ազգը մի յուրահատուկ «հավաքական մարմին» է՝ իրեն բնորոշ «հավաքական ոգով ու հոգով», և ամեն մի նոր սերունդ շարունակում է իր նախորդների կերտած պատմությունը, դառնում ազգային կյանքի կազմակերպման «մշակութային գանձարանի» իրավահաջորդը, ինչը խիստ կարևոր է ազգային ինքնության շարունակականությունն ապահովելու առումով:

Ինքնության փնտրտուքի գրականության մարդն ապրում է առօրյա, երկիմաստությամբ և անորոշությամբ լի մի աշխարհում, որտեղ նա կարող է կորցնել իր դիմագիծը. կարող է հեռանալ ինքն իրենից: Նմանատիպ ինքնության փնտրտուքի ճանապարհին է կանգնած հրեա ժողովուրդը, որը ապրում է էկզիստենցիալ պայքար՝ սեփական ինքնության և օտար երկրում ձուլվելու հակադիր բևեռներին բախվելով: Եվ ինչպես տարբերակում է գերմանացի փիլիսոփա Մ.Հայդեգերը, մարդկային գոյության երկու եղանակ կա՝ անիսկական և իսկական: Անիսկական է այն կեցությունը, երբ մարդը, ամբողջությամբ թաղվելով առօրյա հոգսերի մեջ, ենթարկվելով իրերի և հանգամանքների իշխանությանը, ապրելով ուրիշների նման, չի մտածում մահվան, իր վերջավոր լինելու մասին: Դա օտարված, իր անհատականությունը կորցրած, ցանկացած ուրիշով փոխարինելի մարդն է: Իսկական է այն կեցությունը, երբ մարդը հանդես է գալիս որպես իր պատմականությունը և ազատությունը գիտակցող էակ: Իսկական գոյությունը սկսվում է այն պահից, երբ մարդը զգում է «մետաֆիզիկական» վախ ոչնչի կամ մահվան հանդեպ: Վախի միջոցով մարդը բացահայտում է իր գոյության խորհուրդը, ձեռք բե-

րում իսկական ազատություն [7, էջ 125]: Այս պարագայում կարող ենք փաստել, որ Հայ-դեգերի նշած դրույթները համատեղ առկա են հրեա-ամերիկյան գրականության մեջ, որտեղ համաձայն առաջին դրույթի՝ նրանց գոյությունը կարծես թե համաձուլվել է այլ մշակույթին, իսկ մյուս պարագայում՝ հստակորեն գիտակցվում է սեփական ինքնության կարևորությունը:

Մարդու իսկական գոյությունը բացահայտվում է, այսպես կոչված, սահմանային իրադրություններում: Մարդը մշտապես գտնվում է որոշակի իրավիճակների մեջ, սակայն կան վիճակներ, ինչպիսիք են՝ վախը, մեղքը, պայքարը, տառապանքը և այլն, որոնք մարդուն ստիպում են խորհել սեփական կեցության իմաստի և կոչումի մասին: Սահմանային իրադրություններում մարդը դուրս է գալիս առօրյա կյանքի սահմաններից և հաղորդակցվում է բացարձակ կեցության, տրանսցենդենտալ ոլորտի հետ: Հենց այս կեցության տրանսցենդենտալ ոլորտի հետ է բախվում հետգաղութային գրականությունը, որի հերոսները սահմանային իրավիճակների անմիջական կրողներն են:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հայ-ամերիկյան էթնիկ գրականությունը ամերիկյան գրականությունից առանձնանում է ամերիկահայության առջև ծառայած իր էթնիկական, հոգեբանական խնդիրներով, սերնդեսերունդ փոխանցված ավանդույթներով, սովորույթներով, կենսափորձով, վարքուբարքով, հավատալիքների պահպանմամբ, ազգը շարունակաբար վերածնող, վերաիմաստավորող, վերականգնող էթնիկ հիշողությամբ ու մշակույթով:

Ելնելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ ամերիկահայ հայագիր և անգլագիր գրողները փորձել են պահպանել հայի ազգային ինքնությունը, մարդկությանը ներկայացրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, օտար իրականության մեջ հայի ճակատագրի և կեցության խնդիրները, մշակույթը, ցեղասպանության հարցը՝ տալով դրա պատմաքաղաքական, ազգային և բարոյահոգեբանական գնահատականը, դառնալով ցեղասպանության դատապարտման պահանջատերեր: Հայ-ամերիկյան գրողներն իրենց ստեղծագործություններում որպես օտարներին չճանաչելու կռվան արժևորել են հայ էթնոսի, ազգային ինքնության պահպանումը՝ շեշտադրելով էթնիկական հիշողությունը, գեղարվեստական մտածողության համաձիթում շոշափել նախնայաց ազգային դիմորոշության հիմնարար ելագծեր:

Ամերիկահայության և առհասարակ սփյուռքահայության համար ազգային ինքնության պահպանումը ազգային մտածողության ու հոգեկերտվածքի հիմնարար գծերին, պատմական հիշողությանը, կրոնին, մշակութային ավանդույթներին ու սովորույթներին հավատարիմ մնալն է: Ամերիկահայ անգլագիր արձակագիրների ստեղծագործություններում ազգային ինքնության նկարագիրը պարզող ընդհանրական որակ են կազմում հայ-ամերիկյան էթնիկ գրականության հենքը կազմող ազգային արժանապատվության գիտակցումը, կենցաղի առանձնահատկությունները, պատմական զարգացման արդյունքում ձևավորված աշխարհայեցողության, ընկալումների և վարքի նորմերի ամբողջությունը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Գալստյան Բ.** *Էկզիստենցիալիզմը և Վ.Սարոյանի դրամատուրգիան*: Երևան: «Ճարտարագետ» հրատ.: 2015: 148 էջ:
2. **Մուշեղ Եպիսկոպոս Ամերիկահայ տարեցոյց**: Պոստոն: «Կիլիկիա» տպարան: 1912, Ա տարի: 531 էջ:
3. **Գեմիրճյան Մ.** *Ազգային ինքնությունը՝ ժամանակակից արժեքային փոխակերպումների համատեքստում* // «ԱԷմ» համահայկական հանդես: Երևան: 2018: Ժ (ԺՉ) տարի, հունվար-մարտ, թիվ 1 (61): 91-106 էջեր:
4. **Գեմիրճյան Մ.** *Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գործարարական աշխարհում* // «Անալիտիկոն» ամսագիր: Ստեփանակերտ: 2018, 04 (112): 27-31 էջեր: Էլ. հղում՝ <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.02.2024):
5. **Հարությունյան Է.** *Սերունդների աշխարհ և ժամանակակիցների աշխարհ* // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» ամսագիր: Երևան: 2019, № 2 (29): 3-15 էջեր:
6. **Hatfield J.T.** *Anyone who wants to find their true identity must stand between tradition, culture, and even the paradox of identity.* Identity as Theory and Method for Ethnic Studies. Vol. 9, No. 1, January 1986, 25-51 pp..
7. **Heidegger M.** *Being and time.* Hardcover. August 1, 1962 by Harper & Row (NYC/ Evanston). 589 p.
8. Huntington S.P. *Who Are We?: The Challenges to America's National Identity*, N.Y, **Simon & Schuster, 2005, 330 p.**
9. **Лурье С.** *Историческая этнология: Учебное пособие для вузов.* М.: Академический Проект: Гаудеамус. 2004, 624 с.
10. **Микаелян В.** *История крымских армян /* Ин-т истории НАН Республики Армения. Крымское армянское общество. Киев, Ереван; Симферополь: "Энергия Плюс" изд.. 2004, 224 с.
11. **Питерская С. Чапыгин А.** *Национальная идентичность и американская мечта* // Гуманитарные научные исследования. 2018. № 1 [Электронный ресурс]. URL: Էլ. հղում՝ <https://human.snauka.ru/2018/01/24792> (մուտք՝ 26.01.2024).
12. **Садохин А.** *Основы этнологии.* М.: Изд-во "Юнити" изд.. 2003. 351 с.
13. **Шестаков В.** *США: Псевдокультура или завтрашний день Европы?* М.: Изд-во ЛКИ. 2010. 224 с.

References

1. **Galstyan B.** Existentialism and W. Saroyan's Dramaturgy. [*Ekzistencializme ev W. Saroyani dramaturgian*]. Yerevan. "Engineer" magazine. 2015. 148 p. (in Armenian)
2. **Mushhegh Bishop** Armenian-American Annual Statistical Data Book. [*Americahay tarecuyc*]. Boston. "Cilicia" printing-house. 1912, year A. 531 p. (in Armenian)
3. **Demirchyan M.** National Identity in the Context of Modern Value Transformations. [*Azgayin inqnutune jamanakacic arjeqayin pokhakerpunneri hamateqstum*] // Pan-Armenian magazine "Vem". Yerevan. 2018. Z (ZZ) year, January-March, No. 1 (61). 91-106 pp. (in Armenian)
4. **Demirchyan M.** Armenian National Identity and the Diaspora Factor in the Globalizing World. [*Hay azgayin inqnutune ev Spurqi gorcone globalacvokh ashkharhum*] // "Analiticon" magazine. Stepanakert. 2018, 04 (112). 27-31 pp.. <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.02.2024). (in Armenian)
5. **Harutyunyan E.** The World of Generations and the World of Contemporaries. [*Serundneri ashkharh*] // "Articles of Yerevan University." Philosophy, Psychology" magazine. Yerevan. 2019, No. 2 (29). 3-15 pp.. (in Armenian)
- 6 – 8, See: Bibliography)
9. **Lurie S.** Historical Ethnology. Tutorial for Bonds. [*Istoricheskaya etnologia*]. M. Academic Project: Gaudeamus. 2004. 624 p. (in Russian)
10. **Mikaelyan V.** History of Crimean Armenians. [*Istoria krimskikh armyan*]. Kiev, Yerevan; Simferopol. Energy Plus. 2004, 224 p. (in Russian)

11. **Peterskaya S. Chapigin A.** National Identity and the American Dream//Humanitarian Scientific Studies. [*Nacionalnaya indentichnost i amerikanskaya mehta/ Gumanitarnie nauchnie issledovaniya*]. 2018. № 1[Electronic Resource]. URL: E-mail: reference. <https://human.snauka.ru/> 2018/ 01/24792 (մուտք՝ 26.01.2024). (in Russian)
12. **Sadokhin A.** Basics of ethnology. [*Asnovi etnology*]. M.: Publishing house "Unity". 2003. 351 p. (in Russian)
13. **Shestakov V.** USA: Pseudoculture or tomorrow's day of Europe? [*Psevtokultura ili zavtreshni den Evropi*]. M.: Publishing house LKI. 2010, 224 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **05. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **24. 09. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Նելլի Բակուրի ԳԱԼՍՏՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու

Մովսես Խորենացու անվան համալսարանի

արտասահմանյան գրակ. և անգլերենի դասախոս, Երևան, ՀՀ,

էլ. հասցե՝ hasmikbakuralstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

Nelli Bakur GALSTYAN: Ph.D. in Philology University after M. Khorenatsi,

Lecturer of Foreign Literature and English Language, Yerevan, RA,

e-mail: hasmikbakuralstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

Нелли Бакуровна ГАЛСТЯН: канд. филол. наук.

преподаватель иностранной литературы и английского языка

университета им. Мовсеса Хоренаци, Ереван, РА,

эл. адрес: hasmikbakuralstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

ՀՏԴ՝ 808.1

DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ՄԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆԻ «ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ»
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍԸ

Գագիկ Վ. Խաչիկյան

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Մեր հոդվածի նպատակն է սփյուռքահայ գրող Ս. Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսի՝ Ա. Գորկու կերպարը ներկայացնել գրողի նախասիրած գրական սկզբունքների շրջանակում: Նորովի ըմբռնվող իրապաշտության /ռեալիզմ/ պատկերացումներով առաջնորդվելով՝ հեղինակը ստեղծել է մասնագետների շրջանում միջազգային ճանաչման արժանացած արատրակտ-էքսպրեսիոնիզմի /վերացական-արտահայտչապաշտություն/ ներկայացուցիչ, ամերիկահայ նկարիչ Արշիլ Գորկու՝ Ոստանիկ Ադոյանի /1902-1948թթ./ գեղարվեստական կերպարը: Մեթոդներ և նյութեր. Սփյուռքահայ գրականության պատմության մեջ Ս. Վահագնը համարվում է «նոր կարոտի գրականության» ճանաչված դեմքերից մեկը: Վերլուծություն. Կենսագրական վեպում հեղինակը, պատկերելով Ա. Գորկու մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը, մի կողմից ցույց է տվել 1915 թ. արևմտահայության ցեղասպանության ողբերգական հետևանքները՝ կոտորածներից փրկված և ԱՄՆ-ում հաստատված հայ մարդու կյանքի միջոցով, մյուս կողմից՝ բացահայտել նշանավոր սփյուռքահայ արվեստագետի՝ օտար միջավայրում ինքնահաստատվելու ազգային ու անհատական, ինքնատիպ ստեղծագործական ընդունակությունների դրսևորման հիմքերը: Այդ գործընթացում կարելի է ընդգծել թերևս ընդհանրապես հայ մարդու մարդաբանական արմենոիդ տեսակի՝ կեցության փորձություններին յուրովի դիմակայելու գործոնը: Արդյունքներ. Վեպի հեղինակի գերխնդիրն է եղել Ա. Գորկու ստեղծագործությունների մեջ բացահայտել նրա հայկականության դրսևորման առանձնահատկությունները: Ս. Վահագնի

«Արշիլ Գորքի» վեպը արժեքավոր ձեռքբերում է ոչ միայն գրողի ստեղծագործության մեջ, այլև սփյուռքահայ և ընդհանրապես արդի հայ կենսագրական վեպի բնագավառում:

Բանալի բառեր՝ Մարգիս Վահագն, Արշիլ Գորկի, կենսագրական վեպ, սփյուռքահայ գրականություն, նոր կարոտի գրականություն, վերացական արտահայտչապաշտություն:

Ինչպես հղել՝ Խաչիկյան Գ. Մարգիս Վահագնի «Արշիլ Գորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ. 2 (27): 80-93 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

THE PROTAGONIST OF THE BIOGRAPHICAL NOVEL “ARSHILE GORKI” BY SARGIS VAHAGN

Gagik V. Khachikyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: The purpose of the article is to present the image of Arshile Gorky, the main character of the biographical novel by the Armenian diaspora writer S. Vahagn “Arshile Korki”, within the framework of the writer’s favorite literary method. This is realism, understood in a new way, guided by which the author created an artistic image of the American artist of Armenian origin Arshile Gorky – Vostanik Adoyan (1902-1948), a representative of the abstract expressionist movement, who received international recognition among experts. **Methods and Materials:** S. Vahagn is considered to be one of the main figures in the history of Armenian diaspora. **Analysis:** Depicting the human and creative fate of A. Gorky in the biographical novel, he, on the one hand, showed the tragic consequences of the Genocide of Western Armenians in 1915 through those who survived the massacre and settled in the United States, on the other hand, he revealed the national and individual self-affirmation of the famous artist in a foreign environment, the basis for the manifestation of original creative abilities. In this process one can emphasize the factor of the anthropological Armenoid type of the Armenian personality as a whole, which is capable of uniquely withstanding trials. **Results:** The main task of S. Vahagn was to reveal the peculiarities of the manifestation of the Armenian essence. S. Vahagn’s novel ‘Arshile Korki’ is a valuable achievement not only in the writer’s work, but also in the field of the Armenian diaspora and the modern Armenian biographical novel in general.

Key words: *Sargis Vahagn, Arshile Gorky, biographical novel, literature of the Armenian diaspora, literature of new nostalgia, abstract expressionism.*

Citation: Khachikyan G. *The Protagonist of the Biographical Novel "Arshile Gorki"* by Sargis Vahagn // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2024, V. 2 (27), 80-93 pp., DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ГЛАВНЫЙ ГЕРОЙ БИОГРАФИЧЕСКОГО РОМАНА САРГИСА
ВААГНА «АРШИЛ ГОРКИ»

Գաղիկ Վ. Խաչիկյան

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: Цель статьи – представить образ Аршила Горкого, главного героя биографического романа диаспорального армянского писателя С. Ваагна «Аршил Корки», в рамках излюбленного писателем литературного метода. Это реализм, понимаемый по-новому, руководствуясь которым автор создал художественный образ американского художника армянского происхождения Аршила Горки – Востаника Адосяна (1902-1948), представителя абстрактно-экспрессионистского направления, получившего международное признание среди специалистов. **Методы и материалы:** С. Ваагна принято считать одной из главных фигур в истории армянской "диаспоральной новой ностальгической литературы" /Г.Севан/. **Анализ:** Изображая в биографическом романе человеческую и творческую судьбу А. Горкого, он, с одной стороны, показал трагические последствия Геноцида западных армян 1915 года через, переживших резню и поселившихся в США, с другой стороны, он раскрыл национальное и индивидуальное самоутверждение знаменитого художника в зарубежной среде, основы проявления оригинальных творческих способностей. В этом процессе, возможно, можно подчеркнуть фактор антропологического арменоидного типа армянской личности в целом, способной уникальным образом противостоять испытаниям. **Результаты:** Основной задачей С. Ваагна было раскрытие особенностей проявления армянской сущности. Роман С. Ваагна «Аршил Корки» является ценным достижением не только в творчестве писателя, но и в области армянской диаспоры и современной армянской биографической новеллы в целом.

Ключевые слова: Ваагн Саргис, Аршил Горки, биографический роман, литература армянской диаспоры, литература новой ностальгии, абстрактный экспрессионизм.

Как цитировать: Խաչիկյան Գ. *Главный герой биографического романа Саргиса Ваагна «Аршил Горки»* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т.2 (27). 80-93сс..
DOI: 10.52971/18294316-2024.27.2-80

ՆԱԽԱԲԱՆ. Արդի հայ գրականության մեջ կենսագրական վեպի բնագավառը համալրեց սփյուռքահայ ճանաչված գրող Սարգիս Վահագնի /Փաթափության/ 2004 թ. Լոս Անջելեսում տպագրված «Արշիլ Գորքի» վեպը [8]: Այս վեպի զլխավոր հերոսը 20-րդ դարի ամերիկահայ գեղանկարիչ Ոստանիկ /Մանուկ/ Ադոյանն է /1902-1948/, որը հանրահայտ է դարձել Արշիլ Գորկի ծածկանունով: Սփյուռքահայ գրողի կենսագրական վեպում ԱՄՆ-ում 1920-ական թթ. հանգրվանած և միջազգային ճանաչման արժանացած նկարչի կերպարը գեղարվեստորեն կերտված հաջող փորձերից է և նկարչի նաև կյանքի ու ստեղծագործության հիմնական առանձնահատկություններին ծանոթանալու լավագույն հնարավորություններից մեկը: Նկատենք, որ Ա.Գորկու մասին հայերեն և անգլերեն տպագրվել են հոդվածներ, գրքեր, Ա. Էգոյանի «Արարատ» ֆիլմում ստեղծվել է նրա կերպարը: Ուշագրավ է հատկապես պրոֆեսոր Կառլեն Սուրադյանի՝ ԱՄՆ-ում 20 հատորով լույս տեսած աշխատությունը Ա. Գորկու ստեղծագործության մասին: Հայերեն և անգլերեն զուգահեռ տեքստերով Երևանում տպագրվել են Գորկու նամակները,

առաջաբանը գրել է արվեստաբան Շ.Խաչատրյանը: Վերջինս մեզանում տպագրել է նաև մի այլ գիրք Ա.Գորկու մասին /հայերեն, անգլերեն/, մի շարք նկարների վերատպությամբ [4]: Ուշագրավ է Վ.Ղազարյանի նրա մասին հոդվածը «Հայոց ցեղասպանություն-100» ժողովածուում [6, էջեր 606-612]: Խորհրդային տարիներին տպագրվել և բեմադրվել է Ա. Պետրոսյանի Ա.Գորկու մասին «Երկար վերադարձ» վերնագրով պիեսը [7]: Սփյուռքահայ ճանաչված գրող Ս.Վահագնի մասին հիշատակումներ կատարել են սփյուռքահայ գրականության պատմությանը նվիրված իրենց հայտնի աշխատություններում Գ.Սևանը, Վ.Գաբրիելյանը: Իսկ ահա արձակագրի «Արշիլ Գորքի» վեպի գնահատությանը քչերն են անդրադարձել: Այդ քչերի մեջ առաջին անգամ այս վեպի մասին ծավալուն գրել և 2016 թ.ուշագրավ մագիստրոսական թեզ է պաշտպանել Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանող Լ. Սարգսյանը: Աշխատանքն աչքի է ընկնում Ս.Վահագնի կենսագրության ու ստեղծագործության մասին հարուստ տեղեկություններով և վեպի հետ կապված որոշ թեմաների էական բացահայտումներով: /Այն չի տպագրվել. թեզի էլեկտրոնային տարբերակը ինձ է տրամադրել Սարգիս Վահագնը – Գ. Խ. /:

2017 թ. Երևանում լույս տեսնող «Ազգ» թերթի համարներից մեկում տպագրվում է այս տողերի հեղինակի «Կենսագրական վեպ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու մասին» հոդվածը [5, էջ Գ-Դ]: Այն դրվատական արձագանքի է արժանացել Լուս Անջելեսում բնակվող վեպի հեղինակի կողմից: /«Այդպիսի հոդված իմ վեպի մասին Ամերիկայում չի տպագրվել», - ասել է նա ինձ հետ հեռախոսազրույցի ժամանակ -Գ. Խ. /:

Վեպի մասին ուշագրավ դիտարկումներով առանձնանում է սփյուռքահայ հայտնի մտավորական, գրականագետ Ե. Ազատյանի «Արշիլ Գորքիի» վիպական կեանքը» հոդվածը, որը կրճատված «Սարգիս Վահագնի «Արշիլ Գորկի» վեպը» վերնագրով գետեղվել է վեպի երևանյան վերահրատարակության մեջ իբրև առաջաբան [1, էջեր 3-5]: Այս հրատարակությունը վեպի արևմտահայերենից գրական արևելահայերենի փոխադրված տարբերակն է, ինչը վկայում է վեպի՝ արևելահայ ընթերցողների կողմից պահանջված լինելու մասին:

Մեր այս նոր հոդվածում վեպի վերլուծությանն ու հատկապես գլխավոր կերպարի՝ իբրև պրոտագոնիստ հերոսի պատկերմանն անդրադարձել ենք գրականագիտական **մեթոդներից** ընտրելով այնպիսիք, որոնք գրականությունն այս կամ այն չափով դիտարկում են իբրև հասարակական կյանքի, մարդու արտացոլում, նրան հետաքրքրող սոցիալ-հոգեբանական, փիլիսոփայական, գեղագիտական հայեցակետերից: Մեր **նպատակն** է գլխավոր հերոսի՝ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու, իր իսկական անուն-ազգանունով՝ Ոստանիկ Ադոյանի կերպարի միջոցով բացահայտել սփյուռքում հայտնված հայ մարդու կյանքի էպիկական ելևէջները, նշանավոր արվեստագետի ներաշխարհում խմորվող ազգային ու համամարդկային աշխարհընկալումների, բարոյական ու գեղագիտական պատկերացումների յուրօրինակ համադրումները, որոնք ուրույն կերպով են դրսևորվում նրա գեղանկարչական ստեղծագործություններում, բացահայտվում ավանդական ու նրա դավանած վերացական-արտահայտչա-

կանության կամ միջազգային տերմինով՝ աբստրակտ-էքսպրեսիոնիզմի գեղարվեստական հնարքների միջոցով: Այսպիսի նպատակին հասնելու համար մեր **խնդիրն էնք** համարել վեպի ձևաբովանդակային բաղադրիչների տիրույթում դիտարկել գլխավոր հերոսի կենսադրվագների, հոգեկերտվածքի ու ստեղծագործական զարգացման ելևէջները, որոնք նրան տանում էին դեպի մի կողմից մշակույթի /գեղանկարչության/ համաշխարհայնացում ու միաժամանակ վերադարձում /կամ այն համադրում/ ազգային կյանքի ու մշակույթի հոգեհարազատ արժեքներին:

Թեման **արդիական է** նրանով, որ կենսագրական վեպի վերլուծության տիրույթում դատապարտվում է 1915 թ. Թուրքիայում երիտթուրքերի իշխանությունների կողմից պետականորեն կազմակերպված արևմտահայության Ցեղասպանությունը, որի հետևանքով էլ տեղի է ունենում ողջ մնացած հայության գաղթը աշխարհի տարբեր երկրներ, այդ թվում՝ հեռավոր ԱՄՆ: Ցեղասպանությունն ու դրա հետևանքները եղան հայ մարդու՝ արմենոիդ մարդաբանական տեսակի փորձության մի նոր փուլ, որի արդյունքներից մեկը հայկական Մփյուռքի և սփյուռքահայ գրականության առաջացումն էր, այդ թվում՝ Ս. Վահագնի «Արշիլ Գորքի» կենսագրական վեպի ստեղծումը: Վերջինս իր հերթին միտված էր գլխավոր հերոսի մեջ բացահայտելու հայ մարդու, մարդաբանական այդ ուրույն տեսակին պատկանող ներկայացուցչի մեջ ստեղծագործական բարձր ընդունակությունների դրսևորումները, դրանով իսկ՝ հայ մարդուն օտարներին այս տեսանկյունից ևս ճանաչելի դարձնելու նպատակին:

Նման գերխնդրի լուծմանը գրողը հասել է նաև իր նախասիրած գրական մեթոդի՝ նորովի ըմբռնված ռեալիզմի որոշակի սկզբունքներով առաջնորդվելու շնորհիվ: Միացյալ Նահանգների իրականությունը և մասնավորապես իր վեպի գլխավոր հերոսին գեղարվեստորեն մարմնավորելու համար հեղինակը հենվում էր աշխարհը իրատեսորեն հետազոտելու և կենսական ճշմարտությունը պատկերելու հանդեպ իր հակումների վրա: Նորովի ըմբռնված ռեալիզմը ներառում է համաշխարհային մշակույթի նախորդ զարգացած շերտերի /անտիկ, միջնադարյան, Վերածննդի/, այլ գրական ուղղությունների /ռոմանտիզմ, սիմվոլիզմ, նատուրալիզմ, մոդեռնիզմ/ իր զանազան հոսանքներով և այլն/ ձեռքբերումները: Սփյուռքահայ գրողի այս վեպում կարևորվում է գոյապաշտության /էկզիստենցիալիզմ/ փիլիսոփայության և գրական փորձի նշանակությունը, ինչպես նաև վեպի հերոսին վերհուշերի մեջ պատկերելիս «գիտակցության հոսքի» հնարքն օգտագործել իբրև «գեղարվեստական տարածք ստեղծելու միջոց» [9, էջ 775]: Արտասահմանյան գրականության ճանաչված մասնագետ պրոֆեսոր Բ.Ա. Գիլենսոնը գրում է. «Ժամանակակից փուլում ռեալիզմը հարստանում է նորագույն գեղարվեստական միջոցների բազմազան գույների զինանոցից, այդ թվում՝ նաև այն գրողների, որոնց գրականագետները համարում են մոդեռնիզմի կամ պոստմոդեռնիզմի ներկայացուցիչներ» [10, էջ 12]: Այս ամենով հանդերձ՝ ասենք, որ վեպի հեղինակը իր ուշադրությունը սևեռել է հատկապես գեղանկարիչ Արշիլ Գորկու ինքնատիպ գեղանկարչական կտավներում ազգային ու համաշխարհային արվեստի համադրումներով դրսևորված առանձնահատկությունների ու հերոսի ներաշխարհի բացահայտումների վրա: Ս.Վահագնը իր կիրառած գեղարվեստական սկզբունքների կապակցությամբ այսպիսի շեշ-

տաղրում է կատարել վեպի «Նախաբանում»՝ գրելով. «...Եղելութիւնները, դէպքերը, ժամանակն ու միջավայրը, ինչպէս նաեւ Գորքիին հետ առնչուող եւ անոր շուրջը գործող տիպարները, թէեւ սեւեռոված են, մեծ մասամբ, իրականութեան համապատասխանող հաւատարմութեամբ, նոյնիսկ անփոփոխ պահելով անձնատուներն ու տեղանունները, բայց բնաւ չեն յաւակնիր ըլլալու տառացիորէն ճշգրիտ եւ մանրամասն կենսագրական ուսումնասիրութիւն մը» [8, էջ 7]:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ. 1915 թ. արևմտահայության ցեղասպանության ու դրա դրամատիկ ու ողբերգական հետևանքների բեռը կրող Սփյուռքում հայտնված հայ մարդու մեջ մարդկային ու ազգային բնավորության տարբեր դրսևորումների գեղարվեստական արտահայտությունը սփյուռքահայ գրականության մեջ նպաստում են տեսնելու և ճանաչելու հայ մարդու էության նաև այնպիսի կողմերը, որոնք կրում էին աշխարհի տարբեր երկրների հասարակական, մշակութային, կենցաղային բարքերի ազդեցությունը: «Սփյուռքահայ գրականութեան շնորհիւ մենք մեզ սկսում ենք աւելի լավ ճանաչել» [3, էջ 3],- գրել է գրականագետ Ս. Դանիելյանը: Մեջբերված միտքն իրեն արդարացնում է նաև Ս. Վահագնի կենսագրական վեպի ու նրա գլխավոր հերոսի շնորհիվ: Հեղինակի համար կարևորագույն խնդիր է եղել իր հերոսի կերպարում, հոգեբանության, ստեղծագործական նախասիրությունների առնչություններում բացահայտել նրա հայկականության դրսևորումները: Վեպի հեղինակը գիտակցաբար կամ ենթագիտակցորեն իր երկն ստեղծել է կենսագրական վեպերին բնորոշ սկզբունքների օգտագործմամբ: Խոսքը մասնավորապես վերաբերում է նման երկերում վավերականի և գեղարվեստականի համադրումներին, հոգեբանական վեպի հետ ունեցած մերձավորությանը: Վեպում Ա. Գորկու կենսագրությունը հանգամանորեն ներկայացված չէ, այն նկարչի վավերական կենսագրության համայնապատկերի վրա գործված գեղարվեստական ստեղծագործություն է, որի կենտրոնում գլխավոր հերոսի կերպարն է: Նշանավոր անհատի ճակատագրի միջոցով սփյուռքահայ գրողը Ա. Գորկուն պատկերում է ԱՄՆ-ի, մասնավորապես՝ Նյու Յորքի գեղանկարչական արվեստի ներկայացուցիչների միջավայրում: Այստեղ նա ներկայանում է արվեստագետի իր ներքին էությանը ու հայ երիտասարդին բնորոշ նախասիրություններով, կորցրած հայրենիքի մասին հուշերով: Նրա համար թանկ արժեքներ են ազգային ավանդույթները, հայի հոգեկերտվածքի դրսևորումները, բարոյական պատկերացումները, որոնք յուրովի համադրվում են ամերիկյան բարքերի, նկարիչների բռնեմական միջավայրի նիստուկացին: Հեղինակը, ակներևորեն ձեռքի տակ ունենալով Ա. Գորկու պահպանված և տպագրված նամակները, որոշ ուսումնասիրություններ նրա գեղանկարչության մասին, հարազատների ու նրան լավածանոթ նկարիչների հուշերը և այլն, ստեղծել է հավանական ու հնարավոր մի իրապատում հյուսվածք սփյուռքում հայտնված հայ նկարչի ծանր ճակատագրի, գեղանկարչական արվեստում կատարած որոնումների ու արարումների վերաբերյալ:

Արձակագրի ստեղծած գեղարվեստական կառույցում ընդունված խաղի կանոններն ավելի շատ համընկնում են ռեալիստական ռճամտածողության սկզբունքներին: Իրատեսականորեն և հայոց Ցեղասպանության դիպուկ դատապարտությամբ է ներկայացված նաև արվեստագետի ծածկանունը ռուս նշանավոր գրող Մաքսիմ Գոր-

կու անվան հետ կապելու և իրեն նրա զարմիկ լինելու հորինվածքը, ինչպես նաև Եվրոպայում Վ. Կանդինսկուն աշակերտելու մասին պատմությունը: Նկատենք, որ վեպի գեղարվեստական տիրույթում նկարագրվում է նաև Ա. Գորկու և Վ. Սարոյանի հանդիպման մի դրվագը, ուր նշանավոր գրողը նրան ևս հեզնանքով դատապարտում է օտար անուններով ծածկանուն ունենալու համար:

Այդ հորինված պատմությունների հեղինակային ծանրակշիռ հիմնավորումը միահյուսվում է հերոսի մտորումների հետ, ուր ընդգծվում է այն իրողությունը, որ օտար միջավայրում նաև այդ կերպ հարմարվելու և ինքնահաստատվելու համար նա չի երկնչել նման պատմություններ հորինելուց: Չէ՞ որ այդ վիճակում նա հայտնվել էր իր հայրենիքում, թուրք եղեռնագործների իրականացրած արևմտահայության Ցեղասպանության հետևանքով, մինչդեռ մեծ տերությունները ըստ արժանվույն չդատապարտեցին հանցագործ երկրի իշխանություններին: Ինքը մոր շնորհիվ քույրերի հետ մի կերպ կարողացավ փախչել դժոխքից և հայտնվել Արևելյան Հայաստանի տարածքում՝ Էջմիածնում, Երևանում: Հեղինակի նպատակն է եղել ընդգծված կերպով ցույց տալ, որ նկարիչը թեև օտար անունով էր հանդես գալիս, սակայն իր ներքին էությունը ու աշխարհընկալումներով ոչ միայն չէր հեռացել ազգայինից, այլև ավելին, նկարելիս սիրում էր լսել ազգային երաժշտություն, արտասանել հայ բանաստեղծների երկերից: Ա. Գորկին անվան հետ կապված անմեղ հորինվածքներով ձգտում էր ամեն կերպ ինքնահաստատվել Նյու Յորքի, ապա ԱՄՆ-ի արվեստագետների միջավայրում, ինչին նա ի վերջո հասնում է, ինչ խոսք, ոչ թե իր անվան, այլ ինքնատիպ տաղանդի և նկարելու անժխտելի բարձրակարգ ընդունակության շնորհիվ:

Հրաշքով ողջ մնացած հայ գեղանկարչի ճակատագիրը վեպում պատկերված է ԱՄՆ-ում 1920-ական թթ. մինչև 1940-ական թթ.: Սա կենսագրական վեպի հեղինակային այն տարբերակն է, ուր գլխավոր հերոսի մանկությունը ներկայանում է ընթերցողին նրա վերհուշերի միջոցով, իսկ կերպարի ներքին ապրումների ու մտորումների շնորհիվ զգացվում է հոգեբանական վեպի և համաշխարհային գրականության մեջ գիտակցության հոսքի գեղարվեստական փորձի յուրացումները: Բացի այս՝ վեպի ողջ տիրույթում հեղինակը Ա. Գորկուն ներկայացնում է՝ ազգային-մշակութային արժեքների հետ կապը պահպանելով հայեցի ապրելու գոյապաշտական ներքին մղումների տիրույթում, ինչը դրսևորվում է նույնիսկ գեղանկարչության մեջ նորարարական արվեստի՝ վերացական-արտահայտչապաշտության ու պյուրռեալիզմի ասպարեզում, ուր անվերապահորեն հասնում է միջազգային ճանաչման: Իր նամակներից մեկում Գորկին շատ է արժևորում հայ միջնադարյան մանրանկարչության նշանավոր ներկայացուցիչներ Թորոս Ռոսլինին և Սարգիս Պիծակին: Վկայակոչենք նաև արվեստաբան Ռոբերտ Ջնասի ուշագրավ հետևյալ դիտարկումը Ա. Գորկու հայկական ազգային մշակույթի հետ ունեցած սերտ առնչության մասին. «Գորկու հարուստ հայկական անցյալը սրում էր նրա գիտակցությունը: Դուք ամեն պահ զգում էիք, որ նա երբեք այստեղ չէ, որ նրա անցյալի ցավը երբեք չի անցել: Գորկու գործերն ունեն հայկական ջերմություն և պարային որակ: Գորկին էր առաջինը, որ իր բանաստեղծական երևակայությամբ վերջ տվեց կուրիզմին... նա կրքոտ սեր ուներ անցյալի հանդեպ» [6, էջեր 606-612]: Նկատենք նաև, որ վե-

պը գրելու շարժառիթը հեղինակի համար եղել է ֆրանսիական «Էքսպրես» շաբաթաթերթի մի հոդվածում Ա. Գորկուն հրեա համարելու հանգամանքը: Ուստի Ս. Վահագնի համար Ա. Գորկու հայկականությունը մատնանշելու միտումը վեպի գեղարվեստական տիրույթում դառնում է գերխնդիր:

Կենսագրական վեպում այուժեի զարգացումը սովորաբար պետք է նպաստի ֆաբուլայի, այս դեպքում՝ գլխավոր հերոսի կենսագրական դրվագների գեղարվեստական պատկերմանը: Կարող ենք ասել, որ Ս. Վահագնը գրական վարպետությամբ է այդ երկուսը ներկայացրել գեղարվեստական ուրույն համադրություններով: Դրան նպաստում է հերոսի վերհուշերին դիմելու հնարքը, ինչն իրականացվում է նրբամտորեն, տեղին՝ դարձնելով գեղարվեստական պատկերման անհրաժեշտ բաղադրիչ: Իսկ որ ավելի կարևոր է, այն գլխավոր հերոսի ներաշխարհը բացահայտելու գեղարվեստական եղանակ է, ուր նկարչի հուշերի մեջ, Ա. Գորկին ամենից շատ է ներկայանում իր հայկական արմատներով, հայրենիքի, ծննդավայրի Խորզոմ գյուղի, Վանի տարածաշրջանի բնության, գույների ու բույրերի, ինչպես նաև ազգագրական մանրամասների գուներանգների հետ: Ապագա նկարչի հատկապես մանկության և պատանեկության շրջանը գրողը ներկայացնում է արդեն հասուն տարիքում Ա. Գորկու վերհուշերի, գիտակցության հոսքի հետ հյուսված ներքին մենախոսության միջոցով:

Վեպի նախադրության մեջ Ա. Գորկին ներկայանում է իր ամենանշանավոր ստեղծագործության՝ «Նկարիչը և մայրը» կտավի ստեղծման ուղղությամբ հայտնված ներքին ապրումների, մոր մասին սրտակեղեք վերհուշերի մեջ: Իսկ դրանց միջոցով ընթերցողը ծանոթանում է ոչ միայն մոր հանդեպ բացառիկ որդիական սիրո դրսևորմանը, այլև բացահայտվում է այն դրամատիկ ու ողբերգական իրողությունների դաշտը, ուր հայտնվել էր Ոստանիկը իր մանկության ու պատանեկության շրջանում, երբ հայրը՝ Ս. Ադոյանը, դեռևս Վանի մոտ Խորզոմ գյուղում ապրելիս 1908 թ. լքել էր նրանց և գնացել ԱՄՆ, հետագայում ամուսնացել ուրիշ կնոջ հետ: Նկարչի մայրը՝ Շուշանիկը, դիմացել էր փորձություններին նաև այն ժամանակ, երբ 1915 թ. կոտորածների շրջանում իր երեք դուստրերին և որդուն, տիրություն անելով, կարողացել էր անցնել սարսափներով լի ճանապարհ և հանգրվանել Էջմիածնում, այնուհետև՝ Երևանում: Տիկին Շուշանիկը թերսնման հետևանքով մահանում է որդու ձեռքերի վրա: Նրա դիակը մյուսների հետ թաղում են անհայտ մի վայրում: Անգերեզման մնացած մոր հիշատակը շարունակ մորմոքում էր հայ երիտասարդ նկարչի հոգին, և վերջինս ցանկանում է նրա հիշատակը յուրովի անմահացնել՝ ստեղծելով նրա գեղանկարչական կերպարը:

Այսպիսով վեպի հիմնախնդիրներից մեկն ահա դարձել է ԱՄՆ-ում հայտնված Ա. Գորկու անցյալի, հայրենիքի, հարազատների հանդեպ և հատկապես սովամահ եղած ու գերեզման անգամ չունեցող մոր մասին վերհուշի մտասնեռումները: Նյու Յորքը ԱՄՆ-ում մշակութային կենտրոն էր դարձել, այստեղ ապրող նկարիչը, այնուամենայնիվ, շարունակ իրեն կապված էր զգում ազգային հիշատակների ու մոր նկատմամբ հոգին շարունակ անհանգիստ պահող երախտագիտության զգացումների հետ: Եվ հոգու տվայտանքներից ազատվելու ելքն ի վերջո գտնվում է: Նա Ազգայի քրոջ տանը հայտնաբերում է իր և մոր լուսանկարը: Նրանք լուսանկարվել էին Վանում, որպեսզի ԱՄՆ

տեղափոխված հորն ուղարկեին: Լուսանկարը դառնում է յուրօրինակ հայտնագործություն, որի հիման վրա նա ստեղծում է իր հանրահայտ գեղանկարը «Նկարիչը և մայրը» վերնագրով: Նա դիմանկարներ գծանկարելու մեջ վարժվել էր, նույնիսկ Բոստոնի կինոդահլիճներից մեկում, հինգ վայրկյանում ԱՄՆ-ի հինգ նախագահների նկարները գծանկարելով, հինգական դուլար էր վաստակել: Իսկ ահա մոր դիմանկարը ստեղծելը հոգեբանական ու ստեղծագործական շատ ավելի բարդ խնդիր լուծելու առաջ էր կանգնեցրել նրան: «Ինք կ'ուզեր, որ մօրը նկարը խորք ու ձեւի միաձույլ ամբողջություն մը ըլլար, ուր համադրուէին գոյն, գիծ, կառոյց, կշռոյթ, ծաւալ ու սլացք: Եւ այս բոլորը, պարզ ու մատչելի՝ բոլորին: Եւ որ սակայն անոնք չդադրէին խոր արտահայտչականութեամբ խորհրդանշել մօրը էութիւնը, անոր հոգեկան հորիզոնը, կեանքը, գրկանքներն ու տառապանքը, յոյսերն ու երագները, լացն ու ժպիտը, հայութիւնն ու մարդկայնութիւնը: Մէկ նկարի մէջ այդպիսի բարդ տիեզերք խտացնել, յաւակնութիւն մըն էր, որուն մատչիլ կ'ուզէր անպայման, որովհետս համոզուած էր, թէ կատարելութեամբ միայն արժանատրապէս պիտի կարողանար վերակենդանացնել մայրը» [8, էջ 12]: Հեղինակը տպավորիչ իրավիճակում է ներկայացնում «Նկարիչն ու իր մայրը» հանրահայտ նկարի՝ Ա. Գորկու գլուխգործոցներից մեկի ստեղծման ընթացքի ողջ բարդությունն ու ներքին դրամատիզմը: Այս նկարի վրա նա աշխատել է երկար տարիներ և հատկապես 1926-42 թթ. ստեղծել է տարբերակներ, փորձել է նկարել տարբեր գեղանկարչական ուղղություններին բնորոշ ոճերով: Նկարելու սկզբունքի երկրնտրանքը վկայում է Ա. Գորկու համար դրանց և՛ մատչելիության, և՛ այդքանով չբավարարվելու, ուրույն, ինքնատիպ մոտեցում հանդես բերելու նրա ձգտումների մասին:

«Նկարիչն ու իր մայրը» նկարը մեկնաբանողները զուգահեռներ են անցկացրել դրա և Վերածնության դարաշրջանի իտալացի նշանավոր նկարիչ Ռաֆայելի «Միքստինյան Տիրամայր» /1515-1519 թթ./ նկարի միջև: Վեպում նման համեմատություն է անցկացնում Գերընը՝ Գորկու սիրած աղջիկը, որը նրա մոտ նկարել էր սովորում: Գորկին հաստատում է նրա ասածը՝ հավելելով, որ. «միայն՝ մատոնան հայ է, մա՛յրս, եւ որդին ալ ե՛ս եմ» [8, էջ 26]: Իսկ արվեստաբան Շ. Խաչատրյանը գրում է. «Լուսանկարի հիման վրա ստեղծված «Նկարիչն ու իր մայրը» հանճարեղ կտավն ակամա հիշեցնում է Ռաֆայելի «Միքստինյան Տիրամորը»: Ռաֆայելի Տիրամայրը, աչքերում տազնապ, աշխարհին է նվիրաբերում որդուն: Իսկ այստեղ՝ Ոստանիկ-Գորկի որդին աշխարհին է ներկայացնում իր կորուսյալ մորը, որպես կորսված հայրենիքի ու նրա գեղեցկության խորհրդանիշ» [4, էջ 15]: Կարելի է ավելացնել նաև, որ գրողը մոր նկարի մեկնաբանման մեջ ավելացրել է կեցության գոյաբանական իր ընկալման այլ երանգներ ու մտահոգություն ևս, լիարժեք դարձնելու համար մոր ազգային ու անհատական դառն ու դաժան ճակատագիրն ու իր զավակներին կոտորածներից փրկելու համար գործադրած անմնացորդ նվիրվածությունն ու հոգու անմեղությունը. «Հպանք մը կարմիր խառնեց, կասկած մը սեւ ու դեղին՝ ու յոնքերը կամարուեցան բերանին վրայ: Ապա մորը աչքերը, աշխարհի եւ մարդոց մրափող խղճին դիմաց բացուեցան զարմացումով, եւ անմեղութեամբ, իրենց սեւ մաքրութեան մէջ ծաւալեցին սպիտակ թախիժը սուրբ» [8, էջ 15]: Երբ հետագայում նկարում պատկերված մոր աչքերի յուրահատուկ արտահայտության կա-

պակցությամբ օտարազգի նկարիչների կողմից ասվել է, որ նա Պ. Պիկասոյի և այլ ազդեցությունների ներքո է գտնվել, այդ առնչությամբ քրոջը գրած նամակում նշել է. «Մայրիկի հայկական աչքերը նրանք անվանում են պիկասոյական, հայկական տխրությունը՝ բյուզանդական ու ռուսական: Եվ եթե ես ուղղում եմ նրանց ու ասում. «Ոչ, սիրելի պարոնս, դուք սխալվում եք, դրանք հայկական աչքեր են, ապա տարօրինակ ձևով վրաս են նայում ու ասում, որ դա պարզապես «փոքր ազգի շովինիզմի» չափազանցություն է: Պատկերացնում ես, եթե ուղղես նրանց, ապա դատապարտվում ես նրանց կողմից: Մեր աչքերը: Մեր հայկական աչքերը ավելի շատ են խոսում, քան շուրթերը...» [2, էջ 98]: «Նկարիչն ու իր մայրը» նկարի կապակցությամբ ավելացնենք հետևյալը, որ այստեղ գիտակցաբար թե ենթագիտակցորեն նկարիչը արտահայտել է նաև մոր և մանկան /որբի/ արքետիպային էության մասին իր պատկերացումների կերպարային տարբերակները: Եթե մայրը /ըստ Կ. Յունզի/ խորհրդանշում է թե՛ իրական մորը և թե՛ մայր երկիրը և փոխաբերական իմաստով մայրության մասին պատկերացումները, ապա պատանի Ոստանիկը նկարում որբ որդին էր, որը հետագայում հայտնվել էր օտար միջավայրի մեջ՝ ինքնահաստատվելու բարդ իրողությունների առջև իր վարանոտ տեսքով, ապագայի անորոշության հանդեպ դեռևս հենված մոր բարոյական ուժի ինտերցիայի վրա:

Հեղինակն իսկապես իրատեսական մոտեցմամբ է ներկայացնում ԱՄՆ-ում Ա. Գորկու դեմ ծառայած իրական դժվարությունները հաղթահարելու ջանքերը: Այդ ամենի միջով անցնելու համար, անշուշտ, անհրաժեշտ էր օժտված լինել ուժեղ կամքով, նպատակին հասնելու անսպառ եռանդով, գեղանկարչության մեջ նոր գեղարվեստական պատկերավորման միջոցների կիրառմամբ հանդես գալու հետևողականությամբ: Այդ ամենով հանդերձ՝ իր կայուն մտասևեռումը հայրենիքի՝ Վանի, ծննդավայր Խորզում գյուղի, բնաշխարհի գույների ու ձևերի, իր ընտանեկան ու անհատական դառը ճակատագրի տպավորություններն են: Ուշագրավ է այս առումով հոր կոշիկի հետ կապված պատմությունը, որի հետևանքով արդեն վերացական-արտահայտչապաշտության սկզբունքներով նկարող Գորկին հաճախ է օգտագործում իր նկարներում, յուրովի անդրադառնալով տնից հարազատի անվերադարձ հեռանալու գաղափար-հուշին, որը ուղեկցել էր նրան տարիներ շարունակ: Բայց և այնպես նկարիչը կենսասեր է, նա հայ բանաստեղծների /Թումանյան, Իսահակյան, Տերյան/ ստեղծագործությունների՝ քրոջ և իր արտասանությամբ, Կոմիտասի, հայ ժողովրդական երգերի կատարումներն ունկնդրելով է ուղեկցում հերթական նկարի արարումը: Նման պահերին տեղի է ունենում գրողի կողմից պատկերված հերոսի ներաշխարհի դրսևորում գիտակցության հոսքի միջոցով իբրև գեղարվեստական միջավայր ստեղծելու հնարք: Նկարիչը իր նկարի արարման պահին պարզապես իրեն պատկերացնում է ազգային կյանքի ու մշակույթի, գեղարվեստական խոսքի մթնոլորտում և ինտուիտիվ, վերացարկումներ պարունակող պատկերներով հաստատված կապի մեջ: Այդպիսին են, օրինակ՝ «Գութանը և երգը» «Պարտեզ Խորզումում» նկարների արարման ու մեկնաբանության դրվագները: Այստեղ էլ նկատենք, որ ազգային կյանքի ու բնության տեսարաններն ամերիկյան արվեստագետներին նույնիսկ արստրակտ ոճով ներկայացնելու ձգտումը ևս փորձության է են-

թարկում նրան: Նյու Յորքում իր նկարներով ցուցահանդեսին մասնակցելու համար հարկադրված է լինում Ամերիկյան արվեստի Ուիթնի թանգարանի տնօրեն Լ. Կուդրիչի ցանկությամբ համաձայնվել, որ «Պարտեզ Խորզումում» նկարը անվանվի «Պարտեզ Սոչիում», քանի որ Սոչին ավելի հանրահայտ տեղանուն էր:

Այնուամենայնիվ, Գորկու մասին գրողները հաճախ են շեշտել նրա մեջ հայրենիքի նկատմամբ դրսևորվող կարոտի խոր զգացումը: Ս.Վահագնը նկարչի հոգում կարոտաբաղձության դրսևորումները ներկայացրել է գեղարվեստական կոնկրետությամբ, հոգեբանական ու ստեղծագործական մտահղացումները նկարագրելիս ու ներքին ապրումներն արտահայտելիս: Հայրենիքի, մանկության հեռավոր Վանի ու նրա մերձակայքում՝ Վանա լճի ափին գտնվող ծննդավայր Խորզում գյուղի, հարազատների մասին հիշողությունները, ազգային գեղանկարչական արվեստի, միջնադարյան հայ նշանավոր մանրանկարիչների՝ Ռոսլինի, Պիծակի արվեստին տված նրա բարձր գնահատությունը թերևս դառնում են այն հոգևոր, նաև գունային, գեղանկարչական պատկերացումների լայն ու խոր ակունքը, որ նրան մղում են կապված մնալու իրեն հարազատ միջավայրի ու գուներանգների հետ: Իհարկե, դրանք նա յուրովի համադրում էր եվրոպական գեղանկարչության ասպարեզում ձեռքբերումներին, արարում նոր, ինքնատիպ մտահղացումներով:

Ս. Վահագնը վեպում հաճույքով է կարևորել 1940-ական թթ. Ֆրանսիայում ֆաշիստներից խույս տված և Նյու Յորքում հանգրվանած ֆրանսիացի նշանավոր մոդեռնիստ արվեստագետների, Եվրոպայում սյուրռեալիզմի գրականության նշանավոր հիմնադիր Անդրե Բրետոնի /1896-1966թթ./ հետ հանդիպումները: Վերջինիս հետ մտերմությունը պայմանավորված էր Ա.Գորկու նկարներին տված բարձր գնահատանքով, դրանց խորհրդանշական, անսովոր, զարմանալի վերացարկված գունաձևային գեղանկարչական պատկերների բնույթով, կյանքի, ազատության խորքային զգացումների, ընդհանրապես ինքնատիպ գեղարվեստական մտածողության գունագծային, պատկերային ոչ ավանդական, սովորական արտահայտություններով: Ա. Բրետոնը նույնիսկ նկարչի համաձայնությամբ ինքն է վերնագրում մի շարք նկարներ, գրում է անհատական ցուցահանդեսի բրոշյուրի /բուկլետ/ ներածական խոսքը: Ուշագրավ է նաև այն, որ Գորկին թեն չէր ընդունում սյուրռեալիստների՝ զգացումների թելադրանքով ուղղակիորեն ստեղծագործելու սկզբունքը, բայց և այնպես միջազգային ճանաչում ձեռք բերած Ա. Բրետոնի կողմից հավանության արժանանալը նա կարևորում էր:

Այս կենսագրական վեպի գրավչության նախապայմաններից են նաև հեղինակի հստակատեսության դրսևորումները, ամերիկյան բարքերը իրատեսորեն պատկերելու նախասիրությունը: Ամերիկյան կենցաղի համապատկերում բնորոշ գծերով են ներկայացված արվեստի հետ տարբեր առնչություններ ունեցող այն մարդիկ, որոնք շփվում են գլխավոր կերպարի և նրա կնոջ՝ Ազնես Մակրուտերի հետ և հանդես են գալիս դրվագային, սակայն կարևոր դերակատարմամբ:

Իր արժանավոր դերակատարությունն ունի նաև Ա. Գորկու աբստրակտ-արտահայտչապաշտական ոճի գեղանկարչական գործերը մեկնաբանելու հեղինակի գեղագիտական ճաշակն ու խորաթափանցությունը. այն նպաստում է, որ Ա. Գորկու

ստեղծագործությունների բովանդակությունն ընթերցվի ու մեկնաբանվի նկարչի հոգուն ու ճակատագրին համահունչ իմաստներով: Չէ՞ որ 20-րդ դարասկզբի ավանգարդիստական ուղղություններին պատկանող նկարիչների նկարները ենթարկվում են բավականին բազմազան տարընթերցումների: Իսկ մասնավորապես «Նկարիչ-էքսպրեսիոնիստները ստեղծում էին ընդհանրացված այլաբանություններ» [11, էջ 483]: Ս.Վահագնը Ա.Գորկու նկարներում տեսնում է ն՛ համամարդկայինի, ն՛ ազգայինի ու անձնական-անհատականի համադրումներ: Նման մոտեցումներով մեկնաբանությունները կարող են նպաստել ընթերցողին ճիշտ հասկանալու ամերիկյան գեղանկարչության մեջ վերացական-արտահայտչապաշտության մեջ առաջնորդ դիտված Ա.Գորկու ստեղծագործությունների բովանդակությունը, դրանց պատճառահետևանքային առնչությունները գրողի հետաքրքրությունների ոլորտի հետ: Արձակագրի նման մոտեցումը ավելի տեսանելի է դարձնում նկարչի խորհրդանշական գունաձևային պատկերների իրական, կյանքային հիմքերը: Ս.Վահագնի կողմից Ա.Գորկու նկարների ներհուն մեկնաբանությունները, կարծում ենք, մեծացնում են նրա կենսագրական վեպի ճանաչողական նշանակությունը: Դրան նպաստում է նաև Գորկու ազգային նկարագրի, հայկականության ու ամերիկյան միջավայրի բարքերի որոշակի հակադրության ու այդ միջավայրում ինքնահաստատման բարդություններին դիմակայելու բացահայտումները: Կանանց հանդեպ սիրո և այլ հարաբերությունների պատկերմամբ ավելի է կոնկրետանում նկարչի բարոյահոգեբանական նկարագիրը: Հատկապես համոզիչ, լիարյուն և դրամատիզմով հարուստ նրբերանգներով են արտահայտված նրա սերն ու նվիրվածությունը Ազնեսի նկատմամբ, ոգևորությունը դուստրերի՝ Մարոյի, Նատաշայի լույս աշխարհ գալու կապակցությամբ:

Կենսագրական վեպում դիպաշարը ընդհանուր առմամբ բնականաբար համընկնում է ֆաբուլային, այսինքն՝ հերոսի կյանքի հիմնական դրվագներին: Ըստ այդմ էլ նկարչի կյանքի դրամատիկ ու ողբերգական ավարտը վեպի վերջին դրվագն է դարձել: Այդ իրադարձություններից թերևս կարելի է այսպիսի հետևություն անել: Ա. Գորկի-Ուստանիկ Ադոյանի արդեն միջազգային ճանաչման արժանացած նկարչի դժբախտությունը ոչ թե լուր տարագիր հայի ճակատագիրն էր, որը որոշակի դերակատարություն ունեցավ նրա կենսուղու ելևէջումներում, այլև քաղցկեղի պատճառով կատարված ծանր վիրահատությունը, ավտովթարը, որը զրկեց նրան նկարելու հնարավորությունից, և հատկապես կնոջ անհավատարմությունը, երբ վերջինս նրան լքեց՝ այդ վիճակում թողնելով միայնակ: Ա.Գորկին տարագրության մեջ միշտ հույսը կապել էր իր առողջության ու ֆիզիկական կարողությունների հետ: Դրանք կորցնելու հետևանքով նա զրկվել էր նաև իր կյանքի իմաստը հանդիսացող նկարելու հնարավորությունից, իսկ ուրիշ կերպ նա չէր կարող ապրել: Ուստի, այս դեպքում կարելի է ասել՝ ուժեղ կամք դրսևորելով՝ մեծ արվեստագետը ինքնասպանության դիմեց: Մինչ վճռական քայլը կատարելը նա, հոգու մեջ կուտակված դառնությունը հետ մղելով, գրեց այսպիսի հրաժեշտի խոսք. «Մնա՛ք բարով, սիրելիներ՛ք», ու վճռական հարւածեց ոտքերուն տակ տեղաւորած սնտուկը» [8, էջ 272]: Այսպես հանդես բերելով մեծ անհատականությանը վայել

մեծահոգություն՝ մի վերջին անգամ բացահայտելով ներաշխարհում ապրող սերն ու բարյացակամությունը իր համար սիրելի մարդկանց հանդեպ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1. Հոդվածում մեր ուշադրությունը հիմնականում սևեռվել է Ս.Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպի գլխավոր հերոսի՝ ամերիկահայ գեղանկարիչ Ա.Գորկու /Ոստանիկ Ադոյան/ /1902-1948/ ճակատագրի ու ներաշխարհի բացահայտման վրա:

2. Ընդգծել ենք, որ հեղինակը սփյուռքահայ գրականության տիրույթում ստեղծագործել է՝ հարելով նոր կարոտի գրականության հոսանքին, առաջնորդվելով նորովի ըմբռնված ռեալիզմի ոճամտածողության սկզբունքներով:

3. Վիպասանի գերխնդիրն է եղել. Ցեղասպանությունից փրկվելով՝ ԱՄՆ-ում ապրող և ստեղծագործող, հետագայում միջազգային ճանաչման արժանացած հայ նկարչի մարդկային էության և սյուրռեալիստական, վերացական-արտահայտչապատկան ոճով ստեղծագործությունների մեջ բացահայտել նրա հայկականության դրսևորման առանձնահատկությունները՝ միաժամանակ ցույց տալով նրա ստեղծագործությունների կապը ազգային ու համամարդկային, հումանիստական ու գեղագիտական արժեքների հետ:

4. Ս. Վահագնի «Արշիլ Կորքի» վեպը արդի հայ կենսագրական վեպի բնագավառում արժեքավոր ձեռքբերում է:

Գրականություն

1. **Ազատյան Ե.** *Սարգիս Վահագնի «Արշիլ Գորկի» վեպը* // Վահագն /Փաթափության/ Սարգիս, Արշիլ Գորկի, Երևան, «Վերնատուն մեդիա» ՍՊԸ, 2022: 232 էջ:
2. **Գորկի Ա.** /*Ադոյան, Նամակներ, /առաջաբանը՝ Շ.Խաչատրյանի/*: Երևան: «Գրաբեր»: 2005: 180 էջ:
3. **Դանիելեան Ս.** *Ծրագիր սփյուռքահայ գրականության պատմության*, Երևան, «Չանգակ-97», 2004, 40 էջ:
4. **Խաչատրյան Շ.** *Արշիլ Գորկի Ոստանիկ Ադոյան /1902-1948/*: Երևան: «Գրաբեր»: 2011:120 էջ:
5. **Խաչիկյան Գ.** *Կենսագրական վեպ ամերիկահայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու մասին*, / Ազգ /հասարակական-քաղաքական վերլուծական շաբաթաթերթ/ Երևան, 2017, 18 օգոստոսի, էջ Գ-Դ:
In the folk dialect, the words "clan," "family," and "household" are replaced by "hearth," "fireplace," "smoke," and "lamp." People do not say "our family is large," but rather "our hearth is large," "our fireplace is large," etc. The concept of family unity was connected to a common house and common fire. This is reflected in expressions like "My hearth as witness," "May God destroy the hearth of lies if I know," and "May my hearth extinguish if I go back on my word and do not fulfill it," where the swearer invokes a sacred element or sets a self-curse to emphasize their commitment.

Written sources reveal that the Hittite temple attendants followed similar rules to prevent the extinguishing of the sacred fire, as the fate of the Hattusa capital depended on keeping the fire alive. Maintaining the eternal fire was crucial to the country's well-being, and extinguishing it meant the ruin of the city. "When you preserve my word, you will keep me calm, and the fire in the hearth will remain unextinguished. If you do not maintain the hearth fire, the serpent will come and encircle the city of Hattusa" [23, p. 268].

Fire, ash, and lamps are symbols of women among Armenians, and the concept of the hearth is tied to women. The woman was responsible for lighting the fire and keeping the sacred flame burning, and her death meant the extinguishing of the household lamp. This is reflected in the Shirak proverb: "The woman is the lamp of the hearth; if the woman dies, the house is destroyed." (H. Matikyan's accounts).

In Armenian patriarchal families, the places where fire was lit, such as the tonir (oven) and the hearth (fireplace), were considered sacred. In several regions of Armenia, the tonir was equated with the church. In places where there was no church or it was occupied, wedding ceremonies for marrying couples and baptism ceremonies for newborns were conducted over the tonirs [9, pp. 116, 143]. Thus, the folk concept of the sanctity of the tonir, hearth, and lamp has found expression in everyday folk speech. To prove their innocence or loyalty, people would invoke these sacred objects: "By this tonir," "By the light of this lamp," as collected from Shirak-Yerazgavors ASahakyan's materials. Phrases like "I swear by the blessings of your hearth" are also examples of this practice.

Atmospheric phenomena have found their echoes in the oaths of the Shirak region, some of which are linked to the ancient mythical conceptions and beliefs people had about nature. For instance, thunderstorms and lightning have left deep and indelible impressions on people's poetic imagination since ancient times. In one of the folk beliefs of Shirak related to thunder and lightning, it is said: "As soon as the cloud begins to roar and thunder and lightning strikes, the old man St. Sbon crosses his face and says, 'May the lightning strike the wicked.' He believes that lightning is not just a natural phenomenon but a punishment ordained by God to eradicate the wicked from the world." This concept is reflected in oaths such as "May I be struck by God's lightning if I am lying," or "May God's fire and flame fall upon me if I..." Here, ancient beliefs have acquired a Christian tint, with lightning and fire linked to celestial phenomena. These oaths likely reflect an ancient belief where lightning is the sword of a stormy hero striking down evil spirits [1, p. 74].

In the folk oath structures of Shirak, a substantial group of oaths is dedicated to the sky and celestial bodies. These oaths preserve traces of ancient mythological and religious conceptions. Among the celestial bodies, the sun often appears in these oaths and it symbolizes warmth, light, and creative energy in almost all cultures. It was forbidden to urinate facing the church or the sun to avoid punishment [18, p.150]. In folk belief, the sun is always perceived as a symbol of life and vitality, and swearing by one's or a relative's sun is still widely practiced in the daily life of the people of Shirak. For example, "By my beloved's sun," "May my beloved die" [3,

FFIV 2627-2629], "By my sun," "May I not see my sun if I know," "By the sun of my children, I don't know" (according to S. Harutyunyan's account), "By the green sun of my only child" [18, p.140], "May the sun of my Karo die if I know anything" [18, p.140], and so on. The traditional symbol of life and survival associated with the sun has continued to persist among the common folk into the 20th century. The clear remnant of sun worship is manifested in rituals related to newborns. As in other Armenian regions, in Shirak, the grandmother, after swaddling the newborn, would take the child outside and, facing east (toward the sun), cross the child's face seven times while saying a prayer [22, p. 113]. In the prayer, the grandmother would address the sun as a god, asking for life and sustenance for the newborn. "The sun is viewed as the giver of life and sustenance, and the newborn as a representative of the new generation of the life-giving sun, under whose protection the older generation must shelter and survive, whose sun (= life) gradually weakens with age" [13, p.321].

Surviving remnants of sun worship among Armenians include orienting the head towards the east when burying the dead, facing east when praying, placing the altar and holy table on the eastern side of churches, etc.

"May the good day be known, which indeed it knows," "May I be blind if I lie to the poor prayer house" [18, p.142], are oaths that reflect ancient beliefs about the day, especially dawn.⁷ In popular belief, day and dawn embody goodness, as each dawn, according to mythological thinking, is perceived as the beginning of a new day, a new life, a new creation of the universe after the darkness of night.

Mythological concepts of the dual-part (heaven and earth) and later triple-part (heaven, earth, underworld) structure of the universe or world, formed among Armenians since ancient times, are also preserved in Shirak's folk oaths; for example, "Sky, earth," (according to S. Harutyunyan's account), "Sky, earth bear witness" [18, p.141], "Sky, earth, sea, land (= ground), if I know" (according to S. Harutyunyan's account), etc. In several regions of Armenia, the words for heaven and god are synonymous, a fact that, according to mythological belief, indicates the identification of the supreme heavenly being with his abode, the sky, especially since in popular thinking, the sky was also perceived as god, as in the oath "God, heaven, earth, sea, land" [18, p.141].

CONCLUSION: The folk beliefs and notions reflected in the oaths of Shirak are the result of the historical typological development of primordial worldviews. These notions, representing different stages of societal thought, have continued to exist at various levels and degrees, sometimes pushed back and semi-forgotten, encapsulated merely in various oral tradition formulas, and sometimes widely alive in beliefs intertwined and reinterpreted with new religious understandings. The folk oaths reflect the true picture of the ideological struggle occurring within the people's environment, where the faith in the magical power of the word, which gives ideological meaning and importance to the oath, is crucial.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աբեղյան Մ.** *Երկեր, հ. Է*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ. Երևան: 1975: 604 էջ:
2. **Ամատունի Սահակ վարդապետ**, *Հայոց բառ ու բան*, Վարդապետատ: տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: 1912: 728 էջ:

⁷ Remember Aurora, the goddess of dawn in Roman mythology, who every morning, renewed, rushes across the sky to announce the arrival of the sun, bringing daylight to gods and humans alike. In Greek and Vedic myths, she corresponds to Eos and Ushas, respectively.

3. **Քարսեղյան Պ.** *Շիրակի ժողովրդական բանահյուսությունից*: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ՝ FF IV: 2627-2955 : 1966:
4. «Բյուրական», շաբաթաթերթ: 1900թ.: Կոստանդնուպոլիս:
5. **Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին**, Երևան: «Հայաստան» հրատ.: 1994: 156 էջ:
6. **Իսրայելյան Ա.** *Աղ ու հաց*, Հայաստանի պատմության թանգարան: Երևան., 2023: 208 էջ:
7. **Իսրայելյան Ա.** *Կրակի պաշտամունքի հետ կապված հայկական հնայինները*, <https://artsakhlib.am/wp> էջ 200-221:
8. **Լալայեան Ե.**, *Վասպուրական*, Ազգագրական հանդես, գիրք XX: Թիֆլիս: Էդեքսարաշարժ տպ., Ե. Ադանեանի 1910: 218 էջ:
9. **Լալայեան Ե.** *Վարանդա*, Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս: 1897: տպ. Մ. Ռօսինեանցի, 384+121 էջ:
10. **Լալայեան Ե.** *Բորչալուի գավառ*, Ազգագրական հանդես, գիրք XI, 1904, 336 էջ:
11. **Լալայեան Ե.** *Գանձակի գավառ*, Ազգագրական հանդես գիրք Զ, Թիֆլիս: 1900: տպ. Կ. Մարտիրոսեանցի, 392 էջ + 40 էջ:
12. **Հարությունյան Ս.** *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ: «Համազգային» տպ.: 2000: 528 էջ:
13. **Հարությունյան Ս.** *Հայ հնայական և ժողովրդական աղբյուրներ*, Երևան: ԵՀ հրատ.: 2006: 504 էջ:
14. **Հարությունյան Ս.** *Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը*: Երևան: «Մուղնի» հրատ.: 2001: 81 էջ:
15. **Հարությունյան Ս.** *Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 270 էջ:
16. **Ղանալանյան Ա.** *Ալիանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1969: 530+33 էջ:
17. **Մատիկյան Աղ.** *Ծունը դիցաբանության մեջ*, Հանդես ամսօրեայ, թիվ 3-4: Վիեննա: 1926: 152-162 էջեր:
18. **Մխիթարեանց Աղ.** *Փշանքներ Շիրակի անբարեներից*: Էմինեան ազգագրական ժողովածու, Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: 1901: 388 էջ:
19. **Օհանյան Հր.** *Հայ ժողովրդական առածներ*: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ՝ FF IV: 1211-1488: 1960:
20. **Տեր-Պողոսյան Գր.** *Նախնին հայոց հոգեպաշտության շրջանից*, «Հուշարձան» գրական ժողովածու, Վիեննա: 1911: 236-241 էջեր:
21. **Փավստոս Բ.** *Հայոց պատմություն*, Հայպետհրատ., Երևան: 1947: 346 էջ:
22. **Քաջբերունի Հայկական սովորություններ**: Ազգագրական հանդես: IX գիրք Թիֆլիս: Տպ. Կ. Մարտիրոսեանցի: 1902: 284 էջ:
23. **Иванов В.** *Культ огня у хеттов*, «Древний мир» [Drevniy mir:], Сборник статей академику Василию Васильевичу Струве., изд-во «Восточной литературы», Москва, 1962., 266-272 сс.
24. **Литвинский Б.А., Седов А.В.** *Культы и ритуалы кушанской Бактрии*[Kul'ty i obryady Kushanskoj Baktrii]. Погребальный обряд, изд. «Наука», Москва, 1984, 240 с..
25. *Мифы народов мира* [Mify narodov mira], Энциклопедия, т. 1, изд-во «Советская энциклопедия», Москва, 1980, 672 с..
26. **Миллер Вс.** *Значение собаки в мифологических верованиях* [Znachenije sobak v mifologicheskikh verovaniiakh], Москва, Синод. тип. 1876, 20 с.
27. *Ригведа, Избранные гимны* [Izbrannyye gimny:], изд-во «Наука», Москва, 1972, 418 с..
28. **Фрэзер Дж.** *Фольклор в Ветхом завете* [Fol'klor v Vetkhom Zavete], изд-во «Политической литературы», Москва, 1985, 544 с..
29. **Aylesworth Thomas G.** *Servants of the Devil*, USA, 1970..
30. **GCampbell, Jeremy.** *The liar's tale: A history of falsehood*. New York: 2001.Norton.. (<https://www.thefreedictionary.com/oath>)
31. **Prodi, Paolo.** *Der Eid in der europäischenVerfassungsgeschichte*. München: StiftungHistorisches Kolleg). 1992.

R e f e r e n c e s

1. **Abeghyan M.** Works [*Yerker*], no. E, Publ.House of the Arm SSR, Yerevan, 1975, 604 p. (in Armenian).
2. **Reverend Sahak Amatuni**, Armenian Word and Thing[*Hayots' barr u ban*], Vagharshapat, print. Mother Cathedral, St Etchmiadzin, 1912, 728 p. (in Armenian)
3. **Barseghyan P.** From Shirak folklore[*Shiraki zhoghovrdakan banahyusut'yunits'*]. Archives of folklore of the Institute of Archaeology and Ethnography FF IV. 2627-2955. 1966 (in Armenian)
4. "Byurakn", weekly newspaper, 1900, Constantinople. (in Armenian)
5. **Yeghishe**, About Vardan and the Armenian War[*Vardani yev hayots' paterazmi masin*], Yerevan, "Armenia", 1994, 156 pages. (in Armenian)
6. **Israelyan A.** Salt and Bread [*Agh u hats'*], History Museum of Armenia, Yerevan, 2023, 208p. (in Armenian)
7. **Israelyan A.** Armenian charms related to fire worship[[*Kraki pashtamunk'i het kapvats haykakan hmayilnery*], <https://artsakhlib.am/wp> p. 200-221. (in Armenian)
8. **Lalayan E.** Vaspurakan [*Vaspurakan*], Ethnographic journal, book XX, Tiflis, Electromobile print., N. Aghanian 1910, 218 p. (in Armenian)
9. **Lalayan E.** Varanda [*Varanda*], Ethnographic journal, book B, Tiflis, 1897, print. M. Rottinian, 384+121p. (in Armenian)
10. **Lalayan E.** Borchalu Province [*Borch'alui gavar*], Ethnographic journal, book XI, 1904, 336 p. (in Armenian).
11. **Lalayan E.** Gandzak Province[*Gandzaki gavar*], Ethnographic journal book Z, Tiflis, 1900, print. K. Martiro seantsi, 392 p.+ 40 p. (in Armenian)
12. **Harutyunyan S.** Armenian mythology [*Hay arraspelabanut'yun*], Beirut, Hamazkayin, 2000, 528 p. (in Armenian)
13. **Harutyunyan S.** Armenian magical and folk prayers [*hay hmayakan yev zhoghovrdakan aghot'k'ner*], Yerevan, EC ed.: 2006. 504 p. (in Armenian)
14. **Harutyunyan S.** Ancient Armenian beliefs, religion, worship and cathedral[*Hin hayots' havatalik'nery, krony, pashtamunk'n u dits'arany.*]. Yerevan: "Mughni" ed. 2001. 81 p. (in Armenian)
15. **Harutyunyan S.** Curse and blessing genre [*Anetsk'i yev orhnank'i zhanry hay banahyusut'yan mej.*] Yerevan: 270 p. (in Armenian)
16. **Ghanalanyan A.** Avandapatum[*Avandapatum*], Publishing House of Armenian SSR, Yerevan, 1969, 530+33 p. (in Armenian)
17. **Matikyan Agh.** The Dog in Mythology [*Shuny dits'abanut'yan mej.*], Monthly Journal, No. 3-4, Vienna, 1926, 152-162 pp.. (in Armenian)
18. **Mkhitareants Agh.** Fragments from Shirak's archives [*P'shrank'ner Shiraki ambarnerits'*], A. Aleksandrapol, 388 p. (in Armenian).
19. **Ohanyan Hr.** Armenian proverbs: [*Hay zhoghovrdakan arratsner.*]Archives of Archeology and Ethnography: 1211-1488. (in Armenian)
20. **Ter-Poghosyan Gr.** From the Period of Ancient Armenian Sprituality[*Nakhnin hayots' hogepashtut'yan shrjanits'*], "Monument" literary collection, Vienna, 1911, 236-241 pp.. (in Armenian)
21. **Pavstos B.** History of Armenia [*Hayots' patmut'yun*], Haypethrat., Yerevan, 1947, 346 p.. (in Armenian)
22. **Qajberuni.** Armenian customs: [*Haykakan sovorut'iwinner*] Book IX Tiflis. K. Martirose: 1902: 284 p. (in Armenian)
23. **Ivanov V.** Cult of fire among the Hittites, "Drevniy mir", Collection of articles by Vasiliyu Vasilievich Struve., izd-vo "Voorstochniy literatury", Moscow, 1962, p. 266-272 pp.(in Russian)
24. **Litvinsky B., Sedov A.** Cultures and rituals of Kushan Baktria. Funeral ceremony, izd. "Nauka", Moscow, 1984, 240 p.(in Russian)
25. Myths of nations of the world, Encyclopedia, p. 1, "Soviet encyclopedia", Moscow, 1980, 672 p. (in Russian)
26. **Miller Vs.** Значение собаки в мифологических верованиях, Moscow, Synod. typ. 1876, 20 с. (in Russian)
27. Rigveda, Selected hymns, izd-vo "Nauka", Moscow, 1972, 418 p. (in Russian)
28. 28– 31 See: Bibliography

Information about the authors

Lusine Khachatur GHREJYAN: PhD in Philology, Docent, Researcher at Institute of Archaeology and Ethnography of NAS, GSU Lecturer, Yerevan, RA, e-mail: ghrejyan 76@mail.ru // orcid.org/0000-0001-8755-3967

Լուսինե Խաչատուրի ՂՈԵՉՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Գավառի պետական համալսարանի դասախոս, Երևան, ՀՀ, էլ. հասցե ghrejyan 76@mail.ru // orcid.org/0000-0001-8755-3967:

Лусине Хачатуровна КРЕДЖЯН: кандидат филолог. наук, доцент, научный сотрудник Института археологии и этнографии НАН преподаватель Гаварского госуниверситета, Ереван, РА, эл. адрес: ghrejyan 76@mail.ru, orcid.org/0000-0001-8755-3967

Hasmik Hamlet MATIKYAN: PhD in Philology, Docent, Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, lecturer at the Chair of Foreign Languages ShSU, Gyumri, RA, e-mail: hasvrej@mail.ru. // Orcid-0000-0003-0032-5123

Հասմիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Շիրակի պետհամալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս, Գյումրի, ՀՀ էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. // Orcid-0000-0003-0032-5123

Асмик Гамлетовна МАТИКЯН: кандидат филолог. наук, доцент, науч. сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, преподаватель кафедры ин. языков Ширакского госуниверситета, Гюмри, РА, эл. адрес: hasvrej@mail.ru. // Orcid-0000-0003-0032-5123

Ա Ջ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ETHNOGRAPHY
ЭТНОГРАФИЯ

ՀՏԴ՝ 39.395

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՍԿԵՐԻՉ-ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ.–XX դ. ՄԿՁԲԻՆ

(համառոտ ուրվագիծ)¹

Գրիգոր Թ. Աղանյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անվտիմ

Նախաբան. Հոդվածում քննության են առնված Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությանը վերաբերող տարազան նյութերը, որոնց միջոցով փորձ է արվել վեր հանել հիշյալ արհեստների տեղն ու դերը քաղաքային մշակույթի տարբեր բնագավառներում: Հոդվածում ներկայացվել են ոսկերչական և արծաթագործական արտադրանքի ծավալները, տեսականին և առանձնահատկությունները վերոնշյալ ժամանակաշրջանում: **Մեթոդներ և նյութեր.** Ուսումնասիրությունն իրականացվել է պատմագագրական և էթնոմշակութաբանական հետազոտությունների մեթոդաբանությամբ: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վեր են հանվել Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործական արվեստի ակունքները, դրա նմանություններն ու տարբերությունները հայկական ոսկերչական մյուս դպրոցներին: Հատուկ ուշադրություն է դարձվել մինչ այժմ չիրապարակված արխիվային նյութերի վերլուծությանը: **Վերլուծություն.** Քննության առնված դաշտային ազգագրական, արխիվային, տպագիր և թանգարանային նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը, շարունակելով Կարին-Կարս ոսկերչական դպրոցի ավանդույթները, ժամանակի ընթացքում ձեռք է բերել ինքնօրինակ ձեռագիր և սեփական դիմագիծ: **Արդյունքներ.** Հետազոտության արդյունքում ներկայացվել են այն տեխնիկա-տեխնոլոգիական հնարք-

¹ Հոդվածը գեկուցման տեսքով ներկայացվել է «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ»-ում (Հանրապետական 4-րդ գիտաժողով՝ նվիրված Լենինականի անվանակոչության 100-ամյակին), ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 16 օգոստոսի 2024 թ.:

ներն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ էին Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործական մշակույթին: Ներկայացվել է նաև ոսկերչական և արծաթագործական արտադրանքի հիմնական տեսականին՝ սկսած կենցաղային սպասքից մինչև նրբագեղ զարդերը: Կազմվել է Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում 1844-1913 թթ. ընթացքում գրանցված ալեքսպոլցի ոսկերիչ-արծաթագործների անվանացանկը:

Բանալի բառեր՝ ոսկերչություն, արծաթագործություն, Ալեքսանդրապոլ, քաղաքային մշակույթ, կենցաղային սպասք, զարդեր:

Ինչպես հղել՝ Աղանյան Գ. *Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIX դ.-XX դ. սկզբին* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2024: Հ. 2 (27): 173-186 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

IN THE GOLDSMITHING AND SILVERSMITHING OF ALEXANDROPOL 19TH AND EARLY 20TH CENTURIES (brief outline)

Grigor T. Aghanyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This article examines the various materials related to the goldsmithing and silversmithing of Alexandropol, attempting to reveal the place and role of these crafts in different areas of urban culture. The article aims to present the volumes, types, and characteristics of gold and silver production. **Methods and Materials:** The study was conducted using historiographical and ethnocultural research methodologies. By employing a historical-comparative method, the roots of Alexandropol's goldsmithing and silversmithing art as well as its similarities and differences with other Armenian goldsmithing schools have been explored. Special attention was paid to the analysis of previously unpublished archival materials. **Analysis:** The analysis of the collected ethnographic, archival, printed, and museum materials shows that Alexandropol's goldsmithing and silversmithing continued the traditions of the Karin-Kars goldsmithing school, gradually developing its unique style and identity over time. **Results:** The research presents the techniques and technological characteristics typical of Alexandropol's goldsmithing and silversmithing culture. It also presents the main types of gold and silver products, ranging from household utensils to exquisite jewelry. A list of goldsmiths and silversmiths from Alexandropol registered at the Tiflis Tax Office between 1844 and 1913 has also been compiled.

Key words: *goldsmithing, silversmithing, Alexandropol, urban culture, household utensils, jewelry.*

Citation. Aghanyan G. *The Goldsmithing and Silversmithing of Alexandropol in the 19th and Early 20th Centuries.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri. 2024. 2 (27). 173-186 pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ЮВЕЛИРНОЕ ДЕЛО В АЛЕКСАНДРОПОЛЕ
В XIX – НАЧАЛЕ XX ВЕКОВ
(краткий очерк)

Григор Т. Аганян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: В статье представлены разнородные сведения и материалы, касающиеся ювелирного ремесла Александрополя, целью которого является раскрытие роли и места ремесла в различных областях городской культуры. В статье предпринята попытка раскрыть объемы производства, ассортимент и характерные особенности золотых и серебряных изделий. **Методы и материалы:** Исследование проводилось с использованием методологии историко-этнографического и этнокультурного исследования. Использование историко-сравнительного метода, освещены истоки Александропольского золото-серебряного искусства, его сходства и различия с другими армянскими ювелирными школами. Особое внимание было уделено анализу ранее не опубликованных архивных материалов. **Анализ:** Анализ исследований полевых этнографических, архивных, печатных и музейных материалов, демонстрирует, что ювелирное ремесло в Александрополе, опираясь и продолжая традиции Карин-Карсской ювелирной школы, со временем выработало уникальный стиль и индивидуальные черты. **Результаты:** В результате исследования были представлены технико-технологические приемы и особенности, характерные для ювелирной культуры Александрополя. Также представлен основной ассортимент золотых и серебряных изделий, варьирующихся от предметов домашнего обихода до изысканных украшений. Был составлен список алекпольских мастеров золотых и серебряных дел, зарегистрированных в Пробирной палате Тифлиса в 1844-1913 годах.

Ключевые слова: золотое дело, серебряное дело, Александрополь, городская культура, домашняя утварь, ювелирные украшения.

Как цитировать: Аганян Г. Ювелирное дело в Александрополе в XIX- начале XXвв. //

“Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 173-186 сс..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-173

ՆՄՆԱԲԱՆ. Տեխնիկա-տեխնոլոգիական և գեղագարդման առանձնահատկություններին ելնելով՝ հայկական ոսկերիչ-արծաթագործության մեջ կարելի է առանձնացնել մի շարք դպրոցներ՝ Վան-Վասպուրականի, Կարինի (սրանից սերել են Կարսի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլ-Գյումրու դպրոցները), Փոքր Հայքի, Կիլիկիայի, Պարսկահայքի, Սյունիք-Արցախի և Երևանի: Յուրաքանչյուր ոսկերչական դպրոց մասնագիտացած և հմտացած էր արտադրանքի որոշակի տեսակի կամ էլ ոսկերչական տեխնիկայի որևէ բնագավառում:

XIX-XX դդ. հայկական ոսկերչությունը, շարունակելով նախորդ շրջանի ավանդույթները, ձեռք բերեց նոր որակներ, և արտադրանքի տեսականին առավել ընդարձակվեց ի հաշիվ կենցաղային կիրառության նոր իրերի պատրաստման: Արծաթյա կենցաղային սպասքի (ափսեներ, գդալներ, ըմպանակներ, բաժակակալներ և այլն) առկայությունը հայկական քաղաքների արհեստավորաառևտրական բնակչության բարձր

դիրքի և բարեկեցության ցուցիչ էին դարձել: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի բազմամագանությամբ էր պայմանավորված նաև հայկական այս կամ այն տարածաշրջանի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործության ընդհանուր բնաթագիրը

Ալեքսանդրապոլում ոսկերիչ-արծաթագործության, ինչպես նաև դրա հետ կապված հարակից արհեստները լայն տարածում ունեին և բաժանվում էին նեղ մասնագիտացված ճյուղերի, որոնք հայտնի էին օտարալեզու հետևյալ անվանումներով. *դուլումջի-ոսկերիչ, զարգար-արծաթագործ, դարադուլումջի-հասարակ մետաղներից զարդ պատրաստողներ* և *ջավահիրջի-ակնագործ*: Նեղ մասնագիտացումները կապված են օգտագործվող մետաղի կամ պատրաստված իրերի տեսակի հետ: Արծաթյա կենցաղային սպասքի՝ ափսեների, գդալների, ըմպանակների, բաժակակալների առկայությունը Ալեքսանդրապոլի արհեստավորա-առևտրական բնակչության սոցիալական բարձր դիրքի և բարեկեցության ցուցիչ էին: Միևնույն ժամանակ ոսկերչական զարդերի (ապարանջաններ, մանյակներ, քունքակախիկներ, մատանիներ, գոտիներ և այլն) բազմազանությամբ էր պայմանավորված նաև ալեքպոլցի կնոջ տարազի շքեղությունն ու գրավչությունը: Ալեքսանդրապոլի արծաթագործության ինքնօրինակ նմուշ են տղամարդու և կնոջ գոտիները, ինչպես նաև արծաթե և ոսկե ապարանջանները, որոնք էապես տարբերվում են հայկական մյուս ոսկերչական դպրոցների նմանատիպ զարդերից: Տղամարդու թամբաձև ճարմանդով գոտին ներկայացնում էր Կարսի, իսկ կնոջ թելքաշ-հատիկանախշով զարդարված գոտին՝ Կարինի արծաթագործական ավանդույթը:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործներն օգտագործում էին հայտնի տեխնիկա-տեխնոլոգիական հետևյալ եղանակները՝ մոմե և կավե կաղապարներում ձուլում, դրվագում, կռում-կոփում, դրոշմում, թիթեղի գլանվածքի ստացում, թելքաշ-հատիկանախշում, նախշացանցավորում (ֆիլիգրան), զուգաթելի նստեցում, թելերով հյուսում, հատիկներով զարդարում, փորագրում, ընդելուզում, ոսկեջրում, սևադապատում, ոսկեզույն կամ արծաթազույն համաձուլվածքների ստացում: Ոսկերիչը պետք է կարողանար ընտրել և օգտագործել պատրաստվող առարկային կամ զարդին համապատասխան թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, ագուցեր դրանք և հմուտ լինել ոսկու կամ արծաթի հարզը որոշելու հարցում [12, էջ 81]: «Մուրճ» ամսագրի 1901թ. 10-րդ համարում հրատարակված «Տնայնագործությունը կովկասյան ցուցահանդեսում» հոդվածում հեղինակը ախալցխացի հայ վարպետների նրբահյուս աշխատանքները ներկայացնելուց հետո անդրադառնում է ալեքպոլցի արծաթագործներին. «Դրանցից ավելի ուշագրավ է ալեքսանդրապոլցի Համազասպ Ամիրջանյանի ցուցադրած արծաթ-ոսկեջուր շիշը, որ շինված է ամբողջապես մի կտոր արծաթից: Դա նշանավոր է իբրև մի զեղարվեստական գործ, որովհետև զարդարված է մի շարք նուրբ նկարներով: Շշի կատարին նստած է Ոգի Հայաստանին, իսկ նրա շուրջը՝ հին փառքի բեկորները-ավերակները: Նեղլիկ կոկորդի շուրջը դասավորված են Գրիգոր Լուսավորչի, ս. Մեսրոպի, Խորենացու և Գրիգոր Նարեկացու պատկերները, դրանից ներքև Հայկի, Տիգրան Բ-ի, Տրդատի և Վարդանի պատկերները, իսկ շշի փորի վրա՝ Անիի դիվանատունը, կիսաքանդ պարիսպները և ալեզարդ Մասիսն ու Սբ Էջմիածինը: Ճիշտ է, որ մեծ շնորհք է հարկա-

վոր այդքան նկարները մի փոքրիկ անոթի վրա գետեղելու համար: Այդ նրբագարդ անոթն ամենայն իրավամբ կարող է մի անգնահատելի գարդ դառնալ ամեն մի հարուստ ընտանիքում: Գինը 200 ռուբլի է: Այդ շշի մոտ դրված է նույն պարոնի պատրաստած արծաթ-ոսկեջուր հսկայական գոտին՝ 13 փունտ (5,323.5 կգ) ծանրությամբ» [5, էջ 233-234]:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործների մասին բերենք նաև Ն.Նիկողոսյանի արժեքավոր վկայությունը. «Ոսկերիչներից անվանի էր Աղաբալյան Ստեփանը (Ուստա Ստեփանը): Արծաթի վրա դուրս էր բերում գեղեցիկ պատկերներ, մանր փորվածքներ: Մա մի ժամանակ էլ տպարան բացեց (1872-73 թթ.), որտեղ տպագրում էր «Ավետիս»-ներ, բլանկներ: Տառերն ինքն էր փորագրում, ձուլում: Մրա խորհրդով հետո Սանոյան Գևորգը հիմնեց տպարան, որ գոյություն ունեցավ մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Ոսկերիչների մեջ մեծ հմտություն ուներ Մարտիրոս Տարախչյանը (դույումչի Մարտիրոս): Մա փորագրության արհեստը նրբության, կատարելության հասցրեց: Շինում էր նիշած ապարանջաններ, ծխախոտի տուփերի վրա սևադուր էր հայ նահապետների, թագավորների բավական հաջող դեմքեր: Բայց այդ շնորհալի վարպետը հարբեցողության զոհ եղավ: Ոսկերիչներից նշանավոր էր նաև Հարություն Զարգարյանը, իր ոսկու կամ արծաթի գեղեցիկ շինվածքով և մանրանկար քանդակով (ажурная работа): Թողեց աշակերտներին իր գործը կատարելու: Մրանց թվին էր պատկանում ջավահիրճի Գրիգորը, որ հմուտ էր ակնեղեններ թրաշելում (шлифовка - Գ.Ա.)» [6, էջեր 4344-4345]:

1839 թ. մի մեծ խումբ ծագումով կարինցի արհեստավորներ, դրանց թվում նաև ոսկերիչներ, որոնք սկզբնական շրջանում հաստատվել էին Ախալցխայում, տեղափոխվեցին նոր հիմնված Ալեքսանդրապոլ [8 էջեր 166-167]: Հիշյալ վերաբնակիչներից էր Նազարեթ Կարապետյանը, որի սերունդները շարունակեցին գործել Ալեք-Պոլում՝ հետագա տարիներին պատրաստելով նրբահյուս արծաթյա գարդեր և կենցաղային իրեր:

Ոսկյա և արծաթյա իրերի հարգանշումն ու դրոշմակնքումը

1843 թ. հունվարի մեկից Թիֆլիսում սկսեց գործել Հարգանշային գրասենյակը (Пробирная палата) [11, էջ 81], որի աշխատակիցները սկսեցին խստորեն հետևել ոսկյա և արծաթյա իրերի որակին և դրանց մաքրությանը: Հարգանշային գրասենյակը հաստատություն է, որում ստուգվում է արծաթի ու ոսկու մաքրությունը, և դրվում են հարգը հաստատող դրոշմակնիքներ: Հարգը հաստատող դրոշմակնիքներ ստանալու և սեփական անվամբ կամ որոշակի պատկերով դրոշմ դնելու իրավունքը ձեռք բերելու համար ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասը գրանցվեց Հարգանշային գրասենյակում և ստացավ գործելու ազատ իրավունք: Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում 1844-1913 թթ. միջակայքում գրանցվել և գործելու իրավունք է ստացել ալեքսանդրապոլի 20174 վարպետ ոսկերիչ-արծաթագործ [9, էջ 121]:

Հումքի ձեռքբերման աղբյուրները հիմնականում երկուսն էին: Վարպետների մեծ մասը Հարգանշային գրասենյակի կազմած հարցաթերթիկում նշում էր, որ արծաթը կամ ոսկին բերում են պատվիրատուները: Թանկարժեք մետաղների ձեռքբերման մյուս աղբյուրը դրանց մեծածախ վաճառքով զբաղվող առևտրականներն էին, որոնցից, ճյուղային համքարության գլխավոր վարպետի հսկողությամբ գնվում էին ոսկին և արծաթը:

Վերջինս հասկապես գնվում էր հայ խոշոր առևտրականներ Արզումանյաններից, որոնք իրենց հերթին արծաթը ներմուծում էին Համբուրգից: Ռուսական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ մեծածախ արծաթը գնվեր մոսկվացի առևտրական Կոսյանիսից, պնդելով, որ նրա վաճառած արծաթի հարզն (մաքուր 84) ավելի բարձր է, քան Արզումանյաններինը (82,5) [9, էջ 124]: Սա ժամանակին տարածված տնտեսական հովանավորչության մի տեսակ էր, որն առավել խորացավ XIX վերջերին, երբ «լայնամասշտաբ հարձակում» սկսվեց տեղական արհեստների և համքարությունների վրա: XIX դ. երկրորդ կեսին անդրկովկասյան շուկան ողողեց ցածր հարզանիչ ունեցող (20-30), այսպես կոչված, «Վարշավյան արծաթը» (արհեստավորների շրջանում ընդունված էր անվանել «վարշադ»), որը մի քանի գունավոր մետաղների համաձուլվածք էր, ժամանակի ընթացքում սևանում էր կամ ծածկվում էր կանաչավուն փառով: Այս կեղծ արծաթը հիմնականում օգտագործում էին դարադուրյունները՝ գյուղական և քաղաքային բնակչության չունևոր դասի համար էժանագին զարդեր պատրաստելիս: Ալեքսանդր արծաթագործ վարպետները չէին օգտագործում և քամահրական վերաբերմունք ունեին դրա նկատմամբ՝ ի տարբերություն երևանցի արծաթագործների:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ արհեստավորների կողմից պատրաստված ոսկյա իրերի հումքի ձեռքբերման և արտադրանքի ծավալների մասին տեղեկությունները բավական սուղ են: Է. Աստվածատրյանի ձեռքի տակ եղած տվյալները, որոնք վերաբերում են 1851 թ., ցույց են տալիս, որ պաշտոնապես գրանցված ալեքսանդր 14 վարպետները պատրաստել են ոսկյա զարդեր 15 ֆունտ 48 գոլոտնիկ ընդհանուր քաշով [9, էջ 125], որը ժամանակակից չափման միավորի վերածելիս հավասար է մոտավորապես 6400 գրամի: Նույն ժամանակի համար պատրաստված արծաթե զարդերի և առարկաների ընդհանուր քաշը կազմել է 2 փուլ, 16 ֆունտ 75 գոլոտնիկ՝ մոտավորապես 38872 գրամ [9, էջ 129]: Հետագա տարիներին քաղաքի բնակչության աճին և կենսապայմանների բարելավմանը զուգընթաց մեծանում էր նաև ազնիվ մետաղներից պատրաստված զարդերի և հասկապես արծաթյա սպասքի պահանջարկը: Վերջինների պատրաստումը, ի տարբերություն զարդերի, աշխատատար չէր և չէր պահանջում մանրամասն զարդանախշում ու պաճուճագարդում: Թեյի պարագաները՝ գդալները, աղամանները, շաքարամանները, բաժակակալները և այլն, ինչպես նաև զանազան չափերի ափսեները, թասերը, սկուտեղները, ի տարբերություն զարդերի, բավական զանգվածեղ էին:

Ոսկերչական խանութ-արհեստանոցների տեղակայումը

Ն. Նիկողոսյանը վկայությունից երևում է, որ մինչև Ալեքսանդրապոլում այսպես կոչված Եկամտաբեր տների կառուցումն ու երևան գալը «քաղաքում կար ոսկերիչների հատուկ շարք (ոսկերչնոց): Տեքստիլ տանող ճանապարհին, Թիֆլիսի խճուղու վրա, նոր տնկած այգու տեղը (ներկայիս Մայթ-Նովա փողոցում-Գ.Ա.) նրանք խանութներ շինեցին, առժամանակ էլ այդտեղ աշխատեցին, հետո կրկին քաշվեցին քաղաքի կենտրոնը» [6, էջ 7339]: Ալեքսանդրապոլի ոսկերչական արհեստանոցները տեղակայված էին քաղաքի կենտրոնում մեծահարուստ և ձեռներեց քաղաքացիների՝ հիմնականում առևտրական դասի կառուցած Եկամտաբեր տներում: Համաձայն Է. Աստվածատրյանի ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերի՝ Գեներալսկի փողոցում

գրանցված էր 5 արհեստանոց, Ալեքսանդրովսկիում՝ 11 և մեկը՝ Ժամի կամ Տաճարի փողոցում [9, էջ136]: Վերոհիշյալ փողոցներում աշխույժ անցուղարձ կար, և դրանցում կրպակ-արհեստանոց ունենալը չափազանց հարգի (պրեստիժային) էր համարվում: Ալեքպոլցի որոշ ոսկերիչ-արծաթագործներ Կարսի մարզի կազմավորումից հետո խանութներ բացեցին նաև Կարսում, օր՝ Մկրտիչ Սուջանցը: Հատկանշական է, որ ոսկերչական և զինագործական արհեստանոցները գտնվում էին միմյանց շատ մոտ, քաղաքի կենտրոնական փողոցներում, ինչը խոսում է արհեստների այս ճյուղերի միջև սերտ կոոպերացիայի մասին: Զինագործները արհեստանոցներ ունեին ոչ միայն Գեներալսկի, այլև դրան հարող Լոռիս-Մելիքովսկի և Միխայլովսկի փողոցներում [10, էջեր 80-82]:

Վարպետի տղեն վարպետ է

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործները միավորված էին էսնաֆության կամ արհեստավորական եղբայրության մեջ, որի շարքերում մինչև 1867 թ. կանոնադրության հաստատումը միավորված էր շուրջ 63 վարպետ, ենթավարպետ և աշակերտ [7, էջ 55]: Հարկ է նշել, որ քաղաքում գործող ժամագործները (սհատչի) ևս միացել են վերոհիշյալ համքարությանը:

Ոսկերիչ-արծաթագործությունը համարվում էր երկարատև և հիմնավոր ուսուցում պահանջող արհեստ: Արհեստին բնորոշ հիմնական տեխնիկա-տեխնոլոգիական հմտություններին, գործիքակազմին և նրբություններին հասու լինելու համար հարկավոր էր 4-ից 9 տարի ժամանակ: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում էր մեր բանասաց, ալեքպոլցի վերջին վարպետներին աշակերտած վարպետ Սերգեյը. «Ոսկերիչների գործիքների քանակն ու տեսակները անհաշիվ են, միշտ էլ ինչ-որ գործիք կամ հարմարանք պակասում է» [1]: Ոսկերիչ-արծաթագործության բնագավառում վարպետության աստիճանին արժանանալու համար ենթավարպետը կամ վարպետացուն ճյուղային էսնաֆության վարպետների դատին պետք հանձներ իր պատրաստած նշանի մատանին և կանացի արծաթյա գոտի [12, էջ134]: Ալեքպոլցի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասն առաջնորդվում էր «Վարպետի տղեն վարպետ է» ավանդական սկզբունքով, և պատահական չէր, որ այս զբաղմունքով պարապողների շրջանում ամենամեծ թիվն էին կազմում արհեստավորական գերդաստանները, գործիհնակ՝ Կոշտոյանները, Պապանյանները, Տարախյանները, Աղաջանյանները, Աղաբալյանները, Ամիրջանյանները, Բասենցյանները, Զարգարյանները, Պարունակյանները, Սուքիասյանները և այլք: Հիշյալ տոհմերից յուրաքանչյուրն ուներ իր ձեռագիրը և հասել էր արհեստի որևէ նեղ բնագավառում մասնագիտանալու բարձրագույն աստիճանի: Ալեքպոլցի մի շարք վարպետներ իրենց աշխատանքները ներկայացրել էին կովկասյան, համառուսաստանյան և միջագային ցուցահանդեսներում: Առաջինը վարպետ Հաբեթնակ Աղաջանյանն էր, որի աշխատանքը ցուցադրվել է Լոնդոնում, վերը նշեցինք նաև Համագասպ Ամիրջանյանի մասին: Նշանավոր ոսկերիչ-արծաթագործ վարպետ Մարտիրոս Տարախյանի աշխատանքը ոսկե մեդալի է արժանացել Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում [7, էջ 27]:

Ոսկերիչ-արծաթագործների համքարության-էսնաֆության հովանավոր սուրբը՝ պատրոն-փիրը, Սուրբ Տապանակը պատրաստած Բեսելիել ճարտարապետն էր (Բեսելիելը տապանակը կառուցեց կարծր փայտից... Այն ներսից ու դրսից պատեց ու-

կով...) [2 Ելք 37. 1-2], որ հնարել էր արծաթն ու ոսկին ագուցելու և կպցնելու արհեստը և սովորեցրել էր մարդկանց: [3] Ոսկերիչ-արծաթագործների էսնաֆները իրենց հովանավոր պատրոն-փիրին հիշում էին հիմնականում Մբ Ծննդյան կամ հատկապես Մբ Զատկի օրը, երբ համայնական կամ ախարի մատաղին մասնակցելուց բացի, իրենց էսնաֆի անունից մի քանի ոչխար կամ եզ էին մորթում, պատրաստում արդար յուղով բրնձով շիլա-փլավ և բաժանում ջրավորներին, հիվանդներին, անկելանոցներին և կալանատներում բանտարկվածներին: Այդ օրը էսնաֆականները մեծ տոնախմբություն էին կազմակերպում՝ ի հիշատակ իրենց հովանավոր սրբի: Հարկ է նշել, որ ալեքսանդրի ոսկերիչ-արծաթագործների մեծ մասը ջերմեռանդ ու նվիրյալ հավատացյալ էր, և դրավառ ապացույցը նրանց շարքերում դեպի Մուրբ քաղաք՝ Երուսաղեմ ուխտ գնացածների մեծ թվի առկայությունն է: «Ուխտ գնացողներին անվանում էին մահտեսի, այսինքն՝ մահը տեսած ու դրանց մատով էին ցույց տալիս, -գրում էր «Մշակ»ին թղթակցող Ա.Նալյանցը և շարունակում, -վերադառնալուց հետո դորանք իրանց ամեն մի վարքով ու խոհեմությամբ բարի օրինակ և խրատատու հայր էին դառնում ժողովրդին» [4]: Թիֆլիսի Հարգանշային գրասենյակի փաստաթղթերում այդ արհեստավորների անվան կողքին հիշատակվում էր Մուղղուսի (նույնն է ինչ Մահտեսի) պատվանունը, ի մասնավորի՝ Գալստյան Մուղղուսի Ստեփան, Գրիգորյան Մուղղուսի Ստեփան, Դանիելյան Մուղղուսի, Հարությունյան Մուղղուսի Սաֆար, Հովսեփյան /Օսիպյան/ Մուղղուսի Գրիգոր, Մկրտչյան Մուղղուսի Դանիել, Մկոյան Մուղղուսի Դանիել, Նիկողոսյան Մուղղուսի Եղիկ, Սարգսյան Մուղղուսի Պապիկ, Սարգսյան Մուղղուսի Գևորգ, Ստեփանյան Մուղղուսի Գրիգոր, Սուքիասյան Հաջի Մուղղուսի Մկրտիչ և այլք: Ալեքսանդրի ոսկերիչ-արծաթագործների էսնաֆության վերջին գլխավոր վարպետը Մարտիրոս Տարախյանն էր:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ամփոփելով կարող ենք փաստել, որ Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը, սնվելով Կարին-Կարս դպրոցի ավանդույթներից, ժամանակի ընթացքում ձեռք բերեց սեփական դիմագիծ՝ դառնալով հայկական ոսկերչական արվեստի ուրույն դրսևորումներից մեկը:

**1844-1913 թթ. Թիֆլիսի Հարգանշային գրասենյակում գրանցված
ալեքսանդրապոլցի ոսկերիչ-արծաթագործների անվանացուցակ***

ԱԱՀ	գրանցման տարեթիվը
Ադելիսանյան Աբրահամ /Ապրո/	1844
Աղաբաբյան Ստեփան	1879
Աղաբաբյան Սուքիաս	1847-1849
Աղաբաբյան Ստեփան	1884
Աղաջանյան Հաբեթնակ, մասնակցել է Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսին	1862
Աղաջանյան Հարություն	1877

* Ցուցակը կազմելիս օգտվել ենք Է. Աստվածատրյանի նյութերից: Որոշ վարպետների ազգանուններ ռուսական տառադարձության և գրանցողների անգիտության պատճառով աղավաղվել են, ուստի փորձել ենք հնարավորինս շտկել:

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIX դ.–XX դ. սկզբին (համառոտ ուրվագիծ)

Ամիրջանյան Պողոս	1884
Ամիրջանյանց Համազասպ Պողոսի, 1900թ. մասնակցել է Փարիզի, իսկ 1901թ.՝ Կովկասի տնայնագործական ցուցահանդեսներին	1899-1901
Առաքելյան Հարություն	1867
Ասլիյան Աղաջան	1856
Ավազյան Եղիա	1845-1848
Ավետիսյան Ստեփան	1887
Ավետիսյանց Պետրոս	1913
Ատոմյան Հովան Վարոսի	1892
Արաբաջյան Տիգրան Ավետիսի	1913
Արտեմյան Նազարեթ	1856
Արտեմյան Սաֆար	1856
Բաբայան Կարապետ	1846-1856
Բաբայան Ղազար	1886
Բասենցյան Հարություն	1879-1886
Բասենցյան Դավիթ Հարությունի	1892
Բասենցյան Հովհաննես	1884-1887
Բարունակյան Գևորգ	1861-1865
Բեզլարյան Մկրտիչ	1848-1849
Գալստյան Ադամ	1887
Գալստյան Մուղղուսի Ստեփան	1846-1855
Գալստյան Սարգիս	1848-1849
Գասպարյան Սերոբ	1884
Գասպարյան Սարիբեկ	1887
Գևորգյան Եղիա-1887	1887
Գրիգորյան Գևորգ	1887
Գրիգորյան Տիգրան	1884-1886
Գրիգորյան Մուղղուսի Ստեփան	1848
Գուրնուտյան /Ղուրնուտյան/ Օնան	1887
Գարայանց /Ղարայանց/ Նասին	1879
Գարայանց/Ղարայանց/Ստեփան	1884-1895
Գարայանց /Ղարայանց/ Սմբատ	1886
Դանիելյան Ղազար	1853-1854
Դանիելյան Մկրտիչ /Ալեքսանդրապոլ է տեղափոխվել Նուխիից/	1860
Դանիելյան Մուղղուսի	1856
Եղիյան Պողոս	1846-1856
Եղիյան Սարգիս	1887
Էլբակյանց Մանուկ Հովհաննեսի	1913
Թոքմաջյանց Հովհաննես Մկրտիչի	1908-1913
Իզմիրյանց Սեդրակ	1909
Խաչատրյան Սարգիս	1845-1848

Գրիգոր Աղանյան

Ծատրոյանց Սեդրակ Մարտիրոսի	1913
Կարանյանց Հովհաննէս	1887
Կարապետյան Գևորգ	1858-1867
Կարապետյան Մարտիրոս	1858-1867
Կարապետյան Սկրտիչ	1867
Կարապետյան Նազարէթ /Ալեքսանդրապոլ է տեղափոխվել Ախալցխայից/	1849
Կոշտոյան Սարգիս	1844-1867
Կոշտոյան Գրիգոր	1865-1866
Կոշտոյան Պապիկ	1867
Կոշտոյան Գևորգ	1879-1884
Կոշտոյան Մարտիրոս	1884
Կյուրեղյան Անտոն	1845-1846
Կոստանյան Աղաբաբ	1887
Կոստանյան Գևորգ	1886
Հայրապետյան Արշակ	1886
Հակոբյան Հովհաննէս	1844
Հակոբյան Համբարձում /Համբար/	1844-1854
Հակոբյան Նազարէթ	1848-1869
Հակոբյան Դավիթ	1887
Հալաջյանց Ստեփան	1886-1887
Հալաջյանց Հայկ Ստեփանի	1909-1913
Հալաջյանց Գևորգ Ստեփանի	1909-1913
Համբարյան Հովհաննէս	1855-1866
Համբարյան Հովակիմ	1867
Համբարյան Գևորգ	1887
Համբարձումյան Օհան	1867-1869
Հարությունյան Հակոբ	1861-1869
Հարությունյան Առաքել	1879-1884
Հարությունյան Վարդան	1867-1879
Հարությունյան Մուղղուսի Սաֆար	1858-1867
Հարությունյան Հովհաննէս	1886
Հարությունյան Սահակ	1886
Հասանօղյան Հովակիմ	1855
Հովակիմյան Դավիթ	1869
Հովակիմյան Գևորգ	1884
Հովհաննիսյան Հովակիմ	1844-1873
Հովհաննիսյան Գևորգ	1844-1848
Հովհաննիսյան Կարապետ	1845
Հովհաննիսյան Միքայել/Մուկո/	1844
Հովհաննիսյան Սաֆար	1856
Հովսեփյան /Օսիսյան/ Նազարէթ	1844-1854
Հովսեփյան /Օսիսյան/ Մուղղուսի Գրիգոր	1856-1861

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը XIX դ.–XX դ. սկզբին (համառոտ ուրվագիծ)

Ղամբարյան Գևորգ	1879
Ղարիբյան Արշակ	1887
Մադինյան Դավիթ	1884
Մակարյան Ստեփան	1887
Մանուկյան Հարություն	1887-1892
Մանուկյան Սիմոն	1887
Մանուկյան Համազասպ	1908-1913
Մանուկյան Հմայակ	1908-1913
Մարեմյանց Գրիգոր	1879
Մարտիրոսյան Հովհաննես	1884-1909
Մեսրոպյան Գրիգոր	1844
Միքայելյան Դանիել	1852
Միքայելյան Մկրտիչ	1856-1869
Միկեայան Հարություն	1886
Մկրտչյան Հակոբ	1886
Մկրտչյան-Զարգարյան Հարություն	1884-1892
Մկրտչյան Գրիգոր	1884
Մկրտչյան Մարտիրոս	1884
Մկրտչյան Մուղղուսի Դանիել	1845-1857
Մկրտչյան Մուղղուսի Դանիել	1845-1857
Մկրտչյան-Զարգարյան Հովսեփ	1884-1892
Մկրտչյան Ստեփան	1879-1884
Մկրտչյան Թովմաս Հովհաննեսի	1884-1895
Մինասյան Եղիկ	1887
Մկոյան Մուղղուսի Դանիել	1849-1869
Մնացականյան Թովմաս Հովհաննեսի	1892
Մոսեսյան /Մովսեսյան/ Մահակ Աբրահամի	1892
Յակիմյանց /Ակիմյանց/ Հովհաննես	1886
Նազարեթյան Գալուստ	1855
Նալգրանյանց Գրիգոր Հովհաննեսի	1913
Նալգրանյանց Հովհաննես Կարապետի	1913
Նալյանց Հակոբ	1855-1867
Նալյանց Հարություն	1867
Նամաջանյան Հակոբ	1844-1857
Նահապետյան Մարտիրոս /Ալեք-Պոլ է տեղափոխվել Ախալցխայից, 1870թ. մասնակցել է Ս.Պետերբուրգի ցուցահանդեսին/	1889
Ներսեսյանց Թադևոս	1887
Ներսեսյանց Պարույր Հովհաննեսի	1913
Նիկողոսյան Մուղղուսի Եղիկ	1862-1884
Շահրիմանյան /Շաքրիմանյան/ Հովհաննես Փիլիպոսի	1909-1913
Չիլինգարյան Մկրտիչ	1844
Պապանյանց Կարապետ	1846-1856

Գրիգոր Ազանյան

Պապանյանց Արշակ Աթիկի /աշխատել է նաև Սուխումում/	1884
Պապանյանց Ստեփան	1884-1886
Պարունակյանց Գևորգ	1879-1887
Պարունակյանց Ալեքսանդր Գևորգի	1909-1913
Պարունակյանց Հովհաննես	1879-1887
Պարունակյանց Բագրատ Հովհաննեսի	1913
Պարունբեկյան Գևորգ /աշխատել է նաև Թիֆլիսում/	1865-1866,
Պետրոսյան Արշակ Պետրոսի	1884-1913
Պողոսյան Պողոս	1844-1845
Պողոսյան Մանուկ	1879
Ջալալյան Մկրտիչ	1858-1867
Ռափայելյան Աղաջան	1844-1866
Ռափայելյան Միքայել	1844-1850
Սահակյան Մկրտիչ	1845-1848
Սահակյան Գրիգոր	1887
Սարգսյան Պարունակ	1844
Սարգսյան Գրիգոր	1844-1869
Սարգսյան Մաթևոս	1855
Սարգսյան Մկրտիչ /Մկրտում/	1845-1867
Սարգսյան Մուղղուսի Պապիկ	1858-1859
Սարգսյան Մուղղուսի Գևորգ	1867
Սիմոնյան Գրիգոր	1845-1887
Սողոմոնյան Համազասպ	1884
Ստեփանյան Մուղղուսի Գրիգոր	1846
Սուջանց Մկրտիչ /Կարսում ևս ոսկերչական խանութ է ունեցել/	1909
Սուքիասյան Հաջի Մուղղուսի Մկրտիչ	1857
Սուքիասյան Մաթևոս	1850-1867
Սուքիասյան Պետրոս	1879
Սուքիասյան Պողոս	1858-1886
Սուքիասյան Սիմոն	1852-1854
Սուքիասյան Ստեփան /աշխատել է նաև Շամախում/	1863-1869
Սուքիասյան Թովմաս	1867
Վարոսյան Հովակիմ	1886-1887
Վարոսյան Ստեփան	1887
Տարախչյան Մկրտիչ	1879
Տարախչյան Մարտիրոս Մկրտիչի	1913-1915
Տիգրանյան Արամ Տիգրանի	1913
Տիրոյանց Հայկ Հակոբի	1892
Փիլոսյան Աղաբեկ	1887
Քարալանյան /Խարալանյան/ Պրոստրոմ	1879
Քարալանյան /Խարալանյան/ Թովմաս	1884
Քիդեկցյան /Կիդեկցյան/ Գրիգոր	1887
Քիդեկցյան /Կիդեկցյան/ Հակոբ Սարգսի	1903-1916

Ս կ զ ր ն ա ղ ր յ ու ը ն ք

1. Աղանյան Գ. Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Լենինական, 1986-1987:
2. Աստվածաշունչ մատենան հնոց և նորոց կտակարանաց
3. Եղարզարյանց Ս. Համբարական միություններ, «Մշակ», 1890, № 145:
4. Նալյանց Ա. Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1873, № 24:
5. Տնայնագործությունը Կովկասեան ցուցահանդեսում, «Մուրճ», 1901, № 10:
6. Նիկողոսյան Ն. Լենինական, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

7. Բազեյան Կ., Աղանյան Գ. Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ, Ծիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, հ.2, Երևան-Գյումրի, 2015, 7-117 էջեր:
8. Սեղբոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, / Հայ ազգագրություն և բանասիրություն, հ. 6, Եր., 1974, 59-252 էջեր:
9. Аствацатурян Э. История оружейного и серебряного производства на Кавказе в XIX- начале XX в. Дагестан и Закавказье, ч. I, М., изд. “Наука”, 1977.
10. Аствацатурян Э. История оружейного и серебряного производства на Кавказе в XIX- начале XX в. Дагестан и Закавказье, ч. II, М., изд. “Наука”, 1977.
11. Аствацатурян Э. Указатель клейм и имен кавказских мастеров оружейного и серебряного дела, М., изд. “Наука”, 1982.
12. Егизаров С. Исследования по истории учреждений в Закавказье, ч II, Городские цехи. Организация и внутреннее управление закавказских амкарств, Казань 1891.

R e f e r e n c e s

1. Aghanyan G. Ethnografic field material [Dashtayin azgagrakan nyut'er].Leninakan, 1986-1987. (in Armenian)
2. Bible (in Armenian)
3. Egiazaryan S. Trade Unions, "Mshak", 1890, № 145. (in Armenian)
4. Nalyan A. Letter from Alexandropole, "Mshak", 1873, № 24. (in Armenian)
5. Handicrafts at the Csucasian Exhibition "Murch", 1901, № 10. (in Armenian)
6. Nikoghosyan N. Leninakan [Leninakan]. Archive of the Institute of Archeology and Ethnography of the NAS RA. (in Armenian)
7. Bazeyan K., Aghanyan G. Alexandropol: Ethnographic Sketshes (hystorio-ethnographic study) [Alek'sandrapol. Azgagrakan esk'izner (patmazgagrakan usumnasirutyun)], / Archaeological and Ethnogarphical studies in Shirak, 2, Yerevan-Gyumri, 2014, 110 p. (in Armenian)
8. Seghbosyan K. Artisanal traditions and their expresssians in the life of the people of Leninakan [Arhestavorakan avandyutnery yev drants artahayutyunnery Leninakantsineri kentsaghum] //Armenian ethnography and folklore, v. 6, Yerevan, publishing AN Arm.SSR, 1974, pp. 159-252. (in Armenian)
9. Astvatsaturyan E. History of arms and silver production in the Caucasus in the 19 th -early 20 th centuries. Dagestan and Transcaucasia, [Istoriya oruzheynogo i serebryannogo proizvodstva na Kavkaze v XIX- nachale XX v. Dagestan i Zakavkaz'ye] part I, Moskow, ed. «Sciance», 1977. (in Russian)
10. Astvatsaturyan E. History of arms and silver production in the Caucasus in the 19 th -early 20 th centuries. Dagestan and Transcaucasia, [Istoriya oruzheynogo i serebryannogo proizvodstva na Kavkaze v XIX- nachale XX v. Dagestan i Zakavkaz'ye] part II, Moskow, ed. «Sciance», 1977. (in Russian)
11. Astvatsaturyan E. Index of marks and names of Caucasian gunsmiths and woodworkers [Ukazatel' kleym i imen kavkazskikh masterov oruzheynogo i derebryannogo dela] Moskow, ed. «Science», 1982. (in Russian)

12. **Egiazarov S.** Research on the history of institutions in Transcaucasia, part II, City workshops. Organization and internal management of Transcaucasian Trade Unions. [*Issledovaniya po istorii uchrezhdeniy v Zakavkaz'ye, ch II, Gorodskiy tsekhi. Organizatsiya i vnutrenneye upravleniye zakavkazskikh amkarstv*] Kazan 1891. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **06. 11. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **14. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Գրիգոր Թորգոմի ԱՂԱՆՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439

Grigor Thorgom AGHANYAN: Researcher at Institute of
Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail: aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439

Григор Торгомович АГАНЯН: Научный сотрудник
Института археологии и этнографии НАН, Ереван, РА
эл. адрес: aghanyan@mail.ru // orcid.org/0009-0006-3636-7439

Ա Ջ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ETHNOGRAPHY
ЭТНОГРАФИЯ

ՀՏԴ՝ 391

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ՄԵՆԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԵՋ.
ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆՑՈՒՄՆԵՐ

Սվետլանա Հ. Պողոսյան

Հայաստանի ազգագրության թանգարան,
ԳՄԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածը նվիրված է հայ ավանդական հասարակությունում մշակույթը կրողի արտաքին կերպարի, հագուստ-կապուստի մեջ թույլատրելիի և անթույլատրելիի սահմանների, իդեալական և իրական նորմերի, առօրյա և լիմինալ /սահմանային/ իրավիճակների ազգաբանական դիտարկմանը: Դիտարկված են նաև ժամանակակից հասարակության տարբեր շերտերի հագուստում նկատվող փոփոխություններն ու միտումները: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը շարադրելիս օգտագործվել են դիտարկվող թեմայի վերաբերյալ առկա գրավոր և դաշտային ազգագրական նյութեր: Ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառվել են պատմահամեմատական և վերլուծության, որակական հետազոտության (ազգագրական դիտարկում, հարցազրույց, ֆոկլոր խմբային հարցում, իրապատում) մեթոդները: Վերլուծություն. Կանանց հագուստը դիտարկելիս նկատելի է, որ կինը, նրա վարքը գտնվել են հանրային հսկողության ներքո, և վերջինս թույլ չի տվել որևէ շեղում ընդհանուր կանոնից և թաքուի շրջանցման որևէ փորձ: Ավանդության հասարակությունում տարազորոշակիորեն կանոնակարգված և սահմանված բնույթ է ունեցել: Կին թե աղջիկ, հնագանդելով հասարակական կարծիքի պահանջներին, քննադատվելուց և ծաղրվելուց խուսափելու համար արել են այն, ինչ «պահանջում էր աղաթը», և դա նպաստել է տարազոր ավանդական կառուցվածքի և ձևերի կայունացմանը: Ավանդական հասարակությունում սակայն եղել են նաև ընդունված նորմերի շրջանցման եզակի դեպքեր: Արդյունքներ. Ուսումնասիրությունից պարզվում է, որ հագուստի փոխանակումը կնոջ և տղամարդու տեղի, դիրքի և սկզբունքների փոխանակություն է: Միայն լիմինալ իրավիճակներում համայնքը կթույլատրեր շեղում

ընդհանուր և կանոնակարգված դրվածքից, տվյալ դեպքում՝ այդ սեռին հատուկ տարազի կենցաղավարվող համալիրից:

Բանալի բառեր՝ կարելի է- չի կարելի, կին-տղամարդ, հագուստ, կերպարանափոխում, թաքուններ, հանրույթ, շեղում, լիմինալ իրավիճակ, ավանդական հասարակություն:

Ինչպես հղել՝ Պողոսյան Ս. *Մեռային փոխակերպումներ հագուստի մեջ. արգելքներ և շրջանցումներ* // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետզոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», շ. 2 (27): Գյումրի: 2024: 187-195 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

GENDER TRANSFORMATIONS IN CLOTHING: TABOOS AND CIRCUMVENTIONS

Svetlana H. Poghosyan

Armenian Ethnography Museum

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The article is dedicated to the ethnological observation of the external image of the person carrying the culture in traditional Armenian society, the limits of what is permissible and what is not permissible in clothing, ideal and real norms, everyday and liminal/borderline situations. The changes and trends observed in the clothes of different layers of modern society are also observed. **Methods and materials:** *The existing written and field ethnographic materials on the subject under consideration were used in the preparation of the article. The methods of historical comparative and analytical research (ethnographic observation, interview, focus group survey, interview) were used in the study.* **Analysis:** When considering women's clothing, it is noticeable that the woman and her behavior were under the control of society. It did not allow any deviations from the generally accepted rules and any attempt to circumvent the taboos. Both women and girls, obeying the requirements of public opinion, in order to avoid criticism and ridicule, did what "adat (custom) would require". This contributed to the stabilization of the traditional structure and forms of the national costume. However, there have been rare cases of deviation from generally accepted norms in traditional society. **Results:** The study reveals that the exchange of clothes is an exchange of place, position and principles between a woman and a man. Only in liminal situations would the society allow a deviation from the generally accepted and regulated way of life, in this case from the existing complex of national costume characteristic of a given gender.

Key words: *allowed-not allowed, woman-man, clothes, transformation, taboos, society, deviation, liminal situation, traditional society.*

Citation: Poghosyan S. *Gender Transformations in Clothing: Taboos and Circumventions.* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 2 (27). Gyumri. 187-195pp..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ГЕНДЕРНЫЕ ПРЕОБРАЖЕНИЯ В ОДЕЖДЕ: ТАБУ И ОБХОД

Светлана Г. Погосян

Этнографический музей Армении,
Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Статья посвящена этнологическому наблюдению внешнего образа человека-носителя культуры в традиционном армянском обществе, границ дозволенного и недозволенного в одежде, идеальных и реальных нормах, бытовых и пограничных ситуациях. Также наблюдаются изменения и тенденции, наблюдаемые в одежде разных слоев современного общества. **Методы и материалы:** При написании статьи были использованы существующие письменные и полевые этнографические материалы по рассматриваемой теме. В исследовании использовались историко-сравнительный и аналитический, качественные методы исследования (этнографическое наблюдение, интервью, фокус-группы). **Анализ:** При рассмотрении женской одежды заметно, что женщина и ее поведение находились под контролем общества. Оно не допускало никаких отклонений от общепринятых правил и попыток обойти табу. В традиционном обществе национальный костюм имел определенно регламентированный характер. Как женщины, так и девушки, подчиняясь требованиям общественного мнения, во избежание критики и насмешек, делали то, чего требовал «адат (обычай)». Это способствовало стабилизации традиционной структуры и форм национального костюма. Однако в традиционном обществе были единичные случаи отклонения от общепринятых норм. **Результаты:** В ходе исследования выявлено, что обмен одеждой – это обмен местом, позицией и принципами между женщиной и мужчиной. Только в лиминальных ситуациях общество допустило бы отклонение от общепринятого и регламентированного уклада, в данном случае от бытовавшего комплекса национального костюма, характерного для данного пола.

Ключевые слова: *можно-нельзя, женщина-мужчина, одежда, преобразование, табу, общество, отклонение, лиминальная ситуация, традиционное общество.*

Как цитировать: Погосян С. *Гендерные преобразования в одежде: табу и обход.* // "Научные труды" ШЦАИ НАН РА, Т. 2 (27), Гюмри, 2024. 187-195 сс..

DOI: 10.52971/18294316-2024.27.2-187

ՆԱԽԱԲԱՆ. Կանանց հազուադեպ դիտարկելիս մի միտք է առկայծում, որ կինը, նրա վարքը ավանդույթային հասարակությունում գտնվել են հանրային հսկողության ներքո, և վերջինս թույլ չի տվել որևէ շեղում ընդհանուր կանոնից և թաբուի շրջանցման որևէ փորձ: Այստեղ մարդու վարքն ու բարքը, արտաքին կերպարը, արդուզարդը, տարազը որոշակիորեն կանոնակարգված և սահմանված բնույթ են ունեցել: Կինը չէր կարող գլխաբաց լինել, չպետք է երևային նրա թևերը և սրունքները, և պետք է երևային նրա վարտիքի փողբերի ծայրերը, ամուսնացած կինը անպատճառ պիտի հյուսեր մազերը և կրեր գոգնոց՝ որպես սեռատարիքային կարգավիճակի ցուցիչ և այլն: Նա պարտադիր կրում էր գլխաշոր, ինչպես տղամարդիկ՝ գոյակ կամ գլխարկ: Հազուադեպ որոշակի տարրեր ուղղակիորեն ասոցացվել են տվյալ սեռի հետ. գլխաշորը, գլխի հարդարանքի մաս կազմող ճակատակալն ու զարդերը, գոգնոցը, կրծկալ սրտանոցը, երկարափեշ ներքնագգեստն ու վերնագգեստը, կարմիր վարտիքն ու գոգնոցը հանդես են եկել

որպես կանանց հագուստի պարտադիր մասեր: Մորթե կամ թաղիքե գլխարկը, ասեղնագործ գդակը, թիկնաշորը, շավվարն ու ազանելիքն ամբողջացնող ոտքի փաթաթան-սոնապանը կազմել են տղամարդկանց տարազի համալիրը: Աղջիկների համար էլ, ըստ վայելչության ընդունված նորմերի, սահմանված էին որոշ կանոններ: Աղջիկները հատուկ ուշադրություն են դարձրել մազերին, առավել ճոխացրել թելափնջերով, ծամթելով: Կրել են արծաթյա թասակներ կամ ասեղնագործ ճակատակալներ, թեթև գլխակապեր և գլխաշորեր, հագել կրծքամասի տակի կտրվածքով զգեստներ:

Հագուստի միջնադարյան կանոնները

Հայոց միջնադարյան եկեղեցական կանոններով կնոջը խիստ արգելվել է տղամարդու հագուստ կրել: «Կին ոք որպես թե պահս ինչ հարմար է փոխել զգեստս կանանց և զարանց զգեստ ինչ ազանի կամ կերպարանս ինչ այնպիսի ստացանի նգովեալս լիցի» [6, էջ 195]: Ուշագրավ է՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքից ակնհայտ է դառնում, որ միջնադարյան հանրություն ևս նման արտառոց ու անսովոր դեպքեր եղել են, այլապես ավելորդ կլիներ «Վասն հանդերձի» հոդվածի հետևյալ կետը. «մի եղիցի հանդերձ առնացի զկանամբք կամ զգեցի այր զգեստ կանացի» [8, էջ 388]: Կամ՝ «...կարգելու կանանց և զինուրիլ, հնձան հարկանիլ, նստել շուկայի մեջ, դատաստան տեսնիլ...» [7, էջ 137]: Արգելելու փաստն արդեն վկայում է տվյալ հասարակության մեջ տարբեր ժամանակներում նման դեպքերի, պատումների, թեկուզ սակավաթիվ, առկայության մասին:

«Մասնա ծոեր» ժողովրդական էպոսում կերպավորման արտահայտչականության խնդիրներ լուծելու համար կարևորվել է հերոսների արտաքին տեսքի պատկերումը: Այսպես՝ Խանդութ խաթունը ռազմիկ կին է, նա էլ է զենքեր կրում՝ նիզակ, գուրգ, գրահ և կովում տղամարդկանցից ոչ պակաս [4, էջ 175]: Էպոսի հետևյալ դրվագները ցույց են տալիս հագուստի փոխառման որոշ դեպքեր [3, էջ 432]:

Ճուղ երբորդ՝ «Մասունցի Դավիթ»

Էն օր իրիկուն Դավիթ չէկավ Խանդութի մոտ:
Խանդութ գիտցավ, որ Դավիթ սպաներ են,
Կսկծուց իր սիրտ վառվավ:
Լուսուն էլավ, *մարդանակ շորեր հագավ,*
Նիզակ առավ, ձին հեծավ, ասաց.
-Էրթամ Դավթի մարմին ջոկեմ, բերեմ, թաղեմ: /էջ 373/
Էլնենք մեյդան, կովե՛նք:
Էն էլ ասաց.-Մեկ ժամ ժամանակ տու,
Զիմ շորեր հագնեմ, զենքեր կապեմ, գամ: /էջ 385/
(*Զմշկիկ Սուլթանի Դավթի հետ խոսակցությունից է հատվածը*)

Ճուղ երկրորդ՝ «Մեծ Մհեր»

Դեղձուն Ճուղ-Ծամ հեծավ Քուռկիկ Ջալալուն,
Գնաց սարեր ֆրոռ,
Չունքի շատո՛ւնց էր, որ դուրս չէր էլե տնեն:
Մարդ տի էն գախ թամաշ աներ զինք ու իր ձին:
Սաղափե Թամք դրե ձիու վերան,

Պողպատե Սանձ դրե ձիու բերան,
Հագե էրկաթե գրահ, պողպատե սոլ,
Բռնե ի ձեռ Սանասարի թոփուզ,
Կախլան էլ կապեր էր քամակ: /Էջ 167/

Ճյուղ չորրորդ՝ «Փոքր Միեր»

Գոհար տեսավ, սիրտ ցավեց, ասաց.
«Չըլնի՛ արև գարնի Միերին»:
Էլավ, հեծավ խարտեշ ձի մի,
Հագավ կարմիր շորեր,
Ձենք կապեց վեր իրեն,
Էկավ դեմ ի Միեր: /Էջ 403/
Լուս որ բացվավ, Գոհար հագավ սև շոր,
Ձենքեր կապեց վեր իրեն
Էլավ եկավ դեհ Միեր: /Էջ 404/

Չնայած եկեղեցական կանոնի հարուցած արգելքին՝ հայոց սովորութեան կիրառված թույլ էր տալիս խախտել այն կյանքի ծայրահեղ պայմաններում, հանուն հասարակության բարօրության, ինչպես նաև երաշտի դեպքում, երբ կանայք, անձրև առաջացնելու ակնկալիքով, տղամարդու շորեր հագած և գլխարկ ծածկած լծվում էին արորին՝ չորացած գետի հունը հակառակ ուղղությամբ վարելու:

Հայկական մշակույթում կինը կերպարանափոխվել է՝ հագնելով տղամարդու շորեր ծիսական արարողությունների ժամանակ և համայնքի կյանքին սպառնացող իրավիճակում: Կերպարանափոխում կարող էր տեղի ունենալ նաև թատերայնացված գործողությունների ժամանակ:

Ուշագրավ է Ա. Ահարոնյանի հիշողությունն այն մասին, որ ծանր ծնունդի ժամանակ տատմերը մոր գլխին տղամարդու գոլակ է դրել և երկաթե շիշը ձեռքը տալով ստիպել է պտույտներ գործել թոնրի շուրջը: Նպատակը կնոջը տղամարդ ներկայացնելով՝ չարի ուշադրությունը շեղելն ու չարին մոլորեցնելն էր [1, էջեր 11-12]:

Կին թե աղջիկ, հնագանդելով հասարակական կարծիքի պահանջներին, քննադատվելուց և ծաղրվելուց խուսափելու համար ամոթից անում էին այն, ինչ «պահանջում էր աղաթը», որն ուղղակիորեն նպաստում էր տարազի ավանդական կառուցվածքի և ձևերի կայունացմանը: Այս ամենով հանդերձ՝ ավանդական պահպանողական հասարակությունում եղել են ընդունված նորմերի շրջանցման եզակի դեպքեր, որոնք հենց ցույց են տալիս ընդունված նորմերի նշանակությունը: Այս առումով ուշագրավ է Ս. Ջելինսկու այն հաղորդումը, թե 1890-ական թթ. Շիրակում հանդիպել է մի քանի կանանց՝ տղամարդու հագուստով [13, էջ 5]: Առանձնակի հիշատակել է մի երիտասարդ աղջկա, ներկայիս Անիի շրջանի Բագրավան գյուղից, ով շրջել է տղամարդու առօրյա հագուստով, օգնել հորը երկրագործական աշխատանքների ժամանակ, ավելին՝ հաճախ սայլով աղի է գնացել: Ախալքալաքի Մուլդա գյուղում ևս նման նյութ է գրանցվել 1980-ական թվականներին, ըստ որի՝ տղա երեխա չունենալու պատճառով իրենց աղջիկներին տղայի շորեր են հագցրել և հուտաղ դարձրել [9, էջ 122]:

Թեև երևույթը Ս. Ջելենսկու կողմից չի գնահատվել, սակայն առկա ազգագրական գրավոր և բանավոր նյութերը թույլ են տալիս ենթադրել, որ նման «ազատագրված»՝ էմանսիպացված կանանց, աղջիկների դեպքերը բացառիկ են եղել: Միայն որոշակի դեպքերում էր համայնքը հանդուրժում նման երևույթները և փաստերի իրական առկայությունն ամենօրյա կյանքում: Սրանք եզակի դեպքեր են, որոնք ցույց են տալիս ընդունված նորմերի նշանակությունը: Հետևաբար միայն լիմինալ/ճգնաժամային իրավիճակներում համայնքը կթույլատրեր շեղում ընդհանուր և կանոնակարգված դրվածքից, տվյալ դեպքում՝ այդ սեռին հատուկ տարագի կենցաղավարվող համալիրից:

Կանայք տղամարդկային հագուստ կամ հագուստի ատրիբուտ օգտագործել են նաև համայնքի համար վտանգավոր, ճգնաժամային պայմաններում. օրինակ՝ պատերազմների ժամանակ, ռազմի դաշտում: Առօրյայում, երբ կինը ստիպված էր որևէ կենդանի, հավ կամ աքաղաղ մորթել, նա ոտքերի արանքում շերեփ է պահել, փորձելով տղամարդու կերպարին մոտենալ, քանի որ սովորության իրավունքով նա մորթ անելու իրավունք չուներ: Դա բացատրվում էր նրանով, որ ինքը՝ որպես իգական սեռի ներկայացուցիչ, կյանքի կրողն էր և իրավունք չուներ կյանքից զրկելու այլ էակի:

Ըստ Վ. Իվանովի՝ «հագուստի փոխանակումը կնոջ և տղամարդու տեղի, դիրքի և սկզբունքների փոխանակությունն է» [12, cc. 108-110]: Որոշ էթնոսների մշակույթում այրական զգեստ հագնելու դեպքեր հանդիպել են և թույլատրվել, «երբ ցեղին վտանգ է սպառնացել» [12, c.110], այսինքն՝ միմիայն ծայրահեղ պայմաններում, լիմինալ իրավիճակներում:

Մեր կողմից քննվող դեպքը և տղամարդու շորեր հագնելու երևույթը թերևս կարելի է բացատրել նրանով, որ տվյալ աղջկա հայրն արու զավակ չի ունեցել, ուստի և հայրիշխանական, այրական կողմնորոշմամբ հասարակությունում համայնքը չի քննադատել և վերապահությամբ է նայել աղջկա՝ տղամարդկային կերպարով հանդես գալու փաստին: Գուցե նաև դա պայմանավորված է եղել աղջկա՝ ենթագիտակցական տղա լինելու բնագոյային մղմամբ և տղայական հակվածությամբ, որոնց անվանել և անվանում են օտար տերմինով՝ «ղըզողլան-աղջիկ-տղա»: Միայն որոշակի իրավիճակներում և դեպքերում ավանդապահ համայնքը կթույլատրեր շեղում ընդհանուր կանոնակարգված դրվածքից:

Հայկական մշակույթում կինը կերպարանափոխվել է, հագնելով տղամարդու շորեր, միմիայն ծիսական արարողությունների կամ ողջ համայնքի կյանքին սպառնացող իրավիճակում: Օրինակ՝ երաշտի ժամանակ անձրևաբեր նպատակով գետի չորացած հունը արորներով հակառակ ուղղությամբ տղամարդու շորերով և գլխարկ հագած վարելիս: Կերպարանափոխում կարող էր տեղի ունենալ նաև թատերայնացված գործողությունների ժամանակ կամ ծպտման և քողարկվելու նպատակով [2, էջ 262]: Երաշտի ժամանակ մի խումբ կանանց լծվելը արորին և չորացած գետի հունը վարելը, այդ նպատակով կին մաճկալին տղամարդու շորեր հագցնելը, ծիսական վարի մեջ մաճկալի արական հագուստը խորհրդանշում էին վարուցանքի մասնակիցների դերերի փոխակերպումները և անցումների ընթացքը [2, էջեր 467-469]: Ըստ Վ. Բոլոյանի՝ այդ գործընթացը միաժամանակ մայրիշխանությունից հայրիշխանության անցնելու նշանն էր:

Մայր մաճկալը իր հին իրավունքներով ու հմայական գործողություններով փրկում էր համայնքը այն վտանգից, որ սպառնում էին բնության ուժերը և ժողովրդական պատկերացումներում նա այն ուժն էր, որը՝ որպես կին-մայր, ընդունակ էր մեղմացնելու անձրևաբեր աստվածության ցասումը: Երաշտի ժամանակ երգել են.

Եղիբ մեզի մայրացու,
Մեր արտերը թացացու,
Հաց տուր, մեզի կշտացու,
Ստեղծածիդ մի՛ լացու:

Մի կարևոր հանգամանք ևս. ծեր կամ ինչպես ժողովրդի մեջ էին ասում «պառավ» կանանց դերը մեծ է եղել ծեսերի, արարողությունների ժամանակ, որպես Մեծ մոր կերպարի հեռավոր արտահայտություն: Ի դեպ՝ ևս մի դիտարկում. ավանդական հասարակությունում 50 և ավելի տարեկան կանանց տարեց, նույնիսկ ծեր են համարել, հիմա տարիքային խմբերի սահմանները բավականին փոխվել են:

Բարեկենդանի օրերին, բացի իսկական հարսանիքներից, աղջիկներն ու տղաները առանձին ընդունել են որոշակի կերպարներ ու խաղացել, ըստ որում տղաների մոտ կանանց դերը խաղացել են տղաները, աղջիկների մոտ տղաների դերը կատարել են աղջիկները [5, էջ160]: Ուշագրավ է, որ երկսեռ լինելու դեպքում սեռը փոխած կնոջը կոչել են տրանսվեստիկ, իսկ երևույթը՝ էրոտիկ հանդերձավորում, ֆիզիոլոգիական փոփոխությունից բացի շեշտելով նաև հագուստի փոփոխումը [10]:

Ներկայումս, գլոբալիզացիոն, համահարթեցման այս հորձանուտում, նորաձևության նոր միտումներով և թրենդներով պայմանավորված, փոխվել են հագուստը կամ հագուստի տարրերը կանացի կամ տղամարդկային համարելու սահմանները և մոտեցումները: Կանանց, երիտասարդ աղջիկների առավել համարձակ, իրենց նորաձև համարող ներկայացուցիչները դեռևս 1950-1960-ական թվականներից սկսել են կրել տղամարդկային համարվող կոստյում շալվար: Ի դեպ Եվրոպայում առաջին կինը, ով խախտելով թաբուն, հագել է շալվար և ծխախոտ ծխել, հայտնի գրող Ժորժ Սանդն էր, ում անվանում էին «շալվարով տիկին»: Սանդի հեղինակությունը սասանվել է այն բանից հետո, երբ նա սկսել է հասարակության մեջ հայտնվել տղամարդկանց համար նախատեսված հագուստով: Նա գտնում էր, որ այդ հագուստն ավելի ամրակազմ տեսք է հաղորդում կրողին և ավելի էժան է, քան այն հագուստը, որ կրում են ազնվականուհիները: Ադմկահարույց էր նրա ծխախոտ ծխելու հանգամանքը: Նման հագուկապը և պահվածքը անընդունելի էր 19-րդ դարի եվրոպական էթիկետում, և նա հայտնի էր որպես «տաբատ կրող ու ծխամուրճը գրպանում պահող» կին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հայկական միջավայրում տղամարդկային համարվող կոստյում շալվար հագնելու միտումը առավել ինտենսիվ դարձավ ուշխորհրդային և անկախացման տարիներին: Հիմա հագուստները ունիֆորմ և ունիսեքս են դարձել՝ ընդհանուր երկու սեռի համար: Ավելին՝ երբեմնի ներքնագգեստ շապիկ մայկաները դարձել են ընդհանուր և կիրառելի նաև դրսում՝ երկու սեռերի կողմից էլ:

Նորաձևությունը ավանդական տարազի հակոտնյան է՝ իր որոշակի գծերով ու թրենդներով: Նորաձև հագուստի ամենակարևոր հատկանիշը և միտումը հարափոխու-

թյունն է, ըստ որում նորաձև համարվող հագուստը տարբերվում է տարազից, որին առավելապես հատուկ էր պահպանողականությունը և կայունությունը: Թեև ժամանակի ընթացքում և թելադրանքով նոր տարրեր են հայտնվում նաև ավանդական հագուստի համալիրում՝ հատկապես նորաձևության ազդեցությամբ: Մյուս կարևոր տարբերող հատկանիշը՝ մեծ էր համայնքի թելադրանքը և ներգործությունը տարազի վրա, համայնքն էր թույլատրում՝ ինչ կարելի է և ինչ չի կարելի, իսկ նորաձևությունը կախված է դիզայներների և դերձակների ստեղծագործականությունից և մտահղացումներից: Մակայն երբեմն լինում են դեպքեր, երբ տարազը փոխվում է նորաձևության ազդեցությամբ, իսկ նորաձևությունը փոխվում է նրա ստեղծողների կամքով: Մյուս կողմից՝ մոդան ևս հաշվի է առնում հասարակության պահանջները: Կարող են լինել դեպքեր, երբ դերձակները, հագուստի ձևավորողները, հաշվի չառնելով տվյալ հանրային կուլեկտիվ հայացքները, պատկերացումները և նախընտրությունները, ձևավորում և առաջարկում են հագուստ, որն այդպես էլ քաղաքացիություն չի ստանում [11, ԸԸ.299-300]: Հագուստի որոշ տարրեր, ինչպես կրծկալն է, գուլպայի կապիչները, մազերի երկար կամ կարճ սանրվածքը, կանացի կամ տղամարդկային համարվող հագուստների առկայությամբ կամ բացակայությամբ, արտահայտում են նաև կրողների սեռային կողմնորոշումները:

Ներկայումս նկատելի է դառնում, նախկին կանացիության գեղագիտությանը հակառակ, ավելի սեքսուալ, ավելի բաց և թեթև հագուստ (առանց ներքնազգեստի, մարմնի երբեմնի հատուկ քողարկված մասերը չծածկող շորեր) կրելու միտումը:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Ահարոնյան Ա.** *Երկերի ժողովածու*, հ.10: Վենետիկ Ս. Ղազար: 1948: 366 էջ:
2. **Բրդյան Վ.** *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 510 էջ:
3. *Դավիթ Սասունցի, Հայկական ժողովրդական էպոս*, Երևան, «Արևիկ» հրատ., 1988, 432 էջ:
4. **Չաքարյան Ե.**, *Հարդարանքը Սասնա ծռերում*, // *Հայկական Սասնա ծռեր էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը*, Ծաղկաձոր, 2004, 175 էջ:
5. **Խաչատրյան Ժ.** *Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում*, Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: «Գիտություն»: 2014: 374 էջ:
6. *Կանոնագիրք հայոց* (աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի), հ. Ա, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1964: 195 էջ:
7. **Հացունի Վ.** «Հայուհին պատմության առջև», Վենետիկ – Ս Ղազար: 1936:
8. **Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք, Վաղարշապատ*, 1880, 442 էջ :
9. **Սարգսյան Ա.** Դաշտային ազգագրական նյութեր, *Չախիսը*: 1982: Տեսք 4: 122 էջ:
10. Der erotische Verkleidungs tribe /Dei Trans vestiten/ von Pr. Magnus Herschfeld und Max Telke, Berlin, - Verlag von Alfred Pulvermache, 1912, N 30, tafel LIV.
11. **Богатырев П.** *Вопросы теории народного искусства*, М., Искусство, 1971, 544 с..
12. **Иванов В.** *Очерки по истории семиотики в СССР*, М., 1976. 298 с.
13. **Зеленский Н.** *Экономический быт государственных крестьян в Шорагяло-Александропольском уезде Эриванской губернии-МЭБЗК*, Тифлис, 1893, 5 с.

Reference

1. **Aharonyan A.** Collection of works [*Erkeri Jhoghovacu*] no. 10, Venice St. Lazar, 1948, 366 p.. (in Armenian)
2. **Bdoyan V.** Agricultural culture in Armenia [*Erkragorc'akan mshakowyt'y' Hayastanum*], Yerevan, USSR State Press, 1972, 510 p. (in Armenian)
3. Davit Sasuntsi. Armenian folk epic [*Haykakan jhoghovrdakan e'pos*], Yerevan, "Arevik" publishing house, 1988, 432 pages (in Armenian)
4. **Zakaryan E.** Decoration in Sasna trees, . [*Hardaranqy' Sasna c'r'erum*]. Armenian Sasna trees epic and world epicheritage, Tsaghkadzor, 2004, 175 p.. (in Armenian)
5. **Khachatryan Zh .** Ritual dance in the context of Armenian beliefs [*C'isakan pary' hayoc havataliqneri hamateqstum*]. Yerevan, RA National Academy of Sciences "Science", 2014, 374 p.. (in Armenian)
6. Rulebook of Armenians. *Kanonagirq hayoc* (with the diligence of V. Hakobyan), vol. A, Yerevan, USSR GA ed.1964, 195. p. (in Armenian)
7. **Hatsuni V.** "The Armenian woman in front of history". [*Hayuin patmut'ean ar'jew*] Venice - S. Gazar, 1936. 232 p. (in Armenian)
8. **Mkhitar Gosh.** Judgment Book. [*Datastanagirq*]. Vagharshapat, 1880, 442 p.. (in Armenian)
9. **Sargsyan A.** Field ethnographic materials. [*Dashtayin azgagrakan nyut'er*]. Javakhk, 1982, book 4, 122 p.. (in Armenian)
10. Der erotische Verkleidungs tribe /Dei Trans vestiten/ von Pr. Magnus Herschfeld und Max Telke, Berlin, - Verlag von Alfred Pulvermache, 1912, N 30, tafel LIV.
11. **Bogatyrev P.** Questions of the theory of folk art. [*Voprosy teorii narodnogo iskusstva*] .M., Art, 1971. 544 p..(in Russian)
12. **Ivanov V.** Essays on the history of semiotics in the USSR. [*Ocherki po istorii semiotiki v SSSR*]. Moscow.1976. 108-110 pp..(in Russian)
13. **Zelinsky S.** Economic life of state peasants in Shoragyalo-Aleksandrapolsky district of Erivan province. [*Jekonomicheskij byt gosudarstvennyh krest'jan v Shoragjalo-Aleksandrapol'skom uezde Jerivanskoj guber* МЕМКЗК, Tiflis, 1893. 5p..(in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **19. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **17. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Սվետլանա Հայկի ՊՈԳՈՍՅԱՆ պատմ.գիտ.թեկնածու, Հայոց ազգագրության թանգարանի գիտ. գծով փոխտնօրեն, ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ էլ. հասցե՝ sv_ethnomuseum@yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486

Svetlana Hayk POGHOSYAN, Ph.D in history, AEM vice director, senior researcher of IAE NAS, Yerevan, RA e-mail: sv_ethnomuseum@ yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486

Светлана Гайковна ПОГОСЯН: канд.ист.наук, зам. директора по научной части МЭА, старший научный сотрудник ИАЭ НАН, Ереван, РА, эл. почта:sv_ethnomuseum@yahoo.com // orcid.org.0009-0001-5774-0486

ՀՏԴ՝ 911.3:316

DOI: 10.52971/18294316-2024.27.2-196

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XX դ. ՎԵՐՉԻՆ XXI դ. ՄԿԶԲԻՆ

Արտաշես Գ. Բոյաջյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

*«Դժբախտը աղքատ մարդն է, որը բանտարկված չէ,
հիվանդ չէ, բայց անկարող է իրեն և իր բարեկամներին օգնել»:
Վիլյամ Մարտյան*

Ամփոփում

Նախաբան. Շիրակի մարզում աղքատությունը, պայմանավորված լինելով հիմնականում տնտեսական և սոցիալական գործոններով, նաև հասարակության մեջ տեղի ունեցող բարոյահոգեբանական, մշակութային և քաղաքական գործընթացների և դրանց փոխհարաբերությունների արդյունք է: Հոդվածի նպատակն է՝ ազգաբանական և վիճակագրական տեսանկյուններից վերլուծել Շիրակի մարզի բնակչության աղքատության արդի մակարդակը և միտումները՝ ներկայացնելով դրանց սոցիալ-ժողովրդագրական հետևանքները: Մեթոդներ և նյութեր. Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հետազոտվող թեմային նվիրված դաշտային ազգագրական նյութերը, քաղաքային և գյուղական համայնքների տնային տնտեսություններում էթնոսոցիոլոգիական հարցումները, ՀՀ ԱՎԿ-ի տվյալները, մարդահամարների արդյունքների ցուցանիշները, գիտական գրականությունը և աղքատությանը վերաբերող հրապարակված այլ փաստական նյութերը: Վերլուծություն. Խնդիրն է դրվում պարզել և վերլուծել՝ Շիրակի մարզի բնակչության աղքատության շարժառիթները և դրդապատճառները: Արդյունքների հիման վրա առաջարկվում են աղքատության հաղթահարման ուղղություններ: Շիրակի մարզը, լինելով հանրապետության ամենաաղքատ մարզերից մեկը, իրականում դեռևս չի հաղթահարել մեծ վտանգ սպառնացող բնակչության զանգվածային արտագաղթը՝ իրեն բնորոշ սոցիալ-տնտեսական, ազգա-

պահպանման և ժողովրդագրական հիմնախնդիրներով: Հատկանշական է, որ մարզի բնակչության աղքատությունը, ինելով գլխավոր հիմնախնդիրներից մեկը, խորությամբ ուսումնասիրված չէ, և, անշուշտ, խիստ հրատապ ու այժմեական է նրա ուսումնասիրությունը: Անվիճելի է, որ մարզի տնտեսության գլխավոր հիմնախնդիրների տիրույթում աղքատության խորացման ամբողջական և համակարգված բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումների փաթեթը կնպաստեն սոցիալական ոլորտի որոշ խնդիրների լուծմանը և, վերջապես, բնակչության կենսամակարդակի աճին:

Բանալի բառեր` *աղքատության մակարդակ, սոցիալական անհավասարություն, զբաղված աղքատ, գործազրկություն, սոցիալական կապիտալ, ծայրահեղ աղքատ, աղքատության խորություն, կենսաթոշակառու:*

Ինչպես հղել` Բոյաջյան Ա, *Շիրակի մարզի բնակչության աղքատության մակարդակը և միտումները XX դ. վերջին XXI դ. սկզբին* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» Գյումրի, 2024: Հ. 2 (27): 196-208 էջեր: DOI:10.52971/18294316-2024.27.2-196

THE LEVEL OF POVERTY AMONG THE POPULATION OF SHIRAK PROVINCE AND ITS CAUSES IN THE LATE 20TH CENTURY AND EARLY 21ST CENTURY

Artashes G. Boyajyan

Shirak Center of Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: Poverty in the Shirak region, primarily driven by demographic, economic, and social factors, is also a result of moral-psychological, cultural, and political processes in society and their interconnections. The aim of this article is to analyze the current level of poverty among the population of the Shirak region and its trends from socio-economic and statistical perspectives, presenting their socio-demographic consequences. **Methods and Materials:** The research utilized field ethnographic materials related to the topic, ethnosociological surveys of households in urban and rural communities, data from the National Statistical Committee of the Republic of Armenia, census results, community development programs, scientific literature, and other published factual materials concerning poverty. Historical, comparative, analytical, and statistical methods were employed during the study. **Analysis:** In this article, our task is to determine the level of poverty among the population of the Shirak region and its perception. **Results:** There is a significant threat of mass emigration of the population, which leads to additional socio-economic and demographic problems. Undoubtedly, the study of this problem is extremely relevant. It is indisputable that a comprehensive and systematic identification of the deepening poverty in the context of the main economic problems of the region (low income, food security, rising prices for food and other consumer goods, post-war conditions, etc.) and a package of measures aimed at addressing these issues will contribute to solving a number of social problems and, ultimately, to a noticeable improvement in the living standards of the population. **Relevance:** Shirak Province, being one of the poorest regions of the republic, has not yet overcome this problem, and there is a significant threat of mass emigration of the population, which poses additional socio-economic and

demographic challenges. Notably, the poverty of the region's population, being one of the main issues, has not been deeply studied.

Key words: *poverty level, social inequality, working poor, unemployment, social capital, extremely poor, depth of poverty, pensioner.*

Citation: Boyajyan A. *The level of poverty in the Shirak region and trends at the end of the 20th - beginning of the 21st century.* // "Scientific Works" of the SHCAS of NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 196-208 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-196

УРОВЕНЬ БЕДНОСТИ НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОЙ ОБЛАСТИ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКА

Арташес Г. Бояджян

Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Гюмри, РА

Аннотация

Введение. Бедность в Ширакском районе, обусловленная в основном демографическими, экономическими и социальными факторами, также является результатом морально-психологических, культурных и политических процессов в обществе и их взаимосвязей. **Цель статьи:** — проанализировать современный уровень бедности населения Ширакского района и его тенденции с социоэкономической и статистической точек зрения, представив их социально-демографические последствия. **Методы и материалы:** Для исследования в качестве теоретической и методологической основы использовались полевые этнографические материалы, посвященные исследуемой теме, этносоциологические опросы домохозяйств в городских и сельских общинах, данные Национального статистического комитета РА, показатели результатов переписей населения, программы развития общин, научная литература и другие опубликованные фактические материалы, касающиеся бедности. В ходе исследования были использованы исторические, сравнительные, аналитические и статистические методы. **Анализ:** В данной статье наша задача — выяснить уровень бедности населения Ширакского района и его восприятие. На основе полученных результатов работы мы предложим направления для преодоления бедности. Ширакская область, будучи одной из самых бедных областей республики, на самом деле все еще не преодолела эту проблему, и существует большая угроза массовой эмиграции населения, что вызывает дополнительные социально-экономические и демографические проблемы. Примечательно, что бедность населения области, являясь одной из главных проблем, практически не была глубоко изучена. Безусловно, крайне актуально исследование данной проблемы. Неоспоримо, что комплексное и систематическое выявление углубления бедности в контексте главных проблем экономики области (низкий доход, продовольственная безопасность, рост цен на продукты питания и другие потребительские товары, послевоенное состояние и т.д.) и пакет мероприятий, направленных на их решение, будут способствовать решению ряда социальных проблем и, наконец, заметному повышению уровня жизни населения.

Ключевые слова: *уровень бедности, социальное неравенство, работающие бедные, безработица, социальный капитал, крайняя бедность, глубина бедности, пенсионер.*

Как цитировать: Бояджян А. *Уровень бедности населения Ширакской области и тенденции в конце XX - начале XXI века* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 196-208 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-196

ՆԱԽԱԲԱՆ. Աղքատության բացարձակ ցուցանիշները, ինչպես նաև բնակչության առավելագույն խոցելի և աղքատության ռիսկի խմբերը մեր հանրապետությունում առաջին անգամ սահմանվեցին 1996թ. տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների հիման վրա: ՀՀ բնակչության աղքատության խնդիրներին տնտեսագիտական տեսանկյունից անդրադարձել են Ա.Քթոյանը, Կ.Հարությունյանը, Ա.Խառատյանը, Ա.Գալստյանը և այլք¹: Ազգաբնակչության տեսանկյունից՝ Ա.Թադևոսյանը, Մ.Գաբրիելյանը, Գ. Շագոյանը, իսկ էթնոսոցիոլոգիական՝ Մ. Գալստյանը, Ս. Մանուկյանը և այլք²:

Շիրակի մարզը ՀՀ-ում աչքի է ընկնում իր սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով և բնեռացված հասարակությամբ, ինչը նպաստում է աղքատության բարձր մակարդակ ունենալուն: Ըստ մեր հետազոտությունների արդյունքների՝ Շիրակում՝ աղքատության առավելագույն ռիսկային խմբերն են բազմազավակ ընտանիքները, գործազուրկները, միայնակ թոշակառուները, անդամալուծները և այլք:

Շիրակի մարզի բնակչության աղքատության մակարդակը և զարգացման միտումները XX դ. վերջին XXI դ. սկզբին

Աղքատությունը նոր երևույթ չէ համաշխարհային և մեր հանրապետության հասարակական կյանքում: Ներկայիս գիտատեխնիկական դարաշրջանում աշխարհի բնակչության աղքատացման մակարդակը ոչ թե նվազում, այլ ընդհակառակը՝ ավելանում է: Համաշխարհային բանկի բազմաթիվ փորձագետներ (Ք. Լակներ և ուրիշներ) նշում են, որ 2017թ. աշխարհի բնակչության 9.2%-ը կամ 689 միլիոն մարդ աղքատ է[10]: Նույն ցուցանիշը նշված տարում ՀՀ-ում կազմել է 25,7%, իսկ Շիրակի մարզում՝ 44,3%[11]:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Շիրակի մարզի բնակչության աղքատացման *առաջին առանձնահատկությունը* 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժն էր: Ավերվեցին 277 դպրոց, 245 մանկապարտեզ, առողջապահության մոտ 250 օբյեկտ, 324 ակումբ ու մշակույթի տուն[7, էջ 5]: Գործունեությունը դադարեցրեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն, մոտ 82 հազ. մարդ կորցրեց աշխատատեղերը: Երկրաշարժի պատճառած ընդհանուր վնասը գնահատվում էր 14 մլրդ դոլար (1989 թ. Գնեքով)՝ չհաշված փրկարարական և վերականգնողական աշխատանքների ծախսերը: Լեհինականում անօթևան մնաց 180 հազ. մարդ: Քանդման ենթակա դարձավ պետական

¹ **Քթոյան Ա.**, Աղքատության ոչ նյութական հարթությունը, (2020), **Հարությունյան Կ.**, Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածության առանձնահատկությունները <<-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», N 2, 2022, **Խառատյան Ա., Գալստյան Ա.**, Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», 2022, N3:

² **Թադևոսյան Ա.**, Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում (Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի դիտարկման հիման վրա), Եր. 2018: **Խառատյան Հ.**, Աղքատության միջավայրը Հայաստանում. Պատմություններ աղքատության մասին, գիրք 2: Եր., 2007: **Գաբրիելյան Մ.**, Աղքատության հաղթահարման հիմնախնդիրը գյուղական բնակավայրերում: Եր., 2001: **Շագոյան Գ.**, Օգնություն. Բարի կամեցողություն, թե՛ պարտականություն, Պատմություններ աղքատության մասին: Գիրք 1: Եր., 2001: **Գալստյան Մ.**, Սոցիալական անհավասարությունը, սոցիալական շարժունությունը և սոցիալական կոնֆլիկտը Հայաստանում: Եր.. 2000, **Մանուկյան Ս.**, Սոցիալական լարվածությունները Հայաստանում, «21-րդ դար», թիվ 2 (54), Եր. 2014.:

բնակֆոնդի 70 և մասնավոր տների 18%-ը, լիովին ավերվեց տասներկուհարկանի և ինըհարկանի շենքերի 90, հինգհարկանիների 10%-ը [7, էջ 5]: Այդպիսի իրավիճակը լուրջ նախադրյալ էր բնակչության աղքատացման համար: Արդյունքում, 1989-1990 թթ. ընթացքում աղետի գոտում իրականացվեց նախատեսված բնակելի շենքերի կառուցման միայն 14,8 և հանրակրթական դպրոցների 5,5 %-ը [15]: Դրա հետ մեկտեղ՝ Շիրակի տարբեր բնակավայրերից, հատկապես Գյումրուց հազարավոր որակյալ շինարարներ, գիտնականներ, արդյունաբերության ոլորտի աշխատողներ, չունենալով աշխատանք, մեկնեցին հիմնականում ՌԴ՝ արտագնա աշխատանքի: 1990 թ. Հայաստանի Հանրապետությունից Միության տարբեր տարածաշրջաններ արտագնա աշխատանքի են մեկնել շուրջ 10 հազար մարդ, այդ թվում՝ 4 հազարը աղետի գոտուց [16]:

Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների հաշվարկից պարզվում է, որ 1998-2022 թթ. մարզի բնակչության թիվը նվազել է 38,8%-ով, աշխատունակ տարիքի բնակչությանը՝ 38,3%-ով: Մարզից XX դ. վերջին և XXI դ. սկզբին մշտական արտագաղթողների սեռատարիքային համամասնությունը պահպանվել է, իսկ սեզոնային արտագնա աշխատանքի մեկնածուների ճնշող մեծամասնությունը 20-50 տարեկան տղամարդիկ են եղել [3, թ.7]: Սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների ճնշող մեծամասնությունը արտագաղթի հիմնական պատճառ նշել է չնչին եկամուտը և աշխատատեղերի բացակայությունը [3, թ.10]: Հիշատակենք, որ Շիրակի մարզում միջին ամսական աշխատավարձը պետական հատվածում ավելի բարձր է, քան ոչ պետականում [12]: Շիրակի մարզից 2000-2020 թթ. տարեկան միջինը 25-30 հազ. աշխատունակ տարիքի մարդ մեկնել է արտասահմանայան երկրներ, մասնավորապես ՌԴ՝ սեզոնային արտագնա աշխատանքի (ուրից տասը ամիս տևողությամբ) և ամսական միջինը մոտ 800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ են ուղարկել իրենց ընտանիքներին, այսինքն՝ տարեկան միջինը կազմել է 220-240 մլն դոլար [3, թ.10]: Այսինքն, արտասահմանայան երկրներից ուղարկված գումարի չափը մի քանի անգամ գերազանցում է պետական և ոչ պետական հատվածի կողմից աշխատողներին տրվող աշխատավարձի չափը [4, թ. 25]: Այժմ մայրաքաղաքում մեծածավալ շինարարական աշխատանքներով և ռուսական ռուբլու արժեզրկումով պայմանավորված՝ Շիրակի մարզում շեշտակի նվազել է սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Ներկայումս, մարզից միջինը 1500-2000 աշխատունակ տարիքի տղամարդ Երևանի բնակարաշինության ոլորտում են զբաղված և օրը միջինը վաստակում են 15 – 20 հազ. դրամ [5, թ.12]:

Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայացվող ժամանակահատվածում զբաղվածությունն ունեցող բնակչության թիվը նվազել է 33.8 հազարով կամ 31.8%-ով, իսկ գործազրկության մակարդակը գրեթե չի փոխվել: Սակայն զբաղվածների թվի աճ գրանցվել է 2018-2022 թթ.՝ մոտ 4,9%: Այդ աճը պայմանավորված է հիմնականում զբոսաշրջության ոլորտի աշխուժացումով: Գյումրիում վերջին հինգ տարիներին բացվել են մի քանի տասնյակ զբոսաշրջանային նշանակություն ունեցող հաստատություններ, մասնավորապես՝ հյուրանոցներ, հյուրատներ, և հասարակական սննդի օբյեկտներ, ինչը մեղմացրել է աղքատության սրությունը և խորությունը:

Շիրակի մարզի բնակչության թվի և զբաղվածության թվի շարժընթացը

	1998թ.	2008թ.	2018թ.	2022թ.
Բնակչության թիվը (հազ.մարդ)	360.8	281.0	235.4	230.4
Տնտեսապես ակտիվ բնակչություն (հազ. մարդ)	135.6	98.3	90.1	83.6
Զբաղվածների թիվը (հազ. մարդ)	106.7	86.0	69.5	72.9
Գործազրկության մակարդակը %-ով	20.6	12.6	22.9	19.0
	6509	65064	107 111	127 381
Աղքատության խորությունը %-ով ³	27.2	4.2	4.4	4.1
Աղքատության սրությունը %-ով ⁴	15.2	1.1	1.2	1.1

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ՄՎԿ վիճակագրական տվյալները:

Շիրակի մարզի բնակչության աղքատացման **երկրորդ առանձնահատկությունը** հասարակարգի փոփոխությունն էր (սոցիալիզմից անցումը կապիտալիզմի), ինչը մեր հանրապետությունում ընթացավ մեծ սխալներով ու բացթողումներով [8, էջ 121]: Եթե խորհրդային տարիներին, հատկապես 1980-ական թթ., մարզի բնակչության աղքատության մակարդակն աննշան էր, և աղքատությունը կենցաղում ամոթալի երևույթ էր համարվում, ապա 1990-ական թվականների համատարած աղքատության պայմաններում բնակչությունը ստիպված համակերպվում է փոփոխված իրադրությանը, ու երկար ժամանակ աղքատի կարգավիճակում մնալուց հետո վերանում են տնտեսական գործունեություն ծավալելու նրա հնարավորությունները, ձգտումներն ու խթանները, և աղքատությունը դառնում է իրողություն և ապրելակերպ [8, էջ 121]: Դեռևս Արիստոտելն էր ասել՝ եթե ձեր պետության ներսում ունեք փոքրաթիվ հարուստներ և մեծաթիվ աղքատներ, ապա դուք ունեք երկու պետություն՝ հարուստների և աղքատների [9, էջ 17]: Անցումը կապիտալիստական հասարակարգին ուղեկցվեց տնտեսության սրընթաց անկումով, զանգվածային գործազրկությունով, բնակչության ավանդների սառեցումով, եկամուտների և ազգային հարստության խիստ բևեռացված բաշխումով: Մյուսնք այն սոցիալ-տնտեսական օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներն էին, որոնք և ծնեցին բնակչության համատարած աղքատություն:

Շիրակի բնակչության աղքատացման **երրորդ առանձնահատկությունը** արցախյան առաջին պատերազմն էր: Երկրորդ կամ քառասունչորսօրյա պատերազմը նշանակալի ազդեցություն չունեցավ մարզում աղքատության մակարդակի բարձրացման վրա: Առաջին պատերազմը, սակայն, հսկայական վնաս հասցրեց առանց այն էլ երկրաշարժից խոցված, սխալ մասնավորեցման պատճառով խորը տնտեսական վիճակի մեջ հայտնված մարզին, նրա տնտեսությանը և բնակչության սոցիալական վիճակին:

ՀՀ-ում և աշխարհի մի շարք այլ երկրներում աղքատության գնահատման հիմքում տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություն-

³ **Աղքատության խորությունը** հաշվարկվում է աղքատ բնակչության հաշվով և ցույց է տալիս աղքատության պակասորդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից:

⁴ **Աղքատության սրությունը** արտացոլում է աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը և արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից

ներն են, որոնց միջոցով հավաքագրվում են տվյալներ եկամուտների, ծախսերի և այլ ցուցանիշների վերաբերյալ: Այն տնային տնտեսությունները, որոնց սպառման մակարդակը ցածր է «Աղքատության ընդհանուր գծից»⁵, համարվում են աղքատ, իսկ եթե սպառումը ցածր է սահմանված «Պարենային աղքատության գծից»⁶ համարվում են ծայրահեղ աղքատներ: Ուստի աղքատության գիծը նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունն է, իսկ աղքատության գիծը նվազագույն պարենային զամբյուղի արժեքն է:

Շիրակի բնակչության ծայրահեղ աղքատության խոցելի խմբերն են՝ կենսաթոշակառուները, գործազուրկները, նպաստառուները և բազմազավակ ընտանիքները: Նրանց դրամական եկամուտների աղբյուրներն են կենսաթոշակները, դրամական նպաստները, պետական և ոչ պետական հատվածից ստացած ցածր աշխատավարձը: Աղքատների խոցելի խմբեր են հանդիսանում նաև դպրոցներում և բարձրագույն ուսումնական ու պետական հաստատություններում ցածր վարձատրությամբ ուսուցիչները և դասախոսները, արտասահմանյան երկրներից, մասնավորապես՝ ՌԴ-ից տրանսֆերտներ ստացող բնակչության մի հատվածը: Մարզի բնակչության ոչ աղքատ խմբի մեջ են մտնում պետական հատվածում զբաղված բարձր վարձատրությամբ պաշտոնյանները, խոշոր գործարարները և արտասահմանյան երկրներից մեծ գումարներ ստացողները [6, թ. 15]: Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ չնայած 1998-2022 թթ. մարզի ոչ աղքատ բնակչության տեսակարար համաթիվը նվազել է, սակայն Շիրակը դեռևս մնում է մեր հանրապետության ամենաաղքատ մարզը և 2007 թ. պաշտոնական տվյալի համաձայն՝ 7,7%-ով բարձր է հանրապետական միջին և 12,1%՝ Երևանի ցուցանիշից: Կարծում ենք՝ աղքատության մակարդակի անկումը Շիրակի մարզում պայմանավորված է հիմնականում սոցիալ-ժողովրդագրական գործոններով: Եվ այսպես, Շիրակի մարզում աղքատության մակարդակը 2022 թ.-ին կազմել է 41.6% (հանրապետական միջինը՝ 26,4%) [13]:

Մարզում բնակչության եկամտի առավելագույն աճ գրանցվել է 1998-2008 թթ.՝ շուրջ տասը անգամ, 2008-2018 թթ. նույն ցուցանիշը կազմել է 64.5 % կամ տարեկան միջինը՝ 6.5%, իսկ 2018-2022 թթ.-ին՝ 18.9% և 4.6%: 1998-2008 թթ. մարզի բնակչության աղքատության մակարդակի աճին նպաստել է բնակչության ծերացումը, որտեղ մեկ թոշակառուին բաժին է ընկնել մեկ աշխատող, այն դեպքում, երբ միջինը պետք է լինի 5-7 աշխատող [1, էջ 76]:

ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում աղքատության սրությունը մեղմելու ձևերից է եղել աղքատության ընտանեկան նպաստների հատկացումը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 1998 թ. Շիրակում աղքատության ընտանեկան նպաստ ստացել է

⁵ Աղքատության ընդհանուր գիծը ներառում է աղքատության պարենային գիծը և ոչպարենային ապրանքների օրական սպառումը, քանի որ անձը պետք է կարողանա հոգալ ոչ միայն իր նվազագույն պարենային պահանջը, այլև կարևոր կամ նվազագույն ոչ պարենային ապրանքների պահանջը:

⁶ Պարենային աղքատության գիծը կիրառվում է շատ աղքատ կամ, ինչպես հաճախ անվանում են, ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց որոշելու համար: Դա այն գումարն է, որն անհրաժեշտ է նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար: Այսինքն՝ մարդիկ, որոնց սպառումը չի բավականացնում նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար, համարվում են ծայրահեղ աղքատներ:

30,2 հազ. ընտանիք, ինչը կազմել է մարզի տնային տնտեսությունների կամ ընտանիքների ընդհանուր թվի 42,3%-ը, նույն ցուցանիշը 2008 թ. համապատասխանաբար կազմել է 21,4 հազ. կամ 32,9%, 2018թ.՝ 13.8 հազ. կամ 21,1% և 2022թ.՝ 11,0 հազ. կամ 16,8 % (տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

Շիրակի մարզի աղքատության հիմնական ցուցանիշները և աղքատության գծի մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար փոփոխությունը

	1998 թ.	2008 թ.	2018 թ.	2022 թ.
Ոչ աղքատ (%)	32.5	69.4	55.7	58,2
Աղքատ (%)	67.5	30.6	44.3	41.8
Ծայրահղ աղքատ (%)	35.3	6.0	4.7	1.0
Աղքատության պարենային գիծ (դրամ)	7194	17232	24 827	42 708
Աղքատության ընդհանուր գիծ (դրամ)	11735	25188	42 621	63 060
Կենսաթոշակատուների թիվը (մարդ)	38455	49514	39 521	38 490
Կենսաթոշակի միջին չափը (դրամ)	3793	21370	39 044	42 275
Նպաստառու ընտանիքների թիվը	30205	21405	13 836	11 027
Տնային տնտեսությունների թիվը	71381	65 018	65 515	65 615
Գործազուրկների թիվը (մարդ)	29746	12400	20600	10500

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ և ՏՏԿԱՀ նյութերը:

Նպաստառու ընտանիքների թվի շեշտակի նվազումը առաջին հերթին պայմանավորված է պետության կողմից նպաստ ստացող ընտանիքների կարգավիճակի փոփոխությունով, երկրորդ՝ բնակչության դրամական եկամտի աճով և երրորդ՝ ընտանիքների թվի նվազումով: Նվազել է նաև գործազրկության մակարդակը: Մարզում գործազուրկների տեսակարար համաթիվը 1990-ական թվականներին կազմել է 22-24%: Շիրակի բնակչության (1991-1997թթ.) զանգվածային արտագաղթի պայմաններում թվում էր, թե գործազրկության մակարդակը պետք է նվազի, սակայն ավելացել է: Գործազուրկների թվի աճը հիմնականում բաժին է ընկել Գյումրի քաղաքին: Այդ տարիներին քաղաքում գործազուրկների թիվը ինը հազարից հասել է 24 հազարի [2, էջ 153]:

Բնակչության աղքատության կարևոր ցուցիչ են անհատական տնային տնտեսությունների կազմը, դրանցում բնակվող անդամների ու ընտանիքների թիվը և մեծությունը: Այսպես, աղյուսակ 3-ի թվային ցուցանիշների հաշվարկից երևում է, որ 2001-2022 թթ. հինգ և ավելի անձից բաղկացած տնային տնտեսությունների կամ ընտանիքների թիվը նվազել է 8,6 հազարով կամ 29,2%-ով: Նվազման ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2001-2011թթ.: Հիշատակենք, որ բազմազավակ տնային տնտեսությունների բնակչության տեսակարար համաթիվը նույնպես պակասել է. 2001թ.՝ 161 հազար մարդ, ինչը մարզի ամբողջ բնակչության թվի 57,0%-ն է, 2011-ին՝ 56,3%-ը և 2022-ին՝ 49,8%-ը:

Աղքատության հիմնախնդրի խորացման անչափ կարևոր գործոն է մարզի ժողովրդագրական պատկերը: Այս տիրույթում բավական է բարձրացնել մեկ հիմնարար խնդիր, այն է՝ Շիրակի մարզի բնակչության ժողովրդագրական խորը ծերացման փաստը: Այսպես, 2001 և 2022 թթ. մարդահամարների արդյունքների համեմատությամբ՝ մարզի բնակչության տարիքային կառուցվածքում

ավելացել է 60 և ավելի տարեկան բնակչության տեսակարար համաթիվը. 2001թ. այն կազմել է մշտական բնակչության ընդհանուր թվի 13,8%-ը, 2011թ.՝ համապատասխանաբար 14, 7%-ը և 2022թ.՝ 22,7%-ը:

Աղյուսակ 3

Անհատական տնային տնտեսություններն ըստ կազմի, դրանցում անդամների թվաքանակի և նույնտար ընտանիքների թվի

Տնային տնտեսութ.	2001			2011			2022			Տարբերությունը տնային տնտեսությունների 2022թ.-ին՝ 2001թ. համեմատ (տոկոսով)
	Տնային տնտեսություն	Դրանցում անդամների թիվը	Տնային տնտեսության մեծությունը	Տնային տնտեսություն	Դրանցում անդամների թիվը	Տնային տնտեսության մեծությունը	Տնային տնտեսություն	Դրանցում անդամների թիվը	Տնային տնտեսության մեծությունը	
Ընդամենը անհատ տնտեսություններ	71381	282386	3.9	65 006	251941	3.8	65 615	205 025	3.1	-8.1
1 անձ	8855	8855		9079	9079		10 537	10 537		+19.0
2 անձ	9493	18986		8678	17356		12 091	24182		+27.4
3 անձ	9458	28374		9187	27561		10 492	31476		+10.9
4 անձ	14286	65144		13990	55960		11 769	47076		-17.6
5 և ավելի անձ	29289	161027	5.9	24072	141985	5.8	20 726	102291	4.9	-29.4

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ և ՏՏԿԱՀ նյութերը

Նշված տարիքային խմբի բնակչության թիվը 2022թ.-ին, համամատած 2001թ.-ի հետ, ավելացել է 14,3 հազարով կամ 36,6%-ով, իսկ 16-59 տարեկան բնակչության թիվը նույն ժամանակահատվածում նվազել է 17,5%-ով: Առավել անհանգստացնողն աշխատունակ տարիքից ցածր բնակչության (0-15 տարեկան) թվաքանակն է. այն նվազել է 43,2%-ով: Ժողովրդագրական ծերացման նման արագընթաց իրավիճակն ազգային անվտանգության ապահովման լրջագույն մարտահրավերներից մեկն է:

Շիրակի աղքատության հիմնախնդիրը այժմ նոր երանգներ ու դրսևորումներ է ձեռք բերել, այն դառնում է բազմաչափ և պայմանավորված է ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական պահանջմունքների բավարարման ռիսկերով: Մասնավորապես՝ ոչ նյութական պահանջմունքները մեծ են կենսաթոշակառուների, հաշմանդամների և ուսանողների մոտ, հատկապես առողջապահական վճարովի ծառայություններից օգտվելու և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների պահով, որտեղ տարեցտարի ավելանում են ուսման վարձավճարները:

Այսպիսով, Շիրակի մարզի բնակչության աղքատության կրճատման հիմնական գործոնը կայուն երկարաժամկետ տնտեսական աճն է, մասնավորապես՝ տնտեսության աշխատատար ճյուղերի զարգացումը, միաժամանակ՝ եկամուտների ավելացումը՝ վերջինս հասցնելով Երևան քաղաքի մակարդակին: Այս շրջանակներում կարևոր է պետության կողմից հատկացվող սոցիալական տրանսֆերտները (նպաստառու ընտանիքիների և գործազուրկների համար) փոխարինել սոցիալական վճարների՝ որոշակի աշխատանքների դիմաց: Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 71.4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1.4 % կազմող գումար: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 1.8 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 0.04 %-ը [12]:

Ամփոփելով Շիրակի մարզի բնակչության աղքատության վիճակի քննությունը՝ այն պայմանականորեն կարելի է բաժանել հինգ ժամանակափուլերի.

1. 1988-1991 թթ.- աղքատացման նախնական փուլ, ինչը պայմանավորված էր Սպիտակի աղետալի երկրաշարժով և հասարակարգի փոփոխությունով:

2. 1992-1998 թթ.-բնակչության համատարած աղքատացման փուլ՝ պայմանավորված տնտեսության մասնավորեցման գործընթացով և արցախյան առաջին պատերազմով, ինչը հանգեցրեց աշխատունակ տարիքի՝ մասնավորապես քաղաքային բնակչության զանգվածային արտագաղթին, գրեթե դադարեցին գործել խոշոր և միջին մեծության արդյունաբերական ձեռնարկությունները: Շեշտակի ավելացավ գործազուրկների և նպաստառու ընտանիքների թիվը:

3. 1999-2007թթ.- աղքատության մակարդակի նվազման փուլ՝ պայմանավորված ինտենսիվ բնակարանաշինությամբ, բնակչության եկամտի աճով և տրանսֆերտներով:

4. 2008-2018 թթ. աղքատության կայունացման փուլ, երբ աղքատության մակարդակի էական տատանումներ չեն գրանցվել:

5. 2018թ. մինչև մեր օրերը, աղքատության նվազման երկրորդ փուլ: 2020 թ. COVID -19 համավարակը և Արցախյան երկրորդ պատերազմը ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում բնակչության աղքատության մակարդակի բարձրացման վրա էական ազդեցություն չունեցավ, ավելին՝ արձանագրվեց բնակչության եկամտի աճ և աղքատության մակարդակի անկում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. - Մեր ուսումնասիրությունը պարզում է, որ XX դ. վերջին XXI դ. առաջին քառորդին Շիրակի մարզում աղքատության մակարդակի նվազման ընթացքը պայմանավորված է բնակչության ծնելիության և ընտանիքի մեծության ցուցանիշի անկումով, կրթական մակարդակի աճով և աշխատունակ տարիքի բնակչության զանգվածային արտագաղթով: Մակայն, դրանով հանդերձ, մարզում աղքատությունը լայն տարածված երևույթ է մնում:

- Ակնհայտ է, որ մարզի տնտեսական և եկամտային աճն էական ազդեցություն չի ունեցել աղքատության մակարդակի նվազման վրա: Մակայն, տնտեսական աճն իր գործուն ազդեցությունն է ունեցել ծայրահեղ աղքատների թվի նվազման վրա:

- ՀՀ-ում 1999 թ.-ից սկսած՝ բնակչության պաշտպանության ոլորտում անհատական տրանսֆերտների փոխարինումն ընտանեկան նպաստների համակարգի էա-

կանոններն չի ազդել բնակչության աղքատության հաղթահարման վրա, այլ լուծել է սոցիալական լարվածությունը թուլացնելու և գոյատևման խնդիրները:

- Աղքատության ռիսկի խմբերն են, գործազուրկները, բազմազավակ ընտանիքները, միայնակ թոշակատուները և հաշմանդամները, և այս սոցիալական խմբերի համար պետությունը պետք է մշակի և իրականացնի աղքատության իրական նվազեցման ծրագրեր:

- Շիրակի մարզում աղքատության հիմնական դրդապատճառը պետական և ոչ պետական հատվածներում ցածր աշխատավարձը ու ֆինանսական սահմանափակ ներդրումներն են, մասնավորապես՝ ոչ արտադրական ոլորտում, ինչն էլ հանգեցրել է բնակչության աղքատացմանը և արտագաղթին:

- Մարզի բնակչության աղքատության հաղթահարման գլխավոր նախապայմաններից մեկն է տնտեսական աճի խթանման ծրագրերի իրականացումը, ինչը ուղղակի կապված է կապիտալ ներդրումների շեշտակի աճի հետ, մասնավորապես՝ ծառայությունների ոլորտի և արդյունաբերության մի շարք ճյուղերի (շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերություն և մեքենաշինություն՝ հատկապես ռազմական արդյունաբերություն) հետ: Արդյունքում՝ կստեղծվեն նոր աշխատատեղեր, կսկսվի արտագաղթի ծավալի և նպաստառու ընտանիքների թվի անկում:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Բոյաջյան Ա.** *Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը (XXդ. վերջ - XXI սկիզբ)*. // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: հ. 1 (24): Գյումրի: 2021: 73-83 էջեր:
2. **Բոյաջյան Ա.** *Շիրակի մարզի բնակչության գրավածությունը XXդ. վերջին և XXIդ. սկզբին*. // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: հ. 2 (25): Գյումրի: 2023: 149-161 էջեր:
3. **Բայաջյան Ա.** *Շիրակի մարզի սոցիալ-ժողովրդագրական գործընթացները*: Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ): Տետր 3: Գյումրի: 2012: 48 թերթ:
4. **Բայաջյան Ա.** *Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի փոփոխությունները*, ԴԱՆ: Տետր 1: Գյումրի: 2020: 48 թերթ:
5. **Բոյաջյան Ա.** *Աղքատությունը Շիրակի մարզում*, ԴԱՆ: Տետր 3, Գյումրի 2023: 48 թերթ:
6. **Բոյաջյան Ա.** *Շիրակի մարզի բնակչության աղքատության շարժառիթները*: ԴԱՆ: Տետր 4: Գյումրի: 2023: 48 թերթ:
7. **Հարությունյան Գ.** *Սպիտակի երկրաշարժը. իրողություններ և դասեր հայ հասարակության համար*: // «Գլոբուս» պարբերական: Թիվ 10 (99): 2018: 4-7 էջեր:
8. **Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Իսահակյան Ռ.** *Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրներ*. // ԵՀ հրատարակչություն: Երևան: 2017: 341 էջ:
9. **Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է.** *ՀՀ ազգային հարստության և բնակչության եկամուտների ձևափոխման և բաշխման փոխառնչությունները*. // Բանբեր Երևանի համալսարանի: № 2 (35) «Տնտեսագիտություն»: Երևան: 2021: 17-31 էջեր:
10. Համաշխարհային Բանկ, *«COVID-19 համավարակի ազդեցության գնահատման թարմացումն աղքատության վրա. Նոր տվյալների ազդեցությունը»*, Տվյալների բլոգ, Երևան: 2022: https://regst.ordpress.com/2022/03/31/inch_e_spasvum/ (դիտվել է՝ 11.10.2024):

11. ՀՀ ԱՎԿ. Հայաստան. Աղքատության ցուցանիշները 2008 և 2017թթ.-ին: https://armstat.am/file/article/poverty_2018_a_7.pdf, (դիտվել է՝ 30.08.2024):
12. ՀՀ աղքատության հաղթահարման ուղիները: <https://hetq.am/hy/article/72794>, (դիտվել է՝ 12.07.2024):
13. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: <https://armstat.am/am/?nid=81&id=490>, (դիտվել է՝ 19.09. 2024):
14. Շիրակի մարզի բնակչության աղքատության մակարդակը: [//cvmedia.am/page2-3651—88](https://cvmedia.am/page2-3651-88) (դիտվել է՝ 28.08.2024):
15. Շիրակի մարզի համախառն ներքին արդյունքը: <https://armstat.am/file/doc/99542183.pdf> (դիտվել է՝ 16.10. 2024թ.)
16. Տես «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 9 ապրիլի, 1991:

References

1. **Boyajyan A.** The change in the sex-age structure of the population of Shirak marz (end of 20th - beginning of 21st century) [*Shiraki marzi bnakch'ut'yan serratarik'ayin karruts'vatsk'i popokhut'yuny (XXd. verj - XXI skizb)*]. // "Scientific works" of the Shirak Armenological Research Center of the National Academy of Sciences RA. No. 1.(24). Gyumri. 2021. 73-83 pp. (in Armenien)
2. **Boyajyan A.** Employment of the population of Shirak marz in the 20th century. last and XXI century. at the beginning. [*Shiraki marzi bnakch'ut'yan zbaghvatsut'yuny XXd. verjin yev XXIId. skzbin:*] // Scientific works of the Shirak Armenological Research Center of the NAS RA. No.2(23). Gyumri. 2023. 149-161pp.. (in Armenien)
3. **Boyajyan A.** Social-demographic processes of Shirak marz. [*Shiraki marzi sots'ial-zhoghovrdagrakan gorts ynt'ats'neri*]. Ethnographic field materials (hereinafter, DAN). Notebook 3: Gyumri. 2012 .48sheets. (in Armenien)
4. **Boyajyan A.** Changes in the social composition of the population of Shirak marz, [*Shiraki marzi bnakch'u t'yan sots'ialakan kazmi p'vop'vokhut'yunnery*] DAN. Notebook 1: Gyumri. 2020. 48 sheets. (in Armenien)
5. **Boyajyan A.** Poverty in Shirak marz. [*Aghk'atut'yuny Shiraki marzum*] DAN. notebook 3, Gyumr.i 2023. 48 sheets. (in Armenien)
6. **Boyajyan A.** Motives of poverty of population of Shirak marz [*Shiraki marzi bnakch'ut'yan aghk'atut'yan sharzharrit'neri*]. DAN: Book 4, Gyumri 2023. 48 sheets. (in Armenien)
7. **Harutyunyan G.** The Spitak earthquake. realities and lessons for Armenian society. [*Spitaki yerkrasharzhy. iroghut'yunner yev daser hay hasarakut'yan hamar*] // "Globus" periodical. number 10 (99). January 2018. 4-7 pp.. (in Armenien).
8. **Gharibyan G., Kharatyan A., Isahakyan R.** The socio-economic developments of the Republic of Armenia during the years of independence and the basic problems of reproduction of human capital. [*Ankakhut'yan tarinerin Hayastani Hanrapetut'yan sots'ial-intesakan zargats'umnery yev mardkayin kapitali verartadrut'yan him-nakhndirneri*]. YU publishing house. Yerevan. 2017. 341 pages. (in Armenien)
9. **Markosyan A., Matevosyan E.** Interactions between the formation and distribution of RA national wealth and income of the population. [*HH azgayin harstut'yan yev bnakch'ut'yan yekamutneri dzevavorman yev bashkhman p'vokharrnch'ut'yunnery*]//Articles of YU. No. 2(35)."Economics". 2021. 17-31pp. (in Armenien)
10. World Bank, "Update on the Assessment of the Impact of the COVID-19 Pandemic on Poverty. [*«COVID-19 hamavaraki azdets'ut'yan gnahat-man t'armats'umn aghk'atut'yan vra. Nor tvyalneri azdets'ut'yuny»*] Impact of New Data", Data Blog, Yerevan. 2022 https://regst.ordpress.com/2022/03/31/inch_e_spasvum/ (viewed: 11.10.2024). (in Armenian)
11. RA AVC. Armenia. Poverty indicators in 2008 and 2017 [*Aghk'atut'yan ts'uts'anishnery 2008 yev 2017t't' - in:*]. https://armstat.am/file/article/poverty_2018_a_7.pdf, (viewed: 30.08.2024). (in Armenian)

12. Ways to overcome poverty in RA.[*HH aghk'atut'yan hagh't'aharman ughinery*] <https://hetq.am/hy/article/72794>, (viewed: 12.07.2024). (in Armenian)
13. Armenia's social image and poverty.[*Hayastani sots'ialakan patkery yev aghk'atut'yuny*]. <https://armstat.am/am/?nid=81&id=490>, (viewed: 19.09. 2024). (in Armenian)
14. The poverty level of the population of Shirak marz.[*Shiraki marzi bnakch'ut'yan aghk'atut'yan makardaky*] [//cvmedia.am/page2-3651—88](https://cvmedia.am/page2-3651-88) (viewed: 28.082024). (in Armenian)
15. Gross domestic product of Shirak marz.[*Shiraki marzi hamakharrn nerk'in ardyunk'y*] <https://armstat.am/file/doc/99542183.pdf> (viewed: 16.10. 2024). (in Armenian)
16. See "Republic of Armenia" daily newspaper,[*«Hayastani Hanrapetut'yun» orat'ert*] April 9, 1991. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **24. 10. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **24. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես Գևորգի ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
Էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru // orcid.org/0009-0002-8424-4522


Artashes Gevorg BOYAJYAN: PhD in History, Associate Professor,
Senior Researcher of the SCAS of NAS, Gyumri, RA,
e-mail: a.boyajyan@mail.ru // orcid.org/0009-0002-8424-4522

Арташес Геворгович БОЯДЖЯН: канд. ист. наук, доцент,
ст. научный сотрудник ШЦАИ НАН, Гюмри, РА
эл. адрес: a.boyajyan@mail.ru // orcid.org/0009-0002-8424-4522

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ ՀԱՄԱՐ 1 (27) 2024 թ. ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ
SCIENTIFIC NEWSLETTER

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ 2024 թ. ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
հոդվածների պարբերական ժողովածու /Հայագիտություն և հասարակական գիտ.:
Գյումրի: Հատոր 1(27): 2024: - 224:
Հիմնադրվել է 1998 թ. ԾՀՀԿ գիտիտրիդի որոշմամբ:
Ընդգրկված է ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի ընդունած պարբերականների ցանկում:
ISSN1829-4316, eISSN2953-8076, DOI:10.522971/18294316



2024 թ. հունիսին լույս տեսավ Կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» պարբերականի սույն թվի 1 (27) հատորը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ս.

Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ, 15 տպամամուլ ծավալով: Հատորում ընդգրկված գիտական 18 աշխատանքները հայագիտության տարբեր ոլորտների ու հասարակական գիտությունների հիմնահարցերի վերաբերող և արդիական հնչեղություն ունեցող ուսումնասիրություններ են՝ հոդվածների, հրապարակումների ու հաղորդումների տեսքով:

Այդպիսին է արևելագետ, պատմ.գիտ. թեկնածու Ռուսլան Ցականյանի «Դրվագ ասորեստանա-խեթական միջպետական հարաբերությունների պատմությունից» ընդարձակ հոդվածը, որ գիտական համակողմանի քննությամբ ներկայացնում է ասորական և իսթական պետությունների միջև այդ հարաբերությունների ծագման քաղաքական և տնտեսական շարժառիթները, շահերի անընդհատ բախումները, հետագա ընթացքը, նորովի քննում և առաջադրում է Ասորեստանի արքայի գահակալման առաջին երեք տարիների ռազմարշավների ժամանակագրությունը:

Նույնքան հետաքրքրությամբ է ընթերցվում կենտրոնի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Սարգիս

Պետրոսյանի «Լուլու ցեղերի և Ուազա երկրի բնության շուրջ» հոդվածը, որում հեղինակը, հենվելով սեպագիր արձանագրությունների վերաբերյալ նորագույն հետազոտողների կարծիքների և լեզվաբանական նյութի ստուգաբանական վերլուծությունների վրա, հանգում է վերոնշյալ ցեղանունների նորովի մեկնաբանությունների:

«Տայքը 11-15-րդ դդ.» հոդվածի համահեղինակներին (դոց. դոց. Ա. Ակոպով և Ա. Հայրապետյան) հաջողվել է սկզբնաղբյուրների համադրմամբ և հանգամանակի վերլուծությամբ ներկայացնել այդ ժամանակաշրջանում հարևանների կողմից Տայքի իշխանության կլանման գործընթացը, իրենց ինքնության պահպանման համար պայքարի ձախողման հետևանքով տայեցիների հայրենագրկման դրսևորումները, այդ գործընթացում Հայաստանի պատկերության պատճառները և ամփոփել Տայքի հայության մի մասի հայրենագրկման և ապագայացման հետևանքով ձևավորված նոր իրականությունը:

ՇՊՀ-ի դոցենտ Ա.Հովհաննիսյանն իր հրատարակմամբ անդրադարձել է խիստ արդիական մի խնդրի, ինչպիսին է ԱՄՆ-ի քաղաքականությունն համատեքստում Ջո Բայդենի վարչակազմի ջանքերը իսրայելա-պաղեստինյան արյունոտ հակամարտության լուծման ուղիների փնտրտուքի մեջ: Ա.Միմոնյանի և Տ.Չաքյանի համատեղ հաղորդումը նվիրված է հնագիտական մետաղական նյութերի վերականգնման առանձնահատկություններին և մաքրման մեթոդներին, որոնք գործառվում են ՊԱ և ՊՄՊ ծառայության վերականգնման լաբորատորիայում:

Արժեքավոր աշխատանք է հայերենագիտության բնագավառում «Փավստոս Բուզանդից մինչև այսօր» հոդվածը, որ քննության է առնում Բուզանդի երկում հանդիպող խոսակցական լեզվի բառապաշարին բնորոշ մի շարք դարձվածաբանական միավորներ, որոնք ինչպես գրաբարում, այնպես էլ մեր օրերում խոսքի

ոճավորման միջոցներ են և իրենց բառիմաստների կենսունակության շնորհիվ, իրենց 17-դարյա հնությամբ, ձևի մասնակի կամ լրիվ փոփոխության ենթարկվելով, գործածական են նաև արդի հայերենում: Հոդվածի շրջանակներում հեղինակները (ԿՊՀ, բան. գիտ. դոկտոր Գ.Խաչատրյան և ՇՊՀ, բան.գիտ.դոկտոր Ս.Հայրապետյան) նաև առաջին անգամ ներկայացնում ու մեկնաբանում են արդի հայերենի ներքին փոխառություններին սերտորեն առնչվող մի իրողության՝ ներքին պատճենումներին վերաբերող իրենց տեսական դրույթը:

Մեր լեզվի բառային մակարդակի տարածմանակյա հայեցակետով քննությամբ բան. գիտ. դոկտոր Լ. Խաչատրյանը (ԵՊՄՀ) իր «Հին հայերենի վերլուծական կառույցների փոխակերպումը համադրական կառուցատիպերի» հոդվածում բացահայտում է հին հայերենի նախդրավոր (առ, ընդ, ի, ըստ) վերլուծական կառույցների վերածումը արդիհայերենյան համադրական բաղադրությունների, որոնցում գրաբարյան նախդիրները ձեռք են բերել ածանցական արժեք: Ըստ հեղինակի այսպիսի ուսումնասիրությունները կարող են բացահայտել լեզվի տարբեր գոյավիճակների տիպաբանական բնութագիրը:

«Տաթև» ԳԿՀ լեզվաբանության բաժնի ղեկավար, բան. գիտ. թեկնածու Հ.Չաքարյանը մեր էջերում շարունակում է առաջարկել նոր ստուգաբանություններ: Այս անգամ իր «Հ-Ե.*(S)U(E)-«կտրել, ծագել» արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն» հոդվածում նա, հակադրվելով հնդեվրոպաբանության մեջ ընդունված կարծիքին, թե հայերենի վսկզբնահնչյունով բառերը բնիկ չեն, բացահայտում է այդպիսի բառերի հայերենում բնիկ ծագման օրինաչափությունը և դրա հիման վրա առաջարկում է նման բառերի նոր ստուգաբանություններ՝ վարսամ, վարսել, վիրապ, վիհ, վախ, վտանգ, վթար, վիատ և այլն:

Մարդկային մեկուսացած հոգու ողբերգության թումանյանական գեղարվեստա-

կանացման («Լոռեցի Սաքոն») հոգեբանագրականագիտական նուրբ վերլուծության հաջողված փորձ է ԳԱԱ գրականության ինստիտուտի ապիրանտ Ա.Զարգարյանի համանուն հոդվածը՝ կառուցված գուգադրական ու հոգեվերլուծական մեթոդների համադրությամբ:

Բառապաշարի մաքրության և այդ նպատակով մասնագիտական, մասնավորապես՝ բժշկական փոխառությունների հայերենացման ցավոտ խնդրի լուծմանն է միտված ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ.Սուքիասյանի և դոցենտ Հ. Զաքարյանի հոդվածը՝ «Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը» խորագրով: Հեղինակները համոզված են դրանից կշահեն հայոց լեզուն, հայախոս հանրությունը, բժշկական կրթական համակարգը և բժշկագիտության ոլորտը: Իսկ այն, որ հայերենի բժշկական բնույթի բառակազմական հարացույցները ռուսերեն և անգլերեն համարժեք հարացույցների համեմատությամբ կատարյալ են (չկան բաց վանդակներ, կադապարից շեղվող ձևեր, անմիօրինակություններ), ապացուցվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն համարժեք բառակազմական հարացույցների գուգադրական օբյեկտիվ ու մանրագնին քննությամբ, որը հեղինակների իրական ներդրումն է:

Նորակազմություններին նվիրված Մ. Ալեքսանյանի հրապարակումը «Անի» պոեմում Հովհ. Շիրազի գործածած նորակազմ բառերի մասին է, որոնց մեծ մասը հեղինակային նորաբանություններ է և մեր լեզվի բառագանձի հարստացման ազնվագարմ աղբյուրներից մեկը: Հեղինակի համոզմամբ դրանք, իրավամբ, գունավորվել է Շիրազի հզոր ու հախուռն խառնվածքի, մտածելակերպի, խոհափիլիսոփայության և անհատականության դրոշմով:

«Կամար, թաղ, խորան, խոյ, վիշապ և այլ հորինվածքային ձևերի և դրանց նախատիպերի համեմատական վերլուծության մի շարք հարցեր» հոդվածի հեղինակների՝ պրոֆեսոր Ա. Գրիգորյանի

(ՃՇՀԱՀ), Ա. Գրիգորյանի և ճարտ. թեկն. Դ. Նահատակյանի (ՇՀՀ կենտրոն) կողմից իրականացվել է ճարտարապետական նախատիպերի ծավալուն համեմատական քննություն, կատարվել են դրանց գեղարվեստական և գեղագիտական մեկնություններ, պատմական Տայք նահանգից նորահայտ նյութերի հավաքագրում ու ճարտարապետական վերլուծություն, նաև հինգ տասնյակից ավելի նկարների տեղադրում հոդվածում: Այս ամենը հոդվածագիրներին բերել է այն աներկբա եզրակացության, որ հայկական ճարտարապետական հորինվածքների նախատիպերը ձևավորվել են Հայկական լեռնաշխարհում, այսինքն՝ տեղական ծագում ունեն և հայ ճարտարապետության անբաժանելի մասերն են:

«Ալաջա պար»-ում նախնադարյան հայոց առասպելաբանությունից եկող սիրերգի մաս դարձած մի քառատողի պատմագագարական հետաքրքիր վերլուծություն է բան. գիտ. թեկնածու Լ. Պետրոսյանի (ՇՀՀ կենտրոն) «Մի պարերգի տեքստի պատմական և ծիսական բաղադրիչների մասին» հոդվածը, ըստ որի՝ սիրերգի առանձին մասերում գործ ունենք ոչ միայն երիտասարդ գույզի սիրային գեղումների հետ, այլ որ դրանցում հիշողություններ կան մեր նախնի մի ցեղի երկտոտեմ կառույցի մասին, և դա հոդվածում հաստատվում է պատմական, ազգագրական, առասպելաբանական նյութերի միջոցով:

Հայ ժողովրդական օրորոցային երգերի արդի դրսևորումների ժանրային, հորինվածքային, կառուցվածքային և արտահայտչական յուրահատկությունների մասին է բան. գիտ. թեկնածուներ Հ. Հարությունյանի և Հ. Մատիկյանի (ՇՀՀ կենտրոն) «Օրորոցային երգերի մի քանի ոճական առանձնահատկությունները Շիրակի արդի բանահյուսության մեջ» հոդվածը, որում դիտարկվել են օրորների շուրջ հինգ տասնյակ տարժամանակյա գրառմամբ, այդ թվում՝ նաև մերօրյա օրորոցայինների բացառիկ նմուշներ, որոնց առանձնահատ-

կույթունների ուսումնասիրման հիման վրա հեղինակները բացահայտել ու արժեքավորել են այդ օրորոցայինների հորինվածքային մեխանիզմները:

«Բանաձևային մտածողությունը Շիրակի մանկական բանահյուսական տեքստերում» հոդվածը նվիրված է մեր երկրամասի մանկական բանահյուսության հարցերին: Նրա հեղինակին՝ գիտաշխատող Բան. գիտ. թեկնածու Հ. Մատիկյանին (ՇՀՀ կենտրոն) հաջողվել է բացահայտել ու արժևորել այդ տեքստերում առկա բանաձևային մտածողության շերտերը, մասնավորապես՝ փաղաքշական խոսքային բանաձևերը: Հեղինակի համոզմամբ՝ տարածաշրջանն ընդհանրապես այքի է ընկնում խոսքաշինությամբ, այստեղից էլ՝ մանկական բանահյուսական տեքստերում խոսքաշին կառույցների առատությունը:

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Բան. գիտ. թեկնածու Կ.Բագեյանի հոդվածն ունի «Մասնագիտություն և զբաղմունք ցույց տվող բառերը Շիրակի բարբառային բառարաններում» վերնագիրը: Ելնելով այն իրավացի կարծիքից, որ ավանդական մշակույթը կրողների բացակայության պայմաններում տարաբնույթ բառարանները անցյալ դարաշրջանի մասին հավաստի տեղեկատվության աղբյուր են, հեղինակը, առանձնացնելով բարբառային բառարաններում արհեստի, առևտրի և սպասարկման ոլորտի մասնագիտությունները նշող բառերայինների խմբերը, կազմել է դրանց աղյուսակներ՝ բացահայ-


տելով նաև մի քանի արհեստ ու զբաղմունք անվանող բառեր, որոնք ընդգրկված չեն եղել մինչև օրս հայտնի ցուցակներում:

«Լեզվաքաղաքականությունը խորհրդային շրջանում և հայոց լեզվի գործառության հիմնախնդիրները» հոդվածի հեղինակ, ԳԱԱ ՀԱԻ-ի ասպրանտ Լ.Անգելուշը հանգել է այն մտքին, որ հակառակ այն իրողությանը, որ այդ ժամանակաշրջանում ամեն միջոց օգտագործվում էր հանրապետություններում ռուսաց լեզվի դերի էլ ավելի բարձրացման համար, պաշտոնական վիճակագրության վերլուծությունը, նաև ՍՍՀՄ-ում հայերի լեզվական վարքի ազգաբանական-սոցիոլոգիական ուսումնասիրությունները վկայում են իրականում հասարակության մեջ հայոց լեզվի բարձր դերը՝ որպես ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչ:

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Բան. գիտ. թեկնածու Ա.Բոյաջյանը և ՇՊՀ աշխատակից Գ.Ավետիսյանն իրենց «ՀՀ սոցիալ-ժողովրդագրական խնդիրները և ազգային ինքնապահպանման հարցերը» հոդվածում վերլուծել են ՀՀ ժողովրդագրական արդի պատկերը, վեր են հանել ազգային ինքնությունը խաթարող ժողովրդագրական հիմնախնդիրները և առաջարկել են հիմնավոր լուծումներ, որոնց շուտափույթ չհաղթահարումը ոչ հեռու սպագայում կհանգեցնի նոր՝ «մահացող ազգ» եզրույթի շրջանառությանը, ասել է թե՛ ժողովրդագրական աղետի:

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Տ Ա Յ Ք. ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՎՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
Մաս Բ. (Արայացփոր) Ակոյով Ա., Նահատակյան Դ., Հայրապետյան Ա.
Գյումրի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հրատ. : 2024. - 203 էջ:



Կոլեկտիվ այս մենագրությունը նվիրված է Մեծ Հայքի Տայք աշխարհի Արայացփոր գավառի պատմամշակութային հուշարձաններին: Հեղինակների կողմից ճշգրտվել է բոլոր բնակավայրերի և հուշարձանների տեղագրությունը, տրվել են դրանց հստակ աշխարհագրական կոորդինատները: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվել նաև Արայացփոր գավառի բնակչության էթնոկրոնական նկարագրին: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել Արայացփոր գավառի երբեմնի հայ կաթոլիկական բնակավայրերը: Հեղինակները փաստագրել են Արայացփոր գավառում առկա բոլոր հուշարձանները՝ եկեղեցիներ, վանքեր, բերդեր, հյուրատներ, աղբյուրներ և այլն, որոնց մի մասը երկրամասի օրվա տերերի կողմից ենթարկվել է անխնա ոչնչացման, իսկ մյուս մասը գանձախույզների ամենօրյա կործանիչ գործունեության ազդեցության տակ է:

Գիրքը հրատարակվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 21T-2A292 ծածկագրով ԳԱԱ ՇՀՀ կենտրոնում կատարվող «Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)» գիտական թեմայի շրջանակներում: Այն հասցեագրված է ճարտարապետներին, պատմաբաններին և ընթերցող հանրությանը:

«ՄԵՌՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ: ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒՄԸ ԾԻՐԱԿՈՒՄ»:

Կազմողներ՝ Հ. Մատիկյան, Ա. Մելիքսեթյան, Շ. Նիկողոսյան, Գ. Թումասյան,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024. 120 էջ:



Մույն ձեռնարկի կազմողները, ուսումնասիրելով մանկապարտեզներում դասավանդվող բանահյուսական ժանրերն ու տեսակները, կիրառման ոլորտը, դասավանդման մեթոդները, ժողովրդական տոներն ու տոնական մշակույթը, ավանդական խաղերն ու ծեսերը, փաստում են, որ յուրաքանչյուրը նպաստում է մանկապարտեզ հաճախող երեխայի գեղագիտական ընդհանուր դաստիարակությանը, պատկերավոր մտածողությանը, աշխարհայացքի ու հոգեկերտվածքի ճիշտ ձևավորմանը, խթանում է նրանց երևակայությունը, նպաստում է խոսքի ու հաղորդակցման մշակույթի զարգացմանը: Երեխաները խաղի, հեքիաթի, հանելուկի, ազգային ծեսի միջոցով ուղղակիորեն հաղորդակից են դառնում ավանդված ազգային արժեքներին, երբեմն իրենց ստեղծում են անմիջական մթնոլորտ:

Բանահյուսական նյութը մանկապարտեզներում ու նախակրթարաններում շահեկանորեն մատուցվում է արվեստի տարբեր ձևերի համադրությամբ: Լավագույն վկայություն են մանկապարտեզներում ներկայացվող գրական հիմքով բեմականացումները կամ բանահյուսական որևէ ժանրի բեմականացումը սաների միջոցով (հանելուկ, առակ, հեքիաթ): Երեխաները անմիջականորեն դառնում են բանահյուսական նյութի կրող և կիրառող: Այսօրինակ բեմականացումները շատ վառ տպավորություն են գտնում նրանց երևակայության մեջ, նախնական պատկերացումներում:


Այս մեթոդական ձեռնարկով հեղինակները փորձել են ստեղծել բանահյուսական մոդուլ՝ մանկապարտեզի սաներին ծանոթացնելով հայ բանահյուսության լավագույն նմուշներին: Առաջին գլխում ներկայացվել են բանահյուսական այն ժանրերը, որոնք ուսումնական նյութ են դարձել Շիրակի մանկապարտեզներում թե՛ առօրյա պարապմունքների և թե՛ միջոցառումների ժամանակ: Երկրորդ գլխում որոշակիորեն ի մի են բերվել բանահյուսական այն նյութերը, որոնք առնչվում են Շիրակի տարածաշրջանի բանավոր մշակույթին: Այս մասում տեղ են գտել անվանի բանագետ Ս. Հարությունյանի գրառած հանելուկները, որոնք առնչվում են Շիրակ աշխարհին, նաև՝ ցայսօր էլ շրջանառվող բանահյուսական այն միավորները, որոնք տպագրվել են ուսումնամեթոդական տարբեր ձեռնարկներում:

Հեղինակների գրառած բանահյուսական նմուշները կարող են օգտակար լինել տարբեր միջավայրերի (գրական, գեղարվեստական և այլն) համար:

Ձեռնարկը նախատեսված է մանկապարտեզների և մանկանց զարգացման կենտրոնների համար: Աշխատանքը կարող է հետաքրքրել նաև բանագետներին, ազգագրագետներին, հոգեբաններին. մշակութաբաններին:

Մենագրությունը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ֆինանսավորմամբ՝ 22YR-6B030 ծածկագրով ԳԱԱ ՇՀՀ կենտրոնում իրականացվող գիտական թեմայի շրջանակում:

«ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ»
(Հասմիկ ԱՓԻՆՅԱՆԻ գիտական հոդվածների ու զեկուցումների ժողովածու)
 Կազմից՝ ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
 Երևան: ԵԳԵԱ հրատարակչություն: 2024: 168 էջ:




ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2024 թ. հրատարակել է էթնոերաժշտագետ, ավագ գիտաշխատող, երջանկահիշատակ Հասմիկ Պարույրի Ափինյանի գիտական հոդվածների և գիտաժողովների զեկուցումների ժողովածուն (Երևան, ԵԳԵԱ հրատ., կազմող՝ արվ. թեկնածու Հ. Հարությունյան, խմբագիր՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրապետյան): Այստեղ ընդգրկված են հեղինակի 1994-2007 թթ. վերաբերող գիտական հրապարակումները: Ժողովածուն բաղկացած է երկու բաժնից: Առաջինում տեղ է գտել 7 հոդված՝ նվիրված Շիրակի ժողովրդական երաժշտական ստեղծագործություններին /հատկապես օրորոցային երգերին/, հայ աշուղական արվեստի արդի հիմնախնդիրներին և այդ համատեքստում՝ աշուղ Իգիթի կյանքին ու ստեղծագործական ժառանգությանը: Ժողովածուի երկրորդ բաժնում գետեղված են շուրջ 12 գիտա-

Ժողովների հիմնադրություններն ու նյութերը՝ նվիրված հայ ավանդական երաժշտությանը, Շիրակի բանահյուսության ժանրերին, նվագարանային արվեստին: Խմբագրման արդյունքում այդ նյութերը համալրվել են ռուսերեն և անգլերեն ամփոփումներով:

Ժողովածուն հասցեագրված է հայագետներին և հայ ավանդական երաժշտության խնդիրներով հետաքրքրվողներին:

«ՀԱՄՔԱՐԱՑԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ»
ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մասնագիտական խմբ.՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. ԵՐՆՁԱԿՅԱՆ
Երևան, ԵԳԵԱ հրատ.: 2024: 168 էջ:



Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Հասմիկ Հարությունյանի հեղինակած «Համքարային ավանդույթը հայ աշուղական արվեստում» մենագրությունը /Երևան, ԵԳԵԱ հրատ., մասնագիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. Երնջակյան/:

Աշխատությունը նվիրված է հայ աշուղական արվեստում համքարային ավանդույթի կազմավորման պատմական նախադրյալների, դրանց պատմամշակութային հիմքերը միջնադարյան գուսանական արվեստում դիտարկելու և հայ միջնադարյան աշխարհիկ պրոֆեսիոնալ արվեստում կարևորագույն գործառույթների դրսևորումներին: Այստեղ արծարծված են հայ աշուղական կենտրոնների /Կ.Պոլիս, Թիֆլիս, Ջուղա, Նոր Ջուղա, Աստրախան, Ալեքսանդրապոլ/ ձևավորման նախադրյալներին, նշանավոր աշուղների երաժշտական ժառանգության արժեքավորմանը վերաբերող հիմնախնդիրներ, որոնց պատմաքննական ուսումնասիրությունը հաստատում է, որ մերձավորարևելյան ավանդույթի չափորոշիչների համատեքստում ստեղծված այդ ժառանգության մեջ ակներև են հայ ժողովրդական երգի և միջնադարյան տաղերգության խորքային ակունքները, ազգային ինքնության հատկանիշները:

Մենագրությունը հասցեագրված է հայ աշուղական արվեստի պատմության խնդիրներով զբաղվող մասնագետներին և հայ միջնադարյան մշակույթի հարցերով հետաքրքրվողներին:

«ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ»

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ, Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ:

խմբ.՝ քանասիրական գիտությունների դոկտոր Ս.ՀԱՅՐԱՎԵՏՅԱՆ Երևան, «ԱԻԿԱ-Արմենիա» հրատարակչություն: 2024: 96 էջ:



Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող Հասմիկ Մատիկյանի և ավագ գիտաշխատող Հասմիկ Հարությունյանի հեղինակած «Օրորոցային երգերը Շիրակի ավանդական երաժշտության արդի դրսևորումներում» մենագրությունը./Երևան, «ԱԻԿԱ-Արմենիա» հրատ., խմբագիր՝ Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրապետյան/:

Մենագրությունը նվիրված է հայ ժողովրդական օրորոցային երգերի արդի դրսևորումներին, դրանց ժանրային, հորինվածքային, կառուցվածքային և արտահայտչական յուրահատկություններին: Ուսումնասիրությունը հիմնականում տարվել է Շիրակի ժողովրդական երգերի արդի դրսևորումներում կենսաձևերի և ստեղծագործական մեխանիզմների բացահայտման և արժևորման տեսանկյունից: Շիրակում գրառված ժողովրդական օրորոցային երգերի արդի նմուշների հորինվածքային բնորոշիչների ու առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա, բացահայտվել ու արժեքավորվել են ժողովրդական ստեղծագործության արդի հորինվածքային մեխանիզմները:

Գիրքը հասցեագրված է մասնագետներին և հայ ժողովրդական ստեղծագործության խնդիրներով հետաքրքրվողներին:

«ՇԻՐԱԿԻ ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ


ԳԱԱ ՇՀՀ կենտրոն: Գյումրի: «Էդդորադո» հրատ.: 2024: -222 էջ:

2024թ. ՇՀՀ կենտրոնի հրատարակությունների շարքը համարեց կենտրոնի գիտաշխատող Բան.գիտ.թեկնածու, դոցենտ Հասմիկ Մատիկյանի «Շիրակի տղաբերք և մանկատաճություն» մենագրությունը (գլխ. խմբագիր՝ Բան. գիտ. դոկտոր., պրոֆեսոր Ս. Հայրապետյան):

Սույն մենագրությունը Շիրակի պատմագրական մարզի մանկական բանահյուսական ժառանգության ուսումնասիրությունն է՝ ազգագրական այլ շրջանների համեմատական նյութերով: Գրքում ներկայացվում է Շիրակի ազգագրական և բանահյուսական պատկերը մանկանոցի առնչությամբ: Թեմայի ընտրությամբ հեղինակը ցանկացել է լրացնել այն բացը, որն առկա է նմանօրինակ ուսումնասիրությունների մեջ: Ուսումնասիրությունը կատարվել է միջգիտակարգային (բանահյուսություն, գրականություն, լեզվաբանություն, ազգագրություն) մոտեցմամբ: Աշխատանքը կարևորվում է նաև բանասացների վերլուծություններով, մեկնաբանություններով: Մետաֆոլկլորը հիշյալ աշխատանքի

տանքի կորիզն է:

2. Մատիկյանը ուսումնասիրել է հղի կնոջը հասցեագրված բնութագրականները, ժողովրդական հավատալիքներն ու բանավոր պատումները, ինչպես նաև ցանկության այն բանաձևերը, որոնց հասցեատերը տղոցկանն է: Առանձնահատուկ տեղ է հատկացվել նաև տատմոր՝ որպես ծննդկանին ու նորածնին հոգ տանողի գործառնությունների ներկայացմանը: Ժանրային առումով քննվել է նշյալ թեմատիկային առնչվող հեքիաթանյութ: Ուսումնասիրության տիրույթում են եղել ինչպես տեղական, այնպես էլ դրսեկ ծեսերը, սովորույթները, որոնք թափանցել են շիրակյան մշակույթ:




Մանկախնամ երգերից ուսումնասիրվել են ավանդական օրորները, քառասունքահանին և կնունքին վերաբերող ազգագրական և բանահյուսական նյութեր, ինչպես նաև լոգանքի ու ատամահատիկի տեքստեր: Ուսումնասիրության առանցքում են եղել նաև մանկախաղաց երգերը՝ հաշվերգի տեքստով, բառ-հանելուկով և շուտասելուկով:

Մենագրությունը նվիրված է Շիրակի մանկական բանահյուսության արդի և ավանդական դրսևորումներին մեծահասակների և երեխաների միջավայրերում: Հավաքված բանահյուսական նյութը, քաղված թե՛ արխիվային աղբյուրներից, թե՛ բանահավաքչական աշխատանքներից, նպաստել է հետազոտության խորքային զուգադրական վերլուծությանը: Նախատեսված է բանագետների, ազգագրագետների, բանասերների, մշակութաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

Մենագրությունը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ֆինանսավորմամբ՝ 22YR-6B030 ծածկագրով կենտրոնում իրականացվող գիտական թեմայի շրջանակում:

ՀՀ ԳԱՍ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

հոդվածների պարբերական ժողովածու /Հայագիտություն և հասարակական գիտ.:
 Գյումրի: Հատոր 2(27): 2024: - 230 էջ: Հիմնադրվել է 1998 թ.՝ ԾՀՀԿ գիտխորհրդի որոշմամբ: Ընդգրկված է ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի ընդունած պարբերականների ցանկում:
 ISSN1829-4316 eISSN2953-8076
 DOI:10.522971/18294316-2024.27.2



Կենտրոնի 2024 թ.-ի վերջին հրատարակումը «Գիտական աշխատություններ» պարբերական ժողովածուի 27-րդ հատորի 2 պրակի լույս ընծայումն էր դեկտեմբերի կեսերին: Այն ներառում է գիտական տասնվեց ուսումնասիրություններ (երեքը՝ անգլերենով)՝ նվիրված գերազանցապես հայոց պատմության, հայ բանասիրության, բանագիտության, ազգագրության խնդիրներին և ունի բավականին ծավալուն «Գիտական լրատու» 2024թ.-ին կենտրոնի գիտական, կազմակերպչական և հրատարակչական գործունեության հակիրճ տեղեկատվությամբ: Նախատեսված է հայագետների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ 2024 թ. ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԵՐԻՏԱՍԱՐԳ ՀՆԱԳԵՏՆԵՐԻ 2-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԳՊՐՈՑ» - 2024

«Ջրածորի բրոնզ-երկաթիդարյան հնավայրի ուսումնասիրություն» - 2

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ հուլիսի 1-7-ը Ջրածորի հնավայրում իր աշխատանքներն սկսեց «Երիտասարդ հնագետների 2-րդ միջազգային ամառային դպրոցը», որին մասնակցեցին Երևանի, Վանաձորի, Շիրակի և Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի համալսարանների պատմության բաժնի ուսանողները: Առաջին չորս օրերի ընթացքում ուսանողները մասնակցեցին հնավայրի պեղումներին և լսեցին հնամարդաբան Հ. Սիմոնյանի դասախոսությունը հնամարդաբանական հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ:

Ամառային դպրոցի ընթացքում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փորձարարական հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Իվան Մեմյանը ներկայացրեց օբսիդիանի մշակման քարեդարյան տեխնոլոգիաները: Ուսանողները փորձարկեցին ռետուշավորման, ցլեպման և այլ գործողություններ, պատրաստեցին նաև օբսիդիանից գործիքներ: Դաշտային աշխատանքների ընթացքում ստացած գիտելիքները ամրապնդվեցին Գյումրու պատմական միջուկի և «Կուսայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան ճանաչողական այցերով: Հինգերորդ օրը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փորձարարական հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող Ի.Մեմյանը ներկայացրեց բրոնզիդարյան սպառազինության վերակազմված որոշ նմուշներ՝ պարսատիկ, նիզակ և սակր: Ուսանող մասնակիցները հետազոտեցին բրոնզիդարյան սպառազինության օգտագործման տեխնիկան և կատարեցին պարսատիկով փորձնական քարանետումներ:





Ուսանողները լսեցին պատմ. գիտ. թեկնածու Բ. Վարդանյանի (ԳԱԱ ՇՀՀ կենտրոն) դասախոսությունը Հայաստանի բրոնզի դարի վերաբերյալ, ապա Ի. Մեմյանը փորձարկեց Մերձավոր Արևելքում տարածված երկփող երաժշտական գործիք՝ ավլոս, որից հետո նաև ներկայացրեց բրոնզի ձուլման տեխնոլոգիան և ուսանողների մասնակցությամբ պատրաստեց Լճաշենի դամբանադաշտից գտնված ուշբրոնզիդարյան նետաւաք: Վեցերորդ և յոթերորդ օրերին դպրոցին աշխատանքներին մասնակից ուսանողները շարունակեցին Ջրաձորի ամրոցում բացված տուֆաշեն մոնումենտալ կառույցի պեղումները: Ակնկալվում է, որ «Երիտասարդ հնագետների միջազգային ամառային դպրոցը» կդառնա հայ-վրացական գիտամշակութային համագործակցության յուրօրինակ հարթակ: Ամառային դպրոցի աշխատանքները լայնորեն լուսաբանվեցին հայաստանյան և օտարերկրյա լրատվամիջոցների կողմից:

ԵՐԻՏԱՎՈՐԳ ԾԱՐՏԱՐԱԿԵՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԳՊՐՈՑ
«Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը»

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ հուլիսի 15-21-ը Գյումրիում անցկացվեց «Շիրակի ճարտարապետությունը հնագույն շրջանից մեր օրերը» խորագրով ամառային դպրոց: Շիրակի մարզի օրինակով իրականացվեց Հայկական ճարտարապետության պատմության ամփոփ ծրագիր, որի նպատակն էր մասնակիցներին սովորեցնել տեսնել, հասկանալ, վերլուծել ու ներկայացնել մարզի պատմաճարտարապետական ժառանգությունը:

Առաջին, երրորդ և հինգերորդ օրերին կազմակերպվեցին լսարանային դասընթացներ: Անդրադարձան ճարտարապետության զարգացման փուլերին, ճարտարապետության նշանակությանը հայկական մշակույթի պատմության մեջ, հնագույն հուշարձաններին և դրանց առանձնահատկություններին Հայկական լեռնաշխարհում: Լսարանային երկրորդ հանդիպման ժամանակ քննարկման առարկա դարձան Հայաստանի վաղ և զարգացած միջնադարի ճարտարապետության նվաճումները: Շեշտը դրվեց Անի-Շիրակի հայկական ճարտարապետական դպրոցի լուսաբանման վրա: Լսարանային վերջին օրը սկսվեց Հայաստանի ուշ միջնադարի ճարտարապե-

տական նվաճումների ներկայացմամբ: Հաջորդիվ՝ Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու XIX դ.-ից մինչև մեր օրերի քաղաքաշինական, պաշտպանական, հոգևոր, հասարակական, բնակելի և այլ բնույթի ճարտարապետական կառույցների ներկայացման վրա:



Ճարտարապետական ամառային դպրոցի երկրորդ, չորրորդ և վեցերորդ օրերին կազմակերպվեցին դաշտային գործնական աշխատանքներ: Տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով դպրոցի մասնակիցներն այցելեցին Հոռոմի, Մպանդարյանի և Բենիամինի հնավայրեր, Մարմաշենի վանական համալիր, Արթիկի Ս. Գևորգ և Ս. Աստվածածին եկեղեցիներ, Հառիճի վանական համալիր, Գուսանագյուղի դղյակ-ամրոց, Երերույքի տաճար, Ալեքսանդրապոլի «Սև Բերդ», «Պայտաձև ամրոց», Գյումրու Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիներ, պաշտամունքային ու հասարակական նշանակության այլ կառույցներ:



Աշխատանքային վերջին օրն անցկացվեց մրցույթ՝ «Վարպետի նշանների հայտնաբերում» խորագրով, որից հետո դպրոցի մասնակիցներին շնորհվեցին հավաստագրեր, նաև առաջարկվեց էլեկտրոնային հարթակում թողնել կարծիքներ՝ հետագայում Դպրոցի աշխատանքներն առավել արդյունավետ տեսնելու ցանկությամբ:

«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»
Հանրապետական 4-րդ գիտաժողով
նվիրված Լենինականի անվանակոչության 100-ամյակին

Օգոստոսի 16-ին Շիրակի հայագիտական հետազատությունների կենտրոնի գրադարան-ընթերցարանում անցկացվեց «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ» հանրապետական 4-րդ գիտաժողովը, որը նվիրված էր Լենինականի անվանակոչության 100-ամյակին: Գիտաժողովին մասնակցեցին ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր. Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, «Կոմայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի, Երևան քաղաքի պատմության թանգարանի և Նովի. Շարամբեյանի անվ. ժողովրդական արվեստների թանգարանի 12 գիտաշխատողներ:



Զեկուցումներից երեքը նվիրված էին Լենինականին. Կ. Բազեյանը (ՇՀՀԿ) ներկայացրեց քաղաքում 1920-1940 թթ. կանանց նոր մասնագիտություններն ու հանրային արտադրության մեջ նրանց մասնակցության խնդիրները, Ա. Բոյաջյանը (ՇՀՀԿ)՝ քաղաքի բնակչության թվի 1924-2024 թթ. շարժվածությունը, Հ. Հարությունյանը (ՇՀՀԿ)՝ Լենինականի քաղաքային ժողովրդական երգը երաժշտագետ Հ. Ափինյանի գրառումներում: Հ. Գալստյանի (ՀԱԻ) զեկուցումը նվիրված էր Շիրակի ջրանցքի կառուցման գործընթացին՝ հիմնված արխիվային և դաշտային նյութերի համեմատական քննության վրա, իսկ Գ. Ադանյանի (ՀԱԻ) զեկուցումը՝ Ալեքսանդրապոլի 19-րդ դ.վերջի.-20-րդ դարասկզբի ոսկերիչ-արծաթագործությանը: Հ. Թ. Հարությունյանը (ՀԱԻ) ներկայացրեց Կոխած պանրի՝ որպես հայոց ավանդական պանրատեսակի պատրաստման, պահպանման ու կիրառման առանձնահատկությունները շիրակցիների կենսապահովման մշակույթում: Ազգագրական բնույթի վերջին զեկուցումը Ա. Ազարյանի (ՀԱԻ) «Լուսատուների միջոցով եղանակի վրդական հնարները հայոց մեջ» թեմային էր վերաբերում: Ի. Ավագյանը (ՇՀՀԿ, «Կոմայրի» ՊԱԹ) ներկայացրեց Կ. Դուրգարյանի «Տասնհինգ տարի դժոխքի ոլորտներով. 1941-1956 թթ.» հուշապատումը, որի ձեռագիրը պահվում է «Կոմայրի» արգելոց-թանգարանում:

Զեկուցումների մյուս խումբը ազգագրական-թանգարանագիտական բնույթ ուներ և նվիրված էր թանգարանային տարբեր հավաքածուների ազգագրական, մշակութաբանական և արվեստաբանական մեկնաբանմանը: Դրանց թվում էին Մ. Ավետիսյանի (ԵԶԹ) «Երևանի հախճապակու գործարանի կին արվեստագետները», Ս. Պողոսյանի

(ՀԱԹ) «Կնոջ կերպարը հայկական գեղարվեստական գործվածքի պատկերագրության մեջ», Կ. Ասատրյանի (ՀԱԹ) «Ծխախոտատուփը որպես ընձա և սոցիալական ցուցիչ», Ա. Մախատրյանի (ԺԱԹ) «Նշանախշը հայկական ժողովրդական արվեստում» թեմայով զեկուցումները: Գիտաժողովում կարդացված զեկուցումները կիրատարակվեն առանձին ժողովածուի ձևով՝ էլեկտրոնային տարբերակով:


«ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ (պատմամշակութային համադրություններ)»

միջազգային գիտաժողով. 28-30 սեպտեմբերի 2024.

Գյումրի՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Կազմակերպչի՝ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հրավերով գիտաժողովին մասնակցում էին բազմաթիվ գիտնականներ ոչ միայն Հայաստանից, այլ նաև արտերկրից (ՌԴ, Հունաստան, Իտալիա): Գիտաժողովը նվիրված էր պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի, ինչպես նաև հարակից շրջանների պատմության և մշակույթի տարբեր հիմնախնդիրների և կնճռոտ հարցերի լուսաբանմանը:

Այսօր Տայքյան պատմամշակութային ժառանգությունը ոչ միայն յուրացման, այլ նաև մասամբ ոչնչացման և մշակութային ցեղասպանության լրջագույն վտանգի տակ է: Եթե վրացական կողմը, դավանաբանական պատկանելությամբ պայմանավորված, Տայքի քաղկեդոնական հուշարձանները ներկայացնում է որպես վրացական՝ իսպառ բացառելով հայկական երբեմնի ներկայությունը Տայքում, ապա առաքելական և կաթոլիկ հայկական հուշարձանները ենթարկվում են գանձախույզների կողմից բարբարոսական ոչնչացման: Այս իրավիճակում խիստ կարևոր է գիտական համակողմանի ուսումնասիրություններով նոր շունչ տալ հայկական այս երկրամասի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությանը՝ արժանի պատասխան տալով պատմության կեղծարարության փորձերին:



Գիտաժողովում ընթերցված զեկուցումները գերազանցապես նվիրված էին Հայաստանի հյուսիսային շրջանների ազգագրական խնդիրներին, հին ու նոր պատմության մի շարք հիմնահարցերին, հնագիտական նոր հետազոտությունների հանրայնացմանը, մեր երկրի հյուսիսի ժողովրդական ճարտարապետության գանձերին:

«Պատմական Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային գիտաժողովին ներկայացված զեկուցումների գերակշիռ մասը խմբագրական խորհրդի երաշխավորությամբ գիտական հոդվածների տեսքով հանձնվեց ընթերցողների դատին՝ որպես գիտաժողովի նյութերի ժողովածու՝ 21 հոդվածներով, որոնք վերաբերում են Տայքի և հարակից շրջանների պատմության, հնագիտության, ազգագրության, ճարտարապետության և արվեստի տարբեր կնճռոտ հիմնահարցերի:

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մելիքյան Ա. Տ., Չատինյան Բ. Հ.

Տիգրան Երրորդի գահակալության վերագնահատություն
դրամագիտական տվյալների լույսի ներքո5

Հովհաննիսյան Ա. Հ.

Եզիպտոսի քաղաքականությունը պաղեստինյան հակամարտության նկատմամբ.
պատմական և ժամանակակից վերլուծություն.....20

Տիգրանյան Ա. Հ.

Միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներն Ադրբեջանի
կողմից Արցախի մշակութային արժեքների ու ռազմականացման դեպքում28

Հովհաննիսյան Վ. Կ.

Ժողովրդավարացման հիմնախնդիրները և միտումները Հայաստանում և Վրաստանում.....43

Բ Ա Ն Ա Ս Ի Ը Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Չարգարյան Ա. Ս.

Ռուբեն Հովսեփյանի «Որդան կարմիր» վիպակի
գեղարվեստական- գաղափարական ուղերձները.....57

Գալստյան Ն. Բ.

Հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումները 20-րդ դարի
ամերիկյան գրականության համատեքստում.....68

Խաչիկյան Գ. Վ.

Սարգիս Վահագնի «Արշիլ Կորբի» կենսագրական վեպի գլխավոր հերոսը.....80

Ավետիսյան Գ. Հ.

Գունային մակդիրների գործածությունը Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի»
և «Երևանի ուղղիչ տնից» արձակ գործերում.....94

Խաչատրյան Ա. Ա.

1990-ականներին գրական մամուլում ծավալված բանավեճը
1930-ական թվականների գրական կյանքի վերարժևորման շուրջ.....103

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խենյան Է. Հ.

Արտաշես Նազինյանի դերը ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսական
արխիվի ձևավորման գործում.....115

Հարությունյան Հ. Հ., Մատիկյան Հ. Հ.

Հեղինակային օրոքների յուրահատուկ դրսևորումների մասին.....124

Մահակյան Կ. Ա., Հովհաննիսյան Ռ. Պ.

Գյումրու բանավոր ժառանգության վերլուծության փորձ
(1983-1993 թթ. գրառված բանահյուսական նյութերի հիման վրա).....141

Ղռեջյան Լ. Խ., Մատիկյան Հ. Հ.

Հավատալիքային և պաշտամունքային տարրերը Շիրակի երդումներում
(միջգիտակարգային ուսումնասիրություն).....159

Ա Ջ Գ Ա Գ Դ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Աղանյան Գ. Թ.

Ալեքսանդրապոլի ոսկերիչ-արծաթագործությունը
XIX դ.–XX դ. սկզբին (համառոտ ուրվագիծ).....173

Պողոսյան Ս. Հ.

Սեռային փոխակերպումներ հագուստի մեջ. արգելքներ և շրջանցումներ.....187

Բոյսցյան Ա. Գ.

Շիրակի մարզի բնակչության աղքատության մակարդակը և
զարգացման միտումները XX դ. վերջին XXI դ. սկզբին.....196

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Լ Ը Ս Տ Ո Ի.....209

Contents

HISTORY

Melikyan A. T., Chatinyan I. H.

Reevaluation of the Enthronement of Tigranes Iii on the Light of the Numismatic Evidence.....5

Hovhannisyan A. H.

Egypt's Policy Toward the Palestinian Conflict: a Historical and Contemporary Analysis.....19

Tigranyan A. H.

Violations of International Humanitarian Law in the Case of Azerbaijan's

Use of the Cultural Values of Artsakh for Military Purposes.....28

Hovhannisyan V. K.

Democratization Issues and Trends in Armenia and Georgia.....43

PHILOLOGY

Zargaryan A. S.

The Artistic and Ideological Messages of Ruben Hovsepyan's

Novel "Armenian Cochienal".....57

Galstyan N. B.

Questions of Armenian-American Ethnic Literature in the

Context of 20th Century American Literature.....68

Khachikyan G. V.

The Main Character of the Biographical Novel «Arshile Gorki» by Sargis Vahagn.....80

Avetisyan G.H.

The use of Color Adverbs in the Prose Works of Yeghishe Charents

«The Land of Nairi» and «From the Correctional House of Yerevan».....94

Khachatryan A. A.

The Debate About the Re-Evaluation of Literary Life in the 1930s That Unfolded

in the Literary Press in the 1990s.....103

FOLKLORE STUDIES

Khemchyan E. H.

The Role of Artashes Nazinyan in the Creation of the Folk Archive of the IAE NAS RA.....115

Harutyunyan H. H., Matikyan H. H.

About Unique Manifestations of Literary Lullabies.....124

Sahakyan K. A., Hovhannisyan R. P.

Oral Heritage of Gyumri (Based on Folklore Materials Recorded in 1983-1993).....141

Ghrejyan L. Kh., Matikyan H. H.

Elements of Beliefs and Cult in the Oaths of Shirak (Interdisciplinary Study).....159

ETHNOLOGY

Aghanyan G. T.

In the Goldsmithing and Silversmithing of Alexandropol

19th and Early 20th Centuries (Brief Outline).....173

Poghosyan S. H.

Gender Transformations in Clothing: Taboos and Circumventions.....187

Boyajyan A. G.

The Level of Poverty Among the Population of Shirak

Province and its Causes in the Late 20th Century and Early 21st Century.....196

SCIENCE TIFIC NEWSLETTER209

Содержание

ИСТОРИЯ

Меликян А. Т., Чатинян И. А.

Переоценка воцарения Тиграна III в свете нумизматических данных.....5

Оганнисян А. Г.

Политика Египта в отношении палестинского конфликта:
исторический и современный анализ.....19

Тигранян А. А.

Нарушения международного гуманитарного права в случае использования
культурных ценностей Арцаха Азербайджаном в военных целях.....28

Оганнисян В. К.

Проблемы и тенденции демократизации в Армении и Грузии.....43

ФИЛОЛОГИЯ

Заргарян А. С.

Художественно-идеологические послания романа
Рубена Овсепяна «Арагатская кошениль».....57

Галстян Н. Б.

Вопросы армяно-американской этнической литературы в контексте
американской литературы XX века68

Хачикян Г. В.

Главный герой биографического романа Саргиса Ваагна «Аршил Горки».....80

Аветисян Г. О.

Использование цветочных наречий в прозах Егише Чаренца
«Земля Наири» и «Из ереванского исправительного дома».....94

Хачатрян А. А.

Дискуссия о переоценке литературной жизни 1930-ых годов,
развернувшаяся в литературной прессе в 1990-ых годах.....103

ФОЛЬКЛОРИСТИКА

Хемчян Э. Г.

Роль Арташеса Назиняна в деле формирования фольклорного архива ИАЭ НАН РА.....115

Арутюнян А. А., Матикян А. Г.

Об уникальных проявлениях авторских колыбельных песен.....124

Саакян К. А., Оганесян Р. П.

Попытка анализа устного наследия Гюмри
(по фольклорным материалам, записанным в 1983-1993 гг.).....141

Креджян Л. Х., Матикян А. Г.
Элементы верований и культа в клятвах Ширака (межнаучное исследование).....159

ЭТНОГРАФИЯ

Аганян Г. Т.
Ювелирное дело в Александрополе в XIX – начале XX веков (краткий очерк).....173

Погосян С. Г.
Гендерные преобразования в одежде: табу и обход.....187

Бояджян А. Г.
Уровень бедности населения Ширакской области и
тенденции развития в конце XX - начале XXI века.....196

НАУЧНЫЙ ВЕСТНИК209

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 2 (27) 2024

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 2 (27) 2024

Republic of Armenia
National Academy of Sciences
Shirak Centre for Armenological Studies

SCIENTIFIC WORKS. 2 (27) 2024

Խմբագրումը և սրբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի, Ա. Ստաշյանի
Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի

Ստորագրված է տպագրության՝ 12. 12. 2024թ.

Ծավալը՝ 230 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 100, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<https://shiraksciworks.sci.am/> <http://shirakcenter.sci.am/>
E-mail: scient.works@shirakcenter.sci.am